ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Ա. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՄԻՆԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

(ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ե 381

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի երաշխավորությամբ

Եղիազարյան Ա.
Ե 381 Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը: Պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն / Ա. Եղիազարյան. - Եր., ԵՊՀ հրատ., 2010, 192 էջ:

Աշխատության մեջ քննության են առնվել Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի սահմանները, վարչական բաժանումը, գործող առևտրական ճանապարհները և էթնիկ կազմը: Կատարվել են Արմինիա վարչական շրջանի մեջ մտնող իշխանությունների և ազգագավառների, ինչպես նաև ճանապարհային կայարանների տեղադրություններ:

Այն կարող է օգտակար լինել հայագետների, կովկասագետների և արևելագետների համար, ինչպես նաև Հայաստանի և հարևան երկրների՝ միջին դարերի պատմությամբ և պատմական աշխարհագրությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN-978-5-8084-1269-9

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.
© Եղիազարյան Ա., 2010 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

VII դ. 30-ական թթ. արաբները, միավորված ռազմատենչ կրոնով՝ իսլամով, անցան արտաքին նվաճումների: Շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում նրանք ստեղծեցին մի հսկայածավալ կայսրություն, որը կոչում ենք Արաբական խալիֆայություն:

Արաբների ճանապարհին կանգնած էին դարաշրջանի երկու հզոր տերությունները՝ Սասանյան Պարսկաստանն ու Բյուզանդիան, որոնք երկարատև պատերազմներում հյուծվել էին և արաբների առաջխաղացումը կասեցնել ի վիճակի չեղան: Արաբներին հաջողվեց 640-ական թվականների սկզբին կործանել Սասանյանների տերությունը, իսկ Բյուզանդիան կարողացավ գոյատևել ու շարունակել պայքարը: Շուրջ կես-դարյա պայքարից հետո արաբները նվաճեցին Բյուզանդական կայսրության արևելյան տիրույթները, Հայաստանը, Վիրքը, Եգերքը և Ափխազքը: Վերջիններս, ինչպես նաև Աղվանքը, մեծ մասամբ ընդգրկվեցին արաբների ստեղծած Արմինիա վարչական միավորի մեջ, որի արաբ կառավարչին՝ ամիրային, հայ պատմիչների կողմից տրված «ոստիկան» անվանումից այն կոչում ենք ոստիկանություն: Ստեղծվելով VIII դ. հենց սկզբին՝ այդ վարչական միավորը գոյատևեց ավելի քան մեկուկես հարյուրամյակ, մինչև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանն առանձնահատուկ տեղ ունի Հայաստանի և Այսրկովկասյան երկրների[1] պատմության մեջ: Ուստիև Արմինիա ոստիկանության պատմական աշխարհագրության համակողմանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ինչպես հայագիտության, այնպես էլ կովկասագիտության համար: Այդ ուսումնասիրությունը նաև իր արժեքավոր ներդրումն ունի հայ, վրացի և այլ ժողովուրդների քաղաքական պատմության ուսումնասիրության մեջ:

---

[1] «Անդրկովկաս» անվանումը գործածության մեջ է մտել XVIII դարից սկսած՝ Ռուսական կայսրության կողմից: Այն ընդգրկում էր ներկայիս Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների տարածքները: Հետագայում այն պաշտոնական բնույթ ստացավ: Մեզ՝ Կովկասյան լեռներից այս կողմ բնակվողներիս համար, այդ անվանման ճիշտ ձևը «Այսրկովկաս»-ն է: Տե՛ս **Թ. Հակոբյան և ուրիշներ**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Ե., 1986, էջ 260:

Արմինիա ոստիկանության պատմական աշխարհագրության ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև կարևոր քաղաքական նշանակություն: Թուրք, ադրբեջանցի ու վրացի պատմաբանները՝ հետապնդելով հեռուն գնացող քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել շատ պատմաաշխարհագրական իրողություններ: Հետևաբար, Հայաստանի և Այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրությանը և վարչական բաժանումներին նվիրված ամեն մի անաչառ ուսումնասիրություն կարևոր ներդրում է մեր հարևան երկրների պատմաբանների նենգափոխումների և քաղաքական նկրտումների բացահայտման գործում:

Խնդրո առարկա թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս հատուկ ուսումնասիրության չի արժանացել: Թեև Արմինիա ոստիկանության մեջ մտնող երկրների պատմական աշխարհագրության որոշ հիմնահարցեր ուսումնասիրվել են դարձել մի քանի հայ և օտարազգի ուսումնասիրողների կողմից, բայց Խալիֆայության այդ վարչական միավորի կազմավորման, վարչական բաժանման, առևտրական ճանապարհների և էթնիկ կազմի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն ցայսօր հրապարակի վրա չկա:

Սույն ուսումնասիրությունն այդ հիմնահարցերի համատեղ քննության փորձ է:

Մեր առջև նպատակ ենք դրել կատարելու Արմինիա ոստիկանության չորս վարչական շրջանների պատմաաշխարհագրական քննությունը, որոշելու Արմինիա մտնող և նրա տարածքով անցնող առևտրական ճանապարհների ուղղությունները և քննության առնելու Արմինիայի էթնիկ կազմը:

Այդ նպատակի իրականացման համար խնդիր է դրվել.

ա. անդրադառնալ Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում պարսկա-բյուզանդական տիրապետության վերջին շրջանի պատմությանը՝ դրանով իսկ հստակեցնելով այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել Արմինիա ոստիկանության վարչական բաժանման համար,

բ. չորս Արմինիաների քննությունը կատարել հերթականությամբ և հստակեցնել դրանցից յուրաքանչյուրի սահմանները, ինչպես նաև վերջինների փոփոխությունները տասնամյակների ընթացքում,

գ. կատարել Արմինիա ոստիկանության կազմի այլևայլ, դեռևս առանձին ուսումնասիրության թեմա չդարձած երկրների և իշխանությունների տեղադրությունը,

դ. տեղադրել Արմինիայում գտնվող ճանապարհային կայարանները, որոշել Արմինիա ոստիկանության առևտրական կապերի ուղղությունները,

ե. հերթականությամբ քննության առնել Արմինիա ոստիկանության չորս վարչական շրջաններում գոյություն ունեցող էթնիկական պատկերը, դրանցում արաբ վերաբնակիչների հաստատման հիմնահարցը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն խնդրին, թե չորս Արմինիաներից յուրաքանչյուրի կազմում հատկապես որտե՞ղ և ո՞ր արաբական ցեղն էր հաստատվել:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի և Այսրկովկասյան երկրների պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն հայկական սկզբնաղբյուրները:

Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում պարսկա-բյուզանդական տիրապետության վերջին շրջանի և արաբական առաջին արշավանքների մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել Սեբեոսի «Պատմութիւն» աշխատության մեջ[1]: Հեղինակը ներկայացնում է տարածաշրջանում VII դ. առաջին կեսին ստեղծված քաղաքական իրավիճակը, որը հնարավորություն տվեց արաբներին արագորեն մեծ հաջողությունների հասնելու, կործանելու Սասանյանների տերությունը և Բյուզանդական կայսրությունից խլելու ընդարձակ տարածքներ: Սեբեոսը նկարագրում է Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունն արաբ նվաճողների նկատմամբ, վերջիններիս վերաբերմունքը Հայաստանի և Այսրկովկասյան երկրների հանդեպ, արաբա-բյուզանդական պատերազմներն այդ երկրներին տիրելու համար, 652 թ. հայ-արաբական պայմանագիրը և այլն:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր է Ղևոնդ վարդապետի երկը՝ «Պատմութիւն»-ը[2]: Ղևոնդը, Սեբեոսի նման, իր պատմությունը սկսում է արաբական առաջին արշավանքներից, սակայն, նրա «Պատմութիւն»-ը հիմնականում նվիրված է VIII դ. իրադարձություններին: Ղևոնդն իր երկում մանրամասնորեն նկարագրում է արաբական տիրապետության հաստատումը՝ բերելով հավաստի վկայություններ: Ղևոնդի աշխատության մեջ, ինչպես այս շրջանին վերաբերող բոլոր հայ պատմիչների երկերում, ման-

---

[1] «Պատմութիւն Սեբէոսի» (այսուհետև՝ Սեբեոս), աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Ե., 1979:

[2] «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց» (այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887:

ռամասնորեն նկարագրված են երկրում տիրող տնտեսական ծանր վիճակը, հարկային կեղեքումները և ժողովրդի անմխիթար վիճակը:

Թովմա Արծրունին, հիմնական նպատակակետ ունենալով Վասպուրականի Արծրունյաց իշխանության պատմության շարադրությունը, իր «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում[1] հաճախ անդրադառնում է նաև Արմինիայի մյուս շրջանների պատմության և աշխարհագրության որոշ կարևոր հիմնահարցերի: Թովմա Արծրունու տեղեկություններից պատկերացում ենք կազմում նաև Վասպուրականում հաստատված արաբական ցեղերի գրաված տարածքների մասին:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի և Այսրկովկասյան երկրների մասին կարևոր տեղեկություններ են պահպանվել Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ում[2]:

Կարևոր աղբյուր է նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» աշխատությունը[3]: Ակնհայտ է, որ հեղինակն իր երկի՝ VII-VIII դդ. պատմության մասին հատվածները շարադրելիս մեծապես օգտվել է Ղևոնդի «Պատմութիւն»-ից:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի շատ հիմնախնդիրների պարզաբանման համար մեծ արժեք է ներկայացնում Մովսես Դասխուրանցու (գրականության մեջ նաև Կաղանկատվացի կոչված) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը[4]: Այս աշխատությունը հիմնականում վերաբերում է Հայոց Արևելից կողմերի երկու աշխարհների՝ Արցախի և Ուտիքի պատմությանը, սակայն, կարևոր տեղեկություններ է պահպանել նաև Հայաստանի մյուս շրջանների և Այսրկովկասյան երկրների մասին:

Կարևոր է նաև Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աշխատության նշանակությունը[5]: Հեղինակի տեղեկությունները լույս են սփռում Կղարջքում, իսկ այնուհետև նաև Վիրքում հայ Բագրատունիների ծյուղի հաստատման, Հայաստանում արաբական ցեղերի վերաբնակեցման ու տարածման և այլ կնճռոտ հարցերի վրա:

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), բնագիրը Վ. Վարդանյանի, Ե., 1985:

[2] Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Ե., 1996:

[3] Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» (այսուհետև՝ **Ասողիկ**), հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885:

[4] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ **Մովսես Կաղանկատվացի**), քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983:

[5] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի» (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Վենետիկ, 1862:

Մեծ Հայքի և հարևան երկրների վարչաքաղաքական բաժանման համակարգի, գավառների տեղադրության և պատմաաշխարհագրական այլ հարցերի վերաբերյալ ստույգ և արժեքավոր նյութեր են պարունակում Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և Հովհան Մամիկոնյանի երկերը[1]:

Պատմաաշխարհագրական և այլ կարգի հարցերում մեծ է նաև Անանուն Զրուցագրի կամ կարծեցյալ Շապուհ Բագրատունու, Կիրակոս Գանձակեցու, Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու և Ստեփաննոս Օրբելյանի աշխատությունների դերը[2]: Այդ հարցերում մեծ կարևորություն ունի նաև «Աշխարհացոյց»-ը[3]:

Արաբական տիրապետության շրջանի Հայաստանի և Այսրկովկասյան երկրների պատմության և պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն նաև արաբական աղբյուրները:

Արաբ հեղինակներին մենք պայմանականորեն բաժանում ենք երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկում ենք այն հեղինակներին, որոնք հիշատակում են Արմինիան որպես խալիֆայության կազմում առանձին վարչական միավոր, իսկ երկրորդ խմբում՝ այն հեղինակներին, որոնք Արմինիա անվան տակ նկատի ունեն Հայաստանը:

Արաբ հեղինակների առաջին խմբում նախ և առաջ պետք է դասել Բալազուրիին, որի աշխատությունը կոչվում է «Գիրք երկրների

---

[1] Տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), բնագիրը Ք. Պատկանյանի, Ե., 1987, «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Ե., 1981, Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ **Եղիշե**), ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան» (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**), քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Ե., 1982, **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ (այսուհետև՝ **Հովհան Մամիկոնյան**), աշխատությամբ Ա. Աբրահամյանի, Ե., 1941:

[2] Տե՛ս «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ» (այսուհետև՝ **Շապուհ Բագրատունի**), ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909 (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**), Ե., 1909, «Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն» (այսուհետև՝ **Մատթեոս Ուռհայեցի**), գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, Ե., 1991, «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» (այսուհետև՝ **Սամվել Անեցի**), յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, «Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական» (այսուհետև՝ **Ստեփաննոս Օրբելյան**), Թիֆլիս, 1910:

[3] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944, **К. Патканов**, Армянская география VII века по Π.Χ. Ґприписывавшаяся Моисею Хоренскому, Санктпетербург, 1877, «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881:

նվաճման [մասին]»[1]: IX դ. հեղինակը մանրամասնորեն նկարագրում է Հայաստանի, Վիրքի, Աղվանից աշխարհի և Մերձկասպյան շրջանների նվաճումը, տալիս Արմինիա ոստիկանության վարչական բաժանումը: Ըստ Բալազուրիի՝ Արմինիան բաժանված էր չորս մասերի՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիաների: Արմինիա ոստիկանության վարչական բաժանման մասին նմանօրինակ հիշատակություններ են պահպանել համարյա բոլոր արաբ հեղինակները, որոնք անդրադարձել են Արմինիայի վարչական բաժանմանը: Բալազուրիի երկում արժեքավոր տեղեկություններ կան նաև Արմինիայում հաստատված արաբական ցեղերի մասին:

Միակ արաբ հեղինակը, որը Արմինիայի վարչական բաժանման՝ մյուսներից տարբերվող տեղեկություն է տալիս, IX դ. հեղինակ Յակուբին է: Նրա գրչին են պատկանում «Պատմություն»[2] և «Գիրք երկրների [մասին]» աշխատությունները[3]: Ըստ Յակուբիի՝ Արմինիան բաժանված

---

[1] Տե՛ս ١٩٥٦-١٩٥٨، القاهرة، ٣-١، كتاب فتوح البلدان، بلاذري (այսուհետև՝ بلاذري): Գոյություն ունեն Բալազուրիի երկի հատվածների տարբեր թարգմանություններ: 1919 թ. Վիեննայում Բ. Խալաթյանցը հրատարակել է «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին» ժողովածուն, որտեղ, բացի Բալազուրիի աշխատանքի հատվածների թարգմանություններից, տեղ են գտել նաև թարգմանություններ Իբն Մասկավայի, Տաբարու, Յակուբիի և Իբն ալ-Ասիրի երկերից (տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919»): Բալազուրիի երկի «Արմինիայի նվաճումը», «Ադարբայջանի նվաճումը», «Խարաջային հողերի օրենքների մասին» և «Դրամի մասին» գլուխների արաբերեն տեքստերը և դրանց թարգմանությունները հրատարակել է կովկասագետ Պ. Ժուզեն (տե՛ս Из соч. Баладзори "Книга завоевания стран", текст и перевод П.Жузе, Баку, 1927). 2005 թ. լույս տեսավ IX-X դդ. արաբ 18 մատենագիրների (Աբու Յուսուֆ, Վահբ իբն Մունաբբիհ/Իբն Հիշամ, Վակիդի, Խալիֆա իբն Խայյաթ, Իբն Կուտայբա, Դինավարի, Բալազուրի, Յակուբի, Խորեզմի, Ջահիզ, Իբն Խորդադբեհ, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Ռուստեհ, Ֆարղանի, Կուդամա իբն Ջաաֆար, ալ-Իսթախրի, Իբն Հաուկալ, ալ-Մուկադդասի) աշխատությունների՝ Հայաստանին, ինչպես նաև հարևան և հեռավոր շատ երկրների վերաբերող հատվածների Ա. Տեր-Ղևոնդյանի թարգմանությունը (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի նասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005), որը մեծարժեք ներդրում է հայագիտության և արաբագիտության մեջ: Բալազուրիի երկի հատվածների թարգմանությունը տե՛ս անդ, էջ 224-312:

[2] Տե՛ս ١٩٧٠، بيروت، ٢، تاريخ اليعقوبي، يعقوبي (այսուհետև՝ يعقوبي): Յակուբիի «Պատմության»՝ Հայաստանին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել են Բ. Խալաթյանցը (տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին»), Հ. Ադամյանը (տե՛ս «Յագուպի արաբ պատմագիրը և հայերը»,-«Բազմավեպ» 1957, թիվ 11-12, 1958, թիվ 3-5) և Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 332-399):

[3] Տե՛ս "Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhih al-Kâtib Al-Jakûbî" (այսուհետև՝ **Jakubi**).-Bibliotheca geographorum arabicorum (այսուհետև՝ BGA), editio II, p. VII, Lugd. Bat., 1967. Այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս **Н. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане.-«Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (այսուհետև՝ СМОМПК), вып. 32, Тифлис, 1903, с. 56-61),

էր երեք մասի, որոնք հաջորդաբար կոչվում էին Առաջին, Երկրորդ և Երրորդ Արմինիաներ: Այս հեղինակը երիտասարդ տարիներին ապրել էր Արմինիայում, ուստի և քաջածանոթ էր այնտեղ գոյություն ունեցող վարչա-քաղաքական իրավիճակին:

Արմինիա ոստիկնության վարչական բաժանման և առևտրական ճանապարհների վերաբերյալ հարուստ տեղեկություններ են պահպանվել IX դ. հեղինակ Իբն Խորդադբեհի «Գիրք ճանապարհների և թագավորությունների [մասին]» աշխատության մեջ[1]: Իբն Խորդադբեհն Արմինիա ոստիկանության ժամանակակիցն է, ուստի և հետագայի շատ արաբ հեղինակների համար նրա երկն արժեքավոր տեղեկությունների աղբյուր է հանդիսացել:

Արմինիա ոստիկանության մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև IX-X դդ. աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհի «Գիրք երկրների [մասին]» երկում[2]: Մեզ համար հատկապես կարևոր են այս աշխարհագետի տեղեկությունները Կովկասյան լեռների արևելյան հատվածի իշխանությունների և Արմինիայի հարստությունների մասին:

XIII դ. հեղինակ Յակուտ ալ-Համավին իր «Աշխարհագրական բառագիրք»-ը[3] կազմելիս ի մի է բերել նախորդ շրջանի արաբ հեղինակների հիշատակությունները: Սակայն, Յակուտն իր աշխատության էջերում ոչ միայն պարզապես տալիս է այս կամ այն հեղինակից վերցրած տեղեկությունները, այլև հաղորդում իր տեսածը կամ լսածը տվյալ երկրի մասին:

Առաջին խմբի մեջ պետք է դասել նաև X դ. աշխարհագետ Կուդա-

իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 460-476):

[1] Տե՛ս **Ibn Khordâdbeh**, Kitâb al-masвlik wa'l-mamâlik (այսուհետև՝ Ibn Khordadbeh).-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967. Իբն Խորդադբեհի երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, նշվ. աշխ., вып. 32, с. 4-19), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 433-454):

[2] Տե՛ս Ibn al-Fakih al-Hamadhani, Kitâb al-boldân (այսուհետև՝ Ibn al-Fakih).-BGA, editio II, p. V, Lugd. Bat., 1967. Այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, նշվ. աշխ., вып. 31, Тифлис, 1902, с. 4-41), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 480-504):

[3] Տե՛ս Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersbourg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld (այսուհետև՝ Jacut), Leipzig, 1924 (in sechs Bänden). Յակուտի երկի՝ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները քաղել և թարգմանել է Հ. Նալբանդյանը (տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, Ե., 1965):

մային՝ իր «Գիրք խարաջի [մասին]» աշխատությամբ[1]: Կուդամայի հայրն անձամբ ծանոթ է եղել Իբն Խորդադբեհին, ուստի և զարմանալի չէ նրա որոշ տեղեկությունների նմանությունն այդ հեղինակի տեղեկություններին:

Արժեքավոր են նաև IX-Xդդ. արաբ աշխարհագետ Իբն Ռուստեհի հաղորդած տեղեկություններն Արմինիա ոստիկանության մասին: Հեղինակի երկը կոչվում է «Գիրք թանկարժեք քարերի [մասին]»[2]:

Արաբական սկզբնաղբյուրների երկրորդ խմբի մեջ իր տեղեկությունների հարստությամբ աչքի է ընկնում X դ. ալ-Իսթախրիի «Գիրք թագավորությունների ճանապարհների [մասին]» աշխատությունը[3]: Մեծ է Արմինիայի տարբեր իշխանությունների, ինչպես նաև առևտրական ճանապարհների և դրանց կայարանների մասին ալ-Իսթախրիի պահպանած տեղեկությունների արժեքը:

Իբն Հաուկալն իր «Երկրի համայնապատկեր» երկի[4] որոշ հատվածներ շարադրելիս օգտվել է ալ-Իսթախրիի վկայություններից: X դ. հեղինակի տեղեկությունները արժեքավոր են Հայաստանի և Այսրկովկասյան երկրների առևտրական ճանապարհների ուղղությունների որոշակիացման և կայարանների տեղադրության համար: Իբն Հաուկալը կարևոր տեղեկություններ է պահպանել նաև Արմինիայի քաղաքների մասին:

Արաբ աշխարհագետների մեջ իր ուրույն տեղն ունի X դ. հեղինակ ալ-Մուկադդասին: Նա գրել է «Լավագույն բաժանման գիրքը՝ կլիմանե-

---

[1] Տե՛ս "Excerpta e Kitâb al Kharadj auctore Kudama-ibn Dja'far" (այսուհետև՝ Kudama).-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967. Այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, вып. 32, с. 24-33), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 544-564):

[2] Տե՛ս "Kitâb al-a'lâk an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh" (այսուհետև՝ Ibn Rosteh).-BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967. Իբն Ռուստեհի երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, вып. 32, с. 36-51), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 510-527):

[3] Տե՛ս al-Istakhri, Kitâb masâlik al-mamâlik (այսուհետև՝ al-Istakhri).- BGA, editio III, p. I, Lugd. Bat., 1967. Այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, вып. 29, Тифлис, 1901, с. 2-55), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 572-578):

[4] Տե՛ս Abū 'L-Kāsim Ibn Haukal al-Nasībī, Kitâb surât al-ard (այսուհետև՝ Ibn Haukal).-BGA, editio III, p. II, Lugd. Bat., 1967. Իբն Հաուկալի երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս Н. Караулов, Նշվ. աշխ., вып. 38, Тифлис, 1908, с. 81-118), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 583-642):

որի[1] ճանաչման համար» երկը[2]: Մուկադդասին մանրամասն տեղեկություններ է պահպանել Հայաստանի և Այսրկովկասյան երկրների քաղաքների և առևտրական ճանապարհների մասին:

Հայաստանի և Այսրկովկասյան երկրների աշխարհագրությանը մանրամասնորեն անդրադարձել է նաև X դ. արաբ աշխարհագետ Մասուդին իր «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր» աշխատության մեջ[3]: Նրա գրչին է պատկանում նաև «Հաղորդումների և իմացությունների գիրք»ը[4]:

Արաբական պատմագրության նշանավոր ներկայացուցիչ է Իբն ալ-Ասիրը (XII-XIII դդ.): Իր բազմահատոր «Լիակատար պատմություն»[5] աշխատության մեջ հեղինակն ընդհանուր պատմությունը շարադրել է սկզբից մինչև 1231 թ.: Իբն ալ-Ասիրի երկն արժեքավոր աղբյուր է Արմինիա ոստիկանության պատմության շատ հիմնահարցերի լուսաբանման համար:

Արաբական մատենագրության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև Թաբարին[6], Իբն Մասկավայը[7] և ալ-Քուֆին[8]:

---

[1] Հայտնի է, որ արաբական աշխարհագրությունը բնակելի աշխարհը բաժանում էր 7 կլիմաների կամ երկրների խմբերի (տե՛ս Ibn Rosteh, էջ 97-98):

[2] Տե՛ս al-Moqaddasi, Kitáb ahsán at-tákasim fi ma'rifat al-akálim (այսուհետև՝ al-Moqaddasi).-BGA, editio III, p. III, Lugd. Bat., 1967. Այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, вып. 38, с. 3-19), իսկ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածները՝ Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները...», 16, էջ 650-659):

[3] Տե՛ս مسعودي، مروج الذهب و معادن الجوهر، ١-٢، القاهرة، ١٩٤٨ (այսուհետև՝ مسعودي): Հայտնի են Մասուդիի այս երկի Կովկասին վերաբերող հատվածի Վ. Մինորսկու և Ն. Կարաուլովի թարգմանությունները (տե՛ս **В. Минорский,** История Дербенда и Ширвана IX-XI вв., Москва, 1963, էջ 188-215, և **Н. Караулов**, СМОМПК, вып. 38, с. 37-61):

[4] Տե՛ս "Kitáb at-tanbîh wa'l ischrâf auctore al-Masûdî" (այսուհետև՝ **Masudi**).-BGA, editio II, p. VIII, Lugd. Bat., 1967. Մասուդիի այս երկի՝ Կովկասին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս СМОМПК, вып. 38, с. 31-37): 2007 թ. լույս տեսավ Մասուդիի երկու աշխատությունների՝ Հայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածների հայերեն թարգմանությունը (տե՛ս **Աբու ալ-Հասան Ալի իբն ալ-Հուսայն իբն Ալի ալ-Մասուդի**, Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր, Ցուցումների և դիտարկումների գիրք,-թարգմանեց և հրատարակության պատրաստեց Ա. Եղիազարյանը, Ե., 2007):

[5] Տե՛ս ابن الاثير ، الكامل في التاريخ، ١-٩، بيروت، ١٩٦٧ (այսուհետև՝ ابن الاثير): Արաբ հեղինակի երկի՝ Հայաստանին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել են Բ. Խալաթյանցը (տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 124-147) և Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981):

[6] Տե՛ս طبري، تاريخ الطبري، ١-٩، بيروت: (այսուհետև՝ طبري): Թաբարիի երկի՝ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունը տե՛ս **Բ. Խալաթյանց**, նշվ. աշխ., էջ 79-102:

[7] Տե՛ս **Բ. Խալաթյանց**, նշվ. աշխ., էջ 77-79:

[8] Տե՛ս **al-Kufi,** Kitāb'l-futūh (այսուհետև՝ al-Kufi), I-VIII, Hyderabad, 1968-1975. Ալ-Քուֆիի երկի՝ Ադրբեջանին վերաբերող հատվածները թարգմանել է Ջ. Բունիաթովը (տե՛ս

Բացի հայկական և արաբական սկզբնաղբյուրներից կարևոր են նաև պարսկական, վրացական և բյուզանդական աղբյուրները: Առաջիններից մեզ համար օգտակար է եղել պարսկական աշխարհագրական երկը՝ Հուդուդ ալ-Ալամը[1], իսկ երկրորդներից՝ «Քարթլիս ցխովրեբա»-ն[2], «Քարթլիի մատյան»-ը[3] և Վախուշտի Բագրատունու «Վրաց թագավորության պատմությունը»[4]: Վրացական աղբյուրների՝ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունները կատարել է Լ. Մելիքսեթ-Բեկը[5]: Վերջինները մեզ համար օգտակար են եղել Վիրքի պատմաաշխարհագրական որոշ հիմնահարցերի պարզաբանման համար:

Բյուզանդական աղբյուրներից մեզ համար կարևոր է Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրություն» երկը[6]: Թեոփանեսը մանրամասն տեղեկություններ է պահպանել VII դ. երկրորդ կեսի արաբա-բյուզանդական պատերազմների և արաբների կողմից Հայաստանի և Այսրկովկասյան երկրների նվաճման մասին:

Կարևոր աղբյուր է նաև Կոստանդին Ծիրանածնի երկը[7]:

Օգտագործել ենք նաև հույն աշխարհագրագետ Ստրաբոնի և հռոմեացի պատմիչ Պլինիոսի աշխատությունները[8]:

Մեր ուսումնասիրության համար կարևոր են նաև ասորական աղբյուրները: Մենք օգտվել ենք ասորական աղբյուրների Ն. Պիգուլևսկա-

---

Абу Мухаммад Ахмад ибн А'сам ал-Куфи, Книга завоеваний (извлечения по истории Азербайджана VII-IX вв.), перевод З. Буниятова, Баку, 1981):

[1] Տե՛ս **Hudūd al-ʿĀlam**, «The regions of the world», A Persian geography 372 A.H-982 A.D. (այսուհետև՝ Hudud al-Alam), translated and explained by V. Minorsky, London, 1937.

[2] «Քարթլիս Ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», լույս ընծայեց Ի. Աբուլաձեն, Թիֆլիս, 1953:

[3] Տե՛ս «Матиане Картлиса», перевод, введение и примечания М. Лордкипанидзе, Тбилиси, 1976.

[4] Տե՛ս **Вахушти Багратиони,** История царсва Грузинского (այսուհետև՝ **Вахушти Багратиони**), перевод Н. Накашидзе, Тбилиси, 1976:

[5] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա-Գ, Ե., 1934-1955:

[6] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանող (այսուհետև՝ **Թեոփանես Խոստովանող**), թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1983:

[7] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին (այսուհետև՝ **Կոստանդին Ծիրանածին**), թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1970:

[8] Տե՛ս **Страбон,** География, в 17 книгах (այսուհետև՝ **Страбон**), перевод, статья и комментарии Г. Стратановского, Москва, 1964, Pliny Natural history (այսուհետև՝ Pliny), with an English translation by H. Rackham, in ten volumes, vol. II, Great Britain, 1947.

յայի կատարած թարգմանությունից[1]:

Անհրաժեշտաբար օգտագործել ենք նաև մի շարք աշխարհագրական ու ազգագրական ուսումնասիրություններ և ուղեգրություններ[2]:

Մեծապես օգտվել ենք նաև Ցարական Ռուսաստանի բանակային շտաբի հինգ և տասվերստանոց քարտեզներից, ինչպես նաև նախախորհրդային ժամանակաշրջանում հրատարակած տարբեր մասշտաբների այլևայլ քարտեզներից:

Անդրադառնալով հարցի ուսումնասիրության պատմությանը՝ ընդգծենք, որ հրապարակի վրա կա միայն մեկ պատմաաշխարհագրական ուսումնասիրություն Հայաստանի մասին: Խոսքը Ս. Շլեպչյանի «Արաբական խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում (7-9 դդ.)» աշխատության մասին է[3]: Ս. Շլեպչյանը մանրամասնորեն անդրադարձել է արաբական տիրապետության շրջանի Հայաստանի և համառոտակի՝ Այսրկովկասյան երկրների պատմաաշխարհագրական հարցերին, արաբ վերաբնակիչներին, երկրի տնտեսությանն ու այլ կարևոր խնդիրների:

Ծավալում է արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի և Այսրկովկասյան երկրների քաղաքական պատմության

---

[1] Տե՛ս **Н. Пигулевская**, Сирийские источники по истории народов СССР, Москва, 1941.

[2] Տե՛ս **Ղ. Ինճիճյան,** Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822: **Ս. Ջալալեանց**, ճանապարհորդութիւն 'ի մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858: **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, նույնի՝ Սիսական, Վենետիկ, 1893: **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, նույնի՝ Արցախ, Բաքու, 1895: **Հ. Հյուբշման,** Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907: **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմ. ռուսերենից Ա. և է. Խոնդկարյանների, Ե., 1987: **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, նույնի՝ «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ,-«Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1973, թիվ 2: **Ա. Մնացականյան,** Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966: **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1984: **Թ. Հակոբյան և ուրիշներ**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀՇՏԲ), հ. 1, Ե., 1986, հ. 3, Ե., 1991: **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), 2001: **Н. Марр,** Кавказские племенные названия и местные параллели.-«Труды комиссии по изучению племенного состава населения России», N 5, Петроград, 1922. «История, география и этнография Дагестана 18-19 вв.», архивные материалы, Москва, 1958. «Народы мира», этнографические очерки, «Народы Кавказа», т. I, Москва, 1960. **М. Артамонов,** История Хазар, Ленинград, 1962. **В. Минорский,** История Дербенда и Ширвана IX-XI вв., Москва, 1963. **Н. Волкова,** Этнонимы и племенные названия Северного Кавказа, Москва, 1973.

[3] Տե՛ս **Ս. Շլեպչյան,** Արաբական Խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում (7-9 դդ.), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Ե., 1954:

ուսումնասիրությունը: Հետազոտողներն իրենց աշխատանքներում որոշ տեսակետներ են հայտնել նաև հիշյալ երկրների պատմական աշխարհագրությանը վերաբերող հարցերի մասին:

XVIII դարում Մ. Չամչյանցն իր եռահատոր «Պատմութիւն Հայոց»-ում մի ամբողջ գլուխ էր նվիրել արաբական տիրապետության ժամանակաշրջանի հայոց պատմությանը, որը կրում է «Ժամանակ իշխանութեան ոստիկանաց» վերնագիրը[1]: Այս գլուխը կազմելիս հեղինակն օգտագործել է հայկական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները՝ որոշ լրացումներ կատարելով բյուզանդական աղբյուրներից:

Արաբների կողմից Հայաստանի նվաճմանը, այնտեղ արաբ վերաբնակիչների հաստատմանը և հայ ժողովրդի հակաարաբական ապստամբություններին անդրադարձել է Ղ. Ինճիճյանն իր ուսումնասիրություններից մեկում[2]:

Մ. Ղազարյանն առաջին ուսումնասիրողն է, որը լայնորեն օգտագործել է արաբական աղբյուրները: Դրա հիման վրա նրան հաջողվել է վեր հանել ժամանակաշրջանի շատ հիմնահարցեր և կազմել Արմինիայի ոստիկանների ցուցակը: Աշխատանքի հավելվածում («Աշխարհագրական») Մ. Ղազարյանն անդրադարձել է արաբական աղբյուրներում հիշատակվող և Հայաստանին ու Այսրկովկասյան երկրներին վերաբերող աշխարհագրական անունների ստուգաբանությանը[3]:

Ժ. Լոռանը հատուկ ուշադրություն է դարձրել արաբական տիրապետության օրոք Հայաստանի ներքին ինքնուրույնությանը և երկրի ֆեոդալական իշխանություններին: Հայաստանի ներքին ինքնուրույնությամբ էլ նա պայմանավորել է հայ-արաբական և հայ-բյուզանդական հարաբերությունների բնույթը: Աշխատանքի հավելվածում տրվում է Արմինիայի ոստիկանների ցուցակ[4]:

Հայաստանի արաբական տիրապետության շրջանի պատմությանն անդրադարձել է նաև Լեոն[5]: Հեղինակը մանրամասնորեն քննության է առել այդ ժամանակաշրջանի պատմությունը՝ հպանցիկ խոսելով նաև Արմինիա ոստիկանության վարչական բաժանման, տնտեսության, առևտրական ճանապարհների և այլ կարևոր հարցերի մասին:

---

[1] Տե՛ս **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Ե., 1984, էջ 376-453:

[2] Տե՛ս **Ղ. Ինճիճեան,** Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, հ. Ա, էջ 319-325, 422-449, հ. Գ, էջ 228-231, 323-325:

[3] Տե՛ս **M. Ghazarian,** Armenien unter der arabishchen herrschaft bis zur Enstehung des Bagratidenreiches, Marburg, 1903.

[4] Տե՛ս **J. Laurent,** L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en (Nouvell édition revue et mise a jour par M. Canard) , Lisbonne, 1980.

[5] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, միջին դարեր,-Երկերի ժողովածու, հ. Բ, Եր., 1967:

Հ. Հարությունյանն իր աշխատության մեջ փորձ է կատարել վերարտադրելու արաբական տիրապետության ժամանակների Հայաստանի քաղաքական պատմությունը[1]: Նա որոշ տեսակետներ է արտահայտում նաև Հայաստանի վարչա-քաղաքական իրավիճակի վերաբերյալ:

Հայաստանում արաբների վարած վարչական ու հարկային քաղաքականությամբ զբաղվել է Հ. Նալբանդյանը[2]: Նա իր ուսումնասիրության առաջին մասում քննության է առել արաբների կողմից Հայաստանի վարչական կազմակերպման և վարչական պաշտոնների խնդիրը: Ուսումնասիրության թեմա են դարձել նաև արաբների կողմից Հայաստանի տնտեսական շահագործման խնդիրը, նրանց սահմանած հարկերը և այլն:

Արաբական արշավանքների, արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պատերազմների և խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմաշխարհագրական որոշ հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել Հ. Մանանդյանը[3]: Ուսումնասիրողը քննության է առել դեպի Հայաստան արաբների կատարած առաջին արշավանքների թվականները, որոնց մի մասն էլ մենք գործածել ենք մեր ուսումնասիրության մեջ: Մեծ արժեք են ներկայացնում նրա կողմից Հայաստանն արտաքին աշխարհին կապող առևտրական ճանապարհների ուղղությունների պարզաբանումն ու կայարանների տեղադրությունը[4]:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի մասին է Ստ. Մելիք-Բախշյանի «Հայաստանը VII-IX դարերում» ուսումնասիրությունը[5]: Այն հատկապես կարևոր է VII-IX դդ. Հայաստանի քաղաքական պատմության և տնտեսությանը վերաբերող հարցերի համար:

Հայաստանի արաբական տիրապետության շրջանի պատմության հիմնահարցերի ուսումնասիրության մեջ մեծագույն վաստակը պատկանում է Ա. Տեր-Ղևոնդյանին: Այդ և հետագա շրջանի մասին նա գրել է երեք

---

[1] Տե՛ս **Հ. Հարությունյան,** Հայաստանն Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ (640-856), Ե., 1946:

[2] Տե՛ս **Հ. Նալբանդյան,** Արաբների վարչական և հարկային քաղաքականությունը Հայաստանում, պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Ե., 1950:

[3] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Արաբական արշավանքները Հայաստանում,-Երկեր, հ. Բ, մաս Ա, Ե., 1978, ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Ե., 1939:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան՝** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Ե., 1936, նույնի՝ Բագրատունյաց դարաշրջանի գլխավոր առևտրական ճանապարհները,-Երկեր, հ. Զ, Ե., 1985:

[5] Տե՛ս **Ստ. Մելիք-Բախշյան**, Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968:

ծավալուն աշխատություն[1] և բազմաթիվ հոդվածներ[2]: Դրանք անչափ կարևոր են VI-Xդդ. Հայաստանի, ինչպես նաև Այսրկովկասյան երկրների պատմության, պատմական աշխարհագրության, տնտեսության, էթնիկ կազմի և այլ կարևոր խնդիրների ուսումնասիրության համար:

Արաբական առաջին արշավանքներին անդրադարձել է Է. Դանիելյանը՝ ճշտումներ մտցնելով նախկինում այդ արշավանքների թվականների և ուղղությունների վերաբերյալ արտահայտված կարծիքների մեջ[3]: Ուսումնասիրողի այդ ճշտումները մենք օգտագործել ենք մեր ուսումնասիրության մեջ:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ աշխատանքներ են հրատարակվել նաև Ադրբեջանում: Դրանցից է Զ. Բունիաթովի ուսումնասիրությունը[4]: Ադրբեջանցի պատմաբանը, չնայած, որ լայնորեն օգտագործել է արաբական և հայկական սկզբնաղբյուրները, դիմել է կեղծարարության ու պատմության նենգափոխման:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանին է մասամբ վերաբերում Ս. Աշուրբեյլու ուսումնասիրությունը, որի հեղինակը ևս հաճախ դիմել է փաստերի խեղաթյուրման և պատմության նենգափոխման[5]:

Վրաստանում հրատարակված աշխատություններից կարևոր են Ա. Բոգվերածեի, Դ. Մուսխելիշվիլիի, Մ. Լորդկիպանիձեի և այլոց աշխատությունները[6]: Այստեղ ևս երբեմն նկատվում է պատմության նպատակադիր կեղծարարություն:

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965, նույնի՝ Армения и Арабский халифат, Ереван, 1977, նույնի՝ Հայաստանը VI-VIII դարերում, Ե., 1996:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր),-«ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149, Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում,-ՀՍՍՀ ԳԱԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 10, էջ 85-98, Հայաստանի վարչական բաժանումները ըստ արաբ աշխարհագիրների,-ՀՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագիր», 1961, թիվ 5, էջ 63-72, «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում,-«ՊԲՀ», 1964, թիվ 2, էջ 121-134, Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 196-202, Քուստ-ի Կապկոհ վարչական միավորի վերապրուկները Խալիֆայության ժամանակ,-ՀՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 9, էջ 73-77 և այլն:

[3] Տե՛ս **Է. Դանիելյան,** Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Ե., 2000: Տե՛ս նաև հեղինակի «647 թ. արաբական արշավանքը Հայաստան» հոդվածը,-«ՊԲՀ», 1982, թիվ 2:

[4] Տե՛ս **З. Буниятов**, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

[5] Տե՛ս **С. Ашурбейли,** Государство Ширваншахов, Баку, 1983.

[6] Տե՛ս «Очерки истории Грузии», т. II, Тбилиси, 1988.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՄԻՆԻԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Սասանյան Պարսկաստանի տիրապետության օրոք կազմավորվել էին Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունները, որոնք ընդգրկված էին Պարսից տերության հյուսիսային վարչական մեծ շրջանի՝ Քուստ-ի Կապկոհի(Կովկասյան քուստակ) մեջ: Վերջինի մեջ մտնում էին նաև Ատրպատականը, Գիլանը, Շանճանը, Դլմունքը, Տաբարստանը և այլ երկրներ[1]: Սասանյանները հիշյալ երեք մարզպանությունները կազմավորել էին խառը ազգային կազմերով: Նրանք Մեծ Հայքը վտանգազերծելու նպատակով մասնատել էին: Նախկինում նրա մաս կազմող Գուգարքի բդեշխությունը միացրել էին Վիրքի(Վարջան) մարզպանությանը[2], իսկ Արցախն ու Ուտիքը՝ Աղվանից մարզպանությանը[3]: Այս քայլերը նպատակ ունեին նաև թուլացնելու Վիրքն ու Աղվանքը՝ նրանց միատարր հայ բնակչությամբ երկրամասեր կցելով: Վրաց մարզպանության կազմում ընդգրկված էին Վրաց թագավորությունը և Գուգարքի բդեշխությունը[4], իսկ Աղվանից մարզպանության կազմում, բացի Մեծ Հայքի աշխարհներից, ընդգրկված էին նաև «Աշխարհացոյց»-յան Բուն Աղվանից աշխարհը, Կուր գետի ստորին հոսանքից մինչև Դարբանդ(Ճորա պահակ) ընկած մերձկասպյան երկրները և Կովկասյան լեռների արևելյան հատվածը[5]: Հայոց մարզպանությունն ընդգրկում էր Մեծ Հայքի Այրարատ, Տայք, Տուրուբերան, Մոկք, Վասպուրական, մինչև 571 թ. ապստամբությունը նաև Սյունիք աշխարհները[6], ինչպես նաև Կորճայքի Կորդիք և Տմորիք գավառներն ու Պարս-

---

[1] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 40: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Երկրորդ համաժողովրդական ապստամբական շարժումը և դրա հետևանքները Հայաստանի համար V դ. վերջում-VI դ. սկզբում,-«Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. II, Ե., 1984, էջ 212:

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 34-35: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 119-120:

[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», 28-29, 33:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի,-«ՊԲՀ», 1977, թիվ 2, էջ 187-188

[5] **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 119-120:

[6] Անդ, էջ 118:

կահայքի հյուսիսային հատվածը[1]: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Հայոց մարզպանությունը վարչականորեն կազմված էր երեք շրջաններից՝ Տանուտիրական Գնդի երկիր[2] կամ Տանուտիրական երկիր[3], Սեպհական կամ Վասպուրական Գնդի երկիր[4] և Սյունիք[5]: Մեծ Հայքի արևմտյան աշխարհները գտնվում էին Բյուզանդիայի տիրապետության ներքո[6]:

Հայաստանի և Վիրքի 591 թ. բաժանումը Սասանյան Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև փոխեց իրադրությունը: Պարսկաստանում Վահրամ Չուբինի ապստամբությունը սպանված արքա Որմիզդի որդի Խոսրովը կարողացել էր ճնշել Բյուզանդիայի կայսր Մորիկի(Մավրիկիոս) օգնությամբ: 591 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրով Խոսրովը տարածքային մեծ զիջումներ կատարեց կայսրությանը: Ինչպես վկայում է Սեբեոսը, Խոսրով արքան «ետ նոցա(իմա՛ բյուզանդացիներին-Ա.Ե.) զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց, և ցԱռեստաւան և ցԳոգովիտ գաւառ մինչև ցՀացիւն և ցՄակու: Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային: Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից: Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփխիս քաղաք»[7]: Հետագայում, Խոսրովը, սպանված Մորիկի վրեժը լուծելու պատրվակով, արշավեց Բյուզանդիա, բայց հակահարձակման

---

[1] Տե՛ս **Б. Арутюнян,** Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ,-«Кавказ и Византия», вып. I, Ереван, 1979, с. 19-35.

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 70. Մորիկը, ի հատուցումն ցուցաբերած օգնության, Խոսրովից պահանջեց «՝ի Հայոց զայն աշխարհ, որ Տանուտիրական Գունդն անուանէր...»:

[3] Տե՛ս **Սեբեոս**, էջ 76. Պարսից Խոսրով արքան, օգնության դիմաց, Մորիկին խոստանում էր «յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք, և մինչև ցեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստաւան», էջ 84. Խոսրովը կատարեց խոստումը և Մորիկին հանձնեց «զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան...»:

[4] Սեբեոսը հաղորդում է, որ Հայաստանի 591 թ. բաժանումից հետո միայն «կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային» (տե՛ս **Սեբեոս,** էջ 84):

[5] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի,-«Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 1983, թիվ 3, էջ 131-132:

[6] Տե՛ս **Հ. Բարթիկյան,** Բյուզանդական Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական դրությունը նախքան Հուստինիանոս Ա-ի ռեֆորմները,-«Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. Բ, էջ 216-218:

[7] Տե՛ս **Սեբեոս**, էջ 84: Տե՛ս նաև **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 140:

անցած Հերակլ կայսեր կողմից ծանր պարտություն կրեց: Խոսրովին փոխարինած Կավատ արքան որոշեց «հաշտութիւն առնել ընդ կայսեր, և ի բաց թողուլ զամենայն սահմանս թագաւորութեան նորա»: Հաշտության առաջարկը Հերակլ կայսրն ընդունեց, և 629 թ. կողմերի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: 591 թ. բաժանման սահմանագիծը մնաց անփոփոխ[1]:

591 թ. բաժանումից հետո, երբ Տանուտիրական Գնդի երկիրն անցավ Բյուզանդիային, իսկ Սյունիքը նախքան 571 թ. ապստամբությունն առանձնացվել էր Հայոց մարզպանությունից[2], վերջինից պարսկական տիրապետության ներքո, փաստորեն, մնացին միայն Վասպուրական Գնդի երկիրը(«կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային»), որի մեջ մտնում էին Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի ու Կորճայքի հյուսիսային հատվածները և նախկինում Տանուտիրական Գնդի երկրի մաս կազմող Այրարատի Մասյացոտն, Արածու կողմն և Ոստան Դվնա գավառները[3]: Դատելով Սեբեոսի վկայություններից՝ 591 թ. բաժանումից հետո Հայոց մարզպանությունը, որի մեջ մնացել էին միայն Այրարատի վերոհիշյալ գավառներն ու Վասպուրական Գնդի երկիրը, պաշտոնապես սկսեց կոչվել վերջին անունով[4]: Պարսկական տիրապետության ներքո մնաց նաև Վրաց մարզպանության արևելյան մի փոքրիկ հատվածը՝ Տփղիս քաղաքով: Իսկ Աղվանից մարզպանությունն ամբողջությամբ մնաց պարսկական տերության սահմաններում:

Այսպիսին էր վարչա-քաղաքական իրավիճակը խնդրո առարկա տարածաշրջանում, երբ VII դ. 30-ական թթ. արաբական ցեղերը միավորվեցին իսլամի դրոշի ներքո և անցան արտաքին նվաճումների:

Արաբ նվաճողները պետք է հաղթահարեին դարաշրջանի երկու մեծ տերությունների՝ Սասանյան Պարսկաստանի ու Բյուզանդիայի ար-

---

[1] Տե՛ս **Սեբեոս**, էջ 128:

[2] Անդ, էջ 67-68:

[3] Տե՛ս **Б. Арутюнян,** նշվ. աշխ., էջ 19-35, նույնի՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը..., էջ 137: Պետք է նշել, որ, փաստորեն, Տանուտիրական և Վասպուրական Գնդի երկրների միջև սահմանագիծը համարյա նույնական էր Հայաստանի 591 թ. բաժանման սահմանագծին: Դատելով 591 թ. սահմանագծի վերաբերյալ է. Դանիելյանի ճշգրտումից, երկրի՝ Պարսկաստանին մնացած հատվածի մեջ էր մտնում նաև Այրարատի Մազազ գավառը (տե՛ս **է. Դանիելյան,** Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը(591-629),-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1986, թիվ 8, էջ 56): Այն փաստին, որ Պարսկահայքի և Կորճայքի հյուսիսային գավառները մնացել էին Հայոց մարզպանության կազմում և, հետագայում, մտել Արմինիայի մեջ, դեռ կանդրադառնանք:

[4] Տե՛ս **Սեբեոս**, էջ 84, 166 և այլն: Տե՛ս նաև **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 262, **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը..., էջ 132-133:

գելքը: Վերջինները երկարամյա պատերազմների պատճառով զգալիորեն թուլացել էին, ինչն էլ մեծապես նպաստեց արաբների հաղթարշավին: Արաբական զորքը 636 թ. Յարմուք գետի(Հորդանան գետի վտակը) ափին ջախջախեց բյուզանդական բանակը[1], իսկ 637 թ. Կադիսիյայի ճակատամարտում՝ պարսկական բանակը, որի կազմում կռվում էին նաև հայկական զորամասեր՝ Մուշեղ Մամիկոնյանի և Գրիգոր Սյունու հրամանատարությամբ[2]:

Այս հաղթանակներից հետո արաբները շարունակեցին իրենց արշավանքները դեպի հյուսիս և 641 թ.՝ Հերակլ կայսեր (640-641) մահից հետո, Կոստանդին Գ կայսեր օրոք (641 թ.), մի մեծ արշավանք կատարեցին դեպի Հայաստան[3]:

Այս արշավանքի նախօրեին վարչա-քաղաքական իրավիճակը երկրում փոխվել էր: Բյուզանդիայի կողմից ճանաչվել էր Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու իշխանությունը նաև արևմտահայկական հողերի վրա[4]: Այդ իրադարձությունը, Սեբեոսի հաղորդմամբ, տեղի էր ունեցել Կոստանդին Գ կայսեր օրոք (641 թ.)[5]: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, թե այն տեղի է ունեցել 641 թ. արաբական արշավանքից հետո միայն[6]: Պետք է նշել, սակայն, որ Ջորա պահակ լեռնանցքը 591 թ. բաժանումից հետո մնացել էր Հայաստանի՝ Բյուզանդիային անցած հատվածում, իսկ այն փաստը, որ, ինչպես կտեսնենք, ստանալով 641 թ. արաբական արշավանքի լուրը, Թեոդորոս Ռշտունին շարժվել է փակելու այն, պարզորոշ ցույց է տալիս, որ նրա իշխանությունն այդ ժամանակ պետք է տարածվելիս լիներ նաև Հայաստանի բյուզանդական հատվածի վրա: Այս տեսակետի օգտին է խոսում Սեբեոսի այն վկայությունը, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել «ի ձեռն այնր պատերազմի»[7]: Այսինքն, ըստ պատմիչի՝ դրա պատճառն արաբների արշավանքն է եղել: Մինչ այդ, Թեոդորոս Ռշտունին իշխում էր Հայոց

---

[1] Տե՛ս «История Византии», т. I, Москва, 1967, с. 367.

[2] Տե՛ս **Սեբեոս**, էջ 137: Տե՛ս նաև **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը VII դարի 30-90-ական թթ.,-«Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. Բ, էջ 306:

[3] Տե՛ս **Սեբեոս,** էջ 138:

[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբների արշավանքը Ատրպատականի վրայով դեպի Հայաստան,-«Տարեգիրք», 2005, էջ 93-94:

[5] Տե՛ս Սեբեոս, էջ 139:

[6] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 26, **Է. Դանիելյան**, Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), էջ 161, **Վ. Իսկանյան**, Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դարում՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ,-«ՊԲՀ», 1971, թիվ 4, էջ 73-74:

[7] **Սեբեոս,** էջ 139:

մարզպանության՝ 591 թ. բաժանումից հետո պարսկական տիրապետության տակ մնացած հատվածում, այսինքն՝ Վասպուրական Գնդում[1], ուստի՝ Բյուզանդիայի կողմից նրան «զաւրավարութիւն» և «պատրկութեան պատիվ» տալը[2] նշանակում էր նրա իշխանության ճանաչումը նաև բյուզանդական տիրապետության ներքո գտնվող հայկական հողերի վրա: Դա պետք է տեղի ունեցած լիներ 641 թ., բայց նախքան արաբների ներխուժումը Հայաստան: Արաբական զորքերը տարբեր ուղղություններով հարձակման էին անցել, ուստի Թեոդորոս Ռշտունուն իր կողմը գրավելը մեծ կարևորություն ուներ Բյուզանդիայի համար: Այդ ժամանակ էլ պետք է Հայաստան ուղարկվեր նաև բյուզանդական զորագունդը՝ Պռոկոպ զորավարի հրամանատարությամբ[3]:

Նոր էր միայն Թեոդորոս Ռշտունու իշխանությունը ճանաչվել Բյուզանդիայի կողմից, երբ «ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Ձորոյ յաշխարհն Տարաւնոյ»[4]: Թեոդորոս Ռշտունին փորձեց զբաղեցնել Ձորա Պահակ լեռնանցքը՝ արաբների մուտքը դեպի երկիր փակելու համար, բայց ուշացավ[5]: Գրավելով Տարոնը՝ արաբներն «առին...զԲզնունիս և զԱղիովիտ: Եվ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»: Արաբներին հաջողվեց գրավել Դվինը[6]: Նրանք ավարի առան ու ասպատակեցին երկիրը, կոտորեցին 12հզ և գերեվարեցին 35հզ մարդու[7]: Դատելով Հովհան Մամիկոնյանի մի վկայությունից՝ արաբական զորքերն այդ ժամանակ արշավել են նաև Վիրք[8]: Արաբների արշավանքն Ատրպատականի վրայով դեպի Հայաստան[9], ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ հենց այդ նույն ժամանակ[10]:

642 թ. միջազգային իրադրության մեջ տեղի ունեցավ մեծ կարևորության մի իրադարձություն: Նեհավենդի ճակատամարտում արաբները ջախջախեցին պարսկական բանակը և տապալեցին Սասանյանների

---

[1] Անդ, էջ 138:
[2] Անդ, էջ 139:
[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 7:
[4] Սեբեոս, էջ 138:
[5] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 9:
[6] Տե՛ս **Սեբեոս**, էջ 138:
[7] Անդ: Տե՛ս նաև **Ղևոնդ,** էջ 9, **Սամվել Անեցի**, էջ 80:
[8] Տե՛ս **Հովհան Մամիկոնյան**, էջ 286: Տե՛ս **Ասողիկ,** էջ 98:
[9] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 6-7, **Սեբեոս**, էջ 146:
[10] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբների արշավանքը..., էջ 88-98:

տերությունը: 647 թ. նրանք կրկին ասպատակեցին Հայաստանը, որտեղից անցան Վիրք և Աղվանք[1]:

Արաբական առաջին արշավանքները հետախուզական և ավարառուական նպատակ էին հետապնդում: Արաբները թեև Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում չէին հաստատվում, բայց դրանց ընթացքում նրանք ծանոթանում էին տարածաշրջանի վարչա-քաղաքական իրավիճակին: Նրանց մեջ արդեն որոշակի պատկերացում էր ձևավորվում երկրի ապագա վարչա-քաղաքական բաժանման վերաբերյալ, որը նրանք նյութականացնելու էին 652 թ. հայ-արաբական պայմանագրով, 653 թ. Հայաստանի և Այսրկովկասյան երկրների վրա Թեոդորոս Ռշտունու իշխանության ճանաչումով և ավելի ուշ՝ Արմինիա ոստիկանության ձևավորումով:

Ըստ Սեբեոսի՝ Կոստաս Բ կայսրը (641-668), 650-ական թթ. սկզբին գտնվելով անչափ ծանր դրության մեջ, «լաւ համարեցաւ տալ [արաբներին-Ա.Ե.] սակ, և առնել հաշտութիւն պատգամաւորաւք»[2]: Ասորիքի և Միջագետքի կառավարիչ Մուավիայի մոտ Դամասկոս ուղարկվեց Պռոկոպը: Կողմերը հաշտության պայմանագիր կնքեցին, որտեղ որոշված էր արաբներին Բյուզանդիայի կողմից տրվելիք հարկի չափը, ինչպես նաև արաբա-բյուզանդական սահմանագիծը[3]:

Թեոդորոս Ռշտունին, լինելով շրջահայաց քաղաքական գործիչ, արագ կողմնորոշվեց ստեղծված իրավիճակում: Սեբեոսը վկայում է, որ այդ ժամանակ Հայոց իշխանն ու նախարարները «[ի] բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի»: Հայոց իշխանը մեկնեց Դամասկոս՝ Մուավիայի մոտ: 652 թ. կնքվեց հայ-արաբական պայմանագիրը[4], որում ասված էր, թե դրա տևողությունը կախված է հայերից: Արաբ զորահրամանատարը խոստանում էր, թե «ոչ առնում ի ձէնջ սակ զերեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք»: Այնուհետև, կողմերը պայմանավորվում էին, որ հայերը պետք է պահեին 15հզ հեծելազոր և հոգային վերջինի կարիքները՝ արաբներին վճարվելիք հարկի մի մասի հաշվին: Մուավիան պարտավորվում էր հայոց այրուձին Ասորիք չկանչել, սա-

---

[1] Պատմագիտական գրականության մեջ այս արշավանքի թվականի վերաբերյալ կան մի քանի տեսակետներ, սակայն, Է. Դանիելյանը հիմնավորում է, որ այն տեղի է ունեցել 647 թ. (տե՛ս **Է. Դանիելյան**, 647 թ. արաբական արշավանքը Հայաստան,-«ՊԲՀ», 1982, թիվ 2):

[2] **Սեբեոս**, էջ 147:

[3] Անդ:

[4] Տե՛ս **Բ. Առաքելյան**, ժամանակագրական դիտողություններ,-«Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկ. ֆիլիալի, Ե., 1941, թիվ 1(6), էջ 62:

կայն, այլ վայրեր մեկնելու համար այն պետք է պատրաստ պահվեր, նա հայոց բերդերում ամիրաներ չպետք է նշանակեր և արաբ զինվորներ չպետք է ուղարկեր: Մուավիան խոստանում էր, թե՝ «թշնամի մի՛ մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն՝ որչափ և դուք կամիջիք»[1]: Ինչպես դեպքերի հետագա ընթացքից կհամոզվենք, արաբները ճանաչել էին Թեոդորոս Ռշտունու իշխանությունը նաև Այսրկովկասյան երկրների վրա:

Կոստաս Բ կայսրը՝ բյուզանդական բանակի գլուխն անցած, պայմանագրի կնքումից անմիջապես հետո, նույն թվականի աշնանը[2], ներխուժեց Հայաստան և կարողացավ գրավել Դվինը: Դվինից Կոստաս Բ-ի ուղարկած զորքերը գրավեցին նաև Վիրքը: Աղվանքը և Սյունիքը (առանձին է հիշատակվում այն պատճառով, որ դեռևս չէր միացվել Հայաստանին) նվաճել բյուզանդացիներին չհաջողվեց[3]: Սեբեոսը վկայում է, որ այդ ժամանակ «էին ընդ նմա(իմա՛ Թեոդորոս Ռշտունու-Ա.Ե.) միաբան Վրացին և Աղուանն և Սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին յիւրաքանչիւր աշխարհս և ամրացան ի նմին»[4]: Այսինքն՝ բյուզանդական արշավանքն ուղղված էր նաև Վիրքի, Աղվանքի և Սյունիքի դեմ, ինչն էլ պետք է լիներ այն իրողության հետևանքը, որ խալիֆայությունը Թեոդորոս Ռշտունու իշխանությունը Հայաստանից բացի ճանաչել էր նաև այդ երկրների վրա: Իզուր չէ, որ վերջինները գործում էին նրա հրամանի համաձայն: Պարզվում է, որ արդեն այդ ժամանակ արաբները որոշակի պատկերացում ունեին Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում ուժերի հարաբերակցության վերաբերյալ:

Կայսեր հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին վճռական քայլեր ձեռնարկեց: 653 թ. գարնանը, նա, օգնական արաբական զորախմբի հետ միասին, անցավ հակահարձակման: Հայ-արաբական զորքը, հետապնդելով նահանջող բյուզանդական զորամասերին, Տայքի կողմից ներխուժեց Սև ծովի ափերն ու գրավեց Տրապիզոնը, որից հետո մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով վերադարձավ: Թեոդորոս Ռշտունին մեկնեց Դամասկոս, և Մուավիան նրան «իշխանութիւն ետ զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ: Եւ

---

[1] **Սեբեոս,** էջ 164:

[2] Ամենայն հավանականությամբ, այս արշավանքը տեղի է ունեցել 652 թ. աշնանը, քանի որ բյուզանդական զորքի համար Հայաստանում ձմեռելու անհրաժեշտություն էր առաջացել (տե՛ս **Սեբեոս**, էջ 166, տե՛ս նաև **Վ. Իսկանյան**, Հայաստանը IV-VII դդ., Ե., 1991, էջ 495): Կայսրը, սակայն, անձամբ Հայաստանում ձմեռել չկարողացավ, քանի որ շտապ վերադարձավ Կոստանդնուպոլիս (տե՛ս **Սեբեոս**, էջ 168):

[3] Տե՛ս **Սեբեոս**, էջ 166:

[4] Անդ:

նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[1]: Պատմիչը, այստեղ, «Աղվանք» ասելով, փաստորեն, նկատի ունի նախորդ շրջանի Աղվանից մարզպանությունը: Դուրս է գալիս, որ Մուավիան Թեոդորոս Ռշտունու իշխանությունը ճանաչեց բոլոր այն երկրների վրա, որոնք արաբական աղբյուրներում միասնաբար հանդես են գալիս Արմինիա անունով:

Պետք է ընդգծել, որ, փաստորեն, հայ-արաբական պայմանագրում որոշակիորեն արձանագրվեց գոյություն ունեցող վարչա-քաղաքական իրավիճակը: Համենայնդեպս, այդ ժամանակ առկա վարչա-քաղաքական մի շարք իրողություններ, ինչպես կտեսնենք, արտացոլվեցին հետագայում ձևավորված իրավիճակում:

654 թ. արաբներն անցան վճռական գործողությունների, քանի որ Թեոդորոս Ռշտունին, հիվանդության պատճառով, հեռացել էր քաղաքական ասպարեզից: Եթե նախկինում նրանք մեծ տեղ էին հատկացնում Թեոդորոս Ռշտունու հետ հարաբերություններին ու փորձում նրա իշխանության տակ միավորել Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները, ապա այժմ նրանք պարզապես անցան այդ երկրների նվաճմանը: Արաբական զորքերը Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ 654 թ. ներխուժեցին Հայաստան և, Սեբեոսի վկայությամբ, «կալան ի ծագաց ի ծագս զերկիրն ամենայն»[2]: Վիրքը շարունակեց մնալ բյուզանդական զորքի վերահսկողության ներքո, որը 654-655 թթ. ձմռանը Մավրիանոսի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան ու գրավեց Դվինը: Բյուզանդական զորքը՝ շարունակելով արաբներին դուրս մղել Հայաստանից, իջավ հարավ ու պաշարեց Նախճավանը, որտեղ, սակայն, հակահարված ստացավ արաբներից և նահանջեց դեպի Վիրք[3]:

655 թ. գարնանը, երկու ուղղություններով, սկսվեց արաբական զորքերի նոր արշավանքը: Առաջին զորախումբը, որն արշավում էր դեպի Հայաստան և Վիրք, գլխավորում էր Հաբիբ իբն Մասլամա, իսկ երկրորդը, որն արշավում էր դեպի նախկին Աղվանից մարզպանության

---

[1] Անդ, էջ 169:

[2] **Սեբեոս,** էջ 173: Պետք է նշել, որ Բալազուրին Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ միայն մեկ արշավանք է հիշատակում, իսկ Սեբեոսը՝ երկուսը: Մեզ առավել հավաստի է թվում Սեբեոսի վկայությունը, քանի որ նա այդ դեպքերի ժամանակակիցն է: Սեբեոսի վկայությունը հաստատում է նաև արաբ պատմիչ Թաբարիի հաղորդումը, ըստ որի՝ Հաբիբը Հայաստանը նվաճել է հիջրայի 31 թ. (651-652) (տե՛ս طبري, III, էջ 71) և հաջորդ անգամ Հայաստան է արշավել մյուս տարի՝ հիջրայի 32 թ. (652-653) (անդ, էջ 77-78), ըստ որում՝ հիջրայի 32 թ. արշավանքը համընկնում է Բալազուրիի հիշատակած արշավանքին, երբ Հաբիբը Հայաստան ներխուժեց Վերին Միջագետքի(Ջազիրա) կողմից՝ Ասորիքի արաբներից բաղկացած զորագնդով (տե՛ս بلاذري, I, էջ 234):

[3] Տե՛ս **Սեբեոս,** էջ 174:

տարածքները, գլխավորում էր Սալման իբն Ռաբիան[1]: Արաբները նվաճեցին Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները և գերեվարեցին շատ իշխանների՝ նրանց ընտանիքներով: Թեոդորոս Ռշտունին ինքնակամ միացավ գերյալներին ու նրանց հետ գնաց Միջագետք, հավանաբար, կորցրած իշխանությունը Մուավիայից հետ ստանալու նպատակով, բայց այնտեղ վախճանվեց ու, բերվելով հայրենիք, թաղվեց իր հայրենի Ռշտունիքում[2]:

Թեոդորոս Ռշտունու մահից հետո Հայոց իշխան դարձավ Համազասպ Մամիկոնյանը (655-662)[3]: Վերջինիս իշխանությամբ Հայաստանի և Այսրկովկասյան երկրների քաղաքական կյանքում նոր փուլ սկսվեց: Օգտվելով այն նպաստավոր իրադրությունից, որ Մուավիան պայքար էր սկսել Ալի խալիֆայի դեմ (656-661), իսկ այդ պատճառով ակտիվացած Բյուզանդիան էլ բավարարվեց իր գերիշխանության ձևական ընդունումով[4], հիշյալ երկրները սեփական գործերում ինքնուրույնություն ձեռք բերեցին: Համազասպ Մամիկոնյանն այդ ժամանակ կարողացավ Սյունիքը վերամիավորել Հայաստանին[5]:

Մուավիան, հաղթելով Ալի խալիֆային, բազմեց գահին (661-680): Նա Բյուզանդիայի դեմ մեծ արշավանք էր նախապատրաստում, որից առաջ որոշեց կարգավորել գործերը Հայաստանում ու Այսրկովկասյան երկրներում: Նա հայոց իշխաններին մի հրովարտակ ուղարկեց, որ «եթէ ոչ հարկեսջիք ինձ և ոչ անկջիք ընդ լծով ծառայութեան իմոյ՝ ի սուր սուսերի մաշեցից զամենեսեան»[6]: Հայ նախարարներն ընդունեցին Մուավիայի պահանջը, և Դամասկոս ուղարկվեցին երկրի ազդեցիկ նախարարական տներից երկու պատանդ՝ Գրիգոր Մամիկոնյանին ու Սմբատ Բագրատունուն[7]: Անկասկած, Մուավիայի պահանջը պետք է ուղարկված լիներ նաև Այսրկովկասյան բոլոր այն քաղաքներին ու իշխանություններին, որոնք Հաբիբ իբն Մասլամայի ու Սալման իբն Ռաբիայի արշավանքի ժամանակ ընդունել էին արաբական գերիշխա-

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 234-240:

[2] Տե՛ս **Սեբեոս,** էջ 174: Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքների մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և Այսրկովկասյան երկրներ,-«Լրաբեր(հաս. գիտ)», 2008, թիվ 2, էջ 68-77: Տե՛ս նաև **Է. Մինասյան, Ա. Եղիազարյան,** Հայ դիվանագիտությունը VII դարում,-«Լրատու» Մեսրոպ Մաշտոց Համալսարանի, Ստեփանակերտ, 2008, էջ 6-24:

[3] Ասողիկը Համազասպ Մամիկոնյանի իշխանության սկիզբը դնում է հայոց ՃԴ թվականին, որ է 655 թ. (տե՛ս **Ասողիկ**, էջ 99):

[4] Տե՛ս **Սեբեոս,** էջ 175:

[5] Անդ:

[6] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 14:

[7] Անդ:

նությունը: Համաձայն Ասողիկի՝ Մուավիան իր իշխանության երկրորդ տարում՝ 662 թ., Գրիգոր Մամիկոնյանին նշանակեց Հայոց ու Վրաց իշխան և ուղարկեց Հայաստան[1]: Կարելի է կարծել, թե Ասողիկի հաղորդումն իր ժամանակների իրողության ազդեցության արտահայտությունն է, երբ IX-Xդդ. Հայոց իշխանները կրում էին «իշխան Հայոց և Վրաց», իսկ հայ Բագրատունի թագավորները՝ «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը[2]: Սակայն, դատելով Ղևոնդի ներքոբերյալ հաղորդման տրամաբանությունից, Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունն արաբների կողմից ճանաչվել էր այն սահմանների վրա, ինչ Թեոդորոս Ռշտունու իշխանությունը, այսինքն՝ նաև Այսրկովկասյան երկրների վրա: Ղևոնդը հաղորդում է, որ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության վերջում, «ի ժամանակի պատերազմին, որ ի մէջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ»[3]: Փաստորեն, պատմիչի հաղորդումից հետևում է, որ Հայաստանը և Այսրկովկասյան երկրները գործում էին համատեղ. նրանք թե՛ հարկատվական պարտականությունն էին ստանձնել ու կատարում միասին և թե՛ միասին հրաժարվեցին այդ պարտականությունից: Ուստի, ամենայն հավանականությամբ, Ղևոնդի «Հայոց իշխան»-ը պետք է հասկանալ «Արմինիայի իշխան» իմաստով:

Ինչպես տեսնում ենք, արաբների մոտ հստակորեն նկատվում է Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները Հայոց իշխանի գլխավորությամբ մեկ վարչական միավորի մեջ ներառնելու միտումը: VII դ. երկրորդ կեսին արաբներն այդ երկրները միավորեցին Հայոց իշխաններ Թեոդորոս Ռշտունու և Գրիգոր Մամիկոնյանի գերիշխանության ներքո: Այդ հանգամանքը բխում էր արաբների կողմից տարածաշրջանի ուժերի հարաբերակցության ճիշտ ըմբռնումից, քանի որ Հայաստանը, չնայած, որ նրանից անջատվել էին նրա ծայրամասային շրջանները, իրենից ազդեցիկ քաղաքական ուժ էր ներկայացնում, իսկ հայ ժողովուրդը, չնայած օտար իշխողների կողմից նրա տարբեր հատվածների միջև առաջացրած արհեստական անջրպետներին, տարածաշրջանի բնակչության ամենամիատարր և մեծաթիվ հատվածն էր:

Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ժամանակ(662-685թթ.) Հայաստանի և Այսրկովկասյան երկրների քաղաքական կյանքում ունեցած

---

[1] Անդ: Տե՛ս նաև **Ասողիկ,** էջ 122:

[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 158. Աշոտ Ա թագավորը նախապես «իշխան և իշխանաց իշխան եղեալ Հայոց և Վրաց», էջ 161. «Սմբատ թագաւորեալ՝ տիրէ բոլոր հայրենեաց իւրոց, Հայոց և Վրաց» և այլն:

[3] **Ղևոնդ**, էջ 15:

ինքնուրույնությունը պահպանվեց, բայց մի տարբերությամբ: Եթե Համազասպ Մամիկոնյանի օրոք այդ երկրները ձևականորեն ընդունում էին բյուզանդական գերիշխանությունը, ապա այժմ ընդունեցին արաբականը, ինչն այդ ժամանակ տեղի ունեցող արաբա-բյուզանդական կատաղի պատերազմների պայմաններում, երբ Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները երկու ախոյաններին այնքան էլ չէր հետաքրքրում, միայն անվանական բնույթ ուներ: Ճիշտ է, ըստ Ղևոնդի՝ նրանք շարունակում էին հարկ վճարել խալիֆայությանը, սակայն, շուտով հրաժարվեցին նաև այդ պարտականությունից:

685 թ. Այսրկովկաս արշավեցին խազարները: Նրանց դեմ ճակատամարտում զոհվեց Գրիգոր Մամիկոնյանը, իսկ խազարները շատ գավառներ ու ավաններ գրավեցին, կողոպտեցին ու ավերեցին, իսկ հետո ավարով ու գերիներով հեռացան[1]:

Այնինչ, արաբա-բյուզանդական պատերազմներն ընթանում էին փոփոխական հաջողություններով. 685 թ. խալիֆայության գահին է բազմում Աբդ ալ-Մալիքը (685-705), իսկ բյուզանդական գահին՝ Հուստինիանոս Բ-ն (685-695, 705-711): Վերջինների գահակալությամբ նոր փուլ է սկսվում Հայաստանի ու Այսրկովկասյան երկրների քաղաքական կյանքում: Նոր տիրակալները սկզբում ճիշտ համարեցին կնքել հաշտության պայմանագիր: Կնքված հաշտության պայմանագրի՝ Հայաստանին և Վիրքին վերաբերող հատվածում որոշվում էր, որ այդ երկրներից ստացվող հարկերը խալիֆայության և Բյուզանդիայի միջև բաժանվելու էին հավասարապես[2]: Կարելի է կարծել, թե Հայաստանն ու Վիրքն ինչ-ինչ պատճառներով կրկին ընդունել են հարկատվական պարտականություն հայտնի չէ, թե ո՞ր կողմի նկատմամբ: Ավելի հավանական է, որ այդպիսի բան տեղի չի ունեցել, իսկ արաբա-բյուզանդական պայմանավորվածությունը վերաբերում էր ապագային: Եվ, բացի այդ, ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում այդ ժամանակ չկային օտար զորքեր:

Բյուզանդիան շուտով Հայաստանը և Վիրքը գրավելու մի քանի փորձ կատարեց[3], սակայն, հավանորեն, անհաջողության մատնվեց, քանի որ, երբ 689 թ. Հայաստան ներխուժեցին արաբները, նրանց ընդառաջ ելան ոչ թե բյուզանդական, այլ հայկական զորքերը՝ Հայոց իշխան Աշոտ Բագրատունու (685-689) գլխավորությամբ, որոնց հաջող-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 15-16:
[2] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 74:
[3] Անդ, էջ 75, **Ղևոնդ**, էջ 17, **Ասողիկ**, էջ 100:

վեց հետ մղել արաբներին[1]: Այդ ժամանակ, սակայն, արաբական սպառնալիքի տակ, ինչպես վկայում է Ասողիկը, «ոմանք ի Հայոց իշխանացն անձնատուրք եղեն առ զօրս Տաճկաց»[2]: 689 թ. բյուզանդական զորքը կայսեր գլխավորությամբ կրկին արշավեց արևելք: Ըստ Ասողիկի՝ բյուզանդական զորքերը գրավեցին Հայաստանը և Վիրքը[3]: Կայսրը Հայոց իշխան կարգեց Ներսեհ Կամսարականին (689-693), որից հետո վերադարձավ Կոստանդնուպոլիս[4]: Հուստինիանոսն իրեն այնքան հզոր էր զգում, որ նույնիսկ որոշեց խախտել արաբների հետ կնքված հաշտությունը, բայց, ի վերջո, ծանր պարտություն կրեց[5]: Հայոց իշխան Սմբատ Բագրատունին (693-726), ստանալով բյուզանդական զորքի պարտության լուրը, փորձեց երկիրը փրկել ավելորդ արյունահեղությունից և 693 թ. հպատակություն հայտնեց Ջազիրայի, Ատրպատականի, Հայաստանի և Այսրկովկասյան երկրների կառավարիչ նշանակված Մուհամմադ իբն Մարվանին[6]: Թեոփանեսը հաղորդում է, որ Սմբատն այդ թվականին «Հայաստանն արաբներին հանձնեց»[7]:

Աբդ ալ-Մալիք խալիֆան, օգտվելով Բյուզանդիայում սկսված գահակալական կռիվներից[8], հնարավորություն ստացավ նվաճելու Հայաստանը և Այսրկովկասյան երկրները: Եվ, ահա՛, Մուհամմադ իբն Մարվանը, հայոց ճԽԶ թվականին (697 թ.), մի խոշոր բանակի գլուխն անցած, ներխուժեց Հայաստան, նվաճեց այն, Դվինում մեծաթիվ ուժեր թողեց ու, շարժվելով Աղվանից կողմերը, մտավ Չող (Ճորա պահակ)[9]: Նույն թվականին, ըստ Թեոփանեսի՝ Լազիկայի (Եգերք) իշխանը հպատակություն հայտնեց երկիր ներխուժած արաբներին[10]: Մինչ Մարվանը զբաղված էր Չողում, թիկունքում հայերն ապստամբեցին ու երկիրը մաքրեցին արաբներից: Մուհամմադը՝ վերադառնալով Չողից, վերանվաճեց Հայաստանը: Դեպի Չող արշավելիս Մուհամմադը պաշարել էր ու փորձել գրավել Սևանա կղզին[11], բայց, քանի որ շտապելիս էր եղել, հավանորեն այն, թողել էր պաշարված, իսկ ինքն արշավել դեպի Աղ-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 18:
[2] Տե՛ս **Ասողիկ**, էջ 100:
[3] Անդ:
[4] Անդ, էջ 101:
[5] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 78:
[6] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 28:
[7] **Թեոփանես Խոստովանող**, էջ 78:
[8] Անդ, էջ 80-82:
[9] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 317:
[10] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 82: Տե՛ս նաև **А. Богверадзе**, Раннефеодальные Грузинские государства в VI-VIII вв.,-«Очерки истории Грузии», т. II, с. 173-174.
[11] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 96:

վանից կողմերը: Այս անգամ նա կարողացավ գրավել Սևանա կղզին ու կոտորել այնտեղ ապաստանած ապստամբներին: Կղզու պաշարումը տևեց 3 տարի[1]: Այդ ընթացքում Մարվանը նվաճել է ողջ երկիրը: Ամենայն հավանականությամբ, Սևանա կղզու առումը տեղի ունեցավ 699 թ.[2], որից հետո Մուհամմադը վերջնականապես ճնշեց ապստամբությունը: Ղևոնդը վկայում է, որ 700 թ. Մուհամմադն արշավեց մինչև Մոկքի Ջերմաձոր գավառը, որտեղի անառիկ ամրոցներում էին ապաստանել հայ ապստամբները: Խաղաղություն կնքելու պատրվակով արաբ զորավարն իր մոտ հրավիրեց ապստամբներին և բոլորին կոտորեց, իսկ նրանց կանանց ու երեխաներին գերեվարեց[3]:

Դեռևս 697 թ., ինչպես տեսանք, արաբներին հպատակություն էր հայտնել Եգերքի իշխանը: Իսկ Եգերքի նվաճումն անհնար էր առանց Վիրքի նվաճման: Այսինքն՝ 697 թ., երբ Մուհամմադն արշավել էր դեպի Հայաստան ու Չողա, նա, հավանաբար, մեկ այլ զորախումբ էլ ուղարկել էր Վիրքն ու Եգերքը նվաճելու: Այդ զորախումբը նվաճել էր նաև Ափխազքը, քանի որ VIII դ. սկզբին, ըստ Թեոփանեսի՝ արաբները տիրում էին Աբազգիային (Ափխազք), Լազիկային (Եգերք) և Իբերիային(Վիրք)[4]:

Այսպիսով, Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները վերջնականապես նվաճվում են 700 թ.[5]: Իբն ալ-Ասիրի վկայությունը հաստատում է այդ[6]:

Արաբները, նվաճելով Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները, կազմավորեցին Արմինիա ոստիկանությունը՝ Դվին կենտրոնով[7]: Արդեն ցույց ենք տվել, որ արաբները հենց սկզբից էլ ճշտորեն գնահատեցին տարածաշրջանում Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կշիռն ու ազդեցությունը: Ուստի և պատահական չէ, որ նրանք Հայաստանն ու Այսրկովկասյան երկրներն ընդգրկող վարչական

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** էջ 317-318:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ,- «ԲԵՀ», 2008, թիվ 1, էջ 161:

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 19-20:

[4] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող,** էջ 102:

[5] Ա. Տեր-Ղևոնդյանը Հայաստանի նվաճումը թվագրում է 701 թ.-ով (տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 73-74, նույնի՝ Հայ ժողովրդի պայքարը խալիֆայության լծի դեմ,- «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. Բ, էջ 325-326): Տե՛ս նաև **Ա. Եղիազարյան,** Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ, էջ 162-163:

[6] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 84:

[7] Պետք է նշել, որ Հայաստանը և Այսրկովկասյան երկրներն ընդհանուր Արմենիա (Հայաստան) անունով հիշատակում են նաև ասորական աղբյուրները: Զաքարիա հռետորը, օրինակ՝ Գուրզանը (արաբական աղբյուրների Ջուրզանը, որը նույնական է Վիրքի (Վարջան) մարզպանությանը) և Առանը հիշատակում է որպես Հայաստանի կազմում գտնվող երկրներ (տե՛ս **Н. Пигулевская,** նշվ. աշխ., էջ 81):

շրջանն անվանեցին Արմինիա (Հայաստան): 700 թ. Մուհամմադն Արմինիայի կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահին (701-703 թթ.)[1] և հեռացավ Միջագետք: Հայ մատենագիրներն Արմինիայի կառավարչին տվել են «ոստիկան» անունը[2], որի պատճառով էլ Արմինիան կոչում ենք «ոստիկանություն»:

Փաստորեն, 700 թ. դրությամբ Արմինիա ոստիկանության կազմում ընդգրկված էին Հայաստանի մեծ մասը, Բուն Աղվանից աշխարհը, Կասպից ծովի ափամերձ շրջանները՝ Կուր գետի ստորին հոսանքից մինչև Դարբանդ, Վիրքը, Եգերքը, Ափշիլքը և Ափխազքը: Սակայն, VIII դ. առաջին կեսին, ինչպես կտեսնենք, Արմինիայի սահմանները զգալի փոփոխություններ կրեցին:

Արմինիա ոստիկանության և դրա վարչական բաժանման մասին հիմնական տեղեկությունները պարունակում են արաբ աշխարհագետների երկերը, սակայն, երբեմն, հայ պատմիչների տեղեկություններից էլ կարելի է պատկերացում կազմել այդպիսի վարչական միավորի գոյության մասին: Ղևոնդը, օրինակ՝ պատմելով այն մասին, որ խալիֆան իր եղբորը կառավարիչ նշանակեց խալիֆայության հյուսիսային փոխարքայության վրա, հաղորդում է, թե նա «տայր եղբօր իւրում զԱտրպատական և զՀայս հանդերձ Վրօք և Աղուանիւք: Եւ կարգէր ի վերայ երկրիս...հրամանատարս»[3]: Արմինիան ու Ատրպատականը խալիֆայության մեկ փոխարքայության մեջ հիշատակում են նաև արաբ աշխարհագետները. Իբն Խորդադբեհը, օրինակ՝ խոսելով Ջարբի(պարսկ. Գարբի-Ա.Ե.) կոչվող վարչական մեծ միավորի մասին, տեղեկացնում է, որ այն իր սահմաններում միավորում էր հյուսիսային երկրները, որոնք միասին կազմում են խալիֆայության ողջ տարածքի չորրորդ մասը: Այդ երկրամասի մեջ էին մտնում Արմինիան և Ատրպատականը[4]:

Ղևոնդի «զՀայս հանդերձ Վրօք և Աղուանիւք» արտահայտությունը, փաստորեն, Արմինիա ոստիկանության հիշատակությունն է, իսկ «հրամանատար»-ները, որոնց հիշատակում է պատմիչը, Արմինիայի ոստիկաններն են: Այսպիսով՝ նա ներկայացնում է այն վարչա-քաղաքական կացությունը, որ գոյություն ուներ Այսրկովկասում արաբական տիրապետության ժամանակաշրջանում:

---

[1] Տե՛ս **Հ. Նալբանդյան,** Արաբացի ոստիկանները Հայաստանում,-Առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագրից», 1956, թիվ 8, էջ 107: Տե՛ս նաև **Ա. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 271:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 96, 110 և այլն: Արքունի պաշտոնյաներին տրվող «ոստիկան» անվանումը հայ մատենագիրներն օգտագործում էին դեռևս V դարում (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 314, **Ղազար Փարպեցի**, էջ 284):

[3] Ղևոնդ, էջ 166: Տե՛ս նաև **Ասողիկ,** էջ 133.«զՀայս հանդերձ Վրօք և Աղուանօք»:

[4] Տե՛ս Ibn Khordadbeh, էջ 118-119:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՄԻՆԻԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Արմինիա ոստիկանության վարչական բաժանման մասին հարուստ տեղեկություններ են պահպանել արաբ աշխարհագետները: Հատկապես արժեքավոր են IX-Xդդ. հեղինակներ Իբն Խորդադբեհի, Իբն ալ-Ֆակիհի, Բալազուրիի և Յակուբիի հաղորդած տեղեկությունները:

Ըստ Իբն Խորդադբեհի, Արմինիան բաժանված էր չորս մասի, որոնք հաջորդաբար կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիաներ.

«Առաջին Արմինիա. Սիսաջան, Առան, Տիֆլիս, Բարդաա, Բայլական, Կաբալա և Շարվան,

Երկրորդ Արմինիա. Զուրզան, Սուղդաբիլ, Բաբ Ֆիրուզ Կուբադ և ալ-Լաքզ,

Երրորդ Արմինիա. Բուսֆուրրաջան, Դաբիլ, Սիրաջ Թայր, Բաղրավանդ և Նաշավա,

Չորրորդ Արմինիա. Շիմշաթ, Խիլաթ, Կալիկալա, Արջիշ և Բաջունայս»[1]:

Իբն Խորդադբեհն ավելացնում է նաև, որ Արմինիայի մեջ են մտնում Խուայյը, աս-Սանարիան, Ալբակը, Քիսալը, Աբխազը, ալ-Զարդաման ամրոցը, Խայզանը, Շաքքին և ալ-Բաբ քաղաքը (Բաբ ալ-Աբվաբ)[2]:

Փաստորեն, Առաջին Արմինիան, ըստ Իբն Խորդադբեհի՝ ընդգրկում էր Սասանյանների ձևավորած Աղվանից մարզպանության տարածքը, Սյունիքը և Տփղիս քաղաքը, իսկ Երկրորդ Արմինիան՝ Վրաց մարզպանությունը և ալ-Լաքզ երկիրը: Երրորդ Արմինիայի կազմում ընդգրկված էին 591 թ. բաժանումից հետո պարսկական տիրապետության տակ մնացած Հայոց մարզպանության տարածքները, ինչպես նաև Այրարատն ու Տայքը: Իսկ Չորրորդ Արմինիան ընդգրկում էր Տուրուբերանը, Բարձր Հայքն ու Ծոփքը՝ բացառությամբ վերջինների մերձեփրատյան գավառների: Այսինքն՝ նախքան արաբական տիրապետության հաս-

---

[1] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:
[2] Անդ:

տատումը գոյություն ունեցած վարչա-քաղաքական իրավիճակը որոշակիորեն իր արտահայտությունն է գտել խնդրո առարկա շրջանում: Սակայն, վիճահարույց է վարչականորեն Սյունիքի և Տփղիս քաղաքի պատկանելությունն Առաջին Արմինիային, ինչպես նաև ալ-Լաքզի պատկանելությունը՝ Երկրորդ Արմինիային: Այս խնդիրներին մանրամասնորեն կանդրադառնանք քննության ընթացքում:

Արմինիա ոստիկանության վարչական բաժանման նույնատիպ նկարագրություն է պահպանել նաև X դ. արաբ մատենագիր Իբն ալ-Ֆակիհը, որը, սակայն, ավելացնում է, որ «Ահմադ իբն Վադիհ Իսբահանցին հաղորդել է, թե…[Արմինիայում] թագավորությունների քանակը հասնում է 113-ի, որտեղ, …ալանների և Բաբ ալ-Աբվաբի միջև [գտնվում է] Սահիբ աս-Սարիրի թագավորությունը»[1]:

Ըստ Իբն ալ-Ֆակիհի, փաստորեն, արաբական տիրապետության ներքո էր գտնվում նաև Սարիրի թագավորությունը, որն ընդգրկում էր Անդյան ու Կարա Կոյսու գետերի ավազանները[2]: Պետք է նշել, որ Սարիրի թագավորության տարածքը Սասանյանների տիրապետության օրոք Այսրկովկասյան մարզպանությունների մեջ ընդգրկված չէր[3]:

Վերոհիշյալ հեղինակների տեղեկություններից որոշակիորեն տարբերվում է IX դ. հեղինակ Բալազուրիի հաղորդումը: Պատմիչը տեղեկացնում է, որ, ըստ քաջատեղյակ մարդկանց պատմածի, «Շիմշաթը, Կալիկալան, Խիլաթը, Արջիշը և Բաջունայսը կոչվում էին Չորրորդ Արմինիա, Բուսֆուրրաջանի շրջանը, Դաբիլը, Սիրաջ Թայրը և Բաղրավանդը կոչվում էին Երրորդ Արմինիա, Ջուրզանը կոչվում էր Երկրորդ Արմինիա, իսկ Սիսաջանն ու Առանը կոչվում էին Առաջին Արմինիա: Մյուսներն ասում են, թե Շիմշաթն էր միայն [կոչվում] Չորրորդ Արմինիա, Կալիկալան, Խիլաթը, Արջիշն ու Բաջունայսը կոչվում էին Երրորդ Արմինիա, Սիրաջ Թայրը, Բաղրավանդը, Դաբիլն ու Բուսֆուրրաջանը կոչվում էին Երկրորդ Արմինիա, իսկ Սիսաջանը, Առանը և Տիֆլիսը կոչվում էին Առաջին Արմինիա»[4]:

Բալազուրիի հաղորդման առաջին մասը համարյա նույնությամբ կրկնում է Իբն Խորդադբեհի տեղեկությունը, սակայն, մի տարբերությամբ. արաբ պատմիչը Երկրորդ Արմինիայի կազմում հիշատակում է միայն Ջուրզանը՝ չխոսելով ալ-Լաքզի մասին: Ինչ վերաբերում է Բալա-

---

[1] Ibn al-Fakih, էջ 290-291:

[2] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Սարիր թագավորությունը,-«Գիտության գլոբուս», 2004, հ. 4, էջ 99-106:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան**, Մարզպանական Հայաստանը և հարևան երկրները 387-628թթ., քարտեզ, Ե., 1980:

[4] Տե՛ս بلاذري, I, էջ 231:

զուրիի հաղորդման երկրորդ հատվածին, ապա այն, ըստ երևույթին, աղավաղված է կամ, պարզապես, այդ տեղեկությունը Բալազուրիին հաղորդողների թյուրիմացության հետևանք է:

Երիտասարդությունն Արմինիայում անցկացրած Յակուբիի հաղորդած տեղեկությունն էապես տարբերվում է Արմինիայի՝ չորս մասերի բաժանված լինելու մասին վերոհիշյալ հաղորդումներից: Ըստ IX-X դդ. պատմիչի՝ Արմինիան բաժանվում էր երեք մասի. «Առաջին մաս՝ Դաբիլ, Կալիկալա, Խիլաթ, Շիմշաթ և Սավադ քաղաքներ, երկրորդ մաս՝ Բարդաա, Բայլական, Կաբալա և Բաբ ալ-Աբվաբ քաղաքներ, երրորդ մաս՝ Զուրզան, Տիֆլիս...»[1]: Ինչպես տեսնում ենք, Յակուբին թե՛ Հայաստանի հողերն է մեկ վարչական միավորի մեջ հիշատակում և թե՛ Տփղիս քաղաքն է Զուրզանի հետ միասին մեկ վարչական շրջանի մեջ նշում:

XIII դ. հեղինակ Յակուտ ալ-Համավին, ի մի բերելով վերոհիշյալ հեղինակների հաղորդումները, հայտնում է, որ Առաջին Արմինիայի մեջ էին մտնում Բայլականը, Կաբալան ու Շարվանը, Երկրորդի մեջ՝ Զուրզանը, Սուղդաբիլը, Բաբ Ֆիրուզ Կուբադն ու ալ-Լաքզը, Երրորդի մեջ՝ Բուսֆուրրաջանը, Դաբիլը, Սիրաջը, Թայրը, Բաղրավանդը և Նաշավան, իսկ Չորրորդի մեջ՝ Շիմշաթը, Կալիկալան, Արջիշը և Բաջունայսը[2]:

Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ Արմինիայի՝ չորս մասի ավանդական այս բաժանումը որոշ չափով համապատասխանում էր Հայաստանի և հարևան երկրների մինչարաբական ժամանակաշրջանի իրավիճակին և, իրականում, վարչական նշանակություն չուներ[3]: Մյուսները գտնում են, որ Արմինիան, իսկապես, բաժանված էր վերոհիշյալ վարչական շրջանների[4]:

Այն, որ Հայաստանում և Այսրկովկասյան երկրներում պարսկաբյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում գոյություն ունեցող վարչա-քաղաքական իրավիճակը որոշակիորեն արտացոլվել է արաբական տիրապետության շրջանում, կասկածի տեղիք չի տալիս: Դա կարող է նշանակել, որ արաբ տիրողները գոյություն ունեցող վարչական բաժանումը փոփոխելու անհրաժեշտություն չեն ունեցել: Այնուամենայնիվ, արաբները, ինչպես ցույց են տալիս աղբյուրների հաղորդումները, հենվելով հին վարչական բաժանման վրա, սակայն, այն ենթարկել են ընդգծված փոփոխությունների:

---

[1] Տե՛ս **Jakubi**, էջ 364:
[2] Տե՛ս **Jacut, I**, էջ 219-220:
[3] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 157:
[4] Տե՛ս **M. Ghazarian**, նշվ. աշխ., էջ 69, **J. Laurent,** նշվ. աշխ., էջ 9-34:

Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, թե Երրորդ Արմինիան տարածքային առումով նույնական էր մարզպանական Հայաստանին (ըստ 591 թ. բաժանման), իսկ Չորրորդ Արմինիան՝ Բյուզանդական Հայաստանին[1]: Սակայն Հայոց մարզպանությունը, ինչպես ցույց տվեցինք, 591 թ. բաժանումից հետո ամփոփվեց Վասպուրական գնդի երկրի սահմաններում, որն ընդգրկում էր Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի և Կորճայքի հյուսիսային հատվածները: Հայոց մարզպանության կազմում մնացել էին նաև նախկինում Տանուտիրական Գնդի երկրի մաս կազմող Այրարատի Մասյացոտն, Ոստան Դվնա և Արածու կողմն գավառները: Իսկ Երրորդ Արմինիայի կազմի մեջ էին մտնում, Վասպուրական գնդի երկրից բացի, նաև Այրարատն ու Տայքը: Այսինքն՝ տարածքային առումով այդ վարչական միավորների միջև էական տարբերություն գոյություն ուներ: Երրորդ Արմինիան տարածքային առումով ավելի մոտ էր Հայոց մարզպանությանը 571-591 թթ. դրությամբ: Նախքան 571 թ. ապստամբությունը Սյունիքը բաժանվել էր Հայոց մարզպանությունից ու միացվել Ատրպատականի աշխարհագրին: Հայոց մարզպանությունն այդ ընթացքում կազմված էր Վասպուրական, Այրարատ, Տուրուբերան, Տայք, Մոկք աշխարհներից, Պարսկահայքի ու Կորճայքի հյուսիսային հատվածներից: Տարբերությունը միայն Տուրուբերանն էր, որը հետագայում մտնում էր Չորրորդ Արմինիայի մեջ: Վերջինը նույնպես տարածքային առումով չէր համընկնում Բյուզանդական Հայաստանին՝ ըստ 591 թ. բաժանման: 591 թ. բաժանումից առաջ այն ընդգրկում էր Բարձր Հայք և Ծոփք աշխարհները, իսկ դրանից հետո՝ նաև Այրարատ, Տուրուբերան, Տայք և Աղձնիք աշխարհները[2]: Իսկ Չորրորդ Արմինիայի մեջ էին մտնում Բարձր Հայքը, Ծոփքը և Տուրուբերանը, ինչպես նաև VIII դ. վերջին Չորրորդ Արմինիային միացված Աղձնիքի հյուսիսային գավառները: Այսինքն՝ տարածքային առումով այդ վարչական հասկացությունների միջև տարբերությունը շոշափելի էր:

Այժմ անդրադառնանք Արմինիա ոստիկանության պատմաաշխարհագրական քննությանը:

Առաջին Արմինիա: Ընդգրկում էր Մեծ Հայքի Սյունիք, Արցախ և Ուտիք աշխարհները, Բուն Աղվանից աշխարհը, Կուր գետի ստորին հոսանքի և Դարբանդի միջև գտնվող մերձկասպյան շրջաններն ու Կովկասյան լեռների արևելյան հատվածը:

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Քուստ-ի Կապկոի վարչական միավորի վերապրուկները Խալիֆայության ժամանակ,-ՀՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 9, էջ 75:

[2] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 70:

Սիսաջան(Սյունիք): Արաբ հեղինակները Սյունիքը հիշատակում են Առաջին Արմինիայի կազմում[1]: Ինչպես հայտնի է, 571 թ. ապստամբությունից առաջ «ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի՛ ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն»[2]: Սակայն, Համազասպ Մամիկոնյանի իշխանության տարիներին (655-662) հայերը «հպծեալ երթևեկով հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զաւրացն Աղուանից և իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչև բարձաւ թագաւորութիւն Պարսից և տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց»[3]: Այսինքն՝ Արմինիա ոստիկանության ձևավորումից առաջ Սյունիքը կրկին միացվել էր Հայոց իշխանապետությանը: Արաբները սկզբում Սյունիքը վարչականորեն Հայաստանի մաս էին դիտում: Այդ է ցույց տալիս այն փաստը, որ 655 թ. արշավանքի ժամանակ Սյունիքը ոչ թե Աղվանից մարզպանության տարածքները նվաճող Սալման իբն Ռաբիան, այլ Հայաստանի և Վիրքի նվաճող Հաբիբ իբն Մասլաման[4], չնայած, որ այդ ժամանակ դեռևս Սյունիքը Հայոց իշխանապետությունը չէր վերամիավորվել: Արաբները VIII դ. սկզբին Սյունիքը մտցրեցին Առաջին Արմինիային մեջ՝ հետապնդելով այն նույն նպատակը, ինչ Սասանյանները: Նրանք պարզապես ցանկանում էին թուլացնել Հայաստանը՝ նրա տարբեր հատվածների

---

[1] Պետք է նշել, որ ադրբեջանցի պատմաբան Զ. Բունիաթովը, հենվելով արաբ հեղինակների նմանօրինակ հաղորդումների վրա, Սյունիքը, Արցախի և Ուտիքի հետ միասին, Առանի մաս է համարում: Վերջինի շուրջ նա կառուցում է իր տեսությունը՝ «հայ ժողովրդի ու հայ եկեղեցու կողմից Առանի աղվան ժողովրդի «գրիգորյանիզացիայի» (գրիգորականացում, այսինքն՝ հայկական եկեղեցու դավանանքի պարտադրում-Ա.Ե.) և «արմենիզացիայի» (հայացում-Ա.Ե.) մասին» (տե՛ս **З. Буниятов,** նշվ. աշխ., էջ 93-102): Այդ տեսակետից նրա համար ցանկալի էր Առանի կազմում հնարավորինս շատ հայկական շրջաններ ներառնելը: Սակայն, նա, հավանաբար, չափազանց է համարել, Յակուտի մեկ այլ հաղորդումից ելնելով, Վասպուրականը ևս Առանի մեջ մտցնելը, ուստի՝ այդ հաղորդումը նա բերել է տողատակում («[Բուսֆուրրաջանը] գավառ է Առան երկրում, որի քաղաքն է Նաշավան կամ Նախջավանը» (Jacut, I, էջ 627, տե՛ս **З. Буниятов,** նշվ. աշխ., էջ 41, ծանոթ. 16): Մեր կարծիքով, Յակուտի այդ իրականությանն ակնհայտորեն չհամապատասխանող տեղեկության մեջբերման պատճառ Զ. Բունիաթովի համար հանդիսացել է այդտեղ հիշվող Նախճավանը, որպեսզի կարծիք ստեղծվի, թե այն ևս Առանի մաս է կազմել:

[2] **Սեբեոս**, էջ 67-68:

[3] Անդ, էջ 175:

[4] Տե՛ս بلاذري, I, էջ 237:

միջև արհեստական անջրպետներ առաջացնելով: Յակուտը Սյունիքն Առաջին Արմինիայի մեջ հիշատակվելու պատճառ է համարում դրա՝ Առանի հետ միասին հիշատակվելը[1]: Վերջին հանգամանքը, հավանաբար, կապված էր Մեծ և Փոքր Սյունիք վարչա-քաղաքական հասկացությունների հետ, երբ Փոքր Սյունիք անվան տակ հանդես էր գալիս Արցախը[2]:

Առան: Այս տեղանունը վերաբերում էր Սասանյանների տիրապետության շրջանում Աղվանից մարզպանության մեջ մտցված Մեծ Հայքի երկու աշխարհներին՝ Արցախին և Ուտիքին: Արաբ աշխարհագետ Յակուտը, խոսելով Առանի մասին, հաղորդում է, որ այն մի մեծ երկրամաս է, ուր բազմաթիվ քաղաքներ կան: Դրանցից են Գանձակը (Ջանզան), Պարտավը, Շամքորը և Բայլականը: Իսկ Ադարբայջանի (Ատրպատականի ոստիկանության) և Առանի միջև սահմանը, ըստ Յակուտի և Իբն Խորդադբեհի՝ Երասխ գետն էր[3]: Ինչպես տեսնում ենք, Յակուտը, Առան ասելով, նկատի ունի Հայոց Արևելից կողմանց երկու աշխարհները՝ Արցախը և Ուտիքը, ուստի՝ իզուր չէ, որ նա որպես Առանի քաղաքներ հիշատակում է միայն Հայոց Արևելից կողմանց քաղաքները: Սակայն, երբեմն, արաբ հեղինակներն Առան են անվանում նաև Կուրի միջին և ստորին հոսանքից հյուսիս գտնվող շրջանը՝ Աղվանքը: Յակուտն այդ Առանն Արմինիայից (Հայոց թագավորություն) բաժանում է Կուր գետով[4]: Իբն Հաուկալը (X դ.) նախկինում Աղվանից մարզպանության կազմում ընդգրկված այսրկուրյան ու անդրկուրյան երկրները պարզապես անվանում է երկու Առաններ[5]: Բ. Ուլուբաբյանը, քննության ենթարկելով «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները, եկել է այն ճիշտ եզրակացության, որ, դիտելով «Առան» տեղանվան գործածության ոլորտը դարերի ընթացքում, մի հետաքրքիր երևույթ ենք տեսնում: Այնպես, ինչպես «Աղվանք» անվանումը, սկզբնապես լինելով Կուրի ձախափնյակի որոշ երկրամասերի անվանում, հետագայում տարածվեց նաև Կուրի աջափնյա Հայոց աշխարհների վրա, այնպես էլ «Առան» անվանումը, որը նախապես վերջիններին էր վերաբերում, արաբների տիրապետության օրոք տարածվում է նաև Կուրի ձախափնյա-

---

[1] Տե՛ս Jacut, I, էջ 184, II, էջ 740:

[2] Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 310:

[3] Տե՛ս **Jacut**, I, էջ 183-184, Ibn Khordadbeh, էջ 121:

[4] Տե՛ս **Jacut**, IV, էջ 259: Հմմտ. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 28-29. «Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք...մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով»:

[5] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 355:

կի վրա[1]: Խնդիրն այն է, որ ինչպես «Առան» բառը, որը մինչև օրս էլ օգտագործվում է «դաշտ» կամ «հարթավայր» իմաստով[2], այնպես էլ «Աղվանք»-ը, նշանակում է «դաշտ», ինչի հետևանքով նույն իմաստն արտահայտող բառերի փոխատեղումը միանգամայն բացատրելի է: Մովսես Խորենացին, պատմելով Վաղարշակ թագավորի կողմից մի ոմն Առանի Մեծ Հայքի հյուսիսարևելյան հատվածում կողմնակալ նշանակելու մասին, հաղորդում է, թե նրա ցեղը «ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի» և, որ «աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»[3]: Այսինքն, ըստ պատմահոր՝ «Աղվանք» անունը տրվել է Առանի սերունդների ժառանգած դաշտին(Աղվանից դաշտ) և դրա՝ դեպի Կովկասյան լեռները տարածվող հատվածին: Փաստորեն, «Աղվանք» անունը էթնիկական ծագում չուներ և, պարզապես, դաշտ կամ հարթավայր էր նշանակում[4]:

Սասանյանների օրոք Աղվանից մարզպանության կազմում Հայոց Արևելից կողմանց երկու աշխարհները՝ սկզբում Առանշահիկների, ապա Միհրանյանների իշխանության ներքո, հանդես էին գալիս որպես ինքնուրույն վարչա-քաղաքական միավոր[5]: Կարևոր է նշել, որ Մովսես Դասխուրանցու երկի քննությունը ցույց է տալիս, որ, Միհրանյաններին և Առանշահիկներին Աղվանից իշխան կոչելիս, պատմիչը նկատի ունի միայն Հայոց Արևելից կողմանց երկու աշխարհները, ինչպես նաև անդրկուրյան Կամբեճան գավառը[6]:

Ալ-Ջարդաման ամրոց: Ըստ Իբն Խորդադբեհի՝ գտնվում էր Արմինիայում[7]: Հիշատակում է նաև Բալազուրին՝ կապված 655 թ. արաբական արշավանքի հետ[8]: Համապատասխանում է Ուտիքի Գարդման գա-

---

[1] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 125:

[2] Մեզանում այսօր էլ Արարատյան դաշտն անվանվում է «Արան» (Առան), իսկ տեղի բնակչությունը՝ «արանցի» (տե՛ս **Ս. Երեմյան,** Ն. Մառը և VII դարի «Աշխարհացոյց»-ը,- «Մառը և հայագիտության հարցերը», Ե., 1968, էջ 88-89):

[3] Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 126-128:

[4] Եթե Առանի «Աղու» մականվանն ավելացնենք պարսկական հոգնակիակերտ «ան» մասնիկը և վերջում դնենք հայերենում ցեղ, ժողովուրդ կամ դրանց բնակության տարածքները ցույց տվող «ք» մասնիկը, կստանանք «Աղուանք»-ը, ինչը հստակորեն խոսում է մեր տեսակետի օգտին:

[5] Օրինակ՝ Հուստինիանոս Բ կայսրը, 689 թ. գրավելով Հայաստանը, Հայոց իշխան կարգեց Ներսեհ Կամսարականին, իսկ Հայոց Արևելից կողմանց իշխան՝ Վարազ Տրդատին (տե՛ս Ասողիկ, էջ 101):

[6] Տե՛ս**Բ. Ուլուբաբյան,** Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Ե., 1981, էջ 246:

[7] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 123:

[8] Տե՛ս بلاذري, I, էջ 239:

վառի համանուն ամրոցին, որի ավերակները մինչև այժմ էլ պահպանվել են Շամքոր գետի վերին հոսանքի շրջանում[1]:

Տիֆլիս (Տփղիս): Տփղիս քաղաքն Իբն Խորդադբեհն ու Իբն ալ-Ֆակիհը հիշատակում են Առաջին Արմինիայի մեջ: Սակայն, մեր կարծիքով, որպես իրականություն պետք է ընդունել Յակուտի այն տեղեկությունը, թե Տփղիսը հանդիսանում էր Երկրորդ Արմինիայի կենտրոնը[2]: Բացի այդ, ինչպես տեսանք, երիտասարդությունն Արմինիայում անցկացրած Յակուբին Տփղիսը հիշատակում է Երկրորդ Արմինիայի կազմում: Սակայն ասել, թե Իբն Խորդադբեհի հիշատակությունը որևէ հիմք չունի, ճիշտ չէր լինի: Հայտնի է, որ Պարսկաստանում Վահրամ Չուբինի ապստամբությունը սպանված արքա Որմիզդի որդի Խոսրովը կարողացավ ճնշել Բյուզանդիայի կայսր Մորիկի օգնությամբ: Այդ պատճառով 591 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրով Խոսրովը տարածքային մեծ զիջումներ կատարեց կայսրությանը: Ըստ Սեբեոսի՝ այն ընդարձակ տարածքների հետ, որ Բյուզանդիայի տիրապետության ներքո անցան Հյուսիսային Միջագետքից և Հայոց մարզպանությունից, Խոսրովը Բյուզանդիային «ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփխիս քաղաք»[3]: Այսինքն՝ Վրաց աշխարհի մեծ մասն անցավ Բյուզանդական կայսրությանը՝ բացառությամբ Տփղիս քաղաքի և դրա շրջակա տարածքների: Հետագայում Խոսրովը, իբր թե սպանված Մորիկի վրեժը լուծելու համար, արշավում է Բյուզանդիա, բայց ծանր պարտություն է կրում: Բյուզանդական բանակը, դաշնակից խազարների հետ միասին, պաշարում է Տփղիսը, գրավել չի կարողանում ու գործը մյուս տարվան է թողնում[4]: Հաջորդ տարին խազարական զորքը՝ Շաթի գլխավորությամբ, պաշարում է Տփղիսն ու այս անգամ գրավում[5]: Կարծիք է հայտնվել, թե 629 թ. պարսկա-բյուզանդական հաշտության պայմանագրով Տփղիսն անցել է բյուզանդական տիրապետության ներքո[6], սակայն, սկզբնաղբյուրներում այդ մասին ոչինչ չկա: Ավելին, Սեբեոսի վկայությունն այն մասին, թե Կավատ արքան որոշեց «հաշտութիւն առնել ընդ կայսեր, և ի բաց թողուլ զամենայն սահմանս

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը IX-XI դարերում, քարտեզ(Ե., 1987), նույնի՝ Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ (Ե., 1976): Տե՛ս նաև **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Ե., 2001: Տե՛ս նաև **M. Ghazarian**, նշվ. աշխ., էջ 77:

[2] Տե՛ս **Jacut**, I, էջ 857:

[3] Տե՛ս **Սեբեոս**, էջ 84:

[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 137-140

[5] Անդ, էջ 151-153:

[6] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 17:

թագաւորութեան նորա» և Հերակլը համաձայնեց դրան[1], ցույց է տալիս, որ նախկինում եղած սահմանները մնացել են անփոփոխ: Հենց պատմական այդ իրողությունը, մեր կարծիքով, կարող էր հանդիսանալ արաբ հեղինակների կողմից Տփղիսի՝ վրացական մյուս հողերից բաժանված լինելու մասին հաղորդումների հիմքը: Բացի այդ, մեծ նշանակություն ուներ նաև այն փաստը, որ Տփղիսը, վերաբնակեցված լինելով արաբական ցեղերով և Իբն Խորդադբեհի օրոք մահմեդական քաղաք հանդիսանալով[2], տարբերվում էր Երկրորդ Արմինիայի մյուս քաղաքներից ու շրջաններից, որտեղ արաբական ցեղերի զանգվածային վե-րաբնակեցում չէր իրականացվել: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, որ արաբները, գրավելով Տփղիսը, զանգվածաբար հաստատվեցին այնտեղ, և այն վերածվեց մահմեդական քաղաքի[3]: Այդ տեսակետից Տփղիսը նման էր Առաջին Արմինիային, որտեղ մահմեդականությունը պարարտ հող էր գտել: Ուստի՝ հավանական է նաև, որ հենց այդ պատճառով են արաբ հեղինակները Տփղիսն Առաջին Արմինիայի մեջ հիշատակում:

Բարդաա (Պարտավ): Պարտավն Արմինիայի նշանավոր քաղաքներից մեկն էր, որը VIII դ. վերջից դարձավ Արմինիայի ոստիկանի երկրորդ և հիմնական նստավայրը: Ըստ Ղևոնդի՝ Սուլեյման ոստիկանը (788-790) արդեն նստում էր Պարտավում[4]: Այդ ժամանակներից էլ պետք է հաշվել Պարտավի՝ որպես Արմինիայի ոստիկանի երկրորդ նստավայրի, հանդես գալը[5]: Արաբ հեղինակներից ալ-Մուկադդասին Պարտավն անվանում է «Արմինիայի Բաղդադ»[6], ալ-Իսթախրին վկայում է, որ «Իրաքում և Խորասանում Ռեյից և Իսբահանից հետո չկա ավելի նշանակալից, ավելի ծաղկուն և ավելի գեղեցիկ քաղաք..., քան Բարդաան է»[7], իսկ Իբն Հաուկալը Պարտավն անվանում է «Առանի մայրաքաղաք»[8]:

---

[1] Սեբեոս, էջ 128:

[2] Տե՛ս مسعودي, էջ 203-204:

[3] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 28:

[4] Տե՛ս **Ղևոնդ,** էջ 166: Պետք է նշել, որ, դատելով Մովսես Դասխուրանցու՝ հայոց 200 թ.-ին (751 թ.) վերաբերող մի վկայությունից, ոստիկանի նստավայրը Պարտավ է տեղափոխվել այդ տարում: Պատմիչը հաղորդում է, թե 751 թ. «զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն՝ և ծծել զպարարտութիւն երկրիս. յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտաւ» (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 325):

[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 364:

[6] **Al-Moqaddasi**, էջ 375:

[7] **Al-Istakhri,** էջ 182:

[8] **Ibn Haukal**, էջ 337:

Բայլական: Գտնվում էր Պարտավից հարավ՝ նրանից 14 փարսախ հեռավորության վրա(մոտ 80կմ)[1]: Համապատասխանում է այժմ Օրենկալա կոչվող ավերակներին[2]: Բայլականն Առաջին Արմինիայի մեծագույն քաղաքներից մեկն էր: Ըստ արաբ հեղինակների՝ Բայլականով էր անցնում Պարտավն Արտավետին (Արդաբիլ) և Արտավետով Խորասանին ու խալիֆայության այլ երկրամասերին կապող առևտրական ճանապարհը:

Կաբալա: Համապատասխանում է Աղվանից թագավորության Կապաղակ մայրաքաղաքին և նույնական է ներկայիս Կաբալա գյուղին (Չուխուր Կաբալա), որը գտնվում է Նիժ(Նիջ) գյուղի մոտակայքում[3]:

Շաքե-Կամբեճանի իշխանություն: Կապաղակի հարևանությամբ, նրանից դեպի հյուսիս-արևմուտք, գտնվում էր Շաքե-Կամբեճանի իշխանությունը: Դարեր ի վեր Բուն Աղվանից աշխարհին վերագրվող Կամբեճան գավառն աչքի էր ընկնում իր հոծ հայ ազգաբնակչությամբ, որին մանրամասնորեն կանդրադառնանք մեր ուսումնասիրության համապատասխան բաժնում: Ըստ Բալազուրիի՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ արդեն Շաքե և Կամբեճան գավառները միասնական իշխանություն էին կազմել: Նկարագրելով Սալման իբն Ռաբիայի արշավանքը դեպի Հայոց Արևելից կողմերն ու անդին, Բալազուրին հաղորդում է, որ, ի թիվս այլ իշխանների, արաբ զորավարի հետ պայմանագիր կնքեց նաև Շաքեի ու Կամբեճանի[4] տերը[5]: Այդ շրջանից սկսած այդտեղ ձևավորված հայկական իշխանությունն աստիճանաբար հզորացավ, իսկ արաբական տիրապետության տապալումից հետո նաև թագավորություն դարձավ:

---

[1] Տե՛ս al-Istakhri, էջ 192:

[2] Տե՛ս **Կ. Тревер**, Очерки по истории и культуре Кавказской Албании (IVв. до н. э.-VIIв. н. э.), Москва-Ленинград, 1959, с. 265-266. Տե՛ս նաև «Большая Советская Энциклопедия»(այսուհետև՝ «БСЭ»), т. 18, Москва,1974, с. 505.

[3] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 58, **Հ. Աշուրբեյլի,** նշվ. աշխ., էջ 32-35:

[4] Պետք է նշել, որ Բալազուրին Կամբեճանը հիշատակում է Կամիբարան (قميران) ձևով (տե՛ս بلاذري, I, էջ 240): Մ. Ղազարյանն առաջարկում է այն կարդալ Կամբիզան (قميزان), որը ցույց է տալիս դրա նույնությունը Կամբեճանի հետ (տե՛ս **M. Ghazarian**, նշվ. աշխ., էջ 84-85):

[5] Տե՛ս بلاذري, I, էջ 240: Պետք է ընդգծել, որ Բալազուրիի երկի այս հատվածը թարգմանիչները սխալ են թարգմանել: Արաբերեն տեքստում նշված է. «صاحب شكن و القميران» («Շաքքանի և Կամիբարանի տերը»): «Տեր», «իշխան» բառի եզակին صاحب -ն է, ինչպես և գրված է Բալազուրիի տեքստում, իսկ հոգնակին՝ صاحب, صحب: Մինչդեռ Պ. Ժուզեի ու Բ. Խալաթյանցի թարգմանությամբ ստացվել է «Շաքքանի և Կամիբարանի տերերը» (տե՛ս **Պ. Жузе**, Из соч. Баладзори "Книга завоевания стран", с. 14, **Բ. Խալաթյանց**, նշվ. աշխ., էջ 51):

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Մեծ Հայքին Կուր գետով սահմանակցող Բուն Աղվանից աշխարհի գավառների նկարագրությունը սկսվում է Վիրքին հարևան գավառներից. «Նախ առ Վրօք, Եխնի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբէճան առ Կուրաւ»[1]: Այսինքն՝ Կամբեճան գավառը սահմանակից էր Վիրքին և տարածվում էր Կուր գետի ձախ ափին: Ս. Երեմյանն Աղվան գետը նույնացնում է ներկայիս Ալազան գետին[2], իսկ Կամբեճան գավառը՝ ներկայիս Շիրակի անջրդի դաշտավայրին, որտեղով հոսում է Կամբեճ (այժմ՝ Իորա կամ Իորի) գետը[3]: Այդ տեղադրությունն ընդունելի է, քանի որ համապատասխանում է սկզբնաղբյուրների և, մասնավորապես, «Աշխարհացոյց»-ի տվյալներին: Շաքե քաղաքը համապատասխանում է ներկայիս Շաքի կամ Նուխի քաղաքին, իսկ Շաքե գավառը՝ Շաքիի կամ Նուխիի շրջանին[4]: Չնայած «Աշխարհացոյց»-ի վերոբերյալ հիշատակությանը, թե Կամբեճանն Աղվանքի մեջ էր մտնում, ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ դեռևս հնագույն ժամանակներից Կամբեճանը Հայաստանի մաս էր կազմում և ուներ հայ բնակչություն: Ա. Մնացականյանը Կամբեճանն ու հարակից շրջանները պայմանականորեն կոչում է Անդրկուրյան Հայք: Ստրաբոնը, Աղվանքի նկարագրության մեջ, անդրադառնալով Հայաստանի այդ հատվածի սահմաններին, հաղորդում է, թե «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ՝ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»[5]: Հայաստանի նկարագրության մեջ Ստրաբոնը վկայում է, թե «Խորձենեն և Կամբեճանը [Հայաստանի գավառներից] ամենահյուսիսայիններն են»[6]: Ստրաբոնի վկայությունները ցույց են տալիս, որ Կամբեճանը Հայաստանի մաս էր կազմում և տեղի բնակչությունն էլ հայկական էր[7]:

Կամբեճանի՝ հայկական երկրամաս լինելու մասին մի կարևոր տեղեկություն է պահպանվել «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ: Աղվանքի նկարագրության մեջ նշված է. «Քավաղակ (իմա՛ Կապաղակ-Ա.Ե.) քաղաք Աղուանից՝ մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբօջ դէպ ի հարաւոյ ըստ Փոքր Հայոց»[8]: Այսինքն՝ Կովկասյան լեռնե-

---

[1] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 29:
[2] **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34:
[3] Անդ, էջ 57:
[4] Անդ, էջ 73: Տե՛ս նաև **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 116:
[5] **Страбон**, XI, IV, 1.
[6] Անդ, XI, XIV, 4:
[7] Տե՛ս **Ա. Մնացականյան,** նշվ. աշխ., էջ 48-49:
[8] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 29:

ից սկիզբ առնող Սեբոջ գետը հոսում էր Կապաղակ քաղաքով դեպի հարավ և անցնում Փոքր Հայքի սահմանով: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության հրատարակիչ Ա. Սուքրյանը, չըմբռնելով այդ «Փոքր Հայք»-ը, որը ոչ մի կապ չունի բուն Փոքր Հայքի հետ, այդ անվանումից հետո փակագծերում հարցական նշան է դրել: Ինչպես ճիշտ կերպով նշում է Ա. Մնացականյանը, հետագայում այդ հարցականը հետազոտողների վրա այն ազդեցությունն է ունեցել, որ նրանք հիշյալ «Փոքր Հայք»-ին չեն անդրադարձել, կարծելով, թե այդտեղ ինչ-որ սխալ կա[1]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ սխալ չկա, և այդ երկրամասի Փոքր Հայք անվանումը պահպանվել է նաև Պլուտարքոսի երկում: Նկարագրելով Պոմպեոսի աղվանական արշավանքը, պատմիչը հաղորդում է, թե հռոմեացի զորավարը նպատակ ուներ արշավել դեպի Կասպից ծով, բայց թունավոր սողունների առատության պատճառով (թերևս, Մուղանի դաշտում) հրաժարվեց իր մտադրությունից և ծով հասնելուց ու վերադարձավ Փոքր Հայք[2]: Մերժելի է այն տեսակետը, թե Պոմպեոսը կարող էր Մուղանից անմիջապես Փոքր Հայք մեկնել: Խնդիրն այն է, որ իր հոգնատանջ բանակին հանգստի համար Պոմպեոսը դժվար թե Հայաստանի վրայով հսկայական ճանապարհ կտրելով տաներ բուն Փոքր Հայք: Խոսքն այստեղ, ամենայն հավանականությամբ, հայ բնակչություն ունեցող Կամբեճանի մասին է, քանի որ Կուր գետի ափով անցնող բարեկարգ ու մատչելի ճանապարհը Մուղանի դաշտավայրից նրան անմիջապես հենց Կամբեճան էր հասցնելու:

Շաքե-Կամբեճանի իշխանությունը, փաստորեն, ուներ բավական ընդարձակ սահմաններ՝ տարածվելով Մեծ Հայքի ու Վիրքի սահմանին գտնվող Հունարակերտից[3], որի տեղադրությանը մենք դեռ կանդրադառնանք, մինչև Շաքե քաղաքի շրջանը:

Պատմաբանների շրջանում վեճերի առարկա է դարձել այն հարցը, թե իրականում հայկական ո՞ր նախարարական տանն են պատկանել Շաքեում իշխողները: Ն. Ադոնցը, որը Սահլ Սմբատյան իշխանին համարում էր Բագրատունի, հենվելով Թովմա Արծրունու այն վկայության վրա, թե Սահլը Շաքեի տերն էր[4], այն տեսակետն է արտահայտում, որ Շաքեի իշխանները նրա տոհմից են եղել, այսինքն՝ Բագրատունի[5]: Իր տեսակետն ապացուցելու համար նա բերում է «Քարթլիս ցխովրեբա»-

---

[1] Տե՛ս **Ա. Մնացականյան,** նշվ.աշխ., էջ 56:

[2] Անդ, էջ 57-58:

[3] **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 63:

[4] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 298:

[5] Տե՛ս **Ն. Ադոնց,** Բագրատունյաց փառքը,-«Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, 125-134:

յի այն հաղորդումը, ըստ որի՝ երեք Բագրատունի եղբայրներ Հայաստանից եկել ու վրաց իշխանից որպես ժառանգական տիրույթ ստացել էին Հերեթն ու Շաքեն[1]: Ի հակադրություն Ն. Ադոնցի՝ Բ. Ուլուբաբյանը կարծում է, որ Սահլի՝ Շաքեին տիրելու մասին Թովմա Արծրունու վկայությունը նրա թյուրիմացության հետևանքն է և, բացի այդ, Սահլն Առանշահիկ էր և ոչ թե Բագրատունի[2]:

Մեր քննությունից դուրս է Շաքեի իշխանների ծագումնաբանության պարզաբանման խնդիրը, բայց հարկ ենք համարում ընդգծել, որ, ինչպես տեսանք, այդ իշխանության բնակչությունը, հետևաբար նաև այնտեղ իշխող տոհմը, հայկական էր: Ուստի և անհիմն է Զ. Բունիաթովի փորձը՝ խաչ քաշելու այս իշխանության հայ տիրողների մասին պատմիչների հաղորդումների ճշմարտացիության վրա: Նա պնդում է, թե այն Շաքեն, որտեղ տիրում էր Սահլը, ոչ մի կապ չունի ներկայիս Շաքի-Նուխիի հետ, որը հակասում է սկզբնաղբյուրների հաղորդումներին: Վերջապես, նա փորձ է կատարում նաև մերժելու Սահլի հայ լինելու մասին «տեսակետը»[3]: Պարզ է, որ Զ. Բունիաթովը փորձում է նենգափոխել պատմական ճշմարտությունը, քանի որ, ըստ Մովսես Դասխուրանցու, Սահլն Առանշահիկ էր[4], իսկ Առանշահիկները՝ «Հայկազանց արանք»[5]:

Շիրվան: Պատմական Շիրվանը տարածվում էր ներկայիս Շաբրան-չայի և Գելգենի-չայի միջև: Այն VI դարից հայտնի էր իբրև առանձին իշխանություն[6]: VIII դ. վերջից Շիրվանին տիրեցին արաբ Շայբանիները: Սրանցից առաջինն Արմինիայում ոստիկանի պաշտոն վարեց Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանին, որը Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք երկու անգամ նշանակվեց այդ պաշտոնին (787-788, 799-801)[7]: Այդ ժամանակ խալիֆայությունը Արմինիայում արաբական ցեղերի զանգվածային վերաբնակեցում էր իրականացնում: Յազիդն իր առաջին կառավարման շրջանում Ռաբիա ցեղախմբից (հավանաբար, իր ցեղակից շայբաններից) այնքան արաբներ բերեց ու բնակեցրեց Արմինիայում, որ նրանք այնտեղ արդեն մեծամասնություն կազմեցին[8]:

---

[1] Տե՛ս «Քարթլիս Ցխովրեբայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», էջ 199: Տե՛ս նաև **Լ. Մելիքսեթ-բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Ե., 1934, էջ 196:

[2] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 65-70:

[3] Տե՛ս **З. Буниятов**, նշվ. աշխ., էջ 185:

[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326:

[5] Անդ, էջ 338:

[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 74:

[7] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 276, 278:

[8] Տե՛ս يعقوبي, II, էջ 426:

Այս վերջին փաստարկի վերաբերյալ հարկ է ընդգծել, որ Հայաստանում, ինչպես հայտնի է, արաբները երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ Երկրորդ Արմինիայում, ինչպես կտեսնենք, Տփղիսի ամիրայության գլուխ Շայբանիները կանգնեցին միայն IX դ. կեսին, այնպես, որ այդ հաղորդումը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Առաջին Արմինիային և, մասնավորապես, Շիրվանին, ուր Յազիդ իբն Մազյադի հաջորդների օրոք IX դ. հիմնադրվեց Մազյադյան-Շիրվանշահերի իշխանությունը: «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»[1] մեջ նշվում է, որ Յազիդ իբն Մազյադի սերունդներից Հայսամը տիրում էր Շիրվանին՝ կրելով Շիրվանշահ տիտղոսը: Մութավաքիլի սպանությունից հետո՝ հիջրայի[2] 247 թ.(861-862), խռովություններ սկսվեցին, որոնցից օգտվեց Հայսամը և «Շիրվանի գործերում անկախություն ձեռք բերեց»[3]: Դրանից հետո Շիրվանի իշխանությունն աստիճանաբար սկսում է տարածվել Կուր գետի և Կասպից ծովի միջև ընկած տարածքների վրա[4]: Արևմուտքում Շիրվանի իշխանությունը տարածվում էր մինչև ներկայիս Գյոկ-չայ գետի ավազանը[5]:

Մասկաթ (Մազքթաց աշխարհ): Ըստ հայկական և արաբական աղբյուրների՝ տարածվում էր Կասպից ծովի ափին՝ Դարբանդի և Շիրվանի միջև[6]: Արևմուտքում սահմանակցում էր Աբխազ թագավորությանը՝ տարածվելով մինչև ներկայիս Ղուբա քաղաք: Համարյա ամբողջությամբ համապատասխանում է հետագայի Մուշկուր երկրին, որը տարածվում էր Դարբանդի ու Շապորան քաղաքի և Ղուբայի ու Կասպից ծովի միջև[7]:

Աբխազ[8]: Արաբական աղբյուրները Պարտավ-Դարբանդ ճանապարհի վրա հիշատակում են Աբխազ կոչվող թագավորությունը և հա-

---

[1] Այս երկի արաբերեն թարգմանությունը տե՛ս **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 43-105:

[2] Հիջրայի թվականների համապատասխանությունը եվրոպական թվականության թվականներին տե՛ս **И. Орбели,** Синхронистические таблицы хиджри и европейского летосчисления, М. Л., 1961.

[3] Տե՛ս **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 47:

[4] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 158:

[5] Տե՛ս **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 115-116: Հարկ է նշել, որ Շիրվանի այսպիսի սահմանները վերաբերում են մեծավ մասամբ Արմինիա ոստիկանությանից հետո եկող ժամանակաշրջանին, երբ այդ իշխանության մեջ էր մտնում նաև ալ-Լաքզը (տե՛ս مسعودي, էջ 177):

[6] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27, Jacut, I, էջ 438 և այլն:

[7] Տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 87-90:

[8] Աբխազ թագավորության մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 2005, թիվ 2, էջ 218-226: Աբխազ անվանման առաջացումը մենք բացատրում ենք այդ անվանը փասխերի անվան նմանությամբ («փասխ» անվանումն արաբերենում պետք է հնչեր «ալ-բասխ» ձևով (الباسخ)) և հիմնականում Արմինիայում չճանապարհորդած արաբ հեղինակների՝ դրանք միմյանց հետ շփոթելու հավանականությամբ (անդ, էջ 221-222):

մանուն կայարանը: Ըստ արաբ հեղինակների՝ Աբխազ կայարանը գտնվում էր Պարտավ-Դարբանդ ճանապարհի Շապորան-Ձիսր Սամուր (Սամուր գետի կամուրջը-Ա.Ե.) գծամասում՝ Շապորանից ու Ձիսր Սամուրից հավասարաչափ հեռավորությունների վրա[1]: Դարեր ի վեր Շապորանից դեպի Դարբանդ գործել են երկու մեծ ճանապարհներ. դրանցից առաջինն անցնում էր ներկայիս երկաթգծի երթուղով, որն անցնում է Կասպից ծովի ափերով, իսկ մյուսն՝ ներկայիս ավտոճանապարհի երթուղով, որն անցնում է Ղուբա քաղաքով[2]: Քանի որ Շապորանից հյուսիս Կասպից ծովի ափերն զբաղեցնում էր Մազքթաց աշխարհը[3], իսկ արաբ հեղինակների հիշատակած ճանապարհն անցնում էր Աբխազով և ոչ թե Մազքթաց աշխարհով, ապա պետք է ենթադրել, որ Շապորան-Աբխազ-Ձիսր Սամուր ճանապարհահատվածը համապատասխանում էր ներկայիս ավտոճանապարհի երթուղուն, իսկ Աբխազ թագավորությունը՝ գտնվում էր Մազքթաց աշխարհից արևմուտք:

Ըստ ալ-Իսթախրիի՝ Աբխազ թագավորությունը հարավում սահմանակցում էր Շիրվանին[4], իսկ արևմուտքում՝ Իբն Հաուկալի հաղորդմամբ՝ տարածվում մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները[5]: Աբխազից արևելք, ինչպես տեսանք, գտնվում էր Մազքթաց աշխարհը:

Աբխազ թագավորության տեղադրության որոշ փորձեր եղել են: Ս. Երեմյանն Աբխազ թագավորությունը տեղադրում է ներկայիս Կուսարչայ, Կուդիալ-չայ, Կարա-չայ և Վելվելի-չայ գետերի վերին և միջին հոսանքների շրջանում[6]: Նման կարծիք է հայտնում նաև արաբ աշխարհագետների երկերի թարգման Ն. Կարաուլովը[7]: Իսկ Վ. Մինորսկին ավելի հավանական է համարում Աբխազ-Լայզան շփոթը[8]: Վերջինը հեղինակը համապատասխանեցնում է ներկայիս Լահիջյան հարթավայրին, որը գտնվում է Գարդաման գետի վերին հոսանքի ավազանում և, որը նախկինում Սասանյանների վասալ իշխանություններից մեկն էր[9]: Սակայն, ինչպես ցույց տվեցինք, Աբխազը պետք է գտնվելիս լիներ Շա-

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 192, **al-Moqaddasi,** էջ 381-382, **Ibn Haukal,** էջ 350:

[2] Տե՛ս Дорожная карта Кавказского края, составлена и литографирована в военно-типографическом отделе Кавказского военного округа, 20 верст в дюйме, Тифлис, 1870:

[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27:

[4] Տե՛ս **al-Istakhri**, էջ 191:

[5] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 348:

[6] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 31 և «Հայաստանը IX-XI դարերում», քարտեզ, Ե., 1987:

[7] Տե՛ս **Н. Караулов**, նշվ. աշխ., թիվ 29, էջ 63, 67, ծանոթ. 60, թիվ 38, էջ 22:

[8] Տե՛ս **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 107, ծանոթ. 4, էջ 124:

[9] Անդ, էջ 107: Տե՛ս նաև Վ. Մինորսկու քարտեզը (նշվ. աշխ., էջ 113):

պորանից հյուսիս՝ այնտեղից Դարբանդ շարժվող ճանապարհահատվածի վրա, այսինքն՝, որ Վ. Մինորսկու նույնացումը սխալ է, քանի որ Լահիջյան հարթավայրը գտնվում է Շամախուց արևմուտք:

Դատելով Իբն Հաուկալի վերոհիշյալ հաղորդումից, թե Աբխազ թագավորությունը տարածվում էր մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները, ինչպես նաև մեր տեղորոշումից, որ Աբխազը պետք է փնտրել Մազքթաց աշխարհից արևմուտք, նշենք, որ ամենահավանականն Աբխազ թագավորության տեղադրությունն է Կովկասյան լեռների արևելյան հատվածի հյուսիսային Կողքային լեռնաշղթայի շրջանում, որը ձգվում է Սամուր գետի միջին հոսանքի շրջանից մինչև Շապորան գետի ակունքի շրջանը: Այդ լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումները տարածվում են ընդհուպ մինչև Ղուբա քաղաքը[1]:

Աբխազ թագավորության հարևաններից Մազքթաց աշխարհը, ինչպես տեսանք, տարածվում էր Դարբանդի ու Շապորան քաղաքի և Ղուբայի ու Կասպից ծովի միջև: Սամուր գետից հյուսիս, Ռուբաս գետի վերին և միջին հոսանքի ավազանում, տարածվում էր Թաբարսարան երկիրը[2], նրանից արևելք՝ Դարբանդը, և դեպի արևմուտք՝ ալ-Լաքզը[3]: Շիրվան երկիրը տարածվում էր Բելբելյա-չայ գետից և Շապորան քաղաքից հարավ ընկած շրջաններում[4]: Այդ երկրների միջև գտնվում էր Աբխազ թագավորությունը: Նրա սահմանները հյուսիսում պետք է տարածվեին մինչև Սամուր գետը, հարավ-արևելքում՝ մինչև Շապորան գետի ակունքի շրջանը, արևելքում՝ մինչև ներկայիս Ղուբա քաղաքը (ներառյալ): Աբխազի արևմտյան սահմանը, դատելով այն իրողությունից, որ այդ թագավորությունը տարածվում էր մինչև Կովկասյան լեռների լեռնաբազուկները, եզերվում էր Կովկասյան Կողքային լեռնաշղթայի ջրբաժան գծով, որից արևմուտք հիշյալ լեռներն են՝ իրենց բազուկներով: Այսինքն՝ Աբխազ թագավորությունը զբաղեցնում էր այն լեռնակղզին, որը տարածվում է Կողքային լեռնաշղթայի ջրբաժան գծի, Սամուր գետի միջին հոսանքի և ներկայիս Սամուր-դիվիչիի ջրանցքի միջև: Այդ լեռնակղզին իրենից բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր է ներկայացնում, և Աբխազի թագավորը, ամենայն հավանականությամբ, տիրում էր դրան ամբողջությամբ, մանավանդ, որ արաբ հեղինակների

---

[1] Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի Ֆ.7. պլանշետը:

[2] Տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 104, 152, 197 և այլն:

[3] Տե՛ս **al-Istakhri,** էջ 189: Տե՛ս Этническая карта Дагестанской АССР,-«Народы Кавказа», I, էջ 416:

[4] Տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 90: Տե՛ս նաև **al-Istakhri**, էջ 187:

հաղորդումները հաստատում են մեր տեսակետը[1]:

Խուրսան (Խայզան): Արաբ հեղինակները Շիրվանի հարևանությամբ հիշատակում են Խուրսան կամ Խայզան երկիրը[2], որը նույնական է հայկական սկզբնաղբյուրների Խսրվանին[3]: Վերջինը տարածվում էր Գիլգիլ-չայ և Սումգայիթ գետերի միջև[4]:

Լիրան: Արաբ աշխարհագետներն Առաջին Արմինիայի կազմում հիշատակում են նաև Լիրան ((ليران), տարընթերցմամբ՝ Լայզան (ليزان)) երկիրը: Ըստ Բալազուրիի՝ Լիրանի իշխանը նշանակվել էր պարսից Խոսրով Անուշիրվան արքայի կողմից[5]: Յակուտը, խոսելով Կովկասյան լեռների՝ Դարբանդին հարևան շրջանների մասին, հաղորդում է, որ Ֆիլան և Լաքզ կոչվող ցեղերից բացի այնտեղ բնակվում են նաև «Լիրան և Շարվան ցեղերը»: Ապա, անցնելով Դարբանդից հարավ ընկած տարածքների նկարագրությունը, հեղինակը պատմում է, որ Կուր-երասխյան ջրկիցից հյուսիս գտնվում է «Լիրանը, որտեղ մեծ ամրոց կա»[6]: Իսկ ալ-Իսթախրին հաղորդում է, որ Լիրանը սահմանակցում է մի կողմից Շիրվանի, իսկ մյուս կողմից՝ Մուկանիայի (այժմ՝ Մուղան) հետ[7]: Մասուդին տեղեկացնում է, որ Շիրվանի թագավորության սահմանակցությամբ գտնվում է մի իշխանություն, որը հարևան է Կովկասյան լեռներին. «Այն կոչում են Լիրան, և նրա թագավորը կրում է «Լիրանշահ» տիտղոսը: Այժմ այդ թագավորությանը տիրում է Շիրվանը, այնպես, ինչպես Մուկան թագավորությանը»: Մասուդին, ապա պատմելով Շիրվանի իշխան Մուհամմադի մասին, հաղորդում է, որ նա և նրա հայրը տիրել էին Լիրանին ավելի շուտ, քան մյուս թագավորություններին[8]:

Բ. Խալաթյանցը, հետևելով Մարկվարտին, Բալազուրիի երկի՝ Լիրանի մասին հատվածի թարգմանության մեջ այն կոչում է ալ-Իրան, իսկ դրա իշխանին՝ ալ-Իրանշահ: Այնուհետև, դրա վերաբերյալ ծանոթագրության մեջ ավելացնում է, որ «Լիրանշահ» անվանումը «Marquart իրաւամբ կ'ուղղէ ايرانشاه (Իրանշահ-Ա.Ե.) փոխանակ ليرانشاه (Լիրանշահ-Ա.Ե.). իցէ նոյնն է Մ. Կաղանկատուացու Եռանշահիկ»[9]:

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 223:
[2] Տե՛ս بلاذري, I, էջ 240, 243, مسعودي, էջ 178, **Ibn Khordadbeh**, էջ 122:
[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27:
[4] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56:
[5] Տե՛ս بلاذري, I, էջ 233:
[6] Տե՛ս Jacut, I, էջ 439:
[7] Տե՛ս **al-Istakhri**, էջ 193, ծանոթ. a(այս վկայությունը պահպանվել է հեղինակի երկի Գոտանյան ձեռագրերում):
[8] Տե՛ս مسعودي, էջ 178:
[9] **Բ. Խալաթյանց**, Նշվ.աշխ., էջ 35:

Վ. Մինորսկին կարծում է, թե «Լայզանը(իմա՛ Լիրան-Ա.Ե.), որը համապատասխանում է ներկայիս Լահիջյան դաշտավայրին՝ Գարդաման գետի վերին հոսանքի ուղղությամբ, նախկինում Սասանյան վասալ իշխանություններից մեկն էր...: Սկզբնապես Լայզանը Յազիդյանների (Շայբան ցեղի) կրտսեր ճյուղի տիրույթն էր, որն առաջին տեղը դուրս եկավ Աբու Թահիր Յազիդի օրոք: Լայզանն այնժամ մտավ միացյալ Շիրվանի կազմի մեջ»[1]:

Ս. Երեմյանը Լիրանը նույնացնում է Բազկան երկրին: Վերջինը, ըստ նրա, արաբա-պարսկական աղբյուրներում հիշատակվելով El-Iran ձևով, կարող էր կարդացվել նաև «Liran»: Այն տարածվում էր Ափշերոնից մինչև Շամախի քաղաքը և Աղ-սու գետը տարածվող դաշտավայրում: Կենտրոնը Շամախին էր: Հյուսիսում Բազկան երկիրը եզերվում էր Կովկասյան լեռներով, որտեղից(Վել-վելի-չայի ակունքների շրջանից) սկիզբ էր առնում Ապզուտ-Կավատ պարիսպը[2]:

Ընդհանրապես, Լիրանի մասին արաբ հեղինակների տեղեկությունների համադրումից դժվար չէ պարզել, որ այն հյուսիսում պետք է սահմանակցեր Շիրվանին, իսկ հարավում տարածվեր մինչև Կուր-երասխյան ջրկիցն ու Մուղանի դաշտավայրը, որն այդ ժամանակ մաս էր կազմում Ատրպատականի ոստիկանության[3]: Լիրանի այսպիսի տեղադրությունը մեզ բերում է մի կարևոր եզրակացության, որը բխում է նաև Բ. Հարությունյանի կողմից այդ նույն տարածքում հիմնավոր կերպով հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող Լփինքի տեղադրությունից[4]: Արաբ հեղինակների միջոցով մեզ հասած Լիրան անվանաձևը, ամենայն հավանականությամբ, իրենից ներկայացնում է «Լփինք» անվանման աղավաղումը: Ըստ երևույթին, «Լիրան»-ը (ليران) «Լիբան» (ليبان) անվանման աղավաղված տարբերակն է, որը հիշատակված է Իբն Խորդադբեհի երկում[5] և, որը ավելի մոտ է «Լփինք»-ին[6]: Իսկ Լփինքի

---

[1] Այստեղ Վ. Մինորսկին մեջ է բերում մեր վերևում բերված հիշատակությունները (տե՛ս **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 107, ծանոթ. 5: Տե՛ս նաև Վ. Մինորսկու քարտեզը, նշվ. աշխ., էջ 113):

[2] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42-43:

[3] Տե՛ս **Jacut,** IV, էջ 686: Տե՛ս նաև **Ibn Khordadbeh**, էջ 119, **Ibn al-Fakih,** էջ 285, al-Istakhri, էջ 182:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան,** «Լփինքի տեղադրության հարցի շուրջը»,-«ԲԵՀ», 1981, թիվ 1, էջ 108-124:

[5] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 124:

[6] Պետք է նշել, որ արաբ աշխարհագետը «Լիբան»-ի հետ հիշատակում է նաև «Լիրան»-ը: Մեր կարծիքով, այդ իրողությունը ոչ թե նշանակում է, որ եղել են թե՛ Լիրանը և թե՛ Լիբանը, այլ, որ Իբն Խորդադբեհը, իր ձեռքի տակ ունենալով միևնույն անվանման երկու տարբերակները, հնարավոր սխալից զերծ մնալու համար, մեջ է բերել երկուսն էլ:

սահմաններն էին. արևմուտքում Գարդման գետը, Կովկասյան լեռնաշղթայի Բաբադաղ լեռից սկիզբ առնող բազուկը մինչև Բաբադաղ, հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթան մինչև Ալթըաղաչ գյուղի հարավակողմը, արևելքում՝ Ալթըաղաչ-Սյունդյու-Մարազա-Գիջակ լեռ-Փիրսաղաթ գետից արևմուտք գտնվող բլուրներ-Կուր գետ և հարավում՝ Կուր գետ[1]: Ըստ որում, եթե իրոք Լիրանը նույնական է Լփինքին, ապա ալ-Իսթախրիի վերոհիշյալ Լիրանի «մեծ ու հզոր ամրոց»-ը պետք է համապատասխանի Մովսես Դասխուրանցու երկում հիշատակվող «Լփնացւոց» քաղաքին[2], որը, հավանորեն, նույնական է ներկայիս Շամախուն:

Ինչպես տեսանք, Ս. Երեմյանը Բազկան երկիրը, որը նա նույնացնում է Լիրանի հետ, տեղադրում է Ափշերոնից մինչև Շամախի և Աղ-սու գետը տարածվող դաշտավայրում և կենտրոնը համարում Շամախին: Պետք է նշել, որ «Աշխարհացույց»-յան Դաշտ ի Բազկան կամ Դաշտ ի Բաղասական անվանումը[3], ամենայն հավանականությամբ, վերաբերելու էր Կուր գետի ստորին հոսանքից հյուսիս տարածվող ողջ դաշտավայրային շրջանին[4], որտեղ գտնվում էին թե՛ Լփինք-Լիրանը և թե՛ Բազկանը: Ուստի Բազկան երկրի տեղադրությունը Երեմյանի կողմից մենք ընդունում ենք մասամբ և համաձայն չենք դրա նույնացմանը Լիրանին: Փիրսաղաթ գետից արևմուտք գտնվող շրջանները և, մասնավորապես, Շամախին, գտնվելու էին ոչ թե Բազկանի, այլ Լփինք-Լիրանի կազմում: Վերջինը հյուսիսում ընդգրկում էր նաև Լահիջյան դաշտավայրը, որտեղ Վ. Մինորսկին տեղադրում է Լիրանը:

Արաբա-խազարական սահմանային ամրությունների գոտի: Ըստ արաբ հեղինակների՝ հյուսիսում Արմինիա ոստիկանության սահմանը կազմում էր սահմանային ամրությունների մի գոտի, որը ձգվում էր Ալանաց դռնից (Դարիալի կիրճ) մինչև Դարբանդ: Իբն ալ-Ֆակիհը, պատմելով այդ սահմանային ամրությունների գոտու մասին, նշում է, որ այն

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան**, «Լփինքի տեղադրության հարցի շուրջը», էջ 123:

[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** էջ 238:

[3] «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ձեռագրերում այդ անվանումը պահպանվել է «Դաշտի Բալասական» (տե՛ս **К. Патканов,** Армянская география VII века, էջ 17), «[Դաշտ] Իբաղական» (տե՛ս **Մովսես Խորենացի**, Համառօտ պատմութիւն աշխարհագրութեան,-Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան, Վենետիկ, 1752, էջ 32) և [Դաշտ] Իբազկան ձևերով (տե՛ս **Ա. Աբրահամյան,** նշվ. աշխ., էջ 348), ինչից բխում է, որ Բաղասական դաշտը համարժեք է Բազկան դաշտին: Վերջինը, ըստ Ս. Երեմյանի՝ նույնական էր ներկայիս Շիրվանի դաշտին (տե՛ս **Ս. Երեմյան,** «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ,-«ՊԲՀ», 1973, թիվ 2, էջ 273, ծանոթ. 115):

[4] Տե՛ս **Ուլուբաբյան Բ.,** Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ,-«ԲԵՀ», 1971, թիվ 1, էջ 178-182: Տե՛ս նաև **Б. Арутюнян,** նշվ. աշխ., էջ 31-34:

բաղկացած է 360 ամրոցներից: Դրանցից 110-ը գտնվում են մուսուլ-մանների տիրույթներում՝ մինչև Թաբարսարանի հողերը, իսկ մնա-ցածները գտնվում են Ֆիլանում և Սարիրում՝ մինչև Ալանաց դուռ[1]: Միայն Բաբ ալ-Աբվաբի շրջակա լեռներում կային 14 ամրոցներ[2]: Իբն Խորդադբեհը, անդրադառնալով սահմանային ամրությունների այս գո-տուն, պատմում է, որ դեռևս Սասանյանների տիրապետության օրոք Խոսրով Անուշիրվանն այստեղ կառուցել էր բազմաթիվ ամրություններ: Նա հստակորեն նշում է, որ Բաբ ալ-Աբվաբ անվանումը (Դռների Դուռ) վերաբերում է Դարբանդյան ամրություններին, իսկ սահմանային գո-տում կառուցված ամրությունները նա անվանում է ալ-Աբվաբ (դռներ): Այս դռները կառուցված էին Կովկասյան լեռների կիրճերի ելքերի մոտ և նրանց թիվը հասնում էր 360-ի: Դրանցից էին Բաբ Ալանը, Բաբ Սահիբ աս-Սարիրը, Բաբ Ֆիլանշահը, Բաբ Թաբարսարանշահը և այլն[3]:

Արաբ հեղինակների հաղորդումներից հետևում է, որ սահմանային ամրությունների գոտում՝ Դարբանդի ամրությունների շրջանից դեպի արևմուտք, հերթականությամբ գտնվում էին Թաբարսարանը, Ֆիլանը և Սարիրը, որոնք մաս էին կազմում Արմինիա ոստիկանության[4]:

Պետք է նշել, որ արաբա-խազարական սահմանային ամրություն-ների գոտում գտնվող երկրները սկզբնապես Արմինիայի կազմի մեջ չէին մտնում, այլ անընդհատ ձեռքից ձեռք էին անցնում արաբների և խազարների միջև[5]: Դրանք նվաճվեցին Արմինիայի և Ատրպատականի փոխարքա Մարվան իբն Մուհամմադի(732-744) օրոք, երբ վերջինս երկու մեծ արշավանք կատարեց Կովկասյան լեռներից անդին: 732/733 և 738/739 թթ. արշավանքների ժամանակ արաբական զորքերը նվաճե-ցին Դաղստանի լեռնային շրջանները, այդ թվում՝ Սարիրը, ալ-Լաքզը, Զարիքիրանը, Տումանը, Ֆիլանը և այլն[6]:

Նշենք նաև, որ արաբա-խազարական սահմանային ամրություն-ների գոտու արևմտյան հատվածը մտնում էր Երկրորդ Արմինիայի մեջ:

Թաբարսարան (Թավասպարք): Գտնվել է այնտեղ, ուր այսօր էլ բնակվում են թաբասարանները, այսինքն՝ Ռուբաս գետի վերին ու

---

[1] Տե՛ս Ibn al-Fakih, էջ 286-287:

[2] Տե՛ս al-Istakhri, էջ 193:

[3] Տե՛ս Ibn Khordadbeh, էջ 123-124:

[4] Ֆիլանը գտնվում էր Սարիրի գերիշխանության ներքո, քանի որ Սարիրի թագավո-րը կրում էր Ֆիլանշահ տիտղոսը(տե՛ս Jacut, I, էջ 350, 438-439, III, 933):

[5] Արմինիայի, Զազիրայի և Ատրպատականի փոխարքա Մասլամա իբն Աբդ ալ-Մալի-քը և Արմինիայի ոստիկան Զառահը մի շարք արշավանքներ էին կատարել դեպի այդ երկրները, սակայն, մնայուն հաջողությունների չէին հասել (տե՛ս ابن الاثير, IV, էջ 113, 119, 186 և այլն):

[6] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 215-216, 245:

միջին հոսանքի ավազանում[1]: Վերջինից դեպի հյուսիս-արևմուտք՝ մինչև Սարիր, տարածվում էր սեփական «բաբ»-երով հիշատակվող Ֆիլանը, որի տեղադրությանը դեռ կանդրադառնանք:

Սարիր[2]*:* Այս թագավորությունն ուսումնասիրողները տեղադրում են Անդյան ու Ավարյան Կոյսու գետերի հովիտներում[3]: Սարիրի այդպիսի տեղադրության օգտին են հետևյալ կարևոր իրողությունները: Նախ, Սարիրի թագավորը կոչվում էր «ավար»[4], ինչը պարզորոշ ցույց է տալիս Սարիրի կապը ներկայիս Ավարստանի հետ, հետո՝ Անդյան և Ավարյան Կոյսուների ստորին հոսանքների միջև գտնվում է Խունզախ քաղաքը, որը, ըստ երևույթին, համապատասխանում է Մարվան իբն Մուհամմադի երկրորդ արշավանքի ժամանակ հիշատակվող Սարիրի Խայզաջ ամրոցին[5], ապա՝ այստեղ է գտնվում Հումրաթ գյուղը[6], որը, թերևս, նույնական է Սարիրի Հումրաջ մայրաքաղաքին[7]: Բացի այդ, Սարիրի թագավորության մեջ նախկինում մտնող Ղումիկ ամրոցը[8], իր հերթին, համապատասխանում է ներկայիս Ղումուխ քաղաքին[9]: Սարիրի և Խազարների թագավորության միջև սահմանագիծն անցնում էր Ավարյան Կոյսու գետի և Դաղստանի դաշտավայրային մասի՝ Կասպից ծովը թափվող գետերի միջև ջրբաժան լեռնաշղթայով[10], որից դեպի հյուսիս-

---

[1] Տե՛ս Этническая карта Дагестанской АССР,-«Народы Кавказа», I, էջ 416, քարտեզ: Հմմտ. «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 86-87, 102-107, 150-154, 197-199, 311-317:

[2] Սարիրի թագավորության մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը,-«Գիտության գլոբուս», 2004, հ. 4, էջ 99-106:

[3] Տե՛ս **С. Еремян,** Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу,-«Записки института востоковедения АН СССР», т. VII, 1939, с. 144, **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 132-137:

[4] Տե՛ս Ibn Rosteh, էջ 147:

[5] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 245: خيزاج (Խայզաջ) -خنزاخ (Խունզախ) շփոթը միանգամայն հնարավոր է:

[6] Տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 270-271: Տե՛ս նաև ռուսական հինգվերստանոց քարտեզի Ж. 6. պլանշետը:

[7] مسعودي, էջ 193:

[8] Տե՛ս **Ibn Rosteh**, էջ 148:

[9] Այդ համապատասխանեցումն անում է Ս. Երեմյանը (տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, Ե., 1976): Այս դեպքում այլ խնդիր է առաջ գալիս: Ղումուխը գտնվում է լակերի երկրում, որը, ինչպես կտեսնենք, համապատասխանում է արաբ հեղինակների Տուման իշխանությանը: Պետք է նշել, որ արաբ հեղինակների վկայություններից երևում է, որ մի ինչ որ ժամանակ Դարբանդի և Ալանաց դռան միջև տարածվող լեռնային շրջանը գտնվել է Սարիրի տիրոջ՝ Սահիբ աս-Սարիրի իշխանության ներքո (տե՛ս **Jacut,** I, էջ 221-222, بلاذري, I, էջ 233, **al-Istakhri,** էջ 184, 217 և այլն): Ուստի՝ Ղումիկ-Ղումուխի՝ Սարիրի թագավորության մեջ գտնվելու մասին հիշատակության պատճառը պետք է, որ այդ ժամանակների իրողության արտահայտությունը լինի:

[10] Տե՛ս **С. Еремян,** Моисей Каланкатуйский о посольстве..., էջ 144:

արևելք գտնվում էր խազարական Սամանդար քաղաքը[1]: Այդ լեռնաշղթայից դեպի հարավ Սարիրի արևելյան սահմանագիծը, ամենայն հավանականությամբ, անցնում էր Կարա Կոյսու և Ղազիղումուխյան Կոյսու գետերի ջրբաժանով, որը բաժանում էր Սարիրի թագավորությունը Լակերի երկրից(ալ-Լաքզ): Վերջինը գտնվում էր այնտեղ, ուր այսօր էլ բնակվում են լակերը, այսինքն՝ Ղազիղումուխյան Կոյսու գետի վերին ու միջին հոսանքի ավազանում[2]: Սարիրի թագավորության արևմտյան սահմանագիծը, դատելով աշխարհագրական պայմաններից, անցնում էր Անդյան Կոյսուի ձախ ափին ձգվող լեռների(որոնց հյուսիսային հատվածը կոչվում է Անդյան լեռնաշղթա) ջրբաժան գծով[3], իսկ հարավում՝ Սարիրը եզերվում էր Կովկասյան լեռներով:

Ալ-Լաքզ: Վ. Մինորսկին «ալ-լաքզ» անվանումը բացատրում է այսպես. «[այն] կազմված է լակ/լագ(տեղական լեզուներում՝ «մարդ»), գումարած իրանական -զ վերջածանցը, որը ծագում է ցույց տալիս»[4]: Ըստ նրա՝ մուսուլմանական աղբյուրներում ալ-Լաքզ կոչվող ցեղերը բնակվում էին Մասկաթից(Մազքթաց աշխարհ) արևմուտք, Սամուր գետի վերին հոսանքում: Նրանց երկիրը ձգվում էր Շիրվանի ողջ հյուսիսային մասի երկայնքով, որից այն բաժանված էր Կովկասյան լեռների հարավարևելյան ճյուղավորումով: Այստեղից էլ բխում էր այդ երկրի նշանակությունը Շիրվանի համար որպես պատվարի, որը պաշտպանում էր Շիրվանը հյուսիսային նվաճողներից[5]: Վ. Մինորսկին նշում է, որ ալ-Լաքզն ընդհանրական անվանում էր ու արաբ հեղինակների կողմից տրվում էր Հարավային Դաղստանի ցեղերին[6]:

Ա. Տեր-Ղևոնդյանը լաքզերին նույնացնում է ներկայիս լեզգիների հետ[7]:

Ըստ արաբ հեղինակների՝ ալ-Լաքզը սահմանակցում էր Թաբարսարանին ու Մասկաթին և ռազմավարական տեսակետից սերտորեն կապված էր Դարբանդի ամրությունների գոտու հետ[8]: Արաբ հեղինակները ալ-Լաքզ անվանումը երբեմն տալիս էին Դաղստանի բոլոր լեռնա-

---

[1] Սամանդարը Ս. Երեմյանը տեղադրում է ներկայիս Մախաչկալա քաղաքից հարավ՝ Թարքի վայրում (անդ, էջ 142-143: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ):

[2] Տե՛ս "Этническая карта Дагестанской АССР",- «Народы Кавказа», I, էջ 416, քարտեզ:

[3] Տե՛ս ռուսական հինգվերստանոց քարտեզի Ж.5. և Ж.6. պլանշետները:

[4] **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 112, ծանոթ. 14:

[5] Անդ., էջ 112: مسعودي, էջ 177:

[6] **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 112, ծանոթ. 14:

[7] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 156:

[8] Տե՛ս **Jacut,** I, էջ 437-442:

կաններին և, երբեմն, դրանցից ոմանց: Մասուդին, օրինակ՝ խոսելով այն մասին, թե Լաքզերի թագավորությունը հանդիսանում էր Շիրվանի թագավորության պատվարը, ապա շարունակում է, որ լաքզերը մեծաքանակ ցեղ են, որոնք ապրում են Կովկասյան լեռներում: Նրանց մեջ կան անհավատներ և Շիրվանի իշխանությանը չենթարկվածներ, որոնք կոչվում են Դուդանիացիներ: Նրանք հեթանոսներ են ու անկախ[1]: Իսկ Յակուտը հաղորդում է, որ լաքզերը մեծաքանակ ժողովուրդ են և բաղկացած են շատ ցեղերից[2]: Այսինքն՝ ճիշտ է Մինորսկու վերոբերյալ կարծիքը, թե «ալ-Լաքզ»-ն ընդհանրական անուն էր և վերաբերվում էր Հարավային Դաղստանի ցեղերին: Այդ անվանումն ընդգրկում էր նաև դուդանիացիների կամ դիդոյների երկիրը(Դիդոյք), որը գտնվում է Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում[3]:

Ինչ վերաբերում է ալ-Լաքզ անվանմանը, ապա այն, մեր կարծիքով, արաբները վերցրել էին լակերի երկրի հայերեն անվան(լակք կամ լեկք) հոգնակի հայցական «Լակս» ձևից և, հարմարեցնելով արաբերենին, ստացել «ալ-Լաքզ»-ը:

Զարիքիրան, Տուման և Ֆիլան: Արաբական աղբյուրների Զարիքիրան իշխանությունը գտնվում էր Ղուբաչի ավանի շրջանում[4], իսկ վերջինից արևմուտք տարածվում էր Տումանը, որը Մարվան իբն Մուհամմադի՝ Խազարական թագավորություն կատարած արշավանքի ժամանակ հիշատակում է Իբն ալ-Ասիրն ի թիվս Սարիրի, ալ-Լաքզի և այլ իշխանությունների[5]: Մեր կարծիքով, Տումանը համապատասխանում է լակերի երկրին: Բանն այն է, որ իրենց հարևան լակերին կամ ղազիղումուխներին «տումա» (հոգ. տումալ) անվամբ կոչում են ավարները[6], որոնք արաբական տիրապետության շրջանում բնակություն էին

---

[1] Տե՛ս مسعودي, էջ 177:

[2] Տե՛ս Jacut, I, էջ 438:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49:

[4] Ըստ Մասուդիի՝ Զարիքիրանը գտնվում էր Սարիրից արևելք և իրենից մի փոքրիկ անառիկ իշխանություն էր ներկայացնում: Այդ անվանումը պարսկերեն նշանակում է «զրահագործ վարպետներ» (տե՛ս مسعودي, էջ 192): Զարիքիրան երկրի տեղորոշման համար կարելի է հիմք ընդունել Մ. Արտամոնովի և Վ. Մինորսկու տեղադրությունը: Կովկասագետները, հիմք ընդունելով «Զարիքիրան» անվան պարսկերեն թարգմանությունը, այդ երկրի ժողովրդին նույնացնում են ներկայիս Ղուբաչի ավանի բնակչության հետ, որը այսօր էլ հայտնի է իր հնամյա արհեստով: Այսինքն՝ Զարիքիրան իշխանությունը զբաղեցնում էր Ղուբաչի քաղաքի շրջակա տարածքը (տե՛ս **М. Артамонов,** նշվ. աշխ., էջ 229: Տե՛ս նաև **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 203, ծանոթ. 71):

[5] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 216, بلاذري, I, էջ 245:

[6] Տե՛ս «Народы Кавказа», I, էջ 487: Տե՛ս նաև **Абу Мухаммад Ахмад ибн А'сам ал-Куфи**, Книга завоеваний, перевод З. Буниятова, Баку, 1981, с. 82, прим. 80, և **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 132:

հաստատել Սարիրում[1]: Իսկ արաբները Տուման ներխուժեցին Սարիրից[2]: Լակերն այսօր էլ բնակվում են Ղազիղումուխյան Կոյսու գետի վերին ու միջին հոսանքի ավազանում[3]: Տումանի ու Զարիքիրանի հարևանությամբ, Թաբարսարանից դեպի հյուսիս-արևմուտք, գտնվում էր Ֆիլանը[4]: Այն պետք է տարածվեր Սարիրից դեպի արևելք՝ զբաղեցնելով Ավարյան Կոյսու գետի աջափնյա ջրբաժանից հարավ-արևելք գտնվող լեռնային շրջանը մինչև Ղուբաչի:

Բաբ ալ-Աբվաբ: Բաբ ալ-Աբվաբը(Դարբանդ) առանձին և մեծ նշանակություն ունեցող միավոր էր Արմինիա ոստիկանության կազմում: Բաբ ալ-Աբվաբը Դարբանդյան պարիսպների, ինչպես նաև նրան ենթակա որոշ շրջանների ընդհանուր անվանումն էր: Դարբանդյան պարիսպներից դեպի հարավ-արևմուտք գտնվում էր Թաբարսարանը, որի բնակիչներին պարտադրված էր սահմանների պաշտպանության գործը[5], վերջինից դեպի արևմուտք՝ գտնվում էին Ֆիլանն ու Սարիրը, Բաբ ալ-Աբվաբից հարավ՝ Մասկաթը, նրանից դեպի արևմուտք՝ ալ-Լաքզը և այլն: Ճիշտ է՝ հիշատակված ժողովուրդներից և ցեղերից ոչ բոլորն էին մշտապես ենթարկվում Բաբ ալ-Աբվաբի զինվորական կառավարչին, որը, իր հերթին, ենթարկվում էր Արմինիայի ոստիկանին, սակայն, բոլոր նրանք այս կամ այն չափով կարևոր դեր էին խաղում խազարների դեմ խալիֆայության մղած պայքարում:

Այսպիսով՝ Արմինիայի հյուսիսային սահմանն Ալանաց դռնից արևելք Կովկասյան լեռների գագաթնագծով շարժվելու էր մինչև Անդյան լեռնաշղթան և այդ լեռնաշղթայի ջրբաժանով հասնելու էր Սուլակ գետին, որից այն կողմ՝ Ավարյան Կոյսուի արևելյան ջրբաժանով իջնելու էր հարավ, որտեղ, լակերի երկրից դեպի արևելք ընկած լեռնային շրջանում, գտնվում էր Ֆիլանը, որտեղից էլ Ուլլու-չայ և Ռուբաս գետերի ջրբաժանով շարժվելու էր դեպի Դարբանդ[6]:

Ամփոփելով վերոասացյալը՝ նշենք, որ, փաստորեն, Արմինիա ոստիկանության Առաջին Արմինիա երկրամասն ընդգրկում էր նախորդ շրջանի Աղվանից մարզպանության տարածքը, այսինքն՝ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները, «Աշխարհացոյց»-յան Բուն Աղվանից

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան,** Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը, էջ 103:

[2] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 216:

[3] Տե՛ս Этническая карта Дагестанской АССР,-«Народы Кавказа», I, էջ 416, քարտեզ:

[4] Տե՛ս **Jacut,** I, էջ 438-439, III, էջ 933:

[5] Տե՛ս **al-Istakhri,** էջ 187:

[6] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները,-«ՊԲՀ», 2005, թիվ 1, էջ 246:

աշխարհը, մերձկասպյան շրջանները Կուր գետի ստորին հոսանքից մինչև Դարբանդ, ինչպես նաև արաբա-խազարական սահմանային ամրությունների գոտու արևելյան հատվածը և Սյունիքը՝ հարավում սահման ունենալով Կուր և Երասխ գետերը, հյուսիսում՝ Կովկասյան լեռների հյուսիսահայաց լանջերը մինչև խազարական Սամանդար քաղաքը, արևելքում՝ Երկրորդ և Երրորդ Արմինիաները, իսկ արևմուտքում՝ Կասպից ծովը:

Դատելով մեր քննության արդյունքներից՝ Առաջին Արմինիայի սահմանագիծը Երրորդ Արմինիայի հետ Երասխ գետից սկսած մինչև Սևանա լճի արևելյան ափն անցնում էր Սյունիքի արևմտյան սահմանագծով: Այն հարավից հյուսիս անցնելու էր Զանգեզուրի և Վայքի լեռների արևմտյան լանջերով, ապա ընթանալու էր Վարդենիսի լեռների արևմտակողմով ու Գեղամա լեռների ջրբաժանով հասնելու էր Սևանա լճին[1]: Հետո սահմանագիծն Արեգունի լեռների արևմտակողմով բարձրանալու էր դեպի հյուսիս ու հասնելու էր Աղստև գետին: Առաջին Արմինիայի սահմանագիծը Երկրորդ Արմինիայի հետ անցնելու էր Աղստև գետի արևմտյան ջրբաժանով, իսկ հետո նույն գետի հունով մինչև Կուր գետը, Հունարակերտ ամրոցի շրջակայքում անցնելու էր այն և ներկայիս Իորիի սարահարթը (Կամբեճան գավառը) թողնելով Առաջին Արմինիայի կազմում՝ բարձրանալու էր հյուսիս և, ընթանալով Թելավ քաղաքի արևելակողմով, հասնելու էր Կովկասյան լեռներին, հավանորեն, Կոդորի լեռնանցքի մերձակայքում: Այնուհետև, սահմանագիծը Կովկասյան լեռների ջրբաժանով շարժվելու էր դեպի հյուսիս ու հասնելու էր Անդյան լեռնաշղթային՝ Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում գտնվող Դիդոյք ցեղի երկիրը թողնելով Երկրորդ Արմինիայի, իսկ վերջինից արևելք գտնվող Սարիր թագավորությունը՝ Առաջին Արմինիայի մեջ:

Երկրորդ Արմինիա: Ընդգրկում էր Վիրքը, Գուգարքը, Ծանարների երկիրը և ալ-Լաքզը:

Սկսած Մուհամմադ իբն Մարվանի նվաճումներից մինչև VIII դ. 30-ական թթ. սկիզբն արաբական տիրապետության ներքո գտնվում էին նաև Եգերքը, Ափշիլքն ու Ափխազքը: Դեռևս 697 թ. Լազիկայի (Եգերք) իշխանն ապստամբել էր բյուզանդական տիրապետության դեմ և հպատակվել արաբներին[2]: Վերջինները VIII դ. սկզբին տիրում էին Աբազ-

---

[1] Տե՛ս **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 176:

[2] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող,** էջ 82: Տե՛ս նաև **Богверадзе А.,** նշվ. աշխ., էջ 173-174:

գիային (Ափխազք) և Լազիկային[1]: Այդ ժամանակ հիշյալ երկրների ամրոցներում տեղակայված էին արաբական կայազորներ: Օրինակ՝ Կոդոր գետի վերին հոսանքի շրջանում գտնվող Միսիմիացիների երկրի[2] գլխավոր ամրոց Ջախարի պաշտպանությունն արաբները հանձնել էին ոմն Փարեսմանի[3]:

Ընդհանրապես, Թեոփանեսի հաղորդումներից կարելի է բխեցնել, որ VIII դ. սկզբին միայն Սև ծովի ափամերձ մի քանի նավահանգիստներ էին գտնվում բյուզանդական տիրապետության ներքո, և բյուզանդացիները հաճախ էին արշավում դեպի արևելք՝ Եգերքին, Ափշիլքին ու Ափխազքին վերստին տիրելու նպատակով: Այդ է ցույց տալիս Թեոփանեսի այն հաղորդումը, թե VIII դ. սկզբին «հռոմեացիների (իմա՝ բյուզանդացիների-Ա.Ե.) և հայերի մի զորաբանակ մտավ Լազիկա և պաշարեց Արխայոպոլիսը, բայց լսելով սարակինոսների գալու մասին, թողեց հեռացավ: Նրանից շուրջ երկու հարյուր հոգի առանձնանալով, ասպատակ սփռելով բարձրացան Ապսիլիայի(իմա՛ Ափշիլք-Ա.Ե.) շրջաններն ու Կովկասյան լեռները: Երբ սարակինոսները հասան Լազիկա, հռոմեացիների և հայերի զորքը վերադարձավ Ֆասիս (իմա՛ Փոթի-Ա.Ե.)»[4]: Բյուզանդացիների հետ հիշատակվող հայերը, անկասկած, Սմբատ Բագրատունին և յուրայիններն էին, որոնք, ինչպես գիտենք, հեռացել էին Բյուզանդական կայսրություն և բնակություն հաստատել Փոյթ (Փոթի) քաղաքում[5]:

Այդ իրադրությունը պահպանվեց մինչև VIII դ. 30-ական թվականները, երբ Լևոն Իսավրացի կայսրն անցավ հակահարձակման և վերականգնեց Բյուզանդական կայսրության տիրապետությունը Եգերքում, Ափշիլքում և Ափխազքում[6]: Այն, որ VIII դ. 30-ական թթ. սկզբին Եգերքը, Ափշիլքը և Ափխազքը կրկին ընկել էին բյուզանդական տիրապետության տակ, երևում է Մարվան իբն Մուհամմադի գլխավորությամբ 735 թ. արաբական նոր արշավանքի իրողությունից, որը, ըստ էության, այս երկրամասերում արաբական տիրապետությունը վերականգնելու վերջին փորձն էր: Նա խստագույնս պատժեց խազարների օգնությանը դիմած վրացիներին, հրով ու սրով անցավ Վիրքով, գրավեց Ալանաց

---

[1] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 102:

[2] Տե՛ս **Д. Мусхелишвили,** Историческая география Грузии IV-X вв.,-«Очерки истории Грузии», т. II, с. 386-387.

[3] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող,** էջ 104: Տե՛ս նաև **А. Богверадзе**, նշվ. աշխ., էջ 174:

[4] **Թեոփանես Խոստովանող**, էջ 103-104:

[5] **Ղևոնդ**, էջ 35:

[6] Տե՛ս **А. Богверадзе,** նշվ. աշխ., էջ 175:

դուռը, ավերեց Վիրքի ամրոցների ու քաղաքների մեծ մասը[1]: Վրաց իշխան Ստեփանոսի երկու որդիները՝ Արչիլն ու Միհրը, հեռացան Եգերք, «քանզի չոգաւ ի վերայ նոցա և Քարթլայ՝ Մրուան՝ որդի Մահումադայ, որ կոչէր Խուլ, և կալաւ զԴուռն Դարիալայ, և աւերեաց զբնակութիւն լերինն Կովկասու: Եւ լուաւ եթէ տէրքն Քարթլայ փախեան յԵգրիս և անտի յԱբխազէթ, ել զհետ և էառ զամրոցն Եգրա. և էջ ի վերայ բերդին Անակոփոսի...: Եւ յայնմ բերդի կային Արչիլ և Միհր...: Եւ զօրագլուխն Յունաց Լեւոն՝ մտեալ ի բերդն Սուբաղայ՝ յելսն Օսեթոյ՝ ամրանայր անդ»[2]: Ի վերջո, Մարվանի արշավանքն ավարտվեց անհաջողությամբ[3]: Դրանից հետո այդ շրջանում արաբական տիրապետությունը սահմանափակվեց այն տարածքում, որն արաբ հեղինակներն անվանում են Երկրորդ Արմինիա:

Փաստորեն, Երկրորդ Արմինիայի արևմտյան սահմանի վերջնական ձևավորումից հետո, այն Ճորոխ գետից դեպի հյուսիս պետք է անցներ Մոսքական լեռներով (այժմ՝ Մեսխեթի լեռներ)՝ վերջինից դեպի արևմուտք գտնվող շրջանները թողնելով Բյուզանդական կայսրության կազմում: Այստեղից դեպի հյուսիս, ըստ «Քարթլիի մատյանի»՝ սահմանագիծն անցնում էր Լիխի լեռնաշղթայով, իսկ, այնուհետև, հավանաբար, Մեծ Լիախվի գետի վերին հոսանքի հյուսիսային ջրբաժանով ու Կովկասյան լեռների գագաթնագծով մինչև Ալանաց դուռ: Լիխի լեռնաշղթայից դեպի արևմուտք գտնվող շրջանները մտնում էին Ափխազքի մեջ, որի իշխան Լևոնը VIII դ. վերջին հիմնեց Ափխազական թագավորությունը[4]: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, թե Լևոնը, որը ժառանգել էր Ափխազական իշխանությունը, մոր կողմից խազարների արքայի թոռն էր և վերջինի օգնությամբ էլ նա դուրս եկավ բյուզանդական տիրապետությունից ու, «տիրելով Ափխազեթիին ու Էգրիսիին մինչև Լիխի, Ափխազաց արքա կոչվեց»[5]:

Զուրզան: Արաբական աղբյուրների Զուրզանն ուսումնասիրողները նույնացրել են Վիրքին[6]: Այդ կարծիքն ընդունելի չէ, քանի որ տարածքային առումով Զուրզանը համընկնում էր նախկին Վրաց(Վարջան)

---

[1] Անդ, էջ 177:

[2] «Զուանշէրի պատմչի համառօտ պատմութիւն վրաց», Վենետիկ, 1884, էջ 99-100:

[3] Անդ, էջ 100:

[4] Տե՛ս **М. Лордкипанидзе,** Возникновение новых феодальных государств,- «Очерки истории Грузии», т. II, с. 250, 281.

[5] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 28: Ավելի ուշ շրջանում սահմանը Լիխի լեռնաշղթայով էր անցնում նաև Աբխազական ու Վրացական թագավորությունների միջև (անդ, էջ 52):

[6] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 362, **M. Ghazarian,** նշվ. աշխ., էջ 71:

մարզպանությանը, որը նույնական էր Զաքարիա հռետորի հիշատակած Գուրզանին[1]: Իսկ Վրաց մարզպանությունը բաղկացած էր Վրաց թագավորությունից և Գուգարքի բդեշխությունից[2]: Ուստի՝ այն փաստը, որ Զուրզանն իր կազմում ընդգրկելու էր նաև նախկինում Մեծ Հայքի մաս կազմող Գուգարքի բդեշխությունը, խոսում է մեր տեսակետի օգտին, թե Զուրզանը Վիրքից տարբերվող վարչա-քաղաքական հասկացություն էր: Բացի այդ, Զուրզանի կազմում ընդգրկված էր Ծանարների երկիրը՝ աս-Սանարիան:

Աս-Սանարիա: Երկրորդ Արմինիայի սահմանները հյուսիսում հասնում էին Դարբանդից մինչև Ալանաց դուռը ձգվող սահմանային ամրությունների գոտուն: Այդտեղ էր գտնվում աս-Սանարիա երկիրը (Ծանարների երկիր), որը մեծ կարևորություն ուներ խալիֆայության համար, քանի որ ընդգրկում էր Ալանաց դուռը: Այս երկիրը գրավել էր Հաբիբ իբն Մասլաման VII դ. կեսերին[3]: Ալանաց դուռը, հետևաբար նաև Ծանարների երկիրը, վերջնականապես նվաճվել է Արմինիայի, Ատրպատականի և Զազիրայի փոխարքա Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի կողմից (որոշ ընդմիջումներով փոխարքա է եղել 709-732 թթ.)[4]: Այդ ժամանակ Ալանաց դռանն արաբները մշտական կայազոր հաստատեցին[5]: Դատելով Մովսես Դասխուրանցու հաղորդած մի տեղեկությունից՝ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 714/715 թ.: Խոսելով Հայոց ԾԿ թվականին (711 թ.) տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ պատմիչը հաղորդում է, որ դրանցից երեք տարի անց Մասլաման ավերեց Դարբանդը և «ելանէր ընդ Վրաց կողմն»[6]: Այդ ժամանակ, մեր կարծիքով, Մասլաման նվաճեց Ծանարների երկիրն ու Ալանաց դուռը: Ճիշտ է, Իբն ալ-Ասիրն Ալանաց դռնով Մասլամայի կատարած մի արշավանք դնում է հիջրայի 110 թ.(728-729)[7], սակայն, դա, հավանորեն, պարզապես ցույց է տալիս, որ այդ ժամանակ արդեն Ալանաց դուռը գտնվում էր արաբական տիրապետության ներքո: Չնայած, որ ծանարները հաճախ էին փորձում թոթափել արաբական լուծը, խալիֆայությունը կարողանում էր կրկին իրեն ենթարկել նրանց[8]:

---

[1] Տե՛ս **Н. Пигулевская**, նշվ. աշխ., էջ 81:
[2] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 187-188:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ 239:
[4] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 272-273:
[5] Տե՛ս مسعودي, էջ 194:
[6] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** էջ 319-320:
[7] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 205:
[8] Տե՛ս **А. Богверадзе,** նշվ. աշխ., էջ 180:

Ծանարաց երկրի մասին «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը հիշատակում է Սարմատիայի ցեղերին թվարկելիս, նշելով, որ արդոզներից հետո, դեպի արևելք, «բնակեն Դաջանք, Դուալք, Ծըխոյք, Փուրքա, Ծանարքայ՝ յորում Ալանաց դուռն»[1]:

Կովկասագետ Վ. Մինորսկին ծանարների մասին գրում է, որ նրանք կոչվում են «վրացերեն ց'անար. քաջ լեռնականներ են, որոնք բնակվում էին Կովկասյան լեռնանցքի մոտ, իսկ հետագայում ընդարձակեցին իրենց տիրույթները դեպի արևելք՝ Կախեթ: Մաս'ուդին նրանց համարում է Շաքքիի հարևանները, այսինքն՝ շփոթում է նրանց կախեթցիների հետ»[2]: Ս. Երեմյանը ծանարներին տեղադրում է Թերեք գետի ակունքների շրջանում, որը համապատասխանում է ներկայիս Ղազբեկի շրջանին[3]: Ծանարների հար և նման տեղադրություն է տրված նաև վրաց պատմագիտության մեջ[4]: Ծանարաց երկրի այդպիսի տեղադրությունը համապատասխանում է սկզբնաղբյուրների[5] և, մասնավորապես, «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին:

Ադ-Դուդանիա(ալ-Լաքզ): Ինչպես ցույց տվեցինք, արաբներն ալ-Լաքզ անունով երբեմն կոչում էին Հարավային Դաղստանի բոլոր լեռնականներին և, երբեմն, դրանցից ոմանց: Ցույց տվեցինք նաև, որ այդ անվանումը, հավանորեն, առաջացել էր լակերի հայերեն անվան(լակք կամ լեկք) հոգնակի հայցական «Լակս» ձևից: Մեր կարծիքով, Երկրորդ Արմինիայի մեջ մտնող ալ-Լաքզը չէր վերաբերում Լակերի երկրին, քանի որ վերջինին դրա նույնացման դեպքում, աշխարհագրական պայմաններից ելնելով, Երկրորդ Արմինիայի մեջ մտնելու էր ոչ միայն Լակերի երկիրը, այլև Անդյան ու Ղազիղումուխյան Կոյսուների միջև տարածվող Սարիր թագավորությունը, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ արաբական աղբյուրների հաղորդումներից

---

[1] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 26:

[2] **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 210-211, ծանոթ. 100:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56:

[4] Տե՛ս **М. Лордкипанидзе**, նշվ. աշխ., էջ 256:

[5] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 274. Բուղան «դիմեալ գնաց հասանել ի վերայ կողմանց հիւսիսոյ, յերկիրն յորում Ծանակ կոչի. սոքա բնակին յամուրս լեռնականս...: Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու», Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 164. Սմբատ արքան ընդլայնեց իր տերության սահմանները «մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և զԾանարս մինչև ցԴուռն Ալանաց», «Մոքցեվայ Քարթլիսայ»-ը(«Վրաց դարձ») Դարիալ կիրճը անվանում է «Ծանարների կիրճ» և հաղորդում, որ պարսիկները Ալանաց դռների պահպանության գործը վստահեցին ծանարներին (տե՛ս **Հ. Մկրտումյան,** Ծանարների ցեղը և նրանց դերը Դարիալ լեռնանցքի պահպանության գործում,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1972, թիվ 6, էջ 85), البلاذري, I, էջ 246. Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք Արմինիայի ոստիկան Յազիդ իբն Ուսայդը (759-769) «նվաճեց Բաբ-Ալլանը...և...ջախջախեց սանարներին», և այլն:

երևում է, որ լակերի երկրին վերաբերող ալ-Լաքզը ռազմավարական ու աշխարհագրական տեսակետից սերտորեն կապված էր Դարբանդի ամրությունների գոտու հետ[1]: Կարծում ենք, որ Երկրորդ Արմինիայի մեջ մտնող երկրի ալ-Լաքզ անվանումը վերաբերելու էր Հարավային Դաղստանի ցեղերից մեկին, ընդ որում՝ դրա՝ Երկրորդ Արմինիայի մեջ մտնելը պետք է պատմական պատճառ ունենար: Բալազուրին, նկարագրելով Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի 655 թ. արշավանքը դեպի Հայաստան ու Այսրկովկասյան երկրներ, հստակորեն նշում է, թե Հայաստանն ու Վիրքը նվաճել է Հաբիբ իբն Մասլաման, իսկ Հայոց Արևելից կողմերը, Բուն Աղվանից աշխարհը և նախկին Աղվանից մարզպանության մյուս տարածքները՝ Սալման իբն Ռաբիան: Վիրքի նվաճման նկարագրության մեջ Բալազուրին տեղեկացնում է, որ Հաբիբը նվաճեց Կախեթը, Կուխեթը, Ծանարների երկիրը, Ալանաց դուռը և ադ-Դուդանիան[2]: Վերջին անունը Ա. Տեր-Ղևոնդյանը ճիշտ կերպով նույնացնում է «Աշխարհացոյց»-յան Դիդոյք ցեղի անվանը[3]: Դիդոյներն այսօր էլ բնակվում են Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանում[4]: Այսինքն՝ Դիդոյների երկիրը գտնվում էր Ծանարների երկրից դեպի արևելք՝ Վիրքի հարևանությամբ: Իսկ Դիդոյները, ըստ Մասուդիի՝ լաքզերի մի մասն էին կազմում[5]: Այն իրողությունը, որ Դիդոյների երկիրը նվաճվել էր Հայաստանի և Վիրքի նվաճող Հաբիբի կողմից, կարող էր հիմք հանդիսանալ արաբների հետագա վարչական բաժանման համար, որպեսզի այն մտցվեր Երկրորդ Արմինիայի մեջ: Այսպիսով, Երկրորդ Արմինիան ընդգրկելու էր նաև Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանը՝ Դիդոյների երկիրը: Դիդոյները, չնայած վարչականորեն մտնում էին Երկրորդ Արմինիայի մեջ, սակայն, համարվում էին Լաքզ կոչվող ցեղի մի հատվածը, իսկ վերջինն ընդգրկված էր Առաջին Արմինիայի կազմում: Այդ պատճառով էլ, ամենայն հավանականությամբ, Դիդոյների երկիրն արաբների կողմից անվանվում էր ալ-Լաքզ:

Գուգարք: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Մեծ Հայքի ու Վիրքի սահմանը Կուր գետն էր(Վիրքը տարածվում է «մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն»)[6]: Այդ է ցույց տալիս նաև Փավստոս Բուզանդի մի հաղորդումը: Պատմելով Մուշեղ Մամիկոնյանի պատժիչ արշավանքի մասին,

---

[1] Տե՛ս **Jacut,** I, էջ 437-442:

[2] Տե՛ս بلاذري, I, էջ 239:

[3] **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 347: Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 79:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49:

[5] Տե՛ս مسعودي, էջ 177:

[6] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 28:

Փավստոս Բուզանդը տեղեկացնում է, թե Մուշեղը Վիրքի արքայական տոհմին խաչը հանեց և գլխատեց ապստամբ Գուգարաց բդեշխին: «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնու հետև յինքն վտարեալ՝ դառնայր անտի»[1]: Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո Սասանյանները Գուգարաց բդեշխությունը, որն իր տարածքով համապատասխանում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհին, մտցրեցին Վրաց մարզպանության մեջ[2]: Գուգարքը, Վրաց մարզպանության մյուս շրջանների հետ, հետագայում մտավ Արմինիա ոստիկանության Երկրորդ Արմինիա երկրամասի մեջ: VIII դ. երկրորդ կեսին՝ 774-775 թթ. ապստամբությունից հետո, Կղարջքում հաստատվեց հայ Բագրատունիների մի ճյուղը: Վերջինիս շառավիղ Աշոտը խալիֆայի կողմից իշխանություն ստացավ Վիրքի վրա[3]: Աշոտ Բագրատունին, որի իշխանությունը Վիրքում շուտով ճանաչվեց նաև Բյուզանդիայի կողմից, սկզբում կարողացավ տիրել «'ի Կաղրջաց մինչև 'ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»[4]: Խոսքը Գուգարքի մասին է, քանի որ Կղարջքից մինչև Տփղիսի հարավակողմը տարածվում էր Գուգարքը[5]: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ Բագրատունյաց այս ճյուղը VIII դ. վերջին տիրում էր նաև Տայքի Արսեաց փոր գավառին[6]:

Հայ Բագրատունիների այդ ճյուղի իշխանությունը կախյալ վիճակում էր սկզբում Հայոց իշխանից, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո՝ Հայոց թագավորից: Հայոց իշխանները, ինչպես տեսանք, կրում էին «իշխան Հայոց և Վրաց», իսկ թագավորները՝ «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը: Հետագայում Հայոց արքա Սմբատ Ա Բագրատունին(890-914) վրաց իշխան Ատրներսեհ Բագրատունուն կարգեց Վրաց թագավոր, սակայն, իրավիճակը դրանից չփոխվեց: Վրաց թագավորությունը Հայոց պետության համակարգում սոսկ ենթակա երկիր էր, իսկ Վրաց թագավորը՝ երկրորդ մարդն էր համարվում Սմբատ Ա-ի տերության մեջ[7]:

Սուղդաբիլ, Բաբ Ֆիրուզ Կուբադ և Բաբ Սամսախի: Արաբական սկզբնաղբյուրները Երկրորդ Արմինիայի կազմում հիշատակում են նաև Սուղդաբիլը, Բաբ Սամսախին և Բաբ Ֆիրուզ Կուբադը: Սուղդաբիլի և

---

[1] Փավստոս Բուզանդ, էջ 322:

[2] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 48, **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 194:

[3] Վարդան վարդապետ, էջ 83:

[4] Անդ, էջ 84:

[5] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Ե., 1963:

[6] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 28:

[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 188:

Բաբ Ֆիրուզ Կուբադի վերաբերյալ տեղեկություն է պահպանել Իբն Խորդադբեհը: Արաբ աշխարհագետը, խոսելով պարսից Խոսրով Անուշիրվան թագավորի քաղաքաշինական գործունեության մասին, տեղեկացնում է, թե նա «Ջուրզան երկրում կառուցեց Սուղդաբիլ քաղաքը, այնտեղ կառուցեց նաև իր դղյակն ու այն անվանեց Բաբ Ֆիրուզ Կուբադ»[1]: Մասուդին, խոսելով Կուր գետի մասին, հաղորդում է, որ այն հոսում է «Թիֆլիս երկրով և Սուղդաբիլ քաղաքով, որը Ջուրզան երկրում է»[2]: Մ. Ղազարյանը փորձում է Սուղդաբիլ անվան տակ տեսնել Ցուրտավը[3]: Սակայն, Սուղդաբիլ քաղաքի տեղորոշման համար հիմք է հանդիսանում Թաբարի պատմիչի այն հաղորդումը, թե Տփղիսն ու Սուղդաբիլը գտնվում էին միմյանց հարևանությամբ և իրարից բաժանվում էին Կուր գետով[4]: Վրացական պատմագիտության մեջ հավանական է համարվում Սուղդաբիլի նույնականությունն ներկայիս Մետեխի բերդին[5]: Սուղդաբիլ անվանումը, հավանորեն, առաջացել է «սոգդաբելի» բառից, որը վրացերենում նշանակում է «սգավայր»[6]: Միջնադարում այդ անունով մի գերեզմանատուն կար Մետեխի ամրոցի հարևանությամբ[7]: Մենք ընդունում ենք Սուղդաբիլի նույնացումը Մետեխի բերդին, իսկ ինչ վերաբերում է Բաբ Ֆիրուզ Կուբադին, ապա այն Ս. Աշուրբեյլին տեղադրում է ներկայիս Ղուբայի շրջանում[8]: Այդ տեղադրությունը ճիշտ չէ, քանի որ արաբ հեղինակները Բաբ Ֆիրուզ Կուբադը հիշատակում են Երկրորդ Արմինիայի կազմում[9], իսկ Ղուբայի շրջանը գտնվել է Առաջին Արմինիայի կազմում և մտել Աբխազ թագավորության մեջ: Ըստ Յակուտի՝ Բաբ Ֆիրուզ Կուբադը Երկրորդ Արմինիայի ամրոցներից մեկն էր, որը գտնվում էր Բյուզանդիայի սահմանին[10], այնպես, ինչպես Բաբ Սամսախի (Սամցխեի Դուռ) կոչված ամրոցը, որը գտնվում էր նույն սահմանին՝ Սամցխեի կողմից, թերևս, Մոսքական լեռների շրջանում, քանի որ, ինչպես վերը պարզաբանեցինք, այդ լեռների ջրբաժանով էր անցնում Երկրորդ Արմինիայի սահմանը Բյուզանդիայի հետ:

Այսպիսով՝ Երկրորդ Արմինիան Բյուզանդական կայսրությանը սահ-

---

[1] Ibn Khordadbeh, էջ 123:
[2] Masudi, էջ 62:
[3] Տե՛ս **M. Ghazarian**, նշվ. աշխ., էջ 86:
[4] Տե՛ս تاريخ, VI, էջ 47:
[5] Տե՛ս **М. Лордкипанидзе**, նշվ. աշխ., էջ 234, 343:
[6] Անդ, էջ 234-235: Տե՛ս նաև **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 46, ծանոթ. 8:
[7] Տե՛ս **М. Лордкипанидзе**, նշվ. աշխ., էջ 234:
[8] Տե՛ս **С. Ашурбейли,** նշվ. աշխ., էջ 15, 30:
[9] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122, **Jacut**, I, էջ 220:
[10] Տե՛ս **Jacut**, I, էջ 220:

մանակցում էր Մոսքական և Լիխի լեռներով: Հյուսիսում Երկրորդ Արմինիան տարածվում էր մինչև Ալանաց դուռ, արևելքում սահմանակցում էր Առաջին Արմինիային, իսկ հարավում՝ Երրորդ Արմինիային:

Երկրորդ Արմինիան Երրորդ Արմինիայից բաժանվում էր Գուգարքի՝ Այրարատի և Տայքի հետ ունեցած սահմանագծով: Այն Սևանա լճից հյուսիս անցնելու էր Բազումի լեռներով, ապա Կանգարքի լեռների (Մթին լեռներ, այժմ՝ Ջավախքի լեռնաշղթա) և Ջավախքի բարձրավանդակի հարավակողմով ընթանալով արևմուտք՝ անցնելու էր Չլդր լճի հյուսիսային հատվածով մինչև Կարմիր Փորակ լեռները: Ապա վերջինի ջրբաժանով սահմանագիծն իջնելու էր հարավ և, Երրորդ Արմինիայի կազմում թողնելով Կուր գետի ակունքի շրջանում գտնվող Կող գավառը, Արսիանի լեռների հարավակողմով շարժվելու էր արևմուտք և, հասնելու էր Ճորոխ գետին: Այնուհետև այն, հատելով Ճորոխ գետը Թուխարք ամրոցի շրջակայքում, շարժվելու էր դեպի արևմուտք՝ Երրորդ Արմինիայի կազմում թողնելով Տայքի Արսեաց փոր գավառը, որը որոշ ժամանակով դարձել էր VIII դ. երկրորդ կեսին Կղարջքում հաստատված Բագրատունյաց ճյուղի տիրույթ[1]:

Երրորդ Արմինիա: Ընդգրկում էր Հայոց մարզպանության Վասպուրական գնդի երկիր վարչական շրջանը, որը 591 թ. բաժանումից հետո համարժեք էր դարձել Հայոց մարզպանությանը, Այրարատը և Տայքը:

Բուսֆուրրաջան (Վասպուրական): Ուսումնասիրության սկզբում մենք ցույց տվեցինք, որ Հայաստանի 591 թ. բաժանումից հետո, երբ Տանուտիրական Գնդի երկիրն անցավ Բյուզանդիային, Հայոց մարզպանությունը գրեթե ամբողջությամբ ամփոփվեց Վասպուրական Գնդի երկրի սահմաններում: Վերջինը ներառնում էր Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքի ու Կորճայքի հյուսիսային հատվածները: Պարսկական տիրապետության տակ էին մնացել նաև նախկինում Տանուտիրական Գնդի երկրի մաս կազմող Այրարատի Մասյացոտն, Արածու կողմն, Ոստան Դվնա և Մազազ գավառները: Դատելով Սեբեոսի վկայություններից՝ 591 թվից հետո Հայոց մարզպանությունը, իր կազմում ունենալով Այրարատի վերոհիշյալ գավառներն ու Վասպուրական Գնդի երկիրը, պաշտոնապես սկսեց կոչվել վերջին անունով: Ելնելով այն բանից, որ հայ-արաբական 652 թ. պայմանագրում արձանագրվելու էր գոյություն

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ, ֆիզիկական քարտեզ,-«Հայկական սովետական հանրագիտարան» (այսուհետև՝ «ՀՍՀ»), հ. 2, Ե., 1980, էջ 176:

ունեցող վարչա-քաղաքական իրավիճակը և, բացի այդ, քանի որ դրա կնքումից հետո Վասպուրական կամ Սեպհական Գնդի երկիր վարչական շրջանը, դատելով Սեբեոսի հաղորդումներից՝ պահպանում էր իր գոյությունը[1], ապա կարծում ենք, որ արաբ հեղինակների հիշատակած Բուսֆուրրաջանը նույնական էր Վասպուրական գնդի երկրին, որն ամբողջությամբ մտել էր Արմինիա ոստիկանության մեջ:

Ելնելով հայկական սկզբնաղբյուրների և, մասնավորապես, Եղիշեի տվյալներից, բացահայտվում է այն իրողությունը, որ, չնայած հայ Արշակունիների թագավորության անկումից առաջ և հետո Մեծ Հայքի տարածքային մեծ կորուստներին, Հայոց մարզպանության կազմում, թե՛ 591 թ. բաժանումից առաջ և թե՛ դրանից հետո, շարունակեցին մնալ Կորճայքի Կորդիք և Տմորիք գավառները: Եղիշեն վկայում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո Տմորիքի անառիկ ամրոցներում ապաստանած հայերը, երբ լսեցին պարսից զորքի գործած չարիքների մասին, «քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանխնայ կոտորելով՝ նախճիրս արեան գործէին»[2]: Այս տեղեկությունը հստակորեն խոսում է այն մասին, որ պարսկական երկրամասերի հետ սահմանակից Տմորիքը Հայոց մարզպանության մաս էր կազմում: Ելնելով պատմաաշխարհագրական պայմաններից, անկասկած, մարզպանության կազմի մեջ պետք է մտներ նաև Կորդիքը[3]: Ինչ վերաբերում է այդ երկրամասերի տեղադրությանը, ապա այդ խնդրում մեծ է Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունների կարևորությունը: Պատմիչի վկայությամբ՝ հայոց Արշակ Բ թագավորի դեմ ապստամբած երկրամասերի մեջ էին «ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդրեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից»[4]: Ապա, պատմիչը, կապված դեպի Հայոց արքայի դեմ ապստամբած երկրամասեր Մուշեղ Մամիկոնյանի ձեռնարկած պատժիչ արշավանքի հետ, հաղորդում է, որ «հարկանէր Մուշեղ սպարապետն...զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս»[5]: Ակներև է, որ պատմիչը լավ է պատկերացնում հիշյալ երեք երկրամասերի տեղադրությունը, հիշատակելով մի դեպքում արևելքից արևմուտք, իսկ մյուս դեպքում՝ արևմուտքից արևելք հերթականությամբ: Մովսես Խորենացին, անդրադառնալով Արտաշես Ա-ի դայակ

---

[1] Տե՛ս **Սեբեոս,** էջ 166:
[2] Տե՛ս **Եղիշե**, էջ 254:
[3] Տե՛ս **Б. Арутюнян,** նշվ. աշխ., էջ 25:
[4] **Փավստոս Բուզանդ,** էջ 246:
[5] Անդ, էջ 320:

Սմբատ Բագրատունու գործունեությանը, հաղորդում է, որ վերջինս «հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդիք, ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն»[1]: Այսինքն՝ չնայած այն բանին, որ Փավստոս Բուզանդը հստակորեն միմյանցից տարբերակում է Կորդիքն ու Տմորիքը, պատմահայրը հակված է դրանք նույնացնելու: Քանի որ նա քաջածանոթ էր Հայաստանի աշխարհագրությանը, ապա չպետք է կարծել, թե նա կարող էր սխալ թույլ տալ: Ուստի հավանական է, որ սկզբնապես Կորդիքն Ալկի ամրոցով[2] եղել է Տմորիքի մի հատվածը, իսկ հետագայում՝ Մովսես Խորենացու ժամանակներում, բաժանվել է նրանից և հեղինակը, պատմելով Սմբատի՝ Տմորիքի Ալկի ամրոցում հաստատվելու մասին, միաժամանակ անհրաժեշտ է համարել հիշատակել իր ժամանակների իրողությունը, թե Տմորիքի այն հատվածը, որտեղ գտնվում էր Ալկին, այժմ կոչվում էր Կորդիք[3]: Փավստոս Բուզանդի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ աշխարհագրական տեսակետից Կորդուքից[4] արևելք գտնվել է Կորդիքը՝ Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի հովտում[5], իսկ դրանից էլ արևելք գտնվել է Տմորիքը՝ Մեծ Զաբ գետի միջին ավազանի շրջանում[6]: Ամենայն հավանականությամբ, Տմորիքն իր կազմում ընդգրկում էր նաև Կորճայք աշխարհի՝ Կորդիքից արևելք ընկած հյուսիսային գավառները՝ Ճահուկը, Փոքր Աղբակն ու Որսիրանքը[7]:

Քանի որ արաբները հիմնականում պահպանեցին Սասանյանների վարչական բաժանումը, ապա հիշյալ գավառները մտան Արմինիա

---

[1] Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 218:

[2] Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի վերին հոսանքի ավազանում պահպանվել է էլք անունով մի գյուղ, որը ուսումնասիրողները նույնացնում են Խորենացու հիշատակած Ալկիին (տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 32):

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 282-283:

[4] Կորդուք գավառը զբաղեցնում էր Ձերմ և Փոքր Զավ գետերի միջև տարածվող լեռնային շրջանը (տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 60):

[5] Տե՛ս **Ե. Արտեմյան**, նշվ. աշխ., էջ 24-25: «Աշխարհացոյց»-յան Կորդիք Վերին, Կորդիք Միջին և Կորդիք Ներքին գավառների անվանումները (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 32) ցույց են տալիս, որ անցյալում այս գավառների ամբողջությունը կրել է միասնական Կորդիք անունը: Այս գավառների «Աշխարհացոյց»-յան նկարագրության աշխարհագրական հերթականությունը վկայում է հօգուտ դրանց՝ Արևելյան Խաբուր գետի Բեյթ-ուլ-Շաբաբ վտակի ավազանում տեղադրության (տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 278): Նման եզրահանգման հիմք է հանդիսանում այն, որ Մովսես Խորենացին, ինչպես տեսանք, Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի վերին հոսանքի ավազանում գտնվող Ալկի ամրոցը հիշատակում է Կորդիքում:

[6] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 280-281:

[7] Անդ, էջ 281-282:

ոստիկանության մեջ և մաս կազմեցին Երրորդ Արմինիայի: Արաբական տիրապետության շրջանում Արծրունի իշխանները տիրում էին այդ գավառներին: Բուղայի արշավանքի ժամանակ Արծրունիների իշխանության տակ էին Ձլմար, Սրինգ և Ճահուկ ամրոցները[1]: Վերջիններից Ձլմարն ու Սրինգը գտնվում էին Փոքր Աղբակ գավառում[2], իսկ Ճահուկը՝ համանուն գավառում: Բուղայի արշավանքների և հետագա ժամանակաշրջանում արդեն այս գավառները մեծ կարևորություն ձեռք բերեցին Արծրունիների համար: Երբ ապօրինաբար Վասպուրականի իշխան դարձավ Վասակը, Գուրգեն Արծրունին «ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական: Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ձղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս»[3]:

Ըստ Թովմա Արծրունու՝ Փոքր Աղբակից արևելք գտնվող Որսիրանք գավառը նույնպես IX դ. մտնում էր Արծրունիների իշխանության մեջ: Արյան լճի ճակատամարտի նախօրեին Գուրգեն Արծրունու գլխավորությամբ այստեղ են ապաստանում Վասպուրականի մեծամեծերն ու փախստական բնակչությունը և պարտության մատնում թշնամուն[4]: Թովմա Արծրունու հետագա տեղեկություններից երևում է, որ Կորդվաց լեռների շրջանում գտնվող վերոհիշյալ գավառները շարունակում են մաս կազմել Արծրունիների իշխանության:

Այսպիսով, Արմինիան հարավում ընդգրկում էր նաև Մեծ Հայքի Կորճայք աշխարհի Ճահուկ[5], Փոքր Աղբակ[6] և Որսիրանք[7] գավառները:

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 212:

[2] Անդ, էջ 90:

[3] Անդ, էջ 306:

[4] Անդ, էջ 224-232:

[5] Ճահուկը գտնվել է Ձուլամերկից ոչ հեռու գտնվող Ագարակ-դաղ լեռների շրջանում (տե՛ս **Հ. Մարկվարտ,** Պարսկահայք նահանգը,-«ՊԲՀ», 1961, թիվ 1, էջ 193): Այդ լեռները գտնվում են Բեյթ-ուլ-Շաբաբ գետակի ակունքների շրջանում(տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 100 պլանշետը):

[6] Փոքր Աղբակի սահմանը Ճահուկ գավառի հետ կազմել են՝ արևմուտքում՝ Լևին գետակի արևելյան ջրբաժանը, հյուսիսում՝ Ագարակի լեռներից և Կոհ-ի-Նիհորական լեռնաշղթայից սկիզբ առնող լեռնաբազուկները, որոնք Ակեն բաժանում են Փոքր Աղբակից, հարավում՝ Ձողա լեռների ջրբաժան գիծը, իսկ արևելքում՝ Որսիրանք գավառը (տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 292, **Հ. Հյուբշման**, նշվ. աշխ., էջ 208: **Ղ. Ինճիճյան,** նշվ.աշխ., էջ 148-149):

[7] **Հ. Մարկվարտը,** հենվելով Թովմա Արծրունու վերոհիշյալ տեղեկության, ինչպես նաև Վալդեման Բելքի տեղաքննական հետազոտության արդյունքների վրա, որի ընթացքում նա հայտնաբերել էր Արյան լիճը, Որսիրանքը տեղադրում է Նեհիլ գետի ավազանում, որտեղ գտնվում է Գյավառի դաշտը (տե՛ս **Հ. Մարկվարտ,** Պարսկահայք նահանգը,

Հարավում Արմինիա ոստիկանության սահմանները տարածվում էին մինչև Կորդվաց(այժմ՝ Հաքյարի) լեռների շրջանը՝ ընդգրկելով այդ լեռների հարավային լեռնաբազուկները:

Չնայած հայագիտության մեջ արմատավորված այն տեսակետին, թե Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանման ժամանակ Պարսկահայքն ամբողջությամբ հանվել է Մեծ Հայքից[1], սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկություններն ապացուցում են, որ նրա հյուսիսային հատվածը՝ սկսած Այլի գավառից մինչև Զարևանդի հյուսիսային սահմանները մտնում էր Հայոց մարզպանության մեջ: Թովմա Արծրունին պարզորոշ հաղորդում է, որ Այլի(Էլի) գավառը մտնում էր Արմինիա ոստիկանության մեջ՝ հստակորեն այն տարբերելով Ատրպատականի ոստիկանությունից ու Պարսից կողմերից[2]: Իսկ Եղիշեն հաղորդում է, թե 450-451թթ. ապստամբությունը ճնշելու նպատակով եկած պարսկական բանակը «հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի Զարևանդ գաւառ»[3]: Եղիշեի վկայությունն ուղղակի արձանագրությունն է Հեր և Զարևանդ գավառների՝ Հայոց մարզպանության կազմում լինելու փաստի: Աշխարհագրական առումով Հայոց մարզպանության կազմում պետք է մնացած լինեին նաև Պարսկահայքի Այլի և Զարևանդ գավառների միջև ընկած գավառները[4]: Արաբական տիրապետության օրոք Պարսկահայքի նշյալ գավառները մաս կազմեցին Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա երկրամասի Վասպուրական վարչական շրջանի: Արաբ հեղինակների տեղեկություններն արտացոլում են այդ իրողությունը: Իբն Խորդադբեհը հաղորդում է, որ Արմինիա ոստիկանության կազմում ընդգրկված էր Պարսկահայքի Հեր (արաբ. Խուայյ) գավառը[5]: Ալ-Մուկադդասին նշում է, որ Արմինիայի կազմում ընդգրկված էին Հերը, Սալմաստը (Սալամաս) և Ուրմիան[6]:

Սակայն, արաբական տիրապետությունն իր հետ բերեց նաև որոշ փոփոխություններ: Երբ Արմինիայի այս կամ այն մասում հաստատվող

էջ 189-190): Վալդեման Բելքը Գյավառի կազայի Դիզա գյուղի մոտ հայտնաբերել էր Արյան լիճը, որը մեր օրերում ճահճուտի է վերածված(անդ, էջ 189):

[1] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 254:

[2] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 232:

[3] Եղիշե, էջ 212:

[4] Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 347-351: Պարսկահայքի այդ հատվածը տարածվում է պատմական Մարի գետի (հավանաբար, ներկայիս Բարանդուզ-չայը) և ներկայիս Զեյրավանդ բնակավայրի միջև(անդ, էջ 313-323, տե՛ս նաև նույնի՝ «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների» քարտեզը):

[5] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:

[6] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 51:

արաբ վերաբնակիչները հիմնադրում էին իրենց ամիրայությունները, նրանք վարչականորեն ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին: Այդ պատճառով ավելի ուշ Հայոց թագավորներն ու իշխաններն իրենց իրավունքն էին համարում նրանց իրենց ենթարկելը: Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ Աշոտ Ա-ի իշխանությունը ճանաչում էին Հերի և Սալամասի արաբ ամիրաները[1]: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ Գրիգոր-Դերենիկ Արծրունին «ձեռն զգաւառօքն և զքաղաքօքն արկեալ զկողմամբք Հերայ և Զարաւանդայ՝ 'ի հնազանդութիւն ընդ իւրեաւ զկողմանսն զայնոսիկ նուաճէր»[2]: Սակայն, արաբների հաստատումն Արմինիայի տարբեր մասերում փոփոխություններ էր մտցնում ժամանակակիցների մտածողության մեջ: Դրա պատճառով մի շարք այլ աղբյուրներում Պարսկահայքի հյուսիսային գավառները համարվում են Ատրպատականի մաս[3]: Ղևոնդը, նկարագրելով արաբների բռնությունները, պատմում է, որ Գագիկ Արծրունին իր զորքով «ելեալ ասպատակ սփռէր զկողմամբք Ատրպատական աշխարհին, ի Զարևանդ գաւառ, ի Բուտակս[4] և Զիդռօյ, ի Տասուկ[5], ի Գազնակ, ի Յորմի, ի Սուրենապատ և յայլ ևս մերձակայ գաւառսն...և գայր հասանէր ի գաւառն Հէր»[6]: Ըստ Յակուտի՝ Հերը, Զարևանդը, Սալմաստը և Ուրմիան նույնպես Ատրպատականի մաս էին կազմում[7]:

Նման ճակատագիր էր վիճակված նաև Վասպուրականի արևելյան գավառներին, որոնք տարածվում էին մինչև Փայտակարան աշխարհը[8]: Նախքան 591 թ. բաժանումը, կազմելով Հայոց մարզպանության Վասպուրական Գնդի երկիր վարչական շրջանի մաս, դրանք այդ բաժանումից հետո մնացին Հայոց մարզպանության կազմում, իսկ հետո էլ մտան Արմինիա ոստիկանության մեջ: Հետագայում, երբ այդ գավառներում արաբներ էին հաստատվում, այդ իրողությունը, ինչպես Պարսկահայքի հյուսիսային գավառների պարագայում, հիմք էր տալիս արաբ հեղինակներին՝ դրանք Ատրպատականի ոստիկանության մաս համա-

---

[1] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 10:

[2] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 142:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները, էջ 248:

[4] Ավելի ճիշտ՝ Ռոտակ կամ Ռոստակ: Ռոտակի եպիսկոպոսությունը համապատասխանում էր Հեր և Զարևանդ գավառներին (տե՛ս **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը..., էջ 348):

[5] Տասուկը (Տասվիջ) գտնվում էր Ուրմիո լճի հյուսիսային ափին (տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ, Ե., 1976):

[6] **Ղևոնդ**, էջ 133-134:

[7] Տե՛ս **Jacut,** I, էջ 171-175, 219, 513, II, էջ 502, 922, 959, III, էջ 120:

[8] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույց»-ի, քարտեզ, **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

ռելու: Նրանք հաղորդում են, որ, օրինակ՝ Մարանդը Ատրպատականի ոստիկանության մեջ էր մտնում[1]: Ալ-Մուկադդասին, որը քաջածանոթ էր Արմինիա ոստիկանության ընդգրկած տարածքներին, Մարանդը հիշատակում է Արմինիայի քաղաքների թվում[2]:

Հայաստանի 591 թ. բաժանումից հետո, ինչպես տեսանք, Հայոց մարզպանության մեջ մնաց նաև Մոկքը: Բալազուրին, նկարագրելով արաբական առաջին արշավանքները, հաղորդում է, որ այն Վասպուրականի մեջ էր մտնում[3]: Վերջին անվան տակ, անկասկած, պետք է հասկանալ Վասպուրական Գնդի երկիրը: Մոկքը հետագայում մաս էր կազմում Արմինիա ոստիկանության Երրորդ Արմինիա երկրամասի Բուսֆուրրաջան-Վասպուրական վարչական շրջանի: Այն ընդգրկում էր Ջերմ(Բոհտան) գետի հարավային ջրբաժանի և Վանա լճի հարավային ափին գտնվող Տուրուբերանի Երևարք ու Վասպուրականի Ռշտունիք գավառների միջև տարածվող լեռնային երկրամասը՝ արևելքում տարածվելով մինչև Առնոս լեռան շրջանը, իսկ արևմուտքում՝ եզերվելով Գյոզալդարա և Խիզան-սու գետերի ջրբաժանով[4]:

Ազ-Զավազան: Արաբական աղբյուրները Հայաստանի կազմում հիշատակում են ազ-Զավազանը: Երբ 639-640թթ. Իյադ իբն Ղանմը նվաճեց Վերին Միջագետքն ու հասավ Կարդա, որին դեռ կանդրադառնանք, նրան ներկայացավ ազ-Զավազանի իշխանը (բաթրիկ ազ-Զավազան) և պայմանագիր կնքեց արաբ զորավարի հետ, որում հարկ վճարելու պայմանով երաշխավորվում էին նրա իրավունքներն իր հողերի վրա[5]: Իբն Հաուկալն ազ-Զավազանը հիշատակում է Հայաստանի այն հատվածում, որը կոչվում էր Արտաքին Հայաստան՝ Բերկրու, Խլաթի, Արճեշի և Ոստանի հետ միասին[6]: Արաբ հեղինակը, այնուհետև, պատմելով Վասպուրականի Դերեն (Դերենիկ) թագավորի մասին, հաղորդում է, որ նա տիրում էր Զավազանին, Վանին և Վաստանին[7]: Յակուտը հաղորդում է, որ ազ-Զավազանը տարածվում է Հայկական լեռների, Խլաթի, Ատրպատականի, Դիար Բաքրի և Մոսուլի միջև[8]: Իբն ալ-

---

[1] Տե՛ս **al-Istakhri**, էջ 181-182, **Ibn al-Fakih**, էջ 285, **Ibn Rosteh**, էջ 106, **Jakubi**, էջ 171:

[2] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 51, 373:

[3] Տես بلاذري, I, էջ 236:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Մոկք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի,- «ՊԲՀ», 1990, թիվ 1, էջ 41-52, նույնի՝ «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների» (քարտեզ): Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի (քարտեզ):

[5] Տե՛ս بلاذري, I, էջ 208:

[6] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 344:

[7] Անդ, էջ 348:

[8] Տե՛ս **Jacut**, II, էջ 957-959:

Ասիրը տեղեկացնում է, որ ազ-Զավազանը գտնվում է Տիգրիս գետից արևելք, իսկ նրա սահմանները հասնում են մինչև Զազիրա իբն Օմար ու անցնում Մոսուլից երկու օրվա ճանապարհ հեռավորության վրա: Ըստ արաբ հեղինակի՝ ազ-Զավազանն արևմուտքից արևելք տարածվում է Խլաթից մինչև Սալմաստի սահմանը[1]:

Ն. Կարաուլովը կարծում է, որ ազ-Զավազանը գավառ էր համանուն ամրոցով, որը գտնվում էր Խլաթի լճից(Վանա լիճ) արևելք: Ազ-Զավազան ամրոցը, ըստ նրա՝ կարող է նույնացվել ներկայիս Սևանկալային, իսկ համանուն գավառը՝ տեղադրվել դրա շուրջը[2]: Ժ. Լոռանն ու Ա. Տեր-Ղևոնդյանը ազ-Զավազանը նույնացնում են Վասպուրականի Անձևացիք գավառին[3]: Վերջինը տեղադրվում է Ջերմ (Բոհտան) գետի ակունքների շրջանում[4]:

Դատելով Յակուտի և Իբն ալ-Ասիրի վերոհիշյալ հաղորդումներից, ազ-Զավազանի զբաղեցրած տարածքը շատ ավելի ընդարձակ էր, քան Անձևացյաց գավառը: Կարծում ենք, որ ճիշտ է Ն. Կարաուլովը, երբ արաբ հեղինակների կողմից որպես ազ-Զավազանի սահման հիշատակվող Խլաթ անվան տակ հասկանում է Խլաթի կամ Վանա լիճը: Ըստ Յակուտի՝ Հայկական լեռները կազմում էին ազ-Զավազանի սահմանը, թերևս, արևմտյան հատվածում և, ամենայն հավանականությամբ, նույնական էին Ղարադաղի կամ Հայկական լեռներին[5]: Այն, որ ազ-Զավազանը տարածվում էր Զազիրա իբն Օմարից (Տիգրիսի ափին) մինչև Սալմաստ, Վանա լճից մինչև Հայկական լեռներ և հարավում համարյա հասնում մինչև Մոսուլ ու Ատրպատական, ցույց է տալիս, որ անհավանական է դրա նույնացումը Անձևացյաց գավառին: Տարածքային առումով այն գրեթե նույնական էր Վասպուրական Գնդի երկրին: Կարծում ենք, որ Բալազուրիի հիշատակած Կարդա անվան տակ պետք է հասկանալ Կորճայքի Կորդուք գավառը[6]: Եթե ճիշտ է այդ ենթադրությունը,

---

[1] Անդ, էջ 958:

[2] Տե՛ս **Н. Караулов**, նշվ. աշխ., թիվ 38, էջ 124, ծանոթ. 50:

[3] Տե՛ս **J. Laurent**, նշվ. աշխ., էջ 85, ծանոթ. 28, **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 22, **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 44: Տե՛ս նաև **Թ. Հակոբյան և ուրիշներ,** ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 279:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 254, **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 36, **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը..., էջ 114:

[5] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 50:

[6] Տե՛ս **Հ. Հյուբշման,** նշվ. աշխ., էջ 202, **Հ. Նալբանդյան**, «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 76, ծանոթ. 3: Կարդա-Կորդուք նույնության ապացույցն է արաբ պատմիչ Դինավարի այն հաղորդումը, թե Զուդի լեռը (այժմ՝ Զուդիդաղ, տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 82 պլանշետը), որի վրա, ըստ Ղուրանի, կանգ է առել Նոյի տապանը, գտնվում է Կարդայում (տե՛ս

ապա այն ցույց է տալիս, որ Իյադ իբն Ղանմը Միջագետքի կողմից համարյա հասել էր Վասպուրական Գնդի երկրի սահմաններին: Վերջինը, ինչպես ցույց ենք տվել, համարժեք էր Հայոց մարզպանությանը, որտեղ 639-640թթ. դրությամբ իշխում էր Թեոդորոս Ռշտունին[1]: Ուստի, ավելի հավանական է, որ արաբ զորավարի հետ պայմանագիր կնքեր ոչ թե Անձևացյաց իշխանը, որը ենթակա էր Թեոդորոս Ռշտունուն, այլ Թեոդորոս Ռշտունին, իսկ ազ-Զավազանը նույնանա Վասպուրական Գնդի երկրին: Սակայն, դատելով ալ-Զավազան և Անձևացիք բառերի գրության ձևերից (الزوزان، انزوزيك), առաջինը երկրորդի աղավաղումն է, ըստ որում՝ ալ-Զավազանի վերջին պարսկերեն հոգնակիակերտ «ան» մասնիկը համարժեք է հայերեն «ք»-ին, որը ցույց է տալիս ցեղ, ժողովուրդ կամ դրանց բնակության տարածքները: Այդ դեպքում, ինչո՞վ բացատրել վերոհիշյալ անհամապատասխանությունը:

Մեր կարծիքով, տեղի է ունեցել հետևյալը: Թեոդորոս Ռշտունին, Իյադ իբն Ղանմի հետ պայմանագիր կնքելու նպատակով, անձամբ չի ներկայանում, այլ ուղարկում է Անձևացյաց իշխանին: Վերջինս, ինքնըստինքյան հասկանալի է, պայմանագիրը կնքում է ողջ Վասպուրական Գնդի երկրի համար: Պայմանագրում արձանագրվում են հարկատու դարձող երկրի սահմանները: Դրա հետևանքով, հետագայում արաբ հեղինակները Վասպուրական գնդի երկրի սահմանները սխալմամբ վերագրել են Անձևացյաց իշխանությանը:

Որ պայմանագիրը կնքվել էր Վասպուրական գնդի երկրի համար, ցույց է տալիս նաև Բալազուրիի կողմից Իյադ իբն Ղանմի արշավանքի հետագա նկարագրությունը:

Արաբ զորավարը, պայմանագիր կնքելով ազ-Զավազանի իշխանի հետ, անցնում է Ջորա պահակ լեռնանցքով ու հասնում մինչև Խլաթ: Վերջինիս իշխանի հետ նա նույնպես կնքում է պայմանագիր, որից հետո՝ արշավում մինչև ալ-Այն ալ-Համիդա(Թթու աղբյուր, ջուր): Պատմիչը հաղորդում է, որ Իյադը դրանից այն կողմ չի արշավում, այլ վերադառնում է Բաղեշ (Բիթլիս)[2]: Ա. Տեր-Ղևոնդյանն այն կարծիքն է հայտնել, որ ալ-Այն ալ-Համիդան, թերևս, նույնական է Կարնո քաղաքից դեպի արևմուտք գտնվող էլեգիա ջերմուկին[3]: Սակայն, եթե ընդու-

---

«Օտար աղբյուրները...», 16, էջ 206): Ջուդի լեռը նույնական է Մեծ Հայքի Կորճայք աշխարհի Կորդուք գավառի Արարադ լեռանը, որի լանջին էր գտնվում Թման գյուղը (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 36-38, տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 39, 53, 60, «Օտար աղբյուրները...», 16, էջ 130, ծանոթ. 3):

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը..., էջ 305:

[2] Տե՛ս بلاذري, I, էջ 208-209:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 45:

ենք, որ ալ-Այն ալ-Համիդան ոչ թե էլեգիա ջերմուկն է, այլ Ծաղկոտն գավառի Վարշակի ջերմուկը[1], ապա կկատարենք մի կարևոր պարզաբանում: Քանի որ Ծաղկոտն գավառը մտնում էր Այրարատի մեջ ու սահմանակցում Վասպուրականին[2], ուստի՝ նրանց միջև էր անցնում Հայաստանի 591 թ. բաժանման սահմանագիծը, որը չնչին տարբերություններով նույնական էր Տանուտիրական ու Վասպուրական գնդերի միջև սահմանագծին: Պարզ է դառնում, թե ինչու՞ Իյադ իբն Ղանմը չանցավ Ծաղկոտն գավառի սահմանն ու չներխուժեց Վասպուրական Գնդի երկիր, այլ վերադարձավ Բաղեշ: Նա արդեն կնքած պայմանագիր ուներ այդ երկրի իշխանի հետ:

Դաբիլ (Դվին): Մ. Ղազարյանը Դաբիլ անվանաձևի առաջացումը բացատրում է دوين (Դվին)-دبين (Դաբին)-دبيل (Դաբիլ) աստիճանական աղավաղմամբ[3], ինչը միանգամայն ընդունելի է: Դվինը սկզբում Արմինիայի ոստիկանի միակ նստավայրն էր, բայց երբ, թերևս, 747-750 և 774-775 թթ. ապստամբությունների պատճառով, Արմինիայի ոստիկանները որպես նստավայր ընտրեցին Պարտավը[4], այն չկորցրեց իր նշանակությունը և շարունակեց մնալ որպես ոստիկանի երկու նստավայրերից մեկը: Ալ-Իսթախրին վկայում է, որ, «ինչ վերաբերում է Դաբիլին, ապա այն որպես քաղաք ավելի մեծ է Արդաբիլից: Այն Հայաստանի մայրաքաղաքն է, և այնտեղ գտնվում է ամիրի պալատը (دار الامارة), այնպես, ինչպես Առանի ամիրի պալատը Բարդաայում և Ադարբայջանի ամիրի պալատն Արդաբիլում»[5]: X դ. հեղինակ ալ-Մուկադդասին հաղորդում է, որ «Դաբիլը մեծ քաղաք է. այնտեղ [կան] անառիկ ամրոց և մեծ հարստություններ»[6]: Իսկ Իբն Հաուկալը տեղեկացնում է, որ Դվինը «Արմինիայի ամենամեծ քաղաքն է»[7]: Դվինի շուրջը, ըստ հայ և օտար հեղինակների՝ արաբները նոր ամրություններ կառուցեցին: Բալազուրին հաղորդում է, որ Աբդ ալ-Ազիզ իբն Հատամ իբն Նման ոստիկանը (705-709) «կառուցեց (խոսքը քաղաքի նոր ամրությունների կառուցման մասին է-Ա.Ե.) Դվին քաղաքը»[8]: Ղևոնդը վկայում է, որ ոստիկան «Աբդ-

---

[1] Տե՛ս **Ղազար Փարպեցի,** էջ 320: Տե՛ս նաև **Է. Դանիելյան**, Հայաստանի քաղաքական պատմությունը..., էջ 157:

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 33-34: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[3] Տե՛ս **M. Ghazarian,** նշվ. աշխ., էջ 71:

[4] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 166: Պատմիչը հաղորդում է, որ Սուլեյման ոստիկանը (788-790) նստում էր Պարտավում:

[5] **Al-Istakhri,** էջ 188:

[6] **Al-Moqaddasi,** էջ 377:

[7] **Ibn Haukal**, էջ 342:

[8] Տե՛ս بلاذري, I, էջ 242:

Ազիզն...շինէր վերստին զքաղաքն Դուին, հզօրագոյն և ընդարձականիստ մեծութեամբ քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին»[1]:

Ալբակ: Ըստ Իբն Խորդադբեհի՝ Ալբակը գտնվում էր Արմինիայում[2]: Համապատասխանում է հայկական Աղբակին: Հայտնի է, որ գոյություն ունեին Աղբակ անունը կրող երկու գավառներ, որոնցից մեկը՝ Մեծ Աղբակը, մտնում էր Վասպուրականի, իսկ մյուսը՝ Փոքր Աղբակը՝ Կորճայքի մեջ[3]: Ըստ երևույթին, հնում գոյություն է ունեցել մի ամբողջական գավառ՝ Աղբակ անունով, իսկ հետագայում, ավատատիրական հարաբերությունների առաջացման և զարգացման հետևանքով, այն տրոհվել է երկու մասի: Մեծ Աղբակը տարածվում էր Մեծ Զաբ գետի վերին հոսանքի կամ Աղբակ գետի ավազանում՝ կենտրոն ունենալով Հադամակերտը (այժմ՝ Բաշ-կալե)[4], իսկ Փոքր Աղբակը, որի տեղադրությանն անդրադարձանք վերը, գտնվում էր Մեծ Աղբակից հարավ:

Միրաջ-Թայր: Այս անվան բաղադրիչներն ուսումնասիրողների կողմից ճշտորեն նույնացվել են Շիրակին և Տայքին[5]: Վերջիններս մեկ կապակցության մեջ նշելը, ըստ երևույթին, պայմանավորված է դրանց՝ մեկ նախարարական տոհմի պատկանելու փաստով: Շիրակին, Աշոցքին, Տարոնին ու Տայքին Բագրատունիները տիրեցին 774-775 թթ. ազգային-ազատագրական պատերազմից հետո, երբ քաղաքական ասպարեզից հեռացան մի շարք խոշոր նախարարական տներ, այդ թվում՝ Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցրեցին նախկին կշիռը: Աշոտ Մսակեր Բագրատունին (790-826) պայքարի մեջ մտավ արաբ Ջահապի հետ, որը, ամուսնացած լինելով 775 թ. Արծնիի ճակատամարտում զոհված Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, նույնպես հավակնություններ ուներ այդ տարածքների նկատմամբ: Բագրատունիները հաղթեցին այդ պայքարում ու տիրեցին հիշյալ շրջաններին[6]: Բացի այդ, Աշոտ Մսակերը Կամսարականների մնացորդներից գնեց Արշարունիք գավառը[7]: Պետք է նշել, որ, դատելով «Քարթլիի մատյանի» մի հիշատա-

---

[1] **Ղևոնդ,** էջ 36:

[2] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 123:

[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 32:

[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 254: **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 33:

[5] Տե՛ս **Բ. Խալաթյանց,** նշվ. աշխ., էջ 27, ծանոթ. 3, **Ս. Շլեպչյան,** նշվ. աշխ., էջ 54, 64, ծանոթ. 4 և **Ա. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 42:

[6] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 83:

[7] Տե՛ս **Ասողիկ**, էջ 106:

կությունից, Տայքի Արսեաց փոր գավառը կարճ ժամանակով դարձել էր Կղարջքում հանգրվանած հայ Բագրատունիների ճյուղի տիրույթը: «Քարթլիի մատյան»-ը, պատմելով այն մասին, թե ինչպես է Լևոն իշխանը Ափխազքը դուրս բերում բյուզանդական տիրապետությունից և հիմնում Ափխազական թագավորությունը, գրում է, որ 774-775թթ. ապստամբությունից հետո Կղարջքում ապաստանած հայ Բագրատունիների շառավիղ Ատրներսեհ Բագրատունին այդ ժամանակ տիրում էր ի թիվս այլ գավառների, նաև «Ասիսփորի»-ին[1], որն, անկասկած, նույնական է Արսեաց փոր գավառին: Տայքը, կազմելով Արմինիա ոստիկանության մաս, իր լեռնային տեղանքի պատճառով հուսալի հենակետ էր հանդիսանում արաբներից դժգոհ հայ նախարարների համար: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Բյուզանդիայից օգնություն ստանալու հույսով Տայքում հաճախ էին ապաստանում հայ ապստամբները: Այսպես 703 թ. Վարդանակերտի կռվից հետո և 747-750 թթ. ապստամբության ժամանակ հայ նախարարները հեռանում են Տայքի ամրությունները, որպեսզի կապ հաստատեն բյուզանդական զորքերի հետ, «որք էին ի կողմանս Պոնտոսի»[2]:

Բաղրավանդ: Նույնական է հայկական Բագրևանդին, որը համապատասխանում է ներկայիս Ալաշկերտի դաշտին[3]: Արաբական տիրապետության շրջանում այդ գավառը պատկանում էր Մամիկոնյաններին, իսկ Աշոտ Բագրատունուց սկսած (Հայոց սպարապետ՝ 855 թ.-ից, իշխանաց իշխան՝ 862 թ.-ից)՝ Բագրատունիներին: Վարդան Արևելցին, պատմելով Բուղայի կողմից գերի տարված իշխաններին բաժին հասած դառը ճակատագրի մասին, հաղորդում է, թե նրանցից մեկը՝ Գրիգոր Մամիկոնյանը, «արիաբար պահեալ զհաւատն ելանէ ՝ի բանտէն, և գայ մտանէ ՝ի գաւառն իւր Բագրևանդ»: Սակայն, նա շուտով վախճանվում է: Օգտվելով դրանից՝ Աշոտ Բագրատունին նրա գլուխը կտրում, ուղարկում է ոստիկանին, հաղորդելով թե նա կամենում էր անցնել Բյուզանդիա, իսկ ինքը մարդ է ուղարկել նրա ետևից ու սպանել տվել: Ի պատասխան, ոստիկանը դիմում է խալիֆային ու վերջինիս հրամանով Աշոտին հանձնում Բագրևանդ գավառը[4]:

Նաշավա: Համապատասխանում է հայկական Նախճավանին[5]: Այն Հայաստանի նշանավոր քաղաքներից էր: Ղևոնդի մի հաղորդումից

---

[1] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 28:
[2] Ղևոնդ, էջ 123:
[3] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 42:
[4] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 87:
[5] Տե՛ս **M. Ghazarian,** նշվ. աշխ., էջ 77:

երևում է, որ արդեն VIII դ. սկզբին այստեղ արաբները մեծաքանակ կայազոր էին պահում: Պատմիչը հաղորդում է, որ հայ նախարարներից ոմանք այդ ժամանակ փորձում էին հեռանալ Բյուզանդիա, բայց «զօրքն Իսմայելի, որ էին ի Նախջաւան քաղաքի՝ յարձակեցան զկնի նոցա»: Ըստ Ղևոնդի՝ նրանց թիվն անցնում էր հինգ հազարից[1]: Նախճավանով էր անցնում Դվին-Մարանդ-Թավրիզ ճանապարհը, որով Արմինիայի վաճառականներն առևտուր էին անում խալիֆայության տարբեր երկրամասերի հետ:

Քիսալ: Ըստ Իբն Խորդադբեհի՝ Քիսալը գտնվում էր Արմինիայում[2]: Ա. Տեր-Ղևոնդյանն այն նույնացնում է հայկական Քասաղին[3], իսկ Զ. Բունիաթովը՝ ներկայիս Ղազախին[4]:

Բալազուրին, նկարագրելով արաբների 655 թ. արշավանքը դեպի Հայաստան ու Այսրկովկասյան երկրներ, հստակորեն նշում է, որ այն տեղի ունեցավ երկու ուղղությամբ: Հաբիբ իբն Մասլամայի զորքերը նվաճեցին Հայաստանն ու Վիրքը, իսկ Սալման իբն Ռաբիայի զորքերը՝ Սասանյանների տիրապետության շրջանի Աղվանից մարզպանության տարածքները: Այն փաստը, որ Քիսալը գրավեցին Հաբիբի ուժերը[5], ցույց է տալիս, որ Զ. Բունիաթովի տեսակետը սխալ է, քանի որ Ղազախի շրջանը՝ մաս կազմելով Ուտիքի, նախկինում մտնում էր Աղվանից մարզպանության մեջ, ուստի և պետք է գրավված լիներ Սալմանի կողմից: Հավանական ենք համարում Ա. Տեր-Ղևոնդյանի նույնացումը, քանի որ դրա օգտին է խոսում Բալազուրիի կողմից Հաբիբ իբն Մասլամայի նվաճումների նկարագրության՝ աշխարհագրական հերթականությամբ կատարված լինելու իրողությունը: Պատմիչը նշում է, որ նախքան Քիսալը Հաբիբը նվաճել էր Սյունիքը, իսկ Քիսալից հետո՝ Խունանը (Հունարակերտ) և Սամցխեն[6]: Քասաղ ավանը նույնական է ներկայիս Ապարան քաղաքին[7]:

Խուայյ: Հայկական Հեր քաղաքն է: Նույնական է ներկայիս Խոյին:

Այսպիսով՝ Երրորդ Արմինիայի հարավային սահմանագիծը Ղարադաղի (Հայկական) լեռների ջրբաժանով շարժվում էր դեպի արևմուտք, անցնում Քասաբե լեռան շրջանով ու Միշոուդաղ լեռնաշղթայի գագաթնագծով հասնում Ուրմիո լճին: Այդ հատվածում Երրորդ Արմինիայի

---

[1] Ղևոնդ, էջ 24:
[2] Տե՛ս Ibn Khordadbeh, էջ 123:
[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 79:
[4] Տե՛ս **З. Буниятов**, նշվ. աշխ., էջ172:
[5] Տե՛ս بلاذري, I, էջ 239:
[6] Տե՛ս بلاذري, I, էջ 239:
[7] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 89:

կազմում ընդգրկված էին Վասպուրականի արևելյան գավառներն ու Պարսկահայքի Զարևանդ և Հեր գավառները: Այնուհետև Ուրմիո լճի արևմտյան ափագծով սահմանագիծն իջնելու էր մինչև ներկայիս Բարանդուզ-չայ գետը, որի հունով ընթանալու էր դեպի արևմուտք և սկզբում Կորդվաց լեռների հարավակողմով, իսկ հետո, մոտավորապես այսօրվա թուրք-իրաքյան սահմանագծով, հասնելու էր Խաբուր գետին: Այնուհետև սահմանը Ձերմ(Բոհտան) գետի հարավային ջրբաժանով հասնելու էր Ձերմ գետին, որտեղից բարձրանալու էր դեպի հյուսիս, հավանաբար, ներկայիս Գյոզալդարա և Խիզան-սու գետերի ջրբաժանով, որով Երրորդ Արմինիան արևմուտքում սահմանակցում էր Չորրորդ Արմինիայի մեջ մտնող արաբական Զուրարա ցեղի տիրույթներ հանդիսացող Աղձնին(Արզն) ու Բաղեշին[1]:

Չորրորդ Արմինիա[2]: Ընդգրկում էր Տուրուբերանը, Բարձր Հայքն ու Ծոփքը՝ բացառությամբ վերջինների մերձեփրատյան գավառների, ինչպես նաև, սկսած VIII դ. վերջից, Աղձնիքի հյուսիսարևմտյան գավառները:

Չորրորդ Արմինիան սերտորեն կապված էր արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու(սուղուր) հետ: Յակուտը հաղորդում է, որ բոլոր տարածքները, որոնք հարևան են Բյուզանդիային և որտեղից կատարվում են արշավանքները դեպի այդ երկիրը, կոչվում էին սուղուր[3]: Այն ձևավորվել էր արաբա-բյուզանդական անընդհատ պատերազմների ընթացքում և տարածվում էր Միջերկրական ծովի ափերից մինչև Բարձր Հայքի Կամախ քաղաքը: Սահմանային ամրությունների գոտին բաղկացած էր երկու մասից՝ Կիլիկիայի(Ասորիքի

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ, ֆիզիկական քարտեզ:

[2] Ամենայն հավանականությամբ, արաբ հեղինակների երկերում Չորրորդ Արմինիա անունով Հայաստանի այդ հատվածի հանդես գալը Հայաստանի՝ վաղ ժամանակներում գոյություն ունեցող վարչական բաժանման արձագանքն էր: Հովհան Մամիկոնյանը, խոսելով Հայաստանի այն հատվածի մասին, ուր Գրիգոր Լուսավորիչի կողմից բերվել ու ամփոփվել էին քրիստոնեական սրբերի, այդ թվում՝ սբ. Կարապետի և այլոց նշխարները, և որտեղ գտնվում էր Ինանկնեան վանքը, հաղորդում է, թե «է սա երկիրս Հայոց ի չորրորդ բաժինս և յերկրորդ Հայոց աւարտինս, ի լերինն որ կոչի Տաւրոս, և հատանէ անցանէ մինչ ի դրունս Պալհաւայ պարսից: Եւ առ սովաւ բնակի երկիրս Մամիկոնէից» (տե՛ս **Հովհան Մամիկոնյան**, էջ 35-36): Խոսքն այստեղ, մասնավորապես, Տարոնի մասին է, որտեղ գտնվում էին սբ. Կարապետ և Ինանկնեան վանքերը և որին Մամիկոնյանները, ըստ պատմահոր՝ տիրում էին դեռևս Տրդատ Մեծի ժամանակներից (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 276-278): Այս վկայությունը, հասկանալի է, չի վերաբերում «Աշխարհացոյց»-յան Չորրորդ Հայքին, որը Ծոփքն է (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30):

[3] Տե՛ս Jacut, I, էջ 927:

սահմանային ամրություններ) և Միջագետքի(Ջազիրայի սահմանային ամրություններ): Վերջինի կազմում ընդգրկված էին Բարձր Հայք ու Ծոփք աշխարհների արևմտյան գավառները և Փոքր Հայքի հարավային հատվածը՝ Մալաթիա քաղաքով[1]:

Չորրորդ Արմինիայի մեջ էին մտնում Կարնո քաղաքը(արաբ. Կալիկալա) Բարձր Հայքում և Արշամաշատ քաղաքը(արաբ. Շիմշաթ)՝ Ծոփքում: Վերջիններս, սահմանային ամրությունների գոտու կազմի մեջ մտնող Մալաթիայի և Կամախի հետ, կարևորությամբ առաջնային հենակետեր էին արաբների համար: Աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ բյուզանդացիներն անընդհատ արշավում էին սահմանային ամրությունների գոտի, գրավում ու ավերում էին դրա քաղաքներն ու ամրությունները, բնակչությանը գերեվարում ու նահանջում, իսկ արաբները վերականգնում էին դրանք, նոր ամրություններ կառուցում և նոր արաբ վերաբնակիչներ բերում[2]: Բալազուրին տեղեկացնում է, որ Կամախ քաղաքը մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցել[3]: Սահմանային ամրությունների գոտում արաբների կարևորագույն հենակետը Մալաթիան էր: Այն արաբական զորքերի՝ դեպի Բյուզանդիա կատարվող ամառային արշավանքների ելակետն էր և, հաճախ դառնալով բյուզանդական հարձակման թիրախ, ավերվում էր[4]: Արաբական աղբյուրներում հիշատակվող Անձիտ գավառում, որը սահմանային ամրությունների գոտու մաս էր կազմում[5], գտնվում էին Անձիտ և Խարբերդ(Հիսն Զիյադ) բերդերը[6]:

Կալիկալա: Կարնո քաղաքն է, որը Բյուզանդիայի դեմ պայքարում արաբների համար կարևորագույն հենակետերից էր: Բալազուրին հաղորդում է, որ Կարնո քաղաքը գրավել էր Հաբիբ իբն Մասլաման և, ելնելով Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում նրա կարևոր ռազմավարական դիրքից, այնտեղ վերաբնակեցրել մեծ թվով արաբների[7]:

Շիմշաթ: Չորրորդ Արմինիայի կազմում ընդգրկված էր նաև Շիմշաթը (Արշամաշատ): Դատելով Բալազուրիի և Իբն Խորդադբեհի տեղեկություններից՝ այն իր շրջակայքով Արմինիայի կազմում վարչականո-

---

[1] Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր),-«ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149:

[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 129-130, **Սամվել Անեցի**, էջ 89, 92, بلاذري, I, էջ 236:

[3] Տե՛ս بلاذري, I, էջ 219-220:

[4] Անդ, էջ 221:

[5] Տե՛ս **Jacut**, IV, էջ 993:

[6] Անդ, II, էջ 276, 417:

[7] Տե՛ս بلاذري, I, էջ 234:

րեն առանձին միավոր էր համարվում և ուներ առանձին զինվորական կառավարիչ[1]:

Անդրադառնալով Արմինիա ոստիկանության և սահմանային ամրությունների գոտու միջև սահմանագծին՝ նշենք, որ արաբական աղբյուրները, ինչպես տեսանք, բավական հաճախ են անդրադարձել այդ գոտում գտնվող Կամախին: Յակուտը հաղորդում է, թե Ծոփքի Անձիտ գավառը ևս մտնում էր այդ գոտու մեջ[2]: Իսկ վերջինի հարևանությամբ գտնվող Արշամաշատ քաղաքը մաս էր կազմում Արմինիա ոստիկանության: Աշխարհագրական առումով սահմանային ամրությունների գոտու մեջ պետք է մտնեին նաև Անձիտ գավառի և Կամախ քաղաքի միջև գտնվող Ծոփքի և Բարձր Հայքի գավառները՝ Գավրեքը, Ծոփքը(Ծոփք Շահունի), Դեգիքը, Մուզուրը և Դարանաղիի հարավային մասը[3]: Ամենայն հավանականությամբ՝ Արմինիա ոստիկանության սահմանագիծը սահմանային ամրությունների գոտու հետ հարավից հյուսիս անցնելու էր սկզբում Արղնիի լեռներով, այնուհետև Արշամաշատ քաղաքի արևմտակողմով, ապա Արածանի գետի հունով և Մնձուր(Մուզուր) ու Խոզաթ գետերի ջրբաժանով: Հետո սահմանագիծը հաղթահարելու էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալու Կամախի շրջակայքը: Ելնելով Կամախի մեծ կարևորությունից՝ Մնձուր լեռների՝ նրանից դեպի արևելք ձգվող հատվածը ևս պետք է ընդգրկված լիներ սահմանային ամրությունների գոտու մեջ:

Դերջան: Դատելով Սեբեոսի մի վկայությունից՝ Կամախից դեպի արևելք՝ Արմինիայի և Բյուզանդական կայսրության սահմանին էր գտնվում Դերջան քաղաքը: Երբ ի հետևանս Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև կնքված 652 թ. պայմանագրի Կոստաս Բ կայսրը (641-668) նույն թվականին արշավեց դեպի Հայաստան և «իբրև եհաս ի Դերջան, ընդ առաջ եղեն նմա արք իսմայելացիք և մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր գրեալ այսպէս, թե «Հայք իմ են, անդ մի՛ երթար. ապա թէ երթաս՝ ես գամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ որ անդրէն փախչել ոչ կարես»»[4]: Անհրաժեշտ է նշել, որ հայ-արաբական պայմանագրում, ամենայն հավանականությամբ, որոշակիորեն պետք է արձանագրվեին հարկատու դարձող երկրի սահմանները: Ուստի՝ այն փաստը, որ Բյուզանդիայի կայսրն արաբներից վերջնագիր ստացավ այն

---

[1] Անդ, էջ 220, 240, **Ibn Khordadbeh,** էջ 122:

[2] Տե՛ս **Jacut,** IV, էջ 993:

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր), էջ 141:

[4] **Սեբեոս,** էջ 165:

ժամանակ, երբ հասավ Դերջան, ցույց է տալիս, որ արաբներին հարկատու Հայաստանի հատվածի և Բյուզանդական կայսրության միջև սահման էր ճանաչվել Դերջանը: Այս տեսակետի համաձայն՝ Արմինիայի սահմանագիծը Բյուզանդիայի հետ Կամախից արևելք անցնելու էր Եփրատ գետով մինչև Դերջան և, հետո, այդ քաղաքից հյուսիս գտնվող լեռների ջրբաժանով՝ դեպի արևելք: Այնուհետև, ամենայն հավանականությամբ, սահմանագիծը դեպի հյուսիս անցնելու էր Կոփա (Կապույտ) լեռների արևելյան մասի և ներկայիս Աղբաբա լեռան միջով, հատելու էր Ճորոխ գետը և Ճորոխի լեռնաշղթայի ջրբաժանով հասնելու էր Չորմայրի լեռան շրջանը: Այստեղից սահմանագիծը դեպի հյուսիս էր շարժվելու Տայքի և Բարձր Հայքի սահմանով, այսինքն՝ Սպեր քաղաքի արևելակողմով շարժվելով դեպի հյուսիս, անցնելով Ճորոխ գետն ու հասնելով Պարխարյան լեռների Վերջնբակ գագաթին[1]:

Չորրորդ Արմինիայի ռազմավարական մեծ նշանակությամբ էր պայմանավորված նրա տարածքում արաբական տարրի վերաբնակեցումը, որի համար նախատեսված էր վճռական դեր խաղալ սահմանային գոտում արաբա-բյուզանդական անընդհատ բախումներում:

Սասուն: Չորրորդ Արմինիան հարավում սահմանակցում էր Ջազիրա ոստիկանության Դիար Բաքր երկրամասի հետ, որի կազմում ընդգրկված էր Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի մեծ մասը: Արաբական առաջին արշավանքների շրջանում Ամիդի շուրջը հաստատված արաբական Բաքր ցեղախումբը զավթեց Աղձնիքը, որի անունից այս շրջանը կոչվեց Դիար Բաքր[2]: Սակայն, Աղձնիքի հյուսիսային լեռնային շրջանները և, հատկապես, Սասունը, որն ընդգրկում էր Աղձնիքի Սանասունք և Սալնո ծոր գավառների տարածքները[3], գտնվելով հանդերձ Դիար Բաքրի կազմում, կիսանկախ վիճակ էր պահպանում, և հաճախ մի փոքրիկ ճնշումը բավական էր լինում, որպեսզի ընդվզեր տեղի ազատասեր հայությունը, ինչպես տեղի ունեցավ 749-752թթ.[4]: Այս ապստամբությունն այն նշանակությունն ունեցավ, որ դրանից հետո Սասունն աստիճանաբար առանձնացավ Ջազիրայից և միացավ Արմինիա ոստիկանությանը: Արաբ հեղինակների տեղեկություններից երևում է, որ IX դ. առաջին կեսին արդեն Սասունը վարչականորեն Արմինիա ոստիկանության կազմի մեջ էր մտնում: Աբու Սաիդ (Աբուսեթ) ոստիկանի սպանու-

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույց»-ի, քարտեզ:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները..., էջ 52:

[3] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 79:

[4] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը խալիֆայության դեմ,-«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 196-202:

թյան առիթով Իբն ալ-Ասիրը սասունցիներին պարզապես կոչում է «Արմինիայի ժողովուրդ»[1]: Նույնպիսի տեղեկություն է հաղորդում նաև Իբն Մասկավայը[2]: Անհրաժեշտ է նշել, որ ոստիկանի սպանության դրդապատճառը նրա կողմից Տարոնի Բագարատ Բագրատունի իշխանի գերեվարությունն էր: Բագարատը, հավանորեն, այդ ժամանակ տիրում էր Սասունին, որը միացվել էր VIII դ. վերջին Բագրատունյաց տիրույթ դարձած Տարոնին: Համենայնդեպս, Թովմա Արծրունու՝ այս ապստամբության մասին պատմածից երևում է, որ լեռնային այդ շրջանը մտնում էր Բագարատ Բագրատունու տիրույթների մեջ: Պատմիչը հաղորդում է, որ «յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն(իմա՛ Բագարատը-Ա.Ե.) ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին:...Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց»[3]: Պարզվում է, որ այդ ժամանակ Տարոնը և Սասունը կազմում էին Բագարատի մեկ միասնական տիրույթի երկու՝ դաշտային և լեռնային հատվածները:

Արզն և Բաղեշ: Ուսումնասիրողներն Արմինիայի կազմի մեջ ներառում են նաև Արզնը(Աղձն) և Բաղեշը[4]: Այդ են ցույց տալիս աղբյուրներում պահպանված տեղեկությունները:

Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ IX դ. կեսերին ոստիկանի դեմ ապստամբած Արմինիայի իշխանների թվում էր նաև Արզնի տեր Մուսա իբն Զուրարան, որը Բագարատ Բագրատունու փեսան էր[5]: Նա, ըստ Թովմա Արծրունու՝ «տիրէր...Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ»[6]: Նա տիրում էր նաև Բաղեշին[7]: Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ, երբ Մուտավաքիլ խալիֆան Բուղային ուղարկեց Սասունի ապստամբությունը ճնշելու, վերջինս սկզբում Մոսուլի և Զազիրայի վրայով հարձակվեց Մուսա իբն Զուրարայի վրա[8]: Այսինքն, ըստ պատմիչի՝ Մուսայի տիրույթ Արզնը Զազիրայի կազմում չէր: Ուստի և պատահական չէ, որ Յակուտն Արզնն ու Բաղեշը Արմինիայի մաս է

---

[1] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288:

[2] Տե՛ս **Իբն Մասկավայ,- Բ. Խալաթյանց,** նշվ. աշխ., էջ 77:

[3] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 190:

[4] Տե՛ս **Ս. Շլեպչյան,** նշվ. աշխ., էջ 49-52, **Ս. Երեմյան,** Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ, **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 156, նույնի՝ «Арминия в I половине IXв.» քարտեզը(անդ, էջ 168) և այլն:

[5] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 172:

[7] Անդ, էջ 174-176: Տե՛ս նաև بلاذري, I, էջ 248, يعقوبي, II, էջ 489:

[8] Տե՛ս ابن الاثير, V, էջ 288-289:

համարում[1]: Նույնն են վկայում նաև մյուս արաբ հեղինակները: Բալազուրին տեղեկացնում է, որ Բուղան, գալով Արմինիա, Բաղեշում ձերբակալեց Մուսա իբն Զուրարային[2]: Իբն Մասկավայը հաղորդում է, որ Բուղան Արմինիայում ծագած ապստամբության ճնշումը սկսեց Արզնից՝ ձերբակալելով Մուսային[3]: Իսկ Թաբարին պատմում է, որ Բուղան Միջագետքից ներխուժեց Արմինիա և, առաջին հերթին, Արզնում ձերբակալեց Մուսային[4]: Այս հաղորդումները խոսուն ապացույցներն են այն իրողության, որ Արզնն ու Բաղեշը Արմինիայի մեջ էին մտնում: Այդ են ցույց տալիս նաև Թովմա Արծրունու վկայությունները: Պատմիչը հաղորդում է, որ Աբուսեթն Արմինիայից հեռանալիս ոստիկանի լիազորությունները, այդ թվում նաև հարկահավաքությունը, հանձնեց Մուսա իբն Զուրարային (ըստ Թովմայի՝ Զօրահա)[5]: Սա ևս նշանակում է, որ Տարոնին, ինչպես նաև Սասունին հարևան Զուրարայի տիրույթներն այդ ժամանակ Արմինիայի մեջ էին մտնում: Այլապես հազիվ թե Աբուսեթը Զազիրայի իշխաններից մեկին հանձներ Արմինիայի ոստիկանի լիազորությունները, այն պայմաններում, երբ Արմինիայի տարբեր մասերում հաստատված արաբական ծանրակշիռ գաղութներ գոյություն ունեին, քանզի հայտնի է, որ Արմինիայի ոստիկանները հաճախ լինում էին Արմինիայում հաստատված արաբական ցեղախմբերից[6]: Թովմա Արծրունին, այնուհետև, պատմելով հայոց 306 թ.(857) իրադարձությունների մասին, հաղորդում է, թե Վասպուրականի իշխան Գուրգենը «օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զԱնձաւացիս և զոր յԱրզն»[7]: Այսինքն՝ նրա ազդեցությունը տարածվում էր նաև Արզնի վրա, որտեղ իշխող արաբական Զուրարա տունը ծանր հարված էր ստացել Բուղայից: Արզնի՝ Արմինիայի մեջ մտնելու օգտին է խոսում պատմիչի ևս մեկ վկայությունը, թե Արզնի իշխանը և նրա բանակն ակտիվորեն մասնակցում էին հայ նախարարների միջև վեճերին ու ռազմական գործողություններին[8]:

Բաղեշը Տուրուբերան աշխարհի մեջ էր մտնում և սահմանակից էր Աղձնիքին[9], իսկ Արզնը մտնում էր վերջինի կազմի մեջ[10]: 591 թ. բաժան-

---

[1] Տե՛ս Jacut, I, էջ 205, 526:
[2] Տե՛ս بلاذري, I, էջ 248:
[3] Տե՛ս **Իբն Մասկավայ,-Խալաթյանց Բ.**, նշվ. աշխ., էջ 78:
[4] Տե՛ս طبري, VI, էջ 45:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 172:
[6] Տե՛ս **А. Тер-Гевондян,** նշվ. աշխ., էջ 274-285:
[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 324:
[8] Անդ, էջ 332:
[9] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 31:
[10] Անդ, էջ 30:

ման ժամանակ Աղձնիքն ու Տուրուբերանը անցան Բյուզանդիային, իսկ արաբական տիրապետության օրոք մտան՝ առաջինը՝ Ձազիրայի, իսկ երկրորդը՝ Արմինիա ոստիկանության մեջ: Արզնի՝ Ձազիրա ոստիկանության մեջ գտնվելու դեպքում Մուսայի տիրույթները, փաստորեն, գտնվելու էին երկու տարբեր ոստիկանությունների կազմերում, ինչն անհավանական է: Բագարատ Բագրատունին, որը տիրում էր, ի թիվս այլ շրջանների, նաև Սասունին ու Տարոնին, Բաղեշի վերաբերմամբ նկրտումներ չուներ: Երբ նա Մուսային պարտության մատնեց ու պաշարեց Բաղեշը, հետո հեշտությամբ այն թողեց նրա ձեռքում՝ զիջելով իր քրոջ(որը Մուսայի կինն էր) խնդրանքին[1]: Մեր կարծիքով, եթե Մուսայի տիրույթներն այդ ժամանակ Ձազիրայի մեջ լինեին, ապա հազիվ թե Բագարատը նրան զիջեր Արմինիայի կազմում գտնվող այնպիսի մի կարևորագույն հենակետ, ինչպիսին էր Բաղեշը:

Դատելով վերոասացյալից՝ կարծում ենք, որ Արմինիայի կազմում ընդգրկված էր Արզնը: Մեր կարծիքով, Արմինիայի մեջ մտնելու էր ոչ թե Արզն գավառի ողջ տարածքը, որը հարավում տարածվում էր մինչև Տիգրիս գետ[2], այլ դրա հյուսիսային լեռնային հատվածը՝ Արզն քաղաքով: Դատելով բնաշխարհագրական պայմաններից՝ Արմինիայի մեջ էին մտնելու նաև Սասունի, Արզն քաղաքի և Մոկքի միջև գտնվող Աղձնիքի լեռնային գավառները՝ Կեթիկը, Տատիկը, Ազնվաց ձորը, Երխեթքը և Գզեղխը[3]: Արմինիայի հարավային սահմանագիծը, ամենայն հավանականությամբ, Սասունից արևելք անցնելու էր Արզն քաղաքի հարավակողմով՝ Արմինիայի կազմում ներառնելով Հայկական Տավրոսի լեռնաբազուկները, ապա շարժվելու էր դեպի արևելք և հասնելու էր Ձերմ գետին՝ Սղերդ քաղաքի հյուսիսակողմում, քանի որ վերջինս մտնում էր Դիար Բաքրի մեջ[4]: Սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվարանում ենք ասել, թե երբ են Արզնը, Բաղեշը և վերոհիշյալ գավառներն մտել Արմինիայի մեջ: Հայտնի է, սակայն, որ Աղձնիքի գավառներից ամենահյուսիսայինը՝ Սասունը, Արմինիայի մեջ էր մտել VIII դ. վերջին կամ IX դ. սկզբին: Ուստի՝ այդ գավառների մտնելն Արմինիայի նեջ չէր կարող տեղի ունենալ նախքան այդ իրադարձությունը, դեռ ավելին, ամենայն հավանականությամբ, տեղի էր ունեցել դրա հետ միաժամանակ:

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 172-176:

[2] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ:

[3] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 30-31, **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 389: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ:

[4] Տե՛ս **Jacut**, II, էջ 636:

Բաջունայս: Ս. Շլեպչյանը, անդրադառնալով Արմինիա ոստիկանության սահմաններին և վարչական բաժանմանը, եկել է այն կարծիքին, որ արաբ հեղինակների հիշատակած Բաջունայսը համապատասխանում է հայկական Բզնունիք գավառին: Նա ելնում է այն իրողությունից, որ Բզնունիքն արաբական առաջին գաղութներից էր, ինչի պատճառով արաբ հեղինակներն այն անպայման հիշատակելու էին[1]: Մ. Ղազարյանը Բաջունայսն առաջարկում է կարդալ Բահունիս ձևով, ինչը ցույց է տալիս դրա նույնությունն Ապահունիքի հետ[2]: Ա. Տեր-Ղևոնդյանը նույնպես, սակայն, հենվելով Վ. Մինորսկու տեսակետի վրա, հակված է դրա նույնացմանն Ապահունիք գավառին. «Բաջունայս տեղանունը բանասիրության մեջ որոշ թյուրիմացության տեղիք է տվել,...բայց ավելի հավանական է..., որ դա պարզապես Ապահունիքն է: Բաջունայսը պետք է կարդալ առանց արաբական ջ-ի կետի, այսինքն Բահունայս (باحنيس) կամ Բահունիս(Ապահունիս), որտեղ սկզբի ա-ն ընկել է և այսպես էլ տարածվել է ամբողջ արաբական մատենագրության մեջ»: Իր այս տեսակետը հեղինակը հիմնավորում է նրանով, որ հենց Ապահունիքում էր գտնվում կայսիկներով վերաբնակեցված Մանազկերտ քաղաքը և, պարզ է, որ IX դ. արաբ մատենագիրները պետք է հաճախ խոսեին դրա մասին[3]: Այդ նույնացումը միանգամայն ընդունելի է:

Խլաթ և Արճեշ: Արաբ հեղինակները Չորրորդ Արմինիայի կազմում, ի թիվս այնպիսի կարևորագույն քաղաքների, ինչպիսիք էին Արշամաշատն ու Կարնո քաղաքը, հիշատակում են Խլաթն ու Արճեշը: Դրա պատճառն, ըստ երևույթին, այն է, որ այդ քաղաքներն արաբական առաջին գաղութներից էին: Դատելով Ղևոնդի վկայություններից, ինչպես կտեսնենք, թե՛ Խլաթում և թե՛ Արճեշում նախքան Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք(786-809) սկիզբ առած մեծ վերաբնակեցումն արդեն արաբական գաղութներ էին հաստատվել:

Արման: Ալ-Իսթախրին և Իբն Հաուկալը հաղորդում են, որ Արմինիա ոստիկանությունն արևմուտքում սահմանակցում էր Արման երկրի հետ[4]: Լեոն Արմանը նույնացնում է Փոքր Հայքին[5]: Անվանի հայագետն այստեղ, ըստ երևույթին, կրկնել է արաբ աշխարհագետների երկերի թարգ-

---

[1] Տե՛ս **Ս. Շլեպչյան**, նշվ. աշխ., էջ 74, ծանոթ. 1:

[2] Տե՛ս **M. Ghazarian**, նշվ. աշխ., էջ 74-75:

[3] Տե՛ս **V. Minorsky,** Abu Dulaf, Cairo, 1955, էջ 77, **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հայաստանի վարչական բաժանումները ըստ արաբ աշխարհագետների,-Հայկական ՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագիր», 1961, թիվ 5, էջ 69:

[4] **Al-Istakhri,** էջ 181, Ibn Haukal, էջ 331:

[5] Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 362:

ման Ն. Կարաուլովին[1]: Մեր կարծիքով, արաբ հեղինակներն այդպես էին կոչում իր սահմաններում Փոքր Հայքի հյուսիսային հատվածը և բյուզանդական Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Պոնտոս ու Գամիրք նահանգներն ընդգրկող «Արմենիակ» բանակաթեմը[2]: Սա առավել ընդունելի տեսակետ է, քանի որ այդ ժամանակաշրջանում Արմինիա ոստիկանության արևմտյան սահմանին հիշյալ տարածքներից որպես վարչատարածքային միավոր ձևավորված էր հենց Արմենիակ բանակաթեմը: Բյուզանդական հեղինակ Կոստանդին Ծիրանածինը հաղորդում է, որ բանակաթեմի «Արմենիակների» անվանումը նրա «հատուկ անունը չէ...: Այդ հորջորջումն էլ հին չէ: Նա իր անունը պարտական է սահմանակից և տեղում ապրող հայերին: Ես ենթադրում եմ, որ այդ անունն ստացավ անցյալում, Հերակլ կայսեր ժամանակ»[3]:

«Արմենիակ» բանակաթեմը հիշատակում են նաև արաբ հեղինակները: Իբն Խորդադբեհը հիշատակում է ալ-Արմանիակ թեմը (الارمنياق عمل), որտեղ գտնվում է Կուլունիա(Կողոնիա) բերդը և Խալդիայի (Խաղտիք) թեմը, որը սահմանակցում է Արմինիային[4]: Բալազուրին, խոսելով բյուզանդացիների տիրապետության տակ մնացած հայկական հողերի մասին, պատմում է, որ դրանք գտնվում են Արմանիակուսի իշխանի (صاحب ارمنياقس) կառավարման տակ[5]: Իսկ Յակուտը հաղորդում է, որ Բյուզանդական կայսրության նահանգներից մեկն էր Արմանիակը, որի ստրատեգոսը նստում էր Ամասիայում[6]:

Դատելով Երրորդ և Չորրորդ Արմինիաների քննության արդյունքներից՝ դրանք միմյանցից բաժանվելու էին Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի՝ Վասպուրական և Այրարատ աշխարհների հետ ունեցած սահմանագծով, իսկ, այնուհետև, Բարձր Հայքի՝ Այրարատ և Տայք աշխարհների հետ ունեցած սահմանագծով: Սկսած Վանա լճի հյուսիսարևելյան ափերից՝ սահմանագիծն անցնելու էր Արճեշ քաղաքի արևելակողմով մինչև Ծաղկանց լեռնաշղթան, այնուհետև վերջինիս ջրբաժա-

---

[1] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 29, էջ 56-57, ծանոթ. 7:

[2] Այս բանակաթեմի մասին ավելի մանրամասն տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 401, ինչպես նաև էջ 748-749, ծանոթ. 113: Տե՛ս նաև **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 231. «Այն (իմա՛ Արմենիակ բանակաթեմը-Ա.Ե.) տարածվում էր Կապադովկյան Կեսարիայից մինչև Սև ծով՝ ընդգրկելով այն ամբողջ տարածությունը, որ ընկած էր Սինոպից մինչև Փասիս և Եփրատ՝ բացառյալ III Հայքը, որն այդ ժամանակ գրավել էին արաբները: Այդ ամբողջ լայնածավալ տարածությունը...մեծությամբ հավասար էր նախկին Կապադովկիայի, I և II Հայքի ու Պոնտոսի գավառներին միասին վերցրած...»:

[3] **Կոստանդին Ծիրանածին**, էջ 167:

[4] **Ibn Khordadbeh**, էջ 108:

[5] Տե՛ս بلاذري, I, էջ 231:

[6] Տե՛ս **Jacut,** II, էջ 865:

նով շարժվելու էր դեպի արևմուտք՝ Չորրորդ Արմինիայի կազմում թողնելով Ապահունիքը՝ Մանազկերտ քաղաքով, որից հետո շարժվելու էր հյուսիս և Բագրևանդ գետի հարավային ջրբաժանով ու Այծպտկունքի լեռներով ընթանալով՝ հասնելու էր Կարնո քաղաքի շրջանը, որը գտնվում էր Չորրորդ Արմինիայում: Կարինից հետո սահմանագիծը հարավից հյուսիս շարժվելու էր Եփրատ գետի վերին հոսանքի արևելյան ջրբաժանով, այնուհետև Թորթոմ(Ազորդ) գետի ակունքների շրջանում արևելքից արևմուտք ձգվող լեռների ջրբաժանով հասնելու էր Չորմայրի լեռանը, որից դեպի հյուսիս ընթանալու էր Սպեր քաղաքի արևելակողմով ու դուրս էր գալու Ճորոխ գետի ափը: Հետո, հատելով Պարխարյան լեռները, սահմանագիծը հասնելու էր Վերջնբակ լեռանը[1]:

Երրորդ և Չորրորդ Արմինիաների կազմերում հիշատակված շրջանների՝ այս կամ այն նախարարական տանը պատկանելու փաստից պարզվում է ևս մեկ կարևոր իրողություն: Արմինիայում, որպես վարչական բաժանման հիմք, արաբները տեսնում էին նաև նախարարական տիրույթների սահմանները: Այսպես՝ Վասպուրականը՝ հարակից մի շարք շրջաններով, գտնվում էր Արծրունյաց տան իշխանության ներքո, Շիրակը, Տայքն ու Բագրևանդը, ինչպես տեսանք, Կամսարականների՝ քաղաքական ասպարեզից հեռանալու և Մամիկոնյանների՝ թուլանալու հետևանքով անցել էին Բագրատունիներին, իսկ ինչ վերաբերում է Չորրորդ Արմինիայում հիշատակված շրջաններին, ապա Կարինն ու Շիմշատը գտնվում էին սահմանային ամրությունների գոտու անմիջական հարևանությամբ, իսկ մյուսներում կազմավորվել էին արաբական ամիրայություններ:

Ամփոփելով Արմինիայի վարչական բաժանման վերաբերյալ քննության արդյունքները՝ արձանագրենք, որ, փաստորեն, Արմինիա ոստիկանության կազմավորումը տեղի ունեցավ VIII դ. սկզբին, երբ Մուհամմադ իբն Մարվանը նվաճեց Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները՝ բացառությամբ Սև ծովի ափամերձ շրջանների: Հետագայում Արմինիայի սահմանն արևմուտքում փոփոխություններ կրեց, քանի որ բյուզանդական զորքերին հաջողվեց ետ գրավել Եգերքը, Ափշիլքն ու Ափխազքը:

Արմինիա ոստիկանությունն իր կազմում ընդգրկում էր Սասանյանների տիրապետության շրջանի Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունների տարածքները, ինչպես նաև Բյուզանդական կայսրությունից

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, **Բ. Հարությունյան,** Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ, ֆիզիկական քարտեզ:

գրավված Մեծ Հայքի արևմտյան աշխարհները՝ բացառությամբ վերջիններին մերձեփրատյան գավառների, որոնք ընդգրկված էին արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտում: Դեռևս իրենց առաջին արշավանքների ժամանակ արաբները Հայաստանը և Այսրկովկասյան երկրները դիտում էին որպես մեկ ամբողջություն, որը երևում է այն իրողությունից, որ Մուավիան Թեոդորոս Ռշտունուն ու Գրիգոր Մամիկոնյանին իշխանություն տվեց այդ երկրների վրա:

Արմինիա ոստիկանությունը հյուսիսում և արևմուտքում սահմանակցում էր խալիֆայության ախոյաններից երկուսին՝ Խազարական թագավորությանը և Բյուզանդական կայսրությանը: Երկու ուղղություններով էլ անընդհատ բախումների արդյունքում ձևավորվել էին սահմանային ամրությունների գոտիներ, որոնք վարչական որոշակի ինքնուրույնություն ունեին Արմինիա ոստիկանության կազմում:

Ի մի բերելով վերը կատարված քննության արդյունքները, կարող ենք տալ Արմինիա ոստիկանության՝ գործնականում ճշգրտված սահմանները: Արմինիա ոստիկանության սահմանագիծն Ալանաց դռնից դեպի արևելք անցնելու էր Կովկասյան լեռների գագաթնագծով և Անդյան Կոյսուի ձախափյան ջրբաժանով, իսկ այնուհետև՝ Ավարյան Կոյսու գետի արևելյան ջրբաժանով իջնելու էր հարավ՝ ընդգրկելով ներկայիս Ղուբաչի քաղաքի շրջակա տարածքն ու դրանից հյուսիս գտնվող լեռնային շրջանը զբաղեցնող Ֆիլանը, որտեղից էլ՝ Ուլլու-չայ և Ռուբաս գետերի ջրբաժանով շարժվելու էր դեպի Դարբանդ: Արմինիայի արևելյան սահմանագիծը Դարբանդից հարավ անցնում էր Կասպից ծովի արևմտյան ափագծով, իսկ հարավայինը՝ Կուր և Երասխ գետերով շարժվում էր դեպի արևմուտք՝ մինչև Ղարադաղի(Հայկական) լեռները, որոնց ջրբաժան գծով, իսկ հետո Քասաբե լեռան շրջանով ու Միշոուդաղ լեռնաշղթայի ջրբաժանով հասնում Ուրմիո լճին: Սահմանագիծը, այնուհետև, վերջինի արևմտյան ափագծով իջնելու էր մինչև ներկայիս Բարանդուզ-չայ գետը, որի հունով ընթանալու էր դեպի արևմուտք և սկզբում Կորդվաց լեռների հարավակողմով, իսկ հետո, մոտավորապես այսօրվա թուրք-իրաքյան սահմանագծով, հասնելու էր Խաբուր գետին: Այնուհետև սահմանը Ջերմ(Բոհտան) գետի հարավային ջրբաժանով հասնելու էր Ջերմ գետին, որտեղից, Դիար Բաքրի կազմում գտնվող Սղերդի հյուսիսակողմով շարժվելու էր դեպի արևմուտք ու Արմինիայի կազմում էր թողնելու Տավրոսյան լեռների հարավային լեռնաբազուկների շրջանում գտնվող Արզն քաղաքն ու Սասունը: Սասունից արևմուտք սահմանը շարժվելու էր սկզբում Տավրոսյան լեռների, իսկ այնուհետև Արղնիի լեռների ջրբաժանով, որից

հետո, ընթանալով Արշամաշատ քաղաքի արևմտակողմով և հատելով Արածանի գետը, անցնելու էր Մնձուր(Մուզուր) և Խոզաթ գետերի ջրբաժանով: Դրանից հետո սահմանագիծը հաղթահարելու էր Մնձուր լեռներն ու դուրս էր գալու Կամախի շրջակայքը: Կամախից արևելք սահմանագիծն անցնելու էր Եփրատ գետով մինչև Դերջան և, հետո, այդ քաղաքից հյուսիս գտնվող լեռների ջրբաժանով՝ դեպի արևելք: Այնուհետև, ամենայն հավանականությամբ, սահմանագիծը դեպի հյուսիս անցնելու էր Կոփա(Կապույտ) լեռների արևելյան մասի և ներկայիս Աղբաբա լեռան միջև, հատելու էր Ճորոխ գետը և Ճորոխի լեռնաշղթայի ջրբաժանով հասնելու էր Չորմայրի լեռան շրջանը: Այստեղից սահմանագիծը դեպի հյուսիս էր շարժվելու Տայքի և Բարձր Հայքի սահմանով՝ Սպեր քաղաքի արևելակողմով շարժվելով դեպի հյուսիս, անցնելով Ճորոխ գետն ու հասնելով Պարխարյան լեռների Վերջնբակ գագաթին: Սահմանագիծն, այնուհետև, Պարխարյան, Մոսքական ու Լիխի լեռների գագաթնագծով և Մեծ Լիախվի գետի վերին հոսանքի հյուսիսային ջրբաժանով հասնելու էր Ալանաց դռանը:

Վերևում առիթ ունեցանք անդրադառնալու այն իրողությանը, որ Հայոց իշխանը գերագահ դիրք ուներ Այսրկովկասյան իշխանների նկատմամբ: Ծանոթացանք նաև այն փաստին, որ արաբներն իրենց առաջին արշավանքների ժամանակ Հայոց իշխաններ Թեոդորոս Ռշտունու և Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունը ճանաչեցին ողջ Այսրկովկասի վրա, իսկ հետո էլ Հայոց իշխանները կրում էին «իշխան Հայոց և Վրաց» տիտղոսը:

VIII դ. երկրորդ կեսին, երբ Մամիկոնյանների, Կամսարականների և թուլացած կամ քաղաքական թատերաբեմից հեռացած այլ ազդեցիկ նախարարական տների կալվածքներին տիրեցին Բագրատունիները, նրանք առաջնակարգ դիրքի ու հզորության հասան ոչ միայն Հայաստանում, այլ Արմինիա ոստիկանությունում: Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունուց (790-826) սկսած մինչև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը միայն Բագրատունիներն էին վարում Հայոց իշխանի պաշտոնը:

Աշոտ Մսակերի իշխանության օրոք խալիֆայությունը սկսում է աստիճանաբար զիջումներ անել Բագրատունիներին: Այդ ժամանակ խալիֆայության մեջ անընդհատ ելույթներ էին տեղի ունենում, ընդ որում՝ ոչ միայն տեղերի ժողովուրդների, այլև արաբ վերաբնակիչների կողմից: Ի վերջո, այդ ամենին գումարվեց նաև Բաբեկի ապստամբությունը, որը երկար տարիներ ցնցում էր խալիֆայության հիմքերը: Ինչպես ճիշտ նկատել է Ա. Տեր-Ղևոնդյանը, այդ ժամանակ Աշոտ Բագրա-

տունին սկսում է ինքնուրույն իշխել Հայաստանում, իսկ խալիֆաներն էլ բավարարվում են նրանով, որ նա անհանգստություն չէր պատճառում խալիֆայությանը: Նրանք նույնիսկ կողմ էին Բագրատունիների հզորացմանը, քանի որ վերջիններս սանձահարում էին տեղի արաբների անջատողական նկրտումները, որոնք ավելի վտանգավոր էին խալիֆայության համար[1]:

Հայոց իշխանի պաշտոնում Աշոտ Մսակերին հաջորդեց նրա որդին՝ Բագարատը(826-851): Վերջինս քաղաքական ասպարեզում հայտնվեց խալիֆայության համար դժվարին ժամանակաշրջանում: Այդ իրադրության մեջ խալիֆան Բագարատ Բագրատունուն շնորհեց «բաթրիկ ալ-բաթարիկա»(պատրիկների պատրիկ կամ իշխանաց իշխան) տիտղոսը՝ ճանաչելով նրա գերիշխանությունը ողջ Արմինիայում: Թաբարին հաղորդում է, որ Բագարատը խալիֆայից նույնիսկ ոստիկանի պաշտոնն էր պահանջում[2]:

Բուղայի արշավանքը և Բագարատ Բագրատունու գերեվարությունը միայն ժամանակավորապես կասեցրեցին Բագրատունիների հզորացումը, ինչի ապացույցն է այն, որ շուտով՝ 862 թ., խալիֆայությունը «իշխանաց իշխան» տիտղոսը հանձնեց Աշոտ Բագրատունուն և, ընդհանրապես, ավելի մեծ զիջումների գնաց: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ այդ ժամանակ «ոստիկան ոմն 'ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա(իմա՛ Աշոտին-Ա.Ե.) կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ 'ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»[3]: Սա նշանակում է, որ Աշոտին տրվեցին ոստիկանի լիազորությունները, իսկ արաբ ոստիկանները, որոնք շարունակում էին նշանակվել խալիֆայության կողմից, հազվադեպ էին ժամանում Արմինիա, և, քանի որ նրանց գործունեությունն իրականացնում էր Հայոց իշխանը, նրանք հիմնականում զբաղվում էին սահմանային ամրությունների գոտում Բյուզանդիայի դեմ պայքարով:

---

[1] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 130:
[2] Տե՛ս طبري, VI, էջ 288:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** 136:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՄԻՆԻԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Քանի դեռ խալիֆայությունը պատերազմներ էր մղում, նվաճված երկրներում առևտուրը նկատելիորեն կրճատվում էր: Իրավիճակը փոխվեց VIII դ. երկրորդ կեսից սկսած, երբ խալիֆայության գահին բազմեցին Աբբասյանները: Վերջինների օրոք առևտուրը ծավալվեց խալիֆայությունում, և Արմինիայի մթերքներն ու այնտեղ պատրաստված ապրանքները սկսեցին արտահանվել այլ երկրներ: Խալիֆա Մահդիի օրոք (775-785), ինչպես վկայում է Ղևոնդը, արաբները տեսան, որ առևտրի դադարելու պատճառով երկրում արծաթ դրամը պակասել է[1] և, այդ պատճառով, հարկերը, չնայած բոլոր տեսակի դաժանություններին և խոշտանգումներին, դժվարությամբ են հավաքվում: Պարզ էր դառնում, որ այդպես շարունակվելու դեպքում արաբները ոչ միայն Արմինիան և մյուս հպատակ երկրները ծայրահեղ ծանր վիճակի կհասցնեն, տնտեսապես կքայքայեն, ապստամբության կմղեն, այլև իրենց ստանալիք հարկերը գնալով կպակասեն: Ահա՛, Մահդին փոփոխությունների է դիմում: Ղևոնդը նրա մասին հաղորդում է, թե «սա էր ազնուական քան զհայր իւր և լաւագոյն բարուք: Եբաց զամենայն տունս գանձուց զորս աղխեալ պահէր ամբարիշտն Աբդլա, և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց: Համարձակեաց և զդրունս մարզից՝ հանել զվաճառականս ի վաճառս իւրեանց և լնուլ զպէտս կարօտելոց. և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէն. զի թէպէտև զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝ սակայն վասն գիւտի արծաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին»[2]: Այսինքն, մինչ այդ վաճառականները զրկված էին իրենց ապրանքը շուկա հանելու հնարավորությունից: Այդ իրողության մեջ մեծ դեր էր խաղում նաև այն, որ երկրի բոլոր ճանապարհները գտնվում էին արաբական զորքերի հսկողության տակ[3], այսինքն՝ բեռների և ապրանքների անվտանգ փոխա-

---

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 154-155:
[2] Անդ:
[3] Անդ, էջ 160:

դրման մասին նույնիսկ խոսք լինել չէր կարող: Հետագայում Բուղան, վերականգնելով ավերված Շամքորը՝ զարկ տվեց առևտրին՝ վերաբնակեցնելով այնտեղ առաջին հերթին վաճառականների Պարտավից[1]: Պատճառն այն էր, որ, ինչպես նշել ենք, արաբներն արդեն հասկացել էին, որ իրենց հարկերը կայուն և հեշտությամբ կարող են հավաքել, եթե միայն թույլ տան Արմինիայում առևտրի զարգացումը:

Դրամական հարաբերությունների զարգացման, արաբների կողմից հարկերի մի մասը դրամով գանձելու հետևանքով զարգացում էր ապրում երկրի ներքին շուկան:

Որոշակի զարգացում ապրեց նաև արտաքին առևտուրը՝ խալիֆայության մեջ մտնող երկրների հետ:

Պետք է նշել, որ Արմինիա ոստիկանությունը՝ սահմանային երկրամաս էր: Արաբա-բյուզանդական չդադարող պատերազմների հետևանքով ձևավորվեց սահմանային ամրությունների մի գոտի, որի հյուսիս-արևելյան հատվածը բաժանում էր Արմինիա ոստիկանությունը Բյուզանդական կայսրությունից: Սահմանային ամրությունների այս գոտու առկայության պայմաններում դադարում են գործել այս հատվածի առևտրական ճանապարհները Հայաստանի և Բյուզանդիայի միջև: Սահմանային ամրությունների մեկ այլ գոտի էլ բաժանում էր Արմինիա ոստիկանությունը Խազարական թագավորությունից: Այս ամրությունների գոտու, ինչպես նաև արաբական ռազմերթերի ու խազարական հաճախակի ներխուժումների պատճառով դեպի հյուսիս շարժվող առևտրական ճանապարհները կորցնում են իրենց նշանակությունը: Այսպիսի իրավիճակում ավելի են կարևորվում Արմինիա ոստիկանությունը խալիֆայության մյուս երկրամասերի հետ կապող առևտրական ճանապարհները, որն էլ արտացոլված է IX դ. աշխարհագետ Իբն Խորդադբեհի հիշատակություններում:

Նա այսպես է նկարագրում Արմինիա եկող և այնտեղ գործող առևտրական ճանապարհները. «...Վարսանից մինչև Բարդաա 8 անցում է[2], ապա մինչև Մանսուր, որն Արմինիայում է, 4 անցում:

Բարդաայից մինչև Տիֆլիս 10 անցում է:

Բարդաայից մինչև Բաբ ալ-Աբվաբ 15 անցում է:

Բարդաայից մինչև Դաբիլ 7 անցում է:

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 240: Տե՛ս նաև Ibn al-Fakih, էջ 293:

[2] Մեկ անցումը նույնն է, ինչ որ մեկ օրվա ճանապարհը: Այն հավասար էր 5-7 փարսախի (30-40կմ) (տե՛ս **Н. Караулов**, նշվ. աշխ., թիվ 29, էջ 59, ծանոթ. 21):

Մարանդից մինչև ալ-Վադի 10 փարսախ է[1], ապա մինչև Նաշավա՝ 10 փարսախ, այնտեղից մինչև Դաբիլ՝ 20 փարսախ:

...Բարդաայից միչև Բադդ՝ 30 փարսախ է»[2]:

Մինչև հիշատակված ճանապարհներին և դրանցում նշված կայարաններին անդրադառնալը պետք է նշել, որ արաբ աշխարհագետների նշած հեռավորություններին այնքան էլ չի կարելի վստահել այն պատճառով, որ արաբները ճանապարհների երկարությունները չափում էին մեկ օրում կենդանու անցած ճանապարհով: Դաշտավայրային շրջաններում նրանք ճանապարհն անցնում էին ավելի կարճ ժամանակում, քան լեռնային շրջաններում, ինչի պատճառով լեռնային պայմաններում ճանապարհը նրանց թվում էր ավելի երկար, քան կար իրականում[3]: Վերոհիշյալի ապացույցներին բազմիցս կհանդիպենք մեր հետագա քննության ընթացքում: Սակայն, դաշտավայրային շրջաններով անցնող ճանապարհների վերաբերյալ արաբ հեղինակների բերած հեռավորություններին կարելի է վստահել:

Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը: Այս ճանապարհն Իբն Խորդադբեհը ներկայացնում է հետևյալ ձևով. «Վարսանից մինչև Դարման 3 փարսախ է, ապա մինչև Բայլական՝ 9 փարսախ, հետո մինչև Բարդաա՝ 14 փարսախ է»[4]: Կուդաման, որի հայրն անձամբ ծանոթ է եղել Իբն Խորդադբեհին[5], և որն, անկասկած, ծանոթ էր վերջինի աշխարհագրական երկին, Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը հիշատակում է հետևյալ տեսքով. «Վարսանից մինչև Կումամ 3 փարսախ է, ապա մինչև Բայլական՝ 7 փարսախ, հետո մինչև Բարդաա՝ 3 փարսախ է»[6]: Ալ-Իսթախրին հաղորդում է. «Բարդաայից մինչև Յունան 7 փարսախ է և Յունանից մինչև Բայլական՝ 7 փարսախ, Բայլականից Վարսան 7 փարսախ է»[7]: Նույնատիպ տեղեկություն է հաղորդում Իբն Հաուկալը[8], իսկ ալ-Մուկադդասին Պարտավ-Յունան-Բայլական-Վարսան ճանապարհի կայարանների միջև հեռավորությունները նշում է մեկական անցում[9]: Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը հիշատակվում է

---

[1] Մեկ փարսախը հավասար է 5752,8 մետրի: Հեռավորությունների չափման միավորների մասին տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Զ, Ե., 1985, էջ 185:

[2] Ibn **Khordadbeh**, էջ 122:

[3] Տե՛ս **Н. Караулов**, նշվ. աշխ., թիվ 29, էջ 68, ծանոթ. 68:

[4] **Ibn Khordadbeh**, էջ 122:

[5] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 32, էջ 23:

[6] **Kudama,** էջ 213:

[7] **Al-Istakhri**, էջ 192:

[8] Տե՛ս **Ibn Haukal,** էջ 349:

[9] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381:

նաև «Մղոնաչափք»-ում՝ կապված Նախճավանից Կասպից ծովի ափերը գնացող ճանապարհի հետ: Այդ ճանապարհը Նախճավանից գնում էր Արտավետ, այնտեղից՝ Վարդանակերտ, ապա անցնում Պարտավ ու գնում Կասպից ծովի ափերը[1]:

Վարդանակերտ-Պարտավ ճանապարհը, գալով Խորասանից, հասնում էր Ատրպատական՝ Արդաբիլ (հայկական աղբյուրների Արտավետը), որտեղից էլ Բարզանդ ու Բալխաբ կայարաններով շարժվում էր Վարսան[2]: Վերջինս գտնվում էր Ատրպատականի ոստիկանության և Արմինիայի սահմանին[3]:

Վարսան: Համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի Վարդանակերտ գավառի համանուն կենտրոնին: Այն նույնական է Երասխ գետի ափին՝ նրա մեջ Կարասու գետի թափվելու տեղից դեպի հյուսիս-արևելք գտնվող Ալտան բերդի ավերակներին[4]: Այսպիսի տեղադրությունը, ինչպես կտեսնենք, կհաստատվի նաև արաբ հեղինակների հիշատակած հեռավորությունների համապատասխանությամբ իրականում գոյություն ունեցող հեռավորություններին: Այսպես՝ Արտավետից Ալտան եկող ճանապարհի երկարությունը կազմում է շուրջ 170-180կմ, իսկ ալ-Իսթախրիի հիշատակությամբ՝ 29 փարսախ կամ մոտ 170կմ[5]: Նմանապես, Ալտանի ավերակներից մինչև Բայլական շուրջ 40կմ հեռավորությունը համապատասխանում է արաբ հեղինակի նշած Վարսան-Բայլական 7 փարսախ հեռավորությանը (շուրջ 41կմ)[6]:

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381: «Մղոնաչափք»-ում Պարտավի փոխարեն Փայտակարան է գրված: Հարկ ենք համարում այստեղ պարզաբանել վերոհիշյալ Փայտակարանի խնդիրը, քանի որ այն, փաստորեն, Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի համանուն կենտրոնը չէ, այլ այդ անվանումը տրվում է Պարտավ քաղաքին: Նման եզրակացությունը բխում է Մատթեոս Ուռհայեցու այն վկայությունից, որտեղ պատմիչը Հայոց Արևելից կողմերն անվանում է «խորին աշխարհ Հայոց», ապա հաղորդում, թե այդտեղի առաքելական աթոռը գտնվում էր «ի քաղաքն Հայոց ի Պարտաւ, որ ասի Փայտակարան, սահմանակից համատարած ծովուն» (**Մատթեոս Ուռհայեցի**, էջ 246-248): Հայոց Արևելից կողմանց եկեղեցական կենտրոնը, ինչպես գիտենք, երբեք բուն Փայտակարան քաղաքում չի գտնվել, իսկ ինչ վերաբերում է ծովի հետ սահմանակցության հարցին, ապա այստեղ պատմիչը շփոթում է Պարտավ քաղաքի գտնվելու վայրը բուն Փայտակարան քաղաքի գտնվելու վայրի հետ: Պարտավը Փայտակարան անվանելու պատճառն է այդ անվան «Փայտակ» մասի (պարսկերեն՝ «փայտախտ») «արքունի քաղաք», «մայրաքաղաք» նշանակությունը: Նույն պատճառով Փայտակարան էր կոչվում նաև Տփղիսը (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 270):

[2] Տե՛ս **al-Istakhri,** էջ 192:

[3] Տե՛ս **Ibn Khordadbeh,** էջ 121:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան,** նշվ.աշխ., էջ 83:

[5] Տե՛ս **al-Istakhri,** էջ 192:

[6] Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

Դարման: Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածը Վարդանակերտ-Դարման-Բայլական-Պարտավ երթուղով հիշատակում են միայն Իբն Խորդադբեհն ու Կուդաման: Ճիշտ է, Կուդաման Դարմանի (درمان) փոխարեն պահպանել է Կումամ (قومام) անվանումը, սակայն, քանի որ նա ծանոթ է եղել Իբն Խորդադբեհի երկին, մենք կարծում ենք, որ Կումամը Դարմանի աղավաղումը պետք է լինի: Բացի այդ, խոսուն ապացույց է նաև այն, որ Կուդաման Կումամի հեռավորությունը Վարսանից նշում է երեք փարսախ, այնքան, որքան, ըստ Իբն Խորդադբեհի՝ պետք է լիներ Դարմանի հեռավորությունը Վարսանից: Արաբ հեղինակների երկերի թարգման Ն. Կարաուլովն այն կարծիքին է, թե Կումամը Յունանի աղավաղումն է[1]: Այսինքն, ըստ նրա՝ Կուդաման մյուս հեղինակների հիշատակած Յունան կայարանը, որը գտնվում էր Բայլական-Պարտավ ճանապարհահատվածի վրա, շփոթել և տեղադրել է Վարդանակերտ-Բայլական ճանապարհահատվածում: Նա կարծում է, որ Դարմանը նույնպես Յունանի աղավաղումն է[2]: Կարևոր է ընդգծել, որ Իբն Խորդադբեհին անծանոթ չէ ավելի ուշ շրջանի հեղինակների հիշատակած մյուս ուղեգիծը[3]: Ուստի և կարծում ենք, որ բացի հիմնական Վարդանակերտ-Բայլական-Յունան-Պարտավ ճանապարհահատվածից, գոյություն ուներ ևս մեկը՝ Դարմանով: Վերջինս, ըստ Իբն Խորդադբեհի՝ գտնվում էր Վարսանից 3 փարսախ (մոտ 17կմ) հեռավորության վրա: Դարմանի տեղադրության որևէ տարբերակ տալը շատ դժվար է, քանի որ սա դրա միակ հիշատակությունն է: Ն. Կարաուլովը, որը թե՛ Դարմանը և թե՛ Կումամը համարում էր Յունանի աղավաղումները, այն տեղադրել է ներկայիս Դեյրան գյուղի տեղում[4]: Դեյրանը գտնվում է Աղդամ բնակավայրից շուրջ 20կմ դեպի արևելք[5]: Յունանի նման տեղադրությունը, ինչպես կտեսնենք, ընդունելի տարբերակ է, իսկ ինչ վերաբերում է Դարմանին, ապա փորձենք տեղադրել այն: Ադրբեջանահիրանական սահմանին՝ Երասխ գետից հարավ, կար Դարանյան կոչվող զինվորական մի հենակետ, իսկ վերջինի հարևանությամբ, դեպի արևելք, գտնվում էր համանուն ամրոցը[6]: Կարծում ենք, որ Դարման անունը սերտորեն կապված է Դարան անվան հետ: Եթե ճիշտ է մեր

---

[1] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 32, էջ 34, ծանոթ. 2:

[2] Անդ, էջ 26, ծանոթ. d:

[3] **Kudama**, էջ 213, ծանոթ. t. «Վարսանից մինչև Բայլական 7 փարսախ է, ապա մինչև Յունան՝ 3(7) փարսախ և մինչև Բարդաա՝ 3(7) փարսախ»:

[4] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 29, էջ 67, ծանոթ. 59:

[5] Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

[6] Անդ:

ենթադրությունը, և Դարան-Դարման անվանումը վերաբերում էր Երասխից հարավ ընկած շրջանին, ապա Վարդանակերտից 3 փարսախ (մոտ 17 կմ) հեռավորության վրա գտնվող Դարման կայարանը, ամենայն հավանականությամբ, պետք է նույնպես գտնվեր Երասխից հարավ: Մեր կարծիքով, ճանապարհը Վարդանակերտից շեղվելու էր դեպի հյուսիս-արևելք, շարժվելու էր Երասխի ափով մոտ 17կմ, հասնելու էր Վարդանակերտից համարյա նույնքան հեռավորության վրա գտնվող ոլորանը, որի շրջանում, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Դարման կոչվող կայարանն ու, այնուհետև, մուտք էր գործելու Արմինիա: Այս երթուղով Վարդանակերտ-Բայլական ճանապարհահատվածի երկարությունը կազմում էր 12 փարսախ(շուրջ 70կմ), ի տարբերություն Վարդանակերտից ուղղակիորեն դեպի Բայլական անցնող երթուղու, որի երկարությունը 7 փարսախ էր(շուրջ 41կմ):

Բայլական: Ճանապարհի մի ուղեգիծը Վարդանակերտի, իսկ մյուսը՝ Դարմանի մոտ, անցնում էր Երասխը և շարժվում Բայլական: Վերջինը գտնվել է այժմ Օրենկալա կոչվող ավերակների տեղում[1]: Բայլականի և Պարտավի միջև հեռավորությունը կազմում էր 14 փարսախ (մոտ 81 կմ): Այս հեռավորությունը համապատասխանում է ալ-Իսթախրիի և Իբն Հաուկալի տեղեկություններին, ըստ որոնց՝ Բայլականից Յունանով Պարտավ ընթացող ճանապարհահատվածի երկարությունը 14 փարսախ էր: Ուստի և կարծում ենք, որ Իբն Խորդադբեհի հիշատակած Բայլական-Պարտավ 14 փարսախ երկարությամբ ճանապարհահատվածը համապատասխանում է մյուս հեղինակների Բայլական-Յունան-Պարտավ ճանապարհահատվածին, միայն անվանապես բացակայում է Յունանը:

Յունան: Այս կայարանի մասին Յակուտը հաղորդում է, թե այն մի վայր էր Պարտավի և Բայլականի միջև՝ վերջիններիցս 7-ական փարսախ հեռավորության վրա[2]: Այն, ըստ Իբն Հաուկալի՝ գյուղ էր[3]: Սակայն, արաբ աշխարհագետների երկերում այն հազվադեպ է հիշվում և, այն էլ, միայն կապված Վարդանակերտ-Պարտավ ճանապարհահատվածի հիշատակության հետ: Յունանն ալ-Իսթախրիի երկի Բեռլինյան ձեռագրերում ունի Ուման (ومان), Գոտանյանում՝ Տուման և Տուբան (تومان և توبان)[4], իսկ Իբն Հաուկալի երկում՝ Մուվյան գյուղ (قرية مويان)[5] տարբերակ-

---

[1] Տե՛ս **К. Тревер**, նշվ. աշխ., էջ 265-266: Տե՛ս նաև «БСЭ», т. 18, էջ 505:
[2] Տե՛ս **Jacut,** IV, էջ 1044:
[3] Տե՛ս **Ibn Haukal**, 349:
[4] Տե՛ս **al-Istakhri,** էջ 192, ծանոթ. c.
[5] Տե՛ս **Ibn Haukal**, 349:

ները, որոնք բարդացնում են Յունանի տեղադրությունը: Սակայն, Յունանը պետք է գտնվելիս լիներ Պարտավից ու Բայլականից հավասարաչափ՝ 7-ական փարսախ (մոտ 41կմ) հեռավորության վրա, որն էլ նախատեսում է Յունանի տեղադրությունը Բայլականից Պարտավ կես ճանապարհին: Փաստորեն, մեծ հավանականություն ունի Յունանի տեղադրությունն Աղդամ բնակավայրի մոտակայքում[1]: Հավանական է Ն. Կարաուլովի տեղադրությունը Դեյրան գյուղի տեղում՝ կապված Օրենկալայից այստեղով Պարտավ անցնող բարեկարգ ճանապարհի առկայության հետ[2]: Յունանից հետո ճանապարհը շարժվում էր Պարտավ, որի ավերակները գտնվում են ներկայիս Բարդա քաղաքի մոտ[3]:

Մանսուր: Ըստ Իբն Խորդադբեհի՝ ճանապարհը Պարտավից հետո ուներ ևս մեկ կայարան, որը կոչվում էր Մանսուր և գտնվում էր Պարտավից 4 անցում հեռավորության վրա: Քանի որ մեկ անցումը(մեկ օրվա ճանապարհ) հավասար էր 5-7 փարսախի[4], ուստի և Մանսուր կայարանը գտնվելու էր Պարտավից 20-28 փարսախ կամ մոտ 115-160կմ հեռավորության վրա: Այսպիսի մեծ հեռավորությունը, ինչպես նաև այն իրողությունը, որ Մանսուր կայարանը հիշատակվում է միայն Իբն Խորդադբեհի և Կուդամայի կողմից, անհնար է դարձնում Մանսուր կայարանի ճշգրիտ տեղադրությունը: Հայտնի է, որ խալիֆա Մուտավաքիլի օրոք վերականգնված Շամքորը վերանվանվեց նրա անունով և դարձավ Մուտավաքքիլիա[5]: Հետևաբար, Մանսուր պետք է կոչվեր այն քաղաքներից կամ ամրություններից մեկը, որոնք վերակառուցվել էին Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք (754-775)՝ խազարների ավերիչ արշավանքից հետո[6]:

Այսպիսով՝ ճանապարհն Արտավետից դեպի հյուսիս-արևմուտք անցնում էր Կասպիական դռներով ու Բարզանդ գետի ափով շարժվելով դեպի հյուսիս՝ հասնում էր ճանապարհի Բարզանդ կայարանը, որից հետո, արևելքից շրջանցելով ներկայիս Խորուզլու դաղ լեռնաշղթան, իջնում էր Երասխի հովիտ՝ Վարդանակերտ[7]: Այս ճանապարհն արաբական տիրապետության ժամանակաշրջանում գտնվում էր բարեկարգ

---

[1] Տե՛ս **Թ. Հակոբյան** և ուրիշներ, ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 464:

[2] Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

[3] Տե՛ս **Թ. Հակոբյան,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 236:

[4] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 29, էջ 59, ծանոթ. 21:

[5] Տե՛ս **Ibn al-Fakih**, էջ 293:

[6] Տե՛ս يعقوبي, II, էջ 372:

[7] Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 118 պլանշետը:

վիճակում, քանի որ այն, Ջորա պահակով անցնող ճանապարհի հետ միասին, այն հիմնական ուղին էր, որով Արմինիայի վաճառականներն առևտրական հարաբերություններ էին պահպանում խալիֆայության մյուս շրջանների հետ[1]: Բացի այդ, այս ճանապարհն արաբների համար կարևոր նշանակություն ուներ այն պատճառով, որ դրանով էին արաբական զորքերն հաճախակի արշավում դեպի Խազարական թագավորություն:

Պարտավ-Տփղիս ճանապարհը: Ըստ Իբն Խորդադբեհի՝ այս ճանապարհի երկարությունը 10 անցում էր(մոտ 300-400կմ): Ալ-Իսթախրին այս ճանապարհը ներկայացնում է հետևյալ տեսքով. «...Բարդայից մինչև Ջանզա քաղաք 9 փարսախ է և Ջանզայից մինչև Շամքուր՝ 10 փարսախ, Շամքուրից մինչև Խունան քաղաք 21 փարսախ է և Խունանից մինչև Կալա իբն Քանդաման՝ 10 փարսախ, Կալայից մինչև Տիֆլիս 12 փարսախ է»[2]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, թե Պարտավից մինչև Գանձակ մեկ անցում է, Գանձակից Շամքոր՝ նույնքան, այնտեղից մինչև Խունան երեք անցում է, Խունանից մինչև Կալա իբն Քանդաման՝ մեկ անցում, իսկ վերջինից մինչև Տփղիս՝ երկու անցում[3]:

Սկզբից ևեթ պետք է նշել, որ այս ճանապարհի կայարանների միջև ալ-Իսթախրիի նշած հեռավորությունները մեծավ մասամբ իրականությանը չեն համապատասխանում, չնայած, որ հարթ տեղանքի պատճառով թվում է, թե սխալներ չպետք է լինեին: Չնայած, որ Պարտավից Գանձակ (Ջանզա) հեռավորությունը շուրջ երեք անգամ ավելի է Գանձակից Շամքոր (Շամքուր) ճանապարհահատվածի երկարությունից, առաջին հեռավորությունն արաբ աշխարհագետը ներկայացնում է երկրորդից պակաս:

Գանձակ: Գանձակը՝ ներկայիս Գյանջան[4], գտնվում է Պարտավից մոտ 85կմ հեռավորության վրա: Այսինքն՝ ալ-Իսթախրիի նշած 9 փարսախ հեռավորությունը (մոտ 52կմ) Պարտավի և Գանձակի միջև չի համապատասխանում իրականությանը: Իրականությանն ավելի մոտ է Յակուտի հաղորդած տեղեկությունը, ըստ որի՝ այդ հեռավորությունը հավասար էր 16 փարսախի (մոտ 93կմ)[5]:

---

[1] Հաշվի առնելով այն իրողությունը, որ արաբների մղած անընդհատ պատերազմների հետևանքով դեպի արևմուտք և դեպի հյուսիս ընթացող առևտրական ճանապարհները հիմնականում կորցրել էին իրենց դերը:

[2] Al-Istakhri, էջ 193:

[3] Տե՛ս Al-Moqaddasi, էջ 382:

[4] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 237:

[5] Տե՛ս Jacut, II, էջ 132:

Շամքոր: Ավերակները գտնվում են Շամքոր գետի ձախ ափին՝ երկաթուղու երկու կողմերում[1]: Շամքորը գտնվում էր Գանձակից մոտ 35կմ հեռավորության վրա, որը չի համապատասխանում ալ-Իսթախրիի հիշատակած 10 փարսախ (մոտ 58կմ) հեռավորությանը: Ավելի ճիշտ է ալ-Մուկադդասիի նշած 1 անցում հեռավորությունը, որը, ինչպես նշվեց, կազմում էր 5-7 փարսախ (մոտ 30-40կմ): Հաշվի առնելով այն իրողությունը, որ Իբն Խորդադբեհն իր «Գիրք ճանապարհների և թագավորությունների [մասին]» աշխատությունը գրել է մոտ 846-847թթ.[2], այնտեղ Պարտավ-Տփղիս ճանապարհի վրա Գանձակ և Շամքոր քաղաքների հիշատակության բացակայությունը մենք բացատրում ենք այն իրողությամբ, որ Գանձակը կառուցվել է 840-ական թթ. երկրորդ կեսին, ավելի ճիշտ 846 թ.[3], իսկ Շամքորն էլ վերակառուցվել է 850-ական թթ. սկզբին՝ Բուղայի կողմից[4]:

Խունան: Պարզաբանելով, որ Պարտավից Գանձակ հեռավորությունը 16 փարսախ էր, իսկ Գանձակից Շամքոր՝ 7 փարսախ, մենք կարող ենք անցնել Խունան կայարանի տեղադրության խնդրին, որն արաբ աշխարհագետները հիշատակում են նաև Կալա ատ-Տուրաբ կամ Հողի բերդ անունով[5]: Փորձենք սկզբում պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք նույնական էր արաբ հեղինակների Խունանը հայ պատմիչների Հունարակերտի հետ[6]: Այս պարագայում կարևոր կռվաններից մեկն արաբական և հայկական աղբյուրների հիշատակած հեռավորությունների համեմատությունն է: Հաշվի առնելով այն իրողությունը, որ, ըստ վերոնշյալ պարզաբանումների, Պարտավից Շամքոր հեռավորությունը պետք է կազմեր շուրջ 23 փարսախ (մոտ 130կմ), իսկ Հունարակերտից Պարտավ հեռավորությունը, ըստ «Մղոնաչափք»-ի՝ հավասար է 100 մղոնի (մոտ 190կմ)[7], Խունան-Հունարակերտ նույնացման դեպքում Խունանը պետք է գտնվեր Շամքորից մոտ 60կմ հեռավորության վրա: Շամքորից Խունան ալ-Իսթախրիի նշած 21 փարսախ հեռավորությունը, հաշվի առնելով ալ-Իսթախրիի երկի պարսկական տարբերակում

---

[1] Տե՛ս **Մ. Բարխուտարեանց,** Արցախ, էջ 55-56:

[2] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 32, էջ 2:

[3] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 331:

[4] Տե՛ս بلاذري, I, էջ 240, **Ibn al-Fakih,** էջ 293:

[5] Տե՛ս **Jacut,** II, էջ 474, **al-Istakhri,** էջ 189, ծանոթ. c (Խունանի այդ անվանումը պահպանվել է հեղինակի երկի Գոտանյան ձեռագրում):

[6] Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 63: Նման տեսակետ է արտահայտում նաև Մարկվարտը: Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 175: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Գ, Ե., 1977, էջ 104:

[7] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381: Մեկ մղոնը հավասար է 1917,6 մ-ի (տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ., էջ 185):

պահպանված նույն հեռավորության 11 փարսախ նշումը[1], պետք է համարել տեքստային թերություն: Իբն Հաուկալը, որը մեծապես օգտվել է ալ-Իսթախրիի երկից, հավաստում է, որ Շամքորից Խունան հեռավորությունը 11 փարսախ էր (մոտ 64 կմ)[2], որը համապատասխանում է «Մղոնաչափք»-ի և ալ-Իսթախրիի հիշատակությունների համեմատությունից առաջացող հեռավորությանը: Մեր կարծիքով, Խունան-Հունարակերտ նույնությունն ապացուցող հիշատակություններ է պահպանել Ստեփաննոս Օրբելյանը: Սյունյաց պատմիչը Հունարակերտ և Խունան անունները հիշատակում է՝ կապված տարբեր ժամանակներում այդ ամրոցի՝ հայերի կամ վրացիների կողմից այսպես կամ այնպես անվանվելու հետ: Այսպես. պատմիչը սկզբում հաղորդում է, թե ինչպես է Վաղարշակ թագավորը ընտրում մի ոմն Առանի ու կարգում «նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յերասխայ մինչև ցՀունարակերտ»[3], իսկ հետո, ավելի ուշ շրջանի հիշատակությունների մեջ, խոսելով այն մասին, թե ինչպես է Հայկի եղբայր Քարթլոսը գալիս Վիրք, հաղորդում է, որ «անուանեցաւ աշխարհն այն (իմա՛ Վիրքը-Ա.Ե.) ի Խունանայ մինչև ի ծովն Սպերոյ յանուն նորա Քարթլ»[4]: Մեր կարծիքով, այս վերջին տեղեկությունը նա քաղել է վրաց աղբյուրից և նույնիսկ հարկ չի համարել ճշտել Խունանի հայերեն տարբերակը: Որ վերջինս համապատասխանում էր Հունարակերտին, ապացուցում է թեկուզ այն, որ Խունանը, ըստ այդ հաղորդման, պետք է սահմանների հատման հայտնի կետ լիներ, իսկ հայտնի է, որ Հունարակերտը գտնվում էր Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների սահմանագլխին[5]: Ըստ երևույթին՝ արաբական տիրապետության և հետագա շրջանում Հունարակերտը վրացիների կողմից անվանվում էր Խունան, իսկ հայկական սկզբնաղբյուրներում շարունակում կոչվել իր սկզբնական անունով[6]: Մեր կարծիքի ապացույցն է նաև այն, որ ըստ «Հուդուդ ալ-ալամ»-ի՝ Խունանը գտնվում էր Կուր գետի ափին՝ Հայաստանի(Գուգարք) և Առանի(Հայոց Արևելից կողմեր) սահմանին[7]: Խունանի մասին այս հաղորդումը, որը հիշեցնում է հայկական սկզբնաղբյուրներում Հունարակերտի վերաբերյալ տեղեկությունները[8], այնքան հստակ է, որ համարյա կասկած չի թողնում Խունան-

---

[1] Տե՛ս **al-Istakhri,** էջ 193, ծանոթ. d:
[2] Տե՛ս **Ibn Haukal,** էջ 350:
[3] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 16:
[4] Անդ, էջ 369:
[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 63:
[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164:
[7] Տե՛ս **Hudud al-Alam,** էջ 144:
[8] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 164, **Մովսես Խորենացի**, էջ 126-128:

Հունարակերտ նույնության խնդրում:

Փաստորեն, նույնացնելով Խունանը Հունարակերտին և պարզաբանելով, որ այն գտնվում էր Շամքորից մոտ 60-65կմ հեռավորության վրա՝ կարևոր է պատասխանել ևս մեկ հարցի. ուսումնասիրողներից ոմանք Հունարակերտը տեղադրում են Կուր գետի աջ ափին՝ Խրամ գետի գետաբերանի մոտակայքում[1]: Սակայն, դեռևս XIX դարում Ս. Ջալալյանցն իր կատարած ճանապարհորդության ժամանակ եկել էր այն համոզման, թե Հունարակերտը գտնվել է Աղստև գետի ձախ ափին, և համապատասխանել է նրա գետաբերանի շրջանում գտնվող ավերակներին[2]: Նման եզրահանգնման հիմք է տալիս նաև այն, որ, ըստ «մղոնաչափք»-ի և արաբական աղբյուրների հիշատակած հեռավորությունների համեմատության, հենց այդտեղ՝ Շամքորից շուրջ 60-65կմ հեռավորության վրա, պետք է գտնվեր Խունան-Հունարակերտը: Դատելով այն փաստից, որ 450-451թթ. Վարդանանց պատերազմի ժամանակ արդեն Գուգարքը, որպես առանձին բդեշխություն, մտցված էր Վրաց[3], իսկ Մեծ Հայքի Ուտիք աշխարհի մի հատվածը՝ Աղվանից մարզպանության մեջ[4], ինչպես նաև Եղիշեի այն վկայությունից, որ այդ պատերազմի ժամանակ վերոհիշյալ մարզպանությունների սահմանը (սահմանը այդ մարզպանությունների կազմում գտնվող Գուգարքի և Ուտիքի միջև) անցնում էր Խաղխաղ քաղաքի մոտակայքով[5], այսինքն՝ Աղստև գետով, քանի որ Խաղխաղը գտնվում էր Աղստև գետի աջ ափին[6], ապա, փաստորեն, Հունարակերտը, որը նույնպես գտնվում էր այդ սահմանի հարևանությամբ, պետք է փնտրել հենց Աղստև գետի ափին: Հունարակերտը պետք է գտնվեր Աղստև գետի ձախ ափին,

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ.աշխ., էջ 63: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Գ, էջ 194: Հետագա քննությունը մեզ բերում է այն համոզման, որ այդտեղ գտնվել է ոչ թե Խունան-Հունարակերտը, այլ նրան հաջորդող Կալա իբն Քանդաման կայարանը:

[2] Տե՛ս **Ս. Ջալալյանց**, նշվ. աշխ., էջ 388, և Բ. Հարությունյան, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 187-188:

[4] Պետք է նշել, որ Ուտիք աշխարհի մի մասը՝ Խաղխաղ քաղաքով, Աղվանից մարզպանությանն էր միացվել, թերևս, 428 թ. (տե՛ս Եղիշե, էջ 150: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան,** Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին,-«ԲԵՀ», 1976, թիվ 2, էջ 89): Ուտիքի մնացած հատվածը և Արցախն Աղվանից մարզպանությանը միացվեցին ավելի ուշ՝ 450-451 թթ. ապստամբությունից հետո(անդ):

[5] Եղիշե, էջ 150.«[Սեբուխտը] փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն, և պատահէր նմա (իմա՛ Վարդանին-Ա.Ե.) մերձ ի սահմանս Վրաց (իմա՛ Վրաց մարզպանության-Ա. Ե.) հանդէպ Խաղխաղ քաղաքի»:

[6] Տե՛ս **С. Еремян**, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana,-«Вестник древней истории», 1939, թիվ 1, էջ 85:

քանի որ այն Գուգարքի մաս էր կազմում[1]: Գալով Խունանի վերոնշյալ Կալա ատ-Թուրաբ (Հողի բերդ) անվանմանը՝ նշենք, որ այն, ամենայն հավանականությամբ, Խունան-Հունարակերտին վերագրվել է սխալմամբ, ինչն էլ առիթ է հանդիսացել վերջինիս տեղադրությանը Տավուշ (այժմ՝ Թոուզ-չայ) գետի գետաբերանի շրջանում՝ Թոփրաղ կալա (Հողի բերդ) վայրում[2]: Ըստ երևույթին, Թոփրաղ կալան, որ գտնվում է Տավուշ գետի ձախ ափին, գոյություն է ունեցել նաև արաբական տիրապետության շրջանում, ինչի ապացույցն են այնտեղ գտնված արաբական դրամները[3], և արաբ հեղինակներն այն շփոթել են Խունան-Հունարակերտի հետ:

Կալա իբն Քանդաման: Այս կայարանը, որը, ըստ ալ-Իսթախրիի՝ գտնվում էր Խունանից 10 փարսախ (մոտ 58կմ) և Տփղիսից 12 փարսախ (մոտ 70կմ) հեռավորության վրա, Ս. Երեմյանը տեղադրում է ներկայիս վրացական Գարդաբան քաղաքի տեղում, իսկ Մարկվարտը՝ Կուր և Խրամ գետերի ջրկիցի մոտ, Կըզ-Կալա ամրոցի ավերակների տեղում, հին վրացական Գարդաբան երկրամասում[4]: Այսինքն՝ երկու ուսումնասիրողներն էլ այդ անվանումը կապում են վրացական Գարդաբան անվան հետ: Մենք ընդունում ենք Քանդաման անվան կապը Գարդաբանի հետ, ինչի օգտին է խոսում այդ անվանումների արաբերեն գրելաձևերի նմանությունը (كندمان-كردبان): Նմանապես, Մարկվարտի տեղադրության օգտին են խոսում Խրամ գետի վրա հին կամուրջների հետքերը և իջևանատները[5]: Այստեղով էր անցնում մեծ և բարեկարգ ուղին դեպի Տփղիս, որը ճանապարհորդներին կարծել էր տալիս, թե «աստէն անցեալ կարեն մտանել ուղղակի ի լայնատարած դաշտն... Աղուանից...և գուցէ աստի էր ճանապարհն դէպ յալանս...»[6]:

Այս տեղադրության դեպքում Կալա իբն Քանդամանը գտնվելու էր Խունանից շուրջ 35կմ հեռավորության վրա: Նման պարագայում իրականությանն ավելի մոտ է ալ-Մուկադդասիի նշած 1 անցում(5-7 փարսախ կամ մոտ 30-40կմ) հեռավորությունը: Կալա իբն Քանդամանից ճանապարհը գնում էր Տփղիս, որը հանդիսանում էր Վիրքի կենտրոնը[7]:

Պարտավ-Տփղիս ճանապարհը, փաստորեն, միմյանց էր կապում

---

[1] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 28: Տե՛ս նաև Մովսես Խորենացի, էջ 128:

[2] Տե՛ս **Д. Мусхелишвили**, նշվ. աշխ., էջ 390:

[3] Տե՛ս **Մ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 60:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Զ, էջ 175:

[5] Տե՛ս **Ս. Ջալալյանց,** նշվ.աշխ., էջ 77:

[6] Անդ:

[7] Տե՛ս **Jacut,** I, էջ 857:

Առաջին և Երկրորդ Արմինիաների կենտրոնները: Այն ընթանում էր Կուր գետի աջ ափով և անցնում էր վաճառաշահ Գանձակ և Շամքոր քաղաքներով, որոնց ծաղկումը կապված էր հենց այս ճանապարհի հետ: Վերջին, փաստորեն, անցնում էր ներկայիս Կուր գետի աջ ափով ընթացող ավտոճանապարհի երթուղով:

Պարտավ-Դարբանդ ճանապարհը: Ըստ Իբն Խորդադբեհի՝ Պարտավ-Բաբ ալ-Աբվաբ (Դարբանդ) ճանապարհի երկարությունը 15 անցում էր(մոտ 450-600կմ): Այն ըստ կայարանների հիշատակում է ալ-Իսթախրին. «...Բարդաայից մինչև Բարզանջ 18 փարսախ է և Բարզանջից Կուրի ծանծաղուտով մինչև Շամախիա՝ 14 փարսախ, Շամախիայից մինչև Շարվան 3 օրվա ճանապարհ է և Շարվանից մինչև Աբխազ՝ 2 օրվա ճանապարհ, Աբխազից մինչև Ձիսր Սամուր 12 փարսախ է և Ձիսր Սամուրից մինչև Բաբ ալ-Աբվաբ՝ 20 փարսախ»[1]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, որ Պարտավից Բարզանջ հեռավորությունը կազմում էր մեկ անցում, այնտեղից մինչև Շամախի՝ երկու անցում, վերջինից մինչև Շիրվան՝ երեք անցում, Շիրվանից մինչև Աբխազ՝ երկու անցում, Աբխազից մինչև Ձիսր Սամուր՝ նույնքան, այնտեղից մինչև Դարբանդ՝ երեք անցում[2]:

Բարզանջ (Բարդիջ): Հնուց ի վեր Պարտավից դեպի Շամախի գոյություն ունեին երկու մեծ ճանապարհներ: Մեկը համապատասխանում է ներկայիս Եվլախով ընթացող ավտոճանապարհին, իսկ մյուսն արաբ հեղինակների հիշատակած ճանապարհն է, որը Պարտավից իջնում էր դեպի հարավ՝ Բարզանջ: Որ վերջինը գտնվում էր Պարտավից Կուր գետի հոսանքով դեպի ներքև, ապացուցում են արաբ աշխարհագետների հիշատակությունները: Յակուտը, օրինակ՝ խոսելով Կուր գետի մասին, հաղորդում է, որ այն անցնում էր Տփղիս քաղաքի կողքով, ապա անցնում Խունան բերդի մոտակայքով, այնտեղից հոսում Պարտավի դռան մոտով, հասնում Բարզանջ և միախառնվում Երասխի հետ[3]: Նախ, անդրադառնալով Պարտավից Բարզանջ հեռավորությանը՝ նշենք, որ արաբ աշխարհագետներն այն հիշատակում են տարբեր կերպ. Իբն Հաուկալն, օրինակ՝ հետևելով ալ-Իսթախրիին, մեջ է բերում 18 փարսախ հեռավորությունը[4], ալ-Մուկադդասին, ինչպես տեսանք, նշում է 1 անցում, Յակուտ ալ-Համավին մի դեպքում այն հավասա-

---

[1] Al-Istakhri, էջ192:
[2] Տե՛ս al-Moqaddasi, էջ 381:
[3] Տե՛ս Jacut, IV, էջ 259:
[4] Տե՛ս Ibn Haukal, էջ 350:

րեցնում է 13 փարսախի[1], իսկ մեկ այլ դեպքում, հենվելով ալ-Իսթախրիի տեղեկության վրա՝ 18 փարսախի[2]:

Պարտավ-Բարզանջ հեռավորության վերաբերյալ հիշատակությունների այսպիսի բազմազանության պարագայում Բարզանջի տեղադրության խնդիրը բարդանում է: Բացի այդ, արաբ հեղինակները Բարզանջի հարևանությամբ հիշատակում են նաև Բարդիջ քաղաքը: Ըստ Յակուտի՝ այդ երկու քաղաքները պետք է գտնվեին Պարտավից դեպի հարավ-արևելք, դրանից համապատասխանաբար 13 և 14 փարսախ հեռավորությունների վրա՝ Կուր գետի ափին[3]: Այսինքն՝ Բարզանջն ու Բարդիջը միմյանցից 1 փարսախի (մոտ 6 կմ) հեռավորության վրա էին գտնվում: Ս. Երեմյանը Բարզանջը տեղադրում է ներկայիս Զարդոբ քաղաքի մոտ գտնվող գետանցի մերձակայքում[4], իսկ Վ. Մինորսկին առաջարկում է Բարզանջը նույնացնել Բարդիջին, իսկ վերջինը փնտրել Պարտավից ոչ թե 18 փարսախ, այլ սոսկ 1 անցում (5-7 փարսախ) հեռավորության վրա՝ հիմնվելով ալ-Մուկադդասիի հիշատակության վրա: Վերջապես, նա Բարդիջը տեղադրում է Պարտավից 34 կմ դեպի հարավ-արևելք՝ ներկայիս Քյորփի Քենդ բնակավայրի դիմաց՝ Կուր գետի աջ ափին[5]:

Չնայած, որ ճիշտ է Մինորսկու կողմից Բարզանջի նույնացումը Բարդիջին, ինչպես կտեսնենք, հիշյալ տեղադրություններից և ոչ մեկը քննություն չի բռնում: Արաբ հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունը տալիս է մի կարևոր արդյունք. նրանցից յուրաքանչյուրը հիշատակում է այդ երկու քաղաքներից միայն մեկը[6], իսկ Յակուտը, որը տեղեկություններ է քաղել իրենից առաջ եղած բոլոր հեղինակներից, նշում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Այնպես որ, ամենայն հավանականությամբ, այս երկու անվանումները վերաբերում են նույն քաղաքին: Դրա օգտին է խոսում այդ անվանումների արաբերեն գրելաձևերի նմանությունը (برزنج-بردیج): Կարծում ենք, որ Բարզանջը Բարդիջի աղավաղումն է, քանի որ հավանական է Բարդիջ անվանման նույնացումը

---

[1] Տե՛ս **Jacut,** I, էջ 562:

[2] Անդ, III, էջ 317:

[3] Տե՛ս **Jacut**, I, էջ 556, 562:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ:

[5] Տե՛ս **Hudud al-Alam,** էջ 403:

[6] Ինչ վերաբերում է ալ-Իսթախրիին, որը հիշատակում է 2 քաղաքները, ապա պետք է նշել, որ դրա պատճառը, թերևս, տեքստային թերությունն է և, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե տեքստում առկա է եղել միայն մեկ անվանում (տե՛ս **al-Istakhri,** էջ 187, ծանոթ. c):

հայկական Բերդիկ անվանը[1]: Բարդիջը, ըստ Յակուտի՝ գտնվում էր Ատրպատականի ոստիկանության սահմանագլխին Արմինիայի կողմից, որտեղից մինչև Պարտավ 14 փարսախ էր[2]: Այս հիշատակության մեջ կարևորն այն է, որ, հիշատակելով Պարտավից Բարդիջ հեռավորությունը, Յակուտը, փաստորեն, ակնարկում է այդ երկու քաղաքների միջև ճանապարհի գոյության մասին, ինչի հիշատակությունը մյուս արաբ հեղինակները չեն պահպանել: Այս ճանապարհի առկայությունը Բարզանջ-Բարդիջ նույնացման կարևոր կռվաններից մեկն է: Բացի այդ՝ արաբ հեղինակի հիշատակությունը, թե Բարդիջը գտնվում էր Ատրպատականի ոստիկանության սահմանին, գալիս է հերքելու վերոբերյալ բոլոր տեղադրությունները: Մասուդիի վկայությունը հաստատում է այդ իրողությունը: Կուր գետի մասին պատմելիս նա հաղորդում է, թե վերջինը հոսում է Պարտավից 3 փարսախ հեռավորության վրա, ապա անցնում է Բարդիջի(արաբ աշխարհագետի երկում՝ Բարդաջ) կողքով, որը Պարտավի(Առան) շրջաններից մեկն է, որից հետո՝ միախառնվում է Երասխի հետ[3]: Իսկ Իբն Ռուստեհը, խոսելով Երասխ գետի մասին, վկայում է, թե այն «հոսում է Վարսանի մոտով դեպի Բարդիջ քաղաքը, իսկ նրանից այն կողմ միախառնվում է Կուրի հետ»[4]:

Ըստ վերոհիշյալ հաղորդումների՝ Բարդիջը պետք է գտնվելիս լիներ Կուրի և Երասխի միջև, անմիջապես մոտ այն տեղին, ուր երկու գետերը միախառնվում են: Այդ է ցույց տալիս նաև Բալազուրիի այն հիշատակությունը, որտեղ հեղինակը, նկարագրելով Սալման իբն Ռաբիայի կողմից Հայոց Արևելից կողմանց գավառների նվաճումը, պատմում է, որ նա գալիս, հասնում է Կուրի և Երասխի ջրկիցի շրջանը, որտեղ Բարդիջի մոտակայքում նա անցնում է Կուրը[5]: Կուր և Երասխ գետերի միջև՝ դրանց ջրկիցի մոտակայքում, կար մի բնակավայրի ավերակ[6], որը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Բարդիջ քաղաքին, իսկ քաղաքում կամ նրա մերձակայքում գտնվել է կայարանը[7]:

Շամախի: Բարդիջի մոտ՝ Կուրի վրա, կար մի կամուրջ, որի վրայով

---

[1] Տե՛ս **Հ. Նալբանդյան**, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 35:

[2] Տե՛ս **Jacut**, I, էջ 556:

[3] Տե՛ս مسعودي, էջ 205-206:

[4] Ibn **Rosteh**, էջ 89:

[5] Տե՛ս بلاذري, I, էջ 240:

[6] Տե՛ս **Ս. Ջալալյանց**, նշվ.աշխ., էջ 364:

[7] Տե՛ս The map of Adharbaydjan,-The Encyclopaedia of Islam, CD-ROM edition, v.1.0 1999 Koninklijke Brill NV, Leiden, The Netherlands, I:189b.

ճանապարհը շարժվում էր Շամախի[1]: Բարդիջ-Շամախի ճանապարհահատվածի երկարության վերաբերյալ արաբ աշխարհագետների հաղորդումները համընկնում են: Իբն Հաուկալը ևս այս հեռավորությունը նշում է 14 փարսախ(շուրջ 81կմ)[2], իսկ ալ-Մուկադդասին՝ 2 անցում, որը հավասար էր 14 փարսախի: Ինչպես վերը նշվեց, հեռավորության նույն չափը նշում է Յակուտը: Ավելորդ չէ նշելը, որ այս հեռավորությունը համապատասխանում է Բարդիջի վերոհիշյալ տեղադրության և հին Շամախու, որը գտնվում էր ներկայիս Շամախի քաղաքից 1,5կմ դեպի հյուսիս արևմուտք[3], միջև հեռավորությանը (մոտ 80 կմ):

Շապորան: Շամախուց հետո ալ-Իսթախրիի հիշատակած հաջորդ կայարանը Շիրվանն էր, որը գտնվում էր ներկայիս Շիրվան գյուղի տեղում՝ Շաբրան-չայի ձախ ափին[4]: Նրանից դեպի հյուսիս-արևմուտք՝ նույն գետի աջ ափին, գտնվում էր Շապորանը (այժմ՝ Շաբրան գյուղ)[5]: Պետք է նշել, որ Յակուտը Շիրվանի փոխարեն այս ճանապարհի վրա հիշատակում է Շապորանը[6]: Ուսումնասիրողներից Ս. Երեմյանը ճանապարհի երթուղին տանում է միաժամանակ և՛ Շիրվանով, և՛ Շապորանով[7], որն ընդունելի տարբերակ է՝ կապված այդ երկու քաղաքների՝ միմյանց բավական մոտ գտնվելու փաստի հետ: Սակայն, ճիշտը թերևս, Շապորան տարբերակն է, քանի որ նույնիսկ ավելի ուշ՝ XVIII դարում, Ղուբայից Շամախի գնացող ճանապարհն անցնում էր հենց Շապորանով[8]:

Գալով Շամախուց Շապորան հեռավորությանը՝ պետք է նշել, որ այս հարցում արաբ աշխարհագետների հաղորդումները համընկնում են. կրկնելով ալ-Իսթախրիին՝ Իբն Հաուկալը նշում է, որ Շիրվանը (պետք է լինի Շապորան) գտնվում էր Շամախուց 3 օրվա ճանապարհ հեռավորության վրա, նույն հեռավորությանը նշում են նաև արաբ հեղինակներ ալ-Մուկադդասին և Յակուտը[9]: Այստեղ հարկ է կրկին հիշել, որ

---

[1] Տե՛ս **Jacut**, I, էջ 562:

[2] Տե՛ս **Ibn Haukal**, էջ 350:

[3] Տե՛ս **С. Атурбейли**, նշվ. աշխ., էջ 39-40:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 74: Տե՛ս նաև գրքին կից «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» քարտեզը:

[5] Անդ, էջ 73: Տե՛ս նաև ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի И. 7. պլանշետը:

[6] Տե՛ս **Jacut**, III, էջ 317:

[7] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, նույնի՝ Մարզպանական Հայաստանը և հարևան երկրները 387-628 թթ., քարտեզ, Ե., 1980:

[8] Տե՛ս **Ф. Симонович,** Описание южного Дагестана (1796),-«История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 154-155:

[9] Տե՛ս **Jacut**, III, էջ 317:

արաբները ճանապարհների երկարությունները չափում էին մեկ օրում կենդանու անցած ճանապարհով և, այդ է պատճառը, որ լեռնային շրջաններում ճանապարհը նրանց թվում էր ավելի երկար, քան կար իրականում: Այս պատճառաբանությամբ էլ արդարանում է Շամախուց Շապորան արաբ աշխարհագետների հիշատակած մեծ հեռավորությունը:

Շամախուց Շապորան գնում էր մեկ հիմնական ճանապարհ, որն, անցնելով Կովկասյան լեռները, ճյուղավորվում էր: Այն Շամախուց սկզբում շարժվում էր դեպի արևելք՝ Ղուրտ-Բուլաղ, այնտեղից շարժվելով հյուսիս՝ անցնում էր ներկայումս Յախար-Բախար կոչվող լեռնանցքով ու հասնում Ալթըաղաչ գյուղը[1]: Ալթըաղաչից ճանապարհը բաժանվում էր երկու մասի. մի ճյուղն Աթա-չայ գետի ափով շարժվում էր դեպի հյուսիս-արևելք, միանում ներկայիս երկաթուղու ճանապարհին և նրա երթուղով հասնում Շապորան, իսկ մյուսը՝ հաղթահարելով Կարատիքենդյան լեռները, ընթանում էր Վերին Ղուշչի գյուղի արևելակողմով, ապա, անցնելով Գելգենի-չայ գետը, շարժվում էր դեպի հյուսիս ու մտնում Շապորան[2]:

Աբխազ: Ճանապարհը, ինչպես ցույց ենք տվել վերը, Շապորանից Աբխազ էր շարժվում ոչ թե ներկայիս երկաթուղու, այլ ավտոճանապարհի երթուղով, քանի որ այն չէր անցնում Մազքթաց աշխարհով, որը զբաղեցնում էր Շապորանից հյուսիս ընկած ծովափնյա շրջանները, այլ Աբխազով, որը, փաստորեն, գտնվում էր Մազքթաց աշխարհից արևմուտք: Շապորանից Դարբանդ գլխավոր ճանապարհն անցնում էր ներկայիս Ղուբա քաղաքով կամ վերջինիս մոտակայքով, հասնում Խուդաթ գյուղը, որտեղից ճյուղավորվում էր դեպի Կուլարի կամուրջ և դեպի Խազրա գյուղ: Գլխավոր ճանապարհի առավել ընդունելի երթուղին Ղուբայից Խուդաթով դեպի Կուլարի կամուրջ ընթացող ավելի կարճ և մատչելի ճյուղն է[3]: Այնուհետև ճանապարհը շարժվում էր հյուսիս և Դարբանդով մուտք գործում Խազարական թագավորություն:

Աբխազ կայարանի տեղադրությունը բարդանում է՝ կապված արաբ հեղինակների հիշատակած սխալ հեռավորությունների հետ: Այսպես. ալ-Իսթախրին, ինչպես տեսանք, Շիրվանից(պետք է լինի Շապորան) Աբխազ հեռավորությունը նշում է 2 օրվա ճանապարհ(մոտ 60-80կմ), իսկ Աբխազից Ջիսր Սամուր հեռավորությունը՝ 12 փարսախ(մոտ 70կմ),

---

[1] Տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 154:

[2] Անդ, էջ 155:

[3] Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի Ֆ.7. պլանշետը: Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 224:

որն իրականությանը համապատասխանել չի կարող, իսկ ալ-Մուկադդասին այդ հեռավորությունները նշում է հավասարաչափ՝ 2-ական անցում (60-80կմ)[1]: Ըստ էության, չնայած նշված հեռավորությունների ակնհայտ սխալին[2], ուսումնասիրողներին հարկ է եղել Աբխազ կայարանը տեղադրել այնպիսի վայրում, որը, եթե չէր էլ համապատասխանի վերոհիշյալ հեռավորություններին, ապա գոնե կգտնվեր Շապորանից և Ջիսր Սամուրից մոտավորապես հավասար հեռավորությունների վրա: Այդ պատճառով, Աբխազ կայարանը տեղադրվել է Ղուբա քաղաքում կամ նրա մերձակայքում, այսինքն՝ այնպիսի տեղում, որը գտնվում էր Շապորանից Սամուր գետ ճանապարհահատվածի միջնամասում: Ըստ այսմ, պետք է ընդունել, որ ամենահավանականը, իսկապես, կայարանի՝ ներկայիս Ղուբա քաղաքի տեղում կամ մերձակայքում տեղադրությունն է: Սակայն, ավելի կոնկրետացնելով տեղադրությունը, նշենք, որ կայարանը, ամենայն հավանականությամբ, հնում գտնվում էր քաղաքից (իմա՛ նախկինում նրա տեղում գտնվող բնակավայրից) դուրս՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ: Ավելի ուշ շրջանում, երբ Ղուբա քաղաքն ընդարձակվեց, ճանապարհն արդեն անցնում էր քաղաքի միջով: Համենայն դեպս, նույնիսկ XVIII դ. վերջին դեռևս ճանապարհն ընթանում էր քաղաքի մերձակայքով[3]:

Ջիսր Սամուր (Սամուր գետի կամուրջ): Արաբ աշխարհագետների երկերի թարգման Ն. Կարաուլովը Ջիսր Սամուրը նույնացնում է Սամուր գետի ամբարտակի հետ, որի տեղում այժմ պատնեշ է, որտեղով անցնում է երկաթուղին[4]: Իսկ Ս. Երեմյանը Ջիսր Սամուրը նույնացնում է Մազքթաց թագավորության Չողա մայրաքաղաքին[5]: Սակայն, այդ նույնացումների հետ համաձայն չենք, քանի որ, ըստ Շապորանից Դարբանդ ճանապարհի՝ մեր ընդունած հավանական ուղեգծի, Ջիսր Սամուրը պետք է համապատասխաներ Կուլարի կամրջին[6]: Անցնելով կամուրջը՝ ճանապարհը շարժվում էր Դարբանդ, որտեղից էլ անցնում էր Խա-

---

[1] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 381:

[2] Սխալն ակնհայտ է այն պատճառով, որ Աբխազ կայարանի որևէ տեղադրության դեպքում նախորդ և հաջորդ կայարաններից նրա հեռավորությունն այդ չափերով անհնար է (տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 225):

[3] Տե՛ս **Ф. Симонович**, Описание южного Дагестана (1796).-«История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 154:

[4] Տե՛ս **Н. Караулов,** նշվ. աշխ., թիվ 38, էջ 125, և Атлас СССР, Кавказ, карта, Москва, 1985, с. 42.

[5] Տե՛ս **Ս. Երեմյան**, «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, էջ 273, ծանոթ. 118:

[6] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 224:

զարական թագավորություն: Այստեղ հայտնաբերվել են Արմինիայում հատված դրամներ, ինչը կարող էր կապված լինել ինչպես առևտրական հարաբերությունների գոյության, այնպես էլ խազարների կատարած արշավանքների հետ:

Այսպիսով՝ ճանապարհը Կուր գետի աջ ափով իջնում էր հարավ՝ մինչև Կուր-երասխյան ջրկիցը, անցնում գետն ու շարժվում Շամախի: Այստեղից ընթանալով արևելք՝ ճանապարհը Յախար-Բախար լեռնանցքով անցնում էր Կովկասյան լեռները, հասնում Ալթըաղաչ, այնուհետև՝ հաղթահարում Կարատիքենդյան լեռներն ու, ընթանալով Վերին Ղուշչի գյուղի արևելակողմով, շարժվում Շապորան: Շապորանից ներկայիս ավտոճանապարհի երթուղով ընթանալով դեպի հյուսիս՝ ուղիղ Ղուբա քաղաքի արևելակողմով հասնում էր Կուլարի կամրջին, անցնում այն ու շարժվում Դարբանդ: Այնտեղից ճանապարհը շարժվում էր դեպի խազարական Սամանդար մայրաքաղաքը[1]: Սակայն, արաբա-խազարական պատերազմների պայմաններում ճանապարհի՝ Դարբանդից հյուսիս գտնվող հատվածը կորցրել էր իր նշանակությունը:

Պարտավ-Դվին ճանապարհը: Այս ճանապարհի երկարությունը, ըստ Իբն Խորդադբեհի՝ կազմում էր 7 անցում(մոտ 200-280կմ): Ալ-Իսթախրին հաղորդում է. «...Բարդաայից մինչև Կալկաթուս 9 փարսախ է և Կալկաթուսից մինչև Մատրիս՝ 13 փարսախ, Մատրիսից մինչև Դավմիս 12 փարսախ է և Դավմիսից մինչև Քիլ Քույ՝ 16 փարսախ, Քիլ Քույից մինչև Սիսաջան 16 փարսախ է և Սիսաջանից մինչև Դաբիլ՝ 16 փարսախ»[2]: Ալ-Մուկադդասին հաղորդում է, թե Պարտավից մինչև Կալկաթուս հեռավորությունը կազմում էր մեկ անցում(30-40կմ), Կալկաթուսից մինչև Մատրիս՝ երկու անցում, վերջինից մինչև Դավմիս՝ երկու անցում (60-80կմ), Դավմիսից մինչև Քիլաքունի՝ երկու անցում[3]:

Այս ճանապարհի կայարանները ուսումնասիրողների կողմից մեծ հավանականությամբ տեղադրվել են:

Դվին-Պարտավ ճանապարհի մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղվել է Հ. Մանանդյանը[4]:

Կալկաթուս: Կալկաթուսը, ըստ Մարկվարտի և Հ. Մանանդյանի՝ համապատասխանում է Կաղանկատույք գյուղին[5]: Մ. Բարխուդարյան-

---

[1] Տե՛ս al-Istakhri, էջ 227:
[2] Տե՛ս al-Istakhri, էջ 193:
[3] Տե՛ս al-Moqaddasi, էջ 381-382:
[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 175-204:
[5] Անդ, էջ 200-201:

ցը, որը մանրամասնորեն տվել է Արցախ աշխարհի տեղագրությունը, Կաղանկատույքը տեղադրում է Դյուտական գյուղի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում՝ Թալիշ և Մատաղիս գյուղերի միջև[1]: Կաղանկատույքի այդ տեղադրությունն իր աշխատանքում որպես հիմք է ընդունել Հ. Մանանդյանը[2]:

Կաղանկատույքի այդ տեղադրությունը քննություն չի բռնում, քանի որ, գտնվելով Դյուտական գյուղի հարևանությամբ, հիշյալ ավերակները մտնում էին Արցախի մեջ[3], իսկ Կաղանկատույքը գտնվում էր Ուտիքի Ուտի Առանձնակ գավառում՝ վերջինիս և Արցախի միջև սահմանին մոտ՝ Տրտու գետի ափին[4]: Այդ պատճառով ուսումնասիրողներն այժմ Կաղանկատույքը տեղադրում են Ուտիքում՝ ներկայիս Միր-Բաշիր քաղաքի տեղում կամ դրա մերձակայքում(նախկին Թարթառ կայարանը)[5], որը Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակներից մոտ 15կմ հեռավորության վրա է: Միր-Բաշիրը գտնվում է Պարտավից մոտ 25կմ հեռավորության վրա, որը չի համապատասխանում Պարտավի և Կալկաթուսի միջև արաբ հեղինակների նշած հեռավորությանը(մոտ 50կմ): Մինչդեռ, դատելով դաշտային տեղանքից, արաբ հեղինակների սխալն այս դեպքում էական չպետք է լինի: Ուստի և կասկածելի է Կալկաթուսի նույնացումը Կաղանկատույքին: Դրա ապացույցն է նաև այն, որ Կաղանկատույքն արաբերենին համապատասխանեցնելու դեպքում դառնալու էր ոչ թե Կալկաթուս, այլ Կալանկաթուս: Հենց դա էլ նկատել է Հ. Մանանդյանը՝ փորձելով Մարկվարտի օրինակով Կալկաթուսը սրբագրել Կալ[ան]կաթուսի[6]:

Արաբ և ոչ մի հեղինակ չի պահպանել Կալանկաթուս անվանումը, իսկ Կալկաթուսը նրանք հիշատակում են՝ կապված բացառապես Պարտավ-Դվին ճանապարհի հիշատակության հետ: Ամենայն հավանականությամբ, բացի Կաղանկատույքից, կար նաև Կաղկատույք (Կալկաթուս) անունով մի բնակավայր: Կարծում ենք, որ Դյուտականի հարևանությամբ գտնվող ավերակների տեղում տեղորոշվում է ոչ թե Կաղանկատույքը, այլ Կաղկատույքը, որը, ի տարբերություն Կաղանկատույ-

---

[1] Տե՛ս **Մ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 31:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 201:

[3] Տե՛ս **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван,1988, էջ 58-59:

[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 132-133,137:

[5] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, **Ս. Երեմյան**, Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ և այլն:

[6] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 201:

քի, գտնվում էր Արցախում: Խնդիրն այն է, որ Կաղանկատույք անվանումը մինչև հիմա էլ պահպանվել է Դյուտական գյուղի շրջակայքի բնակիչների մեջ[1]: Քանի որ այդ ավերակների տեղում բացառվում էր Կաղանկատույքի գտնվելը, ապա կարծում ենք, որ այդտեղ գտնվել է Կաղկատույք գյուղը, որը հարյուրամյակների ընթացքում շրջակայքի բնակչության մեջ անվան նմանության պատճառով աստիճանաբար սկսել է ընկալվել որպես Կաղանկատույք: Այդտեղից մինչև Պարտավ մոտ 40կմ հեռավորությունն ավելի մոտ է արաբ հեղինակների հիշատակած հեռավորությանը:

Մատրիս: Կաղկատույքից հետո ճանապարհի հաջորդ կայարանը Մատրիսն էր: Վերջինիս մասին Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ այն փոքր քաղաք էր Առանում[2]:

Մատրիսը, ըստ ալ-Իսթախրիի՝ պետք է գտնվեր Կալկաթուս-Կաղկատույքից 13 փարսախ (մոտ 75կմ) հեռավորության վրա: Հ. Մանանդյանն այս կայարանի տեղադրության հարցը լուծել է Մատրիսը (متريس) սրբագրելով Հատրիսի (هتريس), որը հավանական է՝ կապված արաբերեն «م» (մ) և «ه» (h) տառերի հաճախակի շփոթությունների հետ[3]:

Այսպիսի սրբագրումից հետո Հատրիսը կհամապատասխանի հայկական Հաթերք (սեռ. Հաթերից) տեղանվանը[4]: Հ. Մանանդյանը կարծում է, թե այդ անվանումը վերաբերում է գավառին, որտեղ, հատուկ կարավանավայրում, գտնվել է կայարանը[5]: Մեր կարծիքով, Հաթերից գավառի հիշյալ «փոքր քաղաք»-ը հենց գավառի անունով պետք է կոչվեր Հաթերից ավան: Ըստ երևույթին, այն համապատասխանում է հինավուրց Հաթերք գյուղին: Սակայն, հարկ է նշել, որ կայարանը պետք է գտնվելիս լիներ ոչ թե Հաթերք գյուղում, այլ դրանից դեպի հարավ՝ ճանապարհի վրա՝ Տրտու գետի ափին: Հիշյալ 75կմ հեռավորությունը Կալկաթուս-Կաղկատույքի և Հատրիս-Հաթերքի միջև իրականությանը չի համապատասխանում: Այն հավասար է մոտ 30կմ-ի:

Դավմիս: Այս անվանումը Հ. Մանանդյանը պարզաբանում է այս անգամ արդեն արաբերենի «ذ» (զ)-«د» (դ) և «م» (մ)-«ط» (թ) շփոթով, ուստի և հարկ է Դավմիսը (دوميس) սրբագրել Զավթիսի կամ Զաութիսի (ذوطيس), որն էլ կհամապատասխանի հայկական Սոդք անվանը (գրաբարում՝ Սաւդք, սեռ. Սաւդից)[6]: Ճանապարհի այս կայարանի անվանումը

---

[1] Տե՛ս **Ш. Мкртчян**, նշվ. աշխ., էջ 58:
[2] Տե՛ս **Jacut**, IV, էջ 412:
[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:
[4] Անդ, էջ 200:
[5] Անդ:
[6] Անդ, էջ 196-199:

նախորդի նման Հ. Մանանդյանը կապում է համապատասխան գավառի անվան հետ: Ուսումնասիրողն այն կարծիքին է, թե կայարանը պետք է գտնվեր ոչ թե Սեբեոսի հիշատակած «Սաւդայ քաղաքագեւղ»-ում[1], այլ հարակից հատուկ կարավանավայրում[2]:

Քիլ-Քույ: Հ. Մանանդյանը ճիշտ է համարում Մարկվարտին, որը, ինչ-որ «անհայտ» աղբյուրի վրա հենվելով, Քիլ Քույը սրբագրել է Gēlakūnī-ի(Գելաքունի-Գեղաքունի)[3]: Այդ «անհայտ» աղբյուրը, մեր կարծիքով, ալ-Մուկադդասին է, որը պահպանել է այդ անվան «كيلكوني» (Քիլաքունի) տարբերակը[4]: Այս կայարանը, ինչպես նախորդ երկու կայարանները, իր անվանումը ստացել է, թերևս, համապատասխան գավառի անունից, որը գտնվում էր Սոդք գավառի հարևանությամբ[5]: Արգիճի գետի գետաբերանի աջ կողմում գտնվում էր Կոթ գյուղաքաղաքը[6], որտեղից ճանապարհի մի ճյուղը, ըստ «Մղոնաչափք»-ի, Դվին էր գնում Բերդկունքով[7], իսկ մյուս ճյուղն էլ թեքվում էր հարավ և Դվին հասնում Սիսաջան կայարանով: Ուստի և հավանական է, որ հենց այստեղ՝ ճամփաբաժանի վրա, գտնվեր Գեղաքունի կայարանը:

Ճանապարհը Գեղաքունիից Սիսաջան կայարան էր գնում, դատելով լեռնային տեղանքից, Արգիճի գետի ափով ու Սելիմի(Սուլեմա) լեռնանցքով, որի ապացույցն են հին քարավանատների ավերակները նշյալ լեռնանցքում ու նրանից հարավ՝ Աղքենդում[8]: Այնուհետև, հավանաբար, ճանապարհն Արփա գետի ափով հասնում էր Երասխի հովիտ, որտեղ՝ Նախիջևանի սահմանի մոտ, պահպանվել են քարավանատան ավերակներ[9]:

Սիսաջան: Կարևոր ենք համարում ավելի մանրամասն խոսել Սիսաջան կայարանի մասին, քանի որ դրա տեղադրության հարցում հետազոտողների կարծիքները չեն համընկնում: Ն. Կարաուլովը Սիսաջանը տեղադրում էր Բաշ-Նորաշենից ոչ հեռու գտնվող Կիսաջան վայրում[10]: Հ. Մանանդյանը՝ ընդունելով Սիսաջանի տեղադրությունը Կի-

---

[1] Տե՛ս **Սեբեոս**, էջ 88:
[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199:
[3] Անդ, էջ 196:
[4] Տե՛ս **al-Moqaddasi**, էջ 382:
[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 196:
[6] Անդ, էջ 197, քարտեզ:
[7] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381:
[8] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 163-165:
[9] Տե՛ս Важнейшие историко-архитектурные памятники древности и средневековья, карта,-Атлас Азербайджанской ССР, Баку-Москва,1963, с. 206-207.
[10] Տե՛ս Карта Кавказского края, Армении и Азербайджана, составленная Карауловым на основании сведений арабских географов,-СМОМПК, вып. 38, էջ 128.

սաջանի տեղում, կատարել է այն վերապահումը, թե անգամ դրա ընդունելի չլինելու դեպքում Սիսաջանը պետք է գտնվեր Շարուրից Վայոց ձոր տանող ճանապարհահատվածում, իսկ որ առավել հավանական է՝ Բաշ-Նորաշենից Արփա ընթացող գծամասում: Ըստ Հ. Մանանդյանի՝ Սիսաջան կայարանն իր անունը ստացել էր համապատասխան երկրամասի՝ Սիսականի (Սյունիք) անվանումից[1]:

Թ. Հակոբյանը նույնպես կայարանի անվանումը կապում է Սյունիք աշխարհի անվան հետ, և այն տեղադրում է Արենի գյուղի տեղում[2]:

Սիսաջան կայարանի կարաուլովյան տեղադրությունը Կիսաջան վայրում խոչընդոտների է հանդիպում: Նախ արաբ հեղինակների հիշատակած հեռավորություններին ճանապարհի Շարուրի դաշտ-Դվին հատվածում կարելի է վստահել հարթ տեղանքի պատճառով, իսկ այդ դեպքում առաջ է գալիս հեռավորությունների անհամապատասխանություն. Կիսաջանից մինչև Դվին 70-75կմ է, իսկ, ըստ ալ-Իսթախրիի՝ Սիսաջան-Դվին հեռավորությունը 16 փարսախ էր (մոտ 93կմ): Մյուս կարևոր առարկությունն այն է, որ Սիսաջանը չեն հիշում հայկական սկզբնաղբյուրները: Հ. Մանանդյանի պես ենթադրել, թե Սիսաջանը սոսկ քարավանատուն է եղել, ճիշտ չէ, քանի որ արաբ հեղինակներն այն քաղաք են համարում: Իբն Հաուկալը Սիսաջանի մասին հաղորդում է, թե այն հաճելի, միջին մեծության քաղաք է[3]: Իսկ Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ Սիսաջանը մի քաղաք էր Դվինից 16 փարսախ հեռավորության վրա, որը գրավեց Հաբիբ իբն Մասլաման Հայաստանի նվաճման ժամանակ[4]:

Բ. Հարությունյանն ընդգծում է, որ, ըստ արաբ հեղինակների, Դվինից մինչև Սիսաջան հեռավորությունը պետք է կազմեր շուրջ 92կմ, իսկ Կիսաջանից ու Արենիից մինչև Դվին հեռավորությունը դրան չի համապատասխանում: Վայոց ձորում տեղանքն ուսումնասիրելիս հետազոտողը եկել է այն եզրակացության, որ Սիսաջան կայարանը պետք է տեղադրել հինավուրց Վայս ամրոցի շրջակայքում: Վայս ամրոցի ավերակները ներկայումս կոչվում են Վեյսալի ղալասի և գտնվում են Տանձիկ գյուղի մոտակայքում: Բալազուրին Հաբիբ իբն Մասլամայի արշավանքի ժամանակ Սյունիքում հիշում է միայն Վայս ամրոցի նվաճման մասին, հետևաբար Յակուտ ալ-Համավիի տեղեկությունը, թե Հաբիբ իբն

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 194-195:

[2] Մանրամասնորեն տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը (պատմաաշխարհագրական առումով), Ե., 1966, էջ 90-96:

[3] **Ibn Haukal**, էջ 350:

[4] Տե՛ս **Jacut**, III, էջ 216:

Մասլաման գրավեց Սիսաջանը Հայաստանի արշավանքի ժամանակ, վերաբերում է, ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ ամրոցին: Ապա Բ. Հարությունյանը նույնպես գալիս է այն հետևության, որ կայարանի Սիսաջան անվանումն առաջ է եկել նահանգի անունից: Վերջի-վերջո, այս տեղադրության օգտին է խոսում թեկուզ այն փաստը, որ Դվինից մինչև Վայս ամրոցի շրջակայքը շուրջ 90-92կմ է[1]:

Ա. Ղարագյոզյանը տեղազննության ժամանակ Բ. Հարությունյանի նշած տեղում, այսինքն՝ Տանձիկ գյուղի մոտակայքում, ուր պետք է գտնվեր Վեյսալի ղալասին, որևէ ավերակ չի գտել[2]: Անդրադառնալով Սիսաջան քաղաքի տեղադրությանը՝ ուսումնասիրողը նշում է, որ հնագույն միակ քաղաքն այդ շրջանում գտնվում է Շարուրի դաշտում, Վայոց ձորի մուտքի մոտ, Նորաշեն գյուղի մերձակայքում[3]: Այն Ա. Այվազյանի կողմից նույնացվել է հինավուրց Արբային[4]: Սակայն, Ա. Ղարագյոզյանը վստահ է, որ այդ ավերակ բերդաքաղաքը ոչ թե Արբան է, այլ Մարակերտը(Մարավանը)[5]: Նա կարծում է նաև, թե արաբ հեղինակների Սիսաջանը հենց Սյունիքի մերձակայքում՝ Շարուրի դաշտում կառուցված Մարակերտն է: Դվինի և Մարակերտի միջև հեռավորությունն ուղիղ գծով կազմում է 75կմ, որը, ըստ ուսումնասիրողի՝ կարող է համապատասխանել արաբ հեղինակների հիշատակած 16 փարսախ հեռավորությանը (մոտ 93կմ)[6]: Կարծում ենք, որ տարածքի մանրամասն տեղազննության հիման վրա կատարած այս տեղադրությունն ավելի հավանական է:

Սիսաջանից ճանապարհը ընթանում էր Դվին, և նրանց միջև հեռավորությունը 16 փարսախ էր:

Այսպիսով՝ ճանապարհը, դուրս գալով Պարտավից, Տրտու գետի, իսկ այնուհետև վերջինիս վտակ Լև գետի ափերով շարժվում էր դեպի արևմուտք ու, անցնելով Սոդքի լեռնանցքը, Սևանա լճի հարավային ափերով ընթացող ներկայիս ավտոճանապարհի երթուղով հասնում էր Արգիճի գետի գետաբերանի շրջանը, այդտեղից էլ նույն գետի ափով ու Սուլեմա լեռնանցքով իջնում էր մինչև Արփա գետի հովիտն ու նրա ափով շարժվելով՝ հասնում Մարակերտ-Սիսաջան: Այստեղից ճանա-

---

[1] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Դվին-Պարտավ ճանապարհի Sīsajān-Gēlakūnī գծամասը,- «ՊԲՀ», 1968, թիվ 1, էջ 217-218:

[2] Տե՛ս **Ա. Ղարագյոզյան**, Սիսաջան և Նակորզան քաղաքների տեղադրությունը,- «Լրաբեր(հաս. գիտ.)», 2001, թիվ 1, էջ 136, ծանոթ. 12:

[3] Տե՛ս **Ա. Այվազյան** , Նախճավանի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Ե., 1978, էջ 63:

[4] Անդ, էջ 63-64:

[5] Տե՛ս **Ա. Ղարագյոզյան**, նշվ. աշխ., էջ 139:

[6] Անդ:

պարիզը Երասխ գետի ափամերձ շրջաններով հասնում էր Դվին:

Փաստորեն, այս ճանապարհը կապում էր միմյանց Արմինիայի երկու կենտրոնները և ոստիկանի երկու նստավայրերը:

Մարանդ-Դվին ճանապարհը: Այս ճանապարհի մասին Իբն Խորդադբեհը հաղորդում է. «Մարանդից մինչև ալ-Վադի (իմա՛ գետահովիտ- Ա.Ե.) 10 փարսախ է, ապա մինչև Նաշավա՝ 10 փարսախ, այնտեղից մինչև Դաբիլ 20 փարսախ է»[1]: Ավելի ուշ շրջանի արաբ աշխարհագետներից այս ճանապարհը հիշատակում է ալ-Մուկադդասին. «Մարանդից մինչև Նաշավա 2 դժվարին անցում է, և նույնքան էլ՝ այդտեղից մինչև Դաբիլ»[2]:

Մարանդից Դվին ճանապարհի կայարանների տեղադրությունները հայտնի են, իսկ ինչ վերաբերում է երթուղուն, ապա այն Երասխի հովիտ էր իջնում ներկայիս Մարանդ-Ջուլֆա ուղեգծով, որի երկարությունը մոտավորապես համապատասխանում է Իբն Խորդադբեհի հիշատակած Մարանդից ալ-Վադի (Երասխի հովիտը) 10 փարսախ (մոտ 58կմ) հեռավորությանը: Հենց այս երթուղին է հիշատակում Ղևոնդը՝ պատմելով, որ արաբական մի զորախումբ, գերեվարելով Գողթն գավառի և Նախճավանի ժողովրդին, անցկացնում է «...ընդ գետն Երասխ ընդ հունն Ջուղայոյ»[3]:

Մարանդ-Դվին ճանապարհի Մարանդ-Երասխ գետի հովիտ ճանապարհահատվածը(մոտ 60-65կմ), դատելով լեռնային տեղանքից, ճանապարհորդներից խլելու էր երկու օր: Ինչպես տեսանք, ալ-Մուկադդասին Մարանդից Նախճավան հեռավորությունը նշում է 2 անցում: Մարանդից մինչև Նախճավան մոտ 110կմ է, իսկ այդ հեռավորությունը հաղթահարել երկու անցումով(այսինքն՝ երկու օրում) հնարավոր չէ, քանի որ մեկ օրում հնարավոր է անցնել առավելագույնը 30-40կմ: Այսինքն՝ Մարանդ-Նախճավան ճանապարհի երկարությունը 3 անցումից պակաս լինել չէր կարող: Հավանական ենք համարում, որ ալ-Մուկադդասիի նշած 2 անցումն իրականում վերաբերում էր Մարանդ-Երասխ գետի հովիտ ճանապարհահատվածին: Այդ պարագայում, կայարանը Մարանդի և Երասխի հովտի միջև գտնվելու էր, ամենայն հավանականությամբ, Կիամքի լեռից դեպի արևմուտք գտնվող լեռնանցքի հարևանությամբ:

---

[1] **Ibn Khordadbeh**, էջ 122:

[2] **Al-Moqaddasi**, էջ 381-382: Պետք է նշել, որ Դվինից Նախճավան ճանապարհը վերանորոգեց Խուզայմա իբն Խազիմ ոստիկանը (786-787) (տե՛ս **Ibn al-Fakih**, էջ 294):

[3] **Ղևոնդ**, էջ 7:

Գալով ալ-Վադիից մինչև Նախճավան հեռավորությանը՝ պետք է նշել, որ Իբն Խորդադբեհի հիշատակած 10 փարսախ հեռավորությունը (մոտ 58կմ) իրականությանը չի համապատասխանում, քանի որ այն հավասար է մոտ 42կմ-ի, այսինքն՝ մեկ անցումի: Ուստի և կարծում ենք, որ Մարանդ-Նախճավան ճանապարհահատվածի երկարությունը կազմում էր 3 անցում:

Ճիշտ չէ ալ-Մուկադդասիի վերոգրյալ հիշատակության մեջ Նախճավանից Դվին 2 անցում(60-80կմ) հեռավորության նշումը, մանավանդ, եթե հաշվի առնենք արաբ հեղինակի մեկ այլ հիշատակությունը, թե նույն հեռավորությունը 4 անցում էր(120-160կմ)[1]: Ինչ վերաբերում է Նախճավանից Դվին Իբն Խորդադբեհի հիշատակած 20 փարսախ հեռավորությանը(116կմ), ապա այն համապատասխանում է իրականությանը:

Այս ճանապարհն Արմինիան Մարանդով կապում էր Թավրիզի, իսկ վերջինովս նաև Խորասանի ու Միջին Ասիայի երկրների հետ:

Պետք է նշել, որ Մարանդ-Դվին ճանապարհը Արփա գետի ստորին հոսանքում միանում էր Պարտավ-Դվին ճանապարհին:

Պարտավ-Բադդ ճանապարհը: Այս ճանապարհը, ըստ Իբն Խորդադբեհի՝ ուներ 30 փարսախ երկարություն(մոտ 175կմ): Այն ավելի ուշ շրջանի հեղինակներն այլևս չեն հիշատակում, քանի որ Բադդն այլևս գոյություն չուներ:

Բադդ (Բազզ): Բադդը հանդիսանում էր համանուն երկրի կենտրոնը: Այդ երկիրը գտնվում էր Ատրպատականի ոստիկանության կազմում և Արմինիայից բաժանվում էր Երասխ գետով, իսկ նրա բերդերից մեկը, որի անունը չի պահպանվել, Երասխի ափին էր[2]: Մասուդին Երասխ գետի վերաբերյալ հիշատակության մեջ արժեքավոր տեղեկություն է պահպանել Բադդ երկրի աշխարհագրական դիրքի մասին. «Ար-Ռասը հոսում է Բադդայն(իմա՛ Բադդ-Ա.Ե.) երկրի, որը Խուրամյան Բաբաքի հայրենիքն է Ադարբայջանում, և Ջաբալ Աբի Մուսա երկրի միջև, որն Առանի մասերից է»[3]: Ջաբալ (جبل-լեռ) Աբի Մուսա[4] ասելով՝ Մասուդին նկատի ունի Քթիշ լեռը, որի գագաթին գտնվող համանուն ամրոցում Եսայի Աբու Մուսե Առանշահիկ իշխանը հերոսական կռիվներ մղեց Բու-

---

[1] Տե՛ս al-Moqaddasi, էջ 381-382:
[2] Տե՛ս Jacut, I, էջ 529-530:
[3] مسعودي, էջ 206:
[4] Կնշանակի Աբի Մուսայի լեռ:

ղայի զորամասերի դեմ[1]: Փաստորեն, Բադդը հարավից հարևան էր Մեծ Հայքի Արցախ աշխարհին: Գալով Բադդ քաղաքի տեղադրության խնդրին՝ պետք է նշել, որ ըստ Իբն ալ-Ասիրի՝ այն գտնվում էր Հաշտադսար կոչվող լեռան լանջին[2]: Վերջինը, անկասկած, համապատասխանում է Ղարադաղի կամ Հայկական լեռների Հաշտասար լեռանը(2939մ), որը գտնվում է Սելին գետի ակունքների շրջանում[3]: Փաստորեն, Բադդը գտնվում էր Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի տարածքում, որը Սասանյանները 428 թ. Արևելա-հայկական թագավորության վերացումից հետո անջատել էին Հայաստանից[4]: Այդ անմատույց լեռնային շրջանում գործնականում չկային մատչելի ճանապարհներ: Նշվում է, որ Մուհամմադ ատ-Տուսի զորավարը Բադդ է հասնում լեռնային նեղ արահետներով[5], իսկ Ավշին զորավարը Բարզանդից մինչև Բադդ կառուցել է տալիս նոր ճանապարհ[6]: Երբ Ավշինի զորամասերը գրավեցին Բադդը, Բաբեկը Հաշտասարի մոտակա լեռնանցքով կարողացավ փախուստի դիմել: Փաստորեն, հենց այդ լեռնանցքով էլ անցնում էր Բադդն Արմինիային կապող ճանապարհը, քանի որ անմիջապես նրա փախուստից հետո Ավշինը՝ իմանալով ճանապարհի ուղղությունը, տեղեկացրեց Արմինիայի «թագավորներին ու բաթրիկներին(պատրիկներ)», որ Բաբեկը խույս է տվել և կանցնի նրանց մոտով[7]: Հավանական է կարծել, որ Բադդից դեպի Արմինիա գնացող ճանապարհն անցնում էր Սելին գետի հովտով: Հասնելով Երասխ գետի ափը՝ ճանապարհը կարող էր շարժվել Պարտավ կամ սկզբում Երասխի, իսկ այնուհետև Հագարու գետի ափերով ու ներկայիս Լաչին(Բերձոր)-Ստեփանակերտ-Աղդամ ճանապարհի երթուղով, կամ՝ Երասխի ափով շարժվելով դեպի հյուսիս-արևելք ու միանալով Վարդանակերտ-Պարտավ ճանապարհին:

Այսքանով ավարտվում են IX դ. արաբ աշխարհագետ Իբն Խորդադբեհի հիշատակություններն Արմինիա մտնող և նրա տարածքով անցնող առևտրական ճանապարհների մասին: Սակայն, դատելով սկզբնաղբյուրների հաղորդումներից, արաբական տիրապետության շրջանում գործում էին նաև Հեր-Դարբանդ ճանապարհը և Հայոց հինա-

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** էջ 278, 290:

[2] Տե՛ս ابن الاثير, V, էջ, էջ 217-218, 237-238:

[3] Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения, издание Бакинского Армянского Культурного Союза, Баку, 1908.

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի..., էջ 85-92:

[5] Տե՛ս ابن الاثير, V, էջ 217-218:

[6] Անդ, էջ 234:

[7] Անդ, էջ 243:

վուրց մայրաքաղաքներ Արտաշատն ու Տիգրանակերտը իրար կապող Արքունի պողոտան:

Հեր-Դարբանդ ճանապարհը[1]**:** Դատելով արաբ հեղինակների հաղորդումներից, այս ճանապարհը, չնայած, որ Իբն Խորդադբեհի կողմից չի հիշատակվում, գործում էր նաև VII-IX դդ.[2]: Դրա մասին ալ-Մուկադդասին հաղորդում է. «Խուայյից մինչև Կալա Յունիս 6 անցում է, ապա մինչև Կարիա ալ-Ասաբիատ՝ 1 անցում, այդտեղից մինչև..., ապա մինչև Տիֆլիս՝ 1 անցում է, հետո մինչև Թաբլա, այնտեղից էլ՝ Շաքքի, ապա մինչև Լաքզան՝ 2 անցում է, և մինչև Բաբ [ալ-Աբվաբ]՝ 3 անցում»[3]: Ալ-Մուկադդասիի երկի հիշյալ հատվածն ամբողջությամբ չի պահպանվել, և նկարագրության մեջ բացակայում են Կարիա ալ-Ասաբիատից մինչև Տփղիս ճանապարհահատվածում գտնվող կայարանների անվանումները:

Կալա Յունիս: Կալա Յունիսը, ըստ ալ-Մուկադդասիի՝ պետք է գտնվեր Հերից 6 անցում, այսինքն՝ մոտավորապես 30-42 փարսախ (մոտ 175-245կմ) հեռավորության վրա: Կալա Յունիսը, որն ալ-Մուկադդասին հիշատակում է Հայաստանի քաղաքների թվում[4], գտնվում էր ադ-Դիրանիի թագավորության մեջ[5]: Ահա՛, թե ինչ է հաղորդում Իբն Հաուկալն ադ-Դիրանի թագավորի որդու մասին. «Իբն Դիրանի թագավորը [քրիստոնյա է], որն իշխում է Ջավազանի, Վանի և Վաստանի վրա»[6]: Ելնելով այս հաղորդումից, դժվար չէ կռահել, որ ադ-Դիրանին Վասպուրականի Դերենիկ (Դերեն) թագավորի (943-958) անվան այլագրությունն է, իսկ հիշյալ գավառն ու քաղաքները X դ. Վասպուրականի թագավորության մեջ էին մտնում, ուստի՝ ադ-Դիրանիի երկիրը Վասպուրականի թագավորությունն է:

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս Սասանյանների օրոք հզորացած Արծրունիներն արաբական տիրապետության ժամանակաշրջանում տարածվեցին ոչ միայն Վասպուրական աշխարհի տարածքում, այլև հա-

---

[1] Այս ճանապարհի մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր(Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի,- «ՊԲՀ», 2005, թիվ 3, էջ 149-159:

[2] Ըստ ալ-Քուֆիի՝ Մարվան իբն Մուհամմադը հենց այս ճանապարհով էր 732/733 թ. արշավել Խազարական թագավորություն(տե՛ս al-Kufi, VIII, էջ 75):

[3] **Al-Moqaddasi**, էջ 392:

[4] Անդ, էջ 373:

[5] Անդ, էջ 377:

[6] **Ibn Haukal,** էջ 348-348:

րևան երկրամասերում[1]: Եվ հենց այս է պատճառը, որ Իբն Հաուկալը Վասպուրականի թագավորության մեջ է հիշատակում Կալա Յունիսը, որը, ինչպես ստորև կտեսնենք, համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառի Դարյունից բերդին: Կոգովիտ գավառը Դարյունից բերդով Վասպուրականի թագավորությանը միացրել էր Դերենիկ թագավորի նախորդը՝ Գագիկը (908-943): Ըստ Թովմա Արծրունու՝ «ի գնալն Յուսփայ ամիրային ի Պարսս՝ գնաց և թագաւորն Գագիկ ի գաւառն Կոգովիտ, և պաշարեալ զանառն Դարիւնս՝ գողացեալ առնու ի գիշերի»[2]:

Մեր կարծիքով, արաբները Դարյունից բերդի անվան «դար» բաղադրիչն ընկալել են «բերդ, ամրոց» իմաստով ու դարձրել «կալա»: Ինչ վերաբերում է Դարյունից անվան երկրորդ բաղադրիչին՝ «յունից»-ին, ապա վերջինի «ց»-ն, արաբերենում այդ տառի բացակայության պայմաններում, փոխարինվել է «u» (س)-ով, և «յունից»-ը վերածվել է «յունիս»-ի: Դարյունից բերդը(գրաբարում՝ Դարեւնից կամ Դարիւնից բերդ[3]) գտնվում էր ներկայիս Հին Բայազետ կամ Դողու-Բայազիդ քաղաքի հարևանությամբ, որտեղ մինչև այսօր էլ պահպանվել են բերդի պարիսպները[4]: Ինչ վերաբերում է Հերի և Կալա Յունիսի միջև ալ-Մուկադդասիի նշած 6 անցում հեռավորությանը (մոտ 175-245կմ), ապա այն որոշակիորեն չափազանցված է[5]: Անհրաժեշտ է ավելացնել, որ կայարանը պետք է գտնվելիս լիներ ոչ թե Դարյունից բերդում, այլ դրա մերձակայքում՝ անմիջապես ճանապարհի հարևանությամբ[6]:

Կարիա ալ-Ասաբիատ: Վերջինը, ըստ արաբ հեղինակի՝ գտնվում էր Կալա Յունիսից 1 անցում հեռավորության վրա (մոտ 30-40կմ): Կարծում ենք, որ այդ կայարանը հաստատապես պետք է գտնվելիս լիներ մինչև Հայկական պար լեռնաշղթան ընկած շրջանում:

Սեբեոսի մի արժեքավոր հիշատակությունն օգնում է ճշտել այս ճանապարհի երթուղին Դարյունից բերդից հյուսիս: Նկարագրելով

---

[1] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 444: Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 328:

[2] Թովմա Արծրունի և Անանուն, էջ 444:

[3] Տե՛ս Ղևոնդ, էջ 18, 119 և այլն, Ասողիկ, էջ 131:

[4] Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 49:

[5] «Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ», ֆիզիկական քարտեզ: Խոյի և Բայազետի միջև հեռավորությունը հավասար է մոտ 155կմ-ի: Ալ-Մուկադդասիի հաղորդած հեռավորության չափազանցված տվյալը մենք բացատրում ենք լեռնային տեղանքով:

[6] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, էջ 150-151: Հեր-Դարյունից բերդ ճանապարհը գործում է նաև այսօր՝ ընթանալով Կոտորի (Վասպուրականի) լեռնաշղթայի արևելակողմով՝ Խոյ-Էվօղլու-Մերգեն (Մարգիան)-Մակու-Դողու-Բայազիդ գծով:

արաբների 647 թ. արշավանքը՝ պատմիչն ի մասնավորի հաղորդում է. «...եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեացան յերիս:...Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին...եկին ժողովեցան ի Հէրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բանակեցան յԱրծափս...: Արդ՝ իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց»[1]:

Արծափ ամրոցը գտնվում էր Դարյունից բերդից մոտ 17կմ հեռավորության վրա[2], որը հիմք էր տալիս նրա պաշտպաններին՝ օգնություն կանչելու այնտեղից: Ելնելով վերոհիշյալից՝ ենթադրում ենք, որ ալ-Ասաբիատ անվանումը նույնական է Արծափ անվանը, որը Ղևոնդն ու Անանուն Ձրուցագիրը հիշատակում են «Արծափաց» ձևով[3]: Ինչ վերաբերում է «կարիա» բառին, ապա այն «կալա» (բերդ) բառի աղավաղված տարբերակը կարող է լինել: Այդպիսի աղավաղումը, ի դեպ, առկա է նաև Կալա Յունիսի դեպքում (Կարիա Յունիս)[4]: Սակայն, «կարիա» բառը (قرية) արաբերենից թարգմանաբար նշանակում է «գյուղ», «ավան», ինչը, թերևս, առավել հավանական տարբերակ է: Հասկանալի է, որ ճանապարհն անցնելու էր ամրոցի մերձակայքով, իսկ մերձակայքում գտնվող գյուղը պարզապես կոչվելու էր «գեւղն/գիւղն Արծափաց», որը մասամբ արաբերեն թարգմանվելու դեպքում, ինչպես կտեսնենք, դառնալու էր «Կարիա ալ-Արսաբատ»:

Արծափ ամրոցի հարևանությամբ գտնվող նույնանուն գյուղը, որտեղ տեղակայված էր կայարանը, դատելով մեր կողմից Կարիա ալ-Ասաբիատի հետ նրա նույնացումից և Սեբեոսի ևս մեկ կարևոր հիշատակությունից, երկու ճանապարհների հանգուցակետ էր: Պատմիչը, նկարագրելով արաբների 641 թ. արշավանքը, հաղորդում է, որ նրանք Ձորա պահակ լեռնանցքով ներխուժեցին Տուրուբերան, գրավեցին Բզնունիքն ու Աղիովիտը և «ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»[5]:

Արաբական զորքի՝ Որդսպուից գալն ու Արծափ ամրոցը պաշարելը ցույց է տալիս, որ Որդսպուն ճանապարհով կապված էր Արծափի հետ: Բացի այդ, «ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ» արտահայ-

---

[1] Սեբեոս, էջ 145:

[2] Տե՛ս Дорожная карта Кавказского края, составлена и литографирована в военно-типографическом отделе Кавказского военного округа, 20 верст в дюйме, Тифлис, 1870.

[3] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 11, **Շապուհ Բագրատունի**, էջ 29:

[4] Տե՛ս **al-Moqaddasi,** էջ 376:

[5] **Սեբեոս**, էջ 138:

տությունը նախատեսում է Որդսպուի տեղադրությունն այդ ճանապարհի վրա մինչև Կոգովիտ գավառ հասնելը, Կոտոր լեռնաշղթայի արևմտակողմում, այսինքն՝ Վասպուրականում[1]: Դատելով վերոհիշյալ երկու փաստերից, Որդսպուից հետո ճանապարհի հաջորդ կայարանն Արծափն էր Կոգովիտում, որից այն կողմ ճանապարհն անցնելու էր Հայկական պարը: Այս ճանապարհն անցնում էր Վանա լճի հյուսիսային ափերով ու Կոտոր լեռնաշղթայի արևմտակողմով, իսկ Հերից Դարյունից բերդի մերձակայքով դեպի Արծափ ամրոցն շարժվող ճանապարհն ընթանում էր Կոտոր լեռնաշղթայի արևելակողմով: Փաստորեն, Կոտոր լեռնաշղթայի երկու կողմերով դեպի հյուսիս ընթացող ճանապարհները միանում էին Արծափ ամրոցի մոտակայքում:

Կրկին անդրադառնալով Արծափաց գյուղ-Կարիա ալ-Ասաբիատ նույնացմանը՝ նշենք, որ Ղևոնդի և Անանուն Զրուցագրի հիշատակած «Արծափաց» անվանաձևը, ամենայն հավանականությամբ, գործածական էր միջնադարում: Արաբերենում «ծ» տառի բացակայության պայմաններում արաբ աշխարհագետներն օգտագործում էին «ս» (س կամ ص) տառը, ինչպես, օրինակ՝ Սամանդու-Ծամնդավ[2] և Սանարիա-Ծանարիա[3] դեպքերում, իսկ «ց» տառի բացակայության պայմաններում արաբերենում օգտագործվում է «տ» (ت) տառը: Կարծում ենք, որ արաբերենում «զգեղն Արծափաց» բառակապակցությունը, հաշվի առնելով վերոհիշյալ պարզաբանումները, մասամբ թարգմանվելու հետևանքով հնչելու էր «Կարիա ալ-Արսաբատ», որը հետագայում աղավաղվել ու վեր է ածվել «Կարիա ալ-Ասաբիատ»-ի[4]:

Փաստորեն, ճանապարհը գալիս էր Դարյունից բերդի կողմից և անցնում Արծափաց ամրոցի մերձակայքում գտնվող նույնանուն գյուղով: Պետք է նշել, որ Կարիա ալ-Ասաբիատի հեռավորությունը Կալա Յունիս կայարանից, որը մեկ անցում(մոտ 30-40կմ) պետք է կազմեր, չի

---

[1] Հ. Մանանդյանը Պևտինգերյան քարտեզի Artaxata-Godbi-Paresaca ճանապարհի Կատիսպի (Catispi) կայարանը նույնացնում է Որդսպուին և, հենվելով Ս. Երեմյանի վրա, այն տեղադրում ներկայիս Տապարիզ բնակավայրի մերձակայքում՝ Կարաքենդից դեպի հարավ-արևելք (տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 147-149, 246, տե՛ս նաև Карта Кавказского края с показанием густоты армянского населения, издание Бакинского Армянского культурного союза, Баку, 1908): Ճիշտ է, այդ դեպքում Որդսպուն կհայտնվի Կոգովտի տարածքում, սակայն, Սեբեոսի հաղորդման տրամաբանությունը, ինչպես նաև մեր քննությունը, թույլ են տալիս նաև այդ տեղադրությունը:

[2] Տե՛ս **Jacut**, III, էջ 144:

[3] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 122:

[4] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհը..., էջ 152:

համապատասխանում Դարյունից բերդից մինչև Արծափ ամրոց ընկած հեռավորությանը, որը, թերևս, նույնպես պետք է բացատրել լեռնային տեղանքով:

Այսպիսով՝ հարավ-արևելքից և հարավ-արևմուտքից եկող ճանապարհները միանում էին Արծափաց գյուղում:

Ինչպես տեսանք, ալ-Մուկադդասիի տեքստը թերի է, ինչի պատճառով բացակայում են Կարիա ալ-Ասաբիատ-Տփղիս ճանապարհահատվածում գտնվող կայարանների անունները: Հաշվի առնելով այն, որ պարսկական տիրապետության շրջանում, համաձայն «Մղոնաչափք»-ի՝ գործում էր Դվին-Տփղիս ճանապարհը[1], պետք է կարծել, որ գործ ունենք հենց այդ ճանապարհի հետ: Ուստի և կարծում ենք, որ ճանապարհն Արծափից հետո անցնում էր Հայկական պար լեռնաշթան Չինգիլի լեռնանցքով ու Օրկովի կիրճով[2], այնուհետև, թեքվում էր դեպի արևելք և իջնում Երասխ գետի հովիտն Արտաշատի կամրջի մոտ: Այն, հավանաբար, անցնում էր Երասխը Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով ու շարժվում դեպի Դվին[3]: «Մղոնաչափք»-ի Դվին-Տփղիս ճանապարհը, համեմատելով Սասանյանների տիրապետության շրջանում(համաձայն Պևտինգերյան քարտեզի) նույն ուղղությամբ գործող ճանապարհի հետ, Երասխ գետի ափամերձ շրջանով բարձրանում էր դեպի հյուսիս ու, այնուհետև, անցնում Հրազդան գետի արևելակողմով ընդհուպ մինչև նրա սկիզբ առնելու տեղը, որից հետո, շարժվելով հյուսիս, անցնում էր Սևանի լեռնանցքով: Ճանապարհը այստեղից դեպի Տփղիս, ամենայն հավանականությամբ, ընթանում էր ներկայիս Դիլիջանով և Աղստևի ձախ ափով դուրս էր գալիս Կուր գետի ափը[4], որտեղ միանում էր Պարտավ-Տփղիս ճանապարհին Խունան (Հունարակերտ) կայարանում, որը գտնվում էր Աղստևի գետաբերանի ձախ ափին:

Հունարակերտից ճանապարհը Տփղիս էր շարժվում Պարտավ-Տփղիս ճանապարհի երթուղով՝ Կալա իբն Քանդաման կայարանով:

Թաբլա: Մեծ կարևորություն է ներկայացնում ալ-Մուկադդասիի նշած ճանապարհի ուղղությունը նաև Տփղիսից այն կողմ, որի հիշատակությունը ևս մյուս արաբ հեղինակների մոտ բացակայում է: Տփղիսից հետո ճանապարհը անցնում էր Թաբլա, որտեղից էլ Շաքի: Սակայն, ցավոք, այդ կայարանների միջև հեռավորություններն ալ-Մու-

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381:
[2] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 17:
[3] Տե՛ս **Սեբեոս,** էջ 138:
[4] Տե՛ս **С. Еремян**, Торговые пути Закавказья..., էջ 81-85:

կադդասին չի հիշատակում, որը դժվարացնում է Թաբլա կայարանի տեղադրությունը: Թերևս, պետք է հավանական համարել Թաբլայի նույնացումը Թելավ քաղաքին[1]: Թելավը XI դարում դարձավ Կախեթի թագավորության մայրաքաղաքը և այդ քաղաքի բարձրացումն ու ծաղկումը պետք է կապված լիներ Տփղիսից Շաքե տանող ճանապարհի հետ[2]: Թաբլայից հետո ճանապարհն անցնում էր Շաքե, որից այն կողմ, ըստ ալ-Մուկադդասիի՝ ճանապարհը անցնում էր Լաքզան, իսկ նրանց միջև հեռավորությունը 2 անցում էր (10-14փարսախ կամ 60-80կմ):

Լաքզան: Լաքզանը ոչ թե ինչ-որ կոնկրետ կայարան էր, այլ համապատասխան երկրի անվանումը, որը, թերևս, նույնական էր արաբական աղբյուրներում հաճախ հիշատակվող ալ-Լաքզ երկրին: Մենք արդեն ցույց ենք տվել, որ ալ-Լաքզ անվանումը արաբ հեղինակները երբեմն տալիս էին Դաղստանի բոլոր լեռնականներին և, երբեմն, այդ լեռնականներից ոմանց: Մեր կարծիքով, այստեղ ալ-Մուկադդասին Լաքզան անվան տակ նկատի ունի ոչ թե հատկապես ինչ-որ մի ցեղի, այլ Հարավային Դաղստանը[3]:

Այսպիսով՝ Շաքեից հյուսիս ճանապարհը պետք է անցներ Կովկասյան լեռներն ու մուտք գործեր Հարավային Դաղստան: Ամենայն հավանականությամբ, ճանապարհը Շաքե քաղաքի մոտ հաղթահարում էր Կովկասյան լեռները Օղուր-Քիշ-Խնով բնակավայրերի գծով և դուրս գալիս Ախտի-չայի հովիտը[4]: Այս ճանապարհի վերաբերյալ հիշատակություն ունի արաբ պատմիչ ալ-Քուֆին: Նա պատմում է, որ Մուհամմադ իբն Մարվանը 732/733 թ. դեպի Խազարական թագավորություն կատարած արշավանքի ժամանակ կարճ ուղի է ընտրել ու Շաքեի մերձակայքով անցնող ճանապարհով է հաղթահարել Կովկասյան լեռներն ու ներխուժել Սարիր[5]:

Ալ-Լաքզ-Դարբանդ ճանապարհահատվածը կարող էր երկու հնարավոր երթուղի ունենալ: Առաջինը՝ սկզբում Ախտի-չայ, իսկ հետո Սամուր գետերի ափերով շարժվում է դեպի արևելք ու միանում Դարբանդ շարժվող մեծ ուղուն, որը նույնական է արաբ հեղինակների հի-

---

[1] Տե՛ս **Н. Караулов**, նշվ. աշխ., թիվ 38, էջ 22, ծանոթ. 7:

[2] Տե՛ս **М. Лордкипанидзе,** նշվ. աշխ., էջ 258-259:

[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր(Խուայյ)-Դարբանդ(Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհը..., էջ 156-157:

[4] Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի թիվ Ֆ. 7. և Ж. 6. պլանշետները: Անանուն լեռնանցքով անցնող այդ ճանապարհը հիշատակում է Մ. Բարխուդարյանցը (տե՛ս «Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)», էջ 114-115):

[5] Տե՛ս al-Kufi, VIII, էջ 75:

շատակած Պարտավ-Դարբանդ ճանապարհի հյուսիսային հատվածին: Երկրորդ երթուղին միանում է այդ ճանապարհին՝ շարժվելով Ախտի-չայ և Կուրախ-չայ գետերի ափերով: Գերադասելի է առաջին ուղեգիծը՝ կապված առավել մատչելի ճանապարհի առկայության հետ: Ալ-Լաքզից (Լաքզան) մինչև Դարբանդ հեռավորությունը, ըստ ալ-Մուկադդասիի՝ կազմում էր 3 անցում (15-21 փարսախ կամ մոտ 85-120կմ): Կարծում ենք, որ ճանապարհը, ընթանալով Ախտի-չայ և Սամուր գետերի ափերով՝ պետք է միանար Պարտավ-Դարբանդ ճանապարհին Սամուր գետի կամրջի՝ Ջիսր Սամուրի մոտակայքում (Կուլարի կամուրջ), իսկ հետո շարժվեր դեպի Դարբանդ[1]:

Արքունի պողոտա: Քննության առնենք նաև Արքունի պողոտան կամ Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղին[2], որը՝ դատելով Ղևոնդի վկայություններից, VIII դ. 70-ական թվականներին դեռևս բանուկ էր: Պատմիչը, նկարագրելով 774-775 թթ. ապստամբության հաղթարշավը, հաղորդում է, թե ոստիկանը Դվինից ապստամբների դեմ Ապունճիպ զորավարի հրամանատարությամբ զորք է ուղարկում, որը «...ուշ եդեալ ընդ պողոտայն արքունի՝ հասանէր ի գաւառն Բագրևանդ ի գիւղն Բագաւան»[3]:

Արքունի պողոտայի քննությունը մանրամասնորեն կատարել է Հ. Մանանդյանը[4]: Բ. Հարությունյանը, կապված Տիգրանակերտի տեղադրության հետ, մանրամասնորեն անդրադարձել է հայոց մայրուղու՝ Տարոնի դաշտ-Տիգրանակերտ հատվածին[5]:

Ինչպես ցույց է տալիս Ղևոնդի վերոհիշյալ վկայությունը, Արքունի պողոտան Արտաշատից շարժվում էր դեպի Բագավան: Ամենայն հավանականությամբ, այն անցնում էր Երասխ գետն Արտաշատի կամ Տափերի (Տափերական) կամրջով: Համաձայն Հ. Մանանդյանի կատարած տեղադրությունների՝ Արտաշատի և Բագավանի միջև՝ Արքունի պողո-

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հեր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհը..., էջ 157:

[2] Պետք է նշել, որ Ա. Տեր-Ղևոնդյանը սխալմամբ կարծում է, թե Արքունի պողոտան ոչ թե հինավուրց Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղին է, այլ Իրանից եկող և Դվինով Կարնո քաղաք, ապա Տրապիզոն անցնող առևտրական ճանապարհը (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հայ ժողովրդի պայքարը..., էջ 384):

[3] **Ղևոնդ**, էջ 140:

[4] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114:

[5] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 175-198:

տայի վրա, գտնվում էին Փառախոտ, Ցոլակերտ և Արուճ բնակավայրերը[1]:

Դատելով Ղևոնդի մի վկայությունից՝ Բագավանից հետո Արքունի պողոտան անցնում էր Բագրևանդ գավառում գտնվող Արծնի գյուղով: Պատմիչը, խոսելով այն մասին, թե ինչպես են արաբական զորքերն Ամր զորավարը Ջորա պահակով մտնում Հայաստան և գալիս Խլաթ, որտեղից էլ գնում են ընդառաջ Բերկրիից Արճեշ արշավող հայ ապստամբներին ու պարտության մատնում նրանց, պատմում է, որ ապա «նոյնժամայն շունչ կլեալք՝ դարձեալ յարձակէին, ուշ եդեալ ելանել յառաջին պողոտայն արքունի ընդ գավառն Ապահունիս: Հասանէին ի գաւառն Բագրևանդ ի գիւղն Արծնի»[2]: Այստեղ արաբական զորքերը բանակ են դնում «առ եզերբ գետոյն(իմա՛ Արածանի-Ա.Ե.) որ ընդ նա(իմա՛ Արծնի գյուղը-Ա.Ե.) անցանէ»[3]: Արագ երթով դեպի Արծնի են գալիս նաև Կարնո քաղաքը պաշարած Մուշեղ Մամիկոնյանի գնդերը, գալիս են Բասենով ու հասնում Բագրևանդ: Այստեղ հայկական գնդերը անցնում են Արածանին ու հարձակվում արաբների վրա[4]: Փաստորեն, ճանապարհը Բագավանից Արածանու ափով շարժվում էր դեպի արևմուտք ու հասնում Արծնի գյուղը:

Դուրս է գալիս, որ Արքունի պողոտան, գալով Դվինից, երկու ճյուղ էր տալիս Արծնի գյուղում: Մեկը շարժվում էր դեպի Արճեշ, իսկ մյուսը՝ Կարին: Համաձայն Պեվտինգերյան քարտեզի՝ ճանապարհը երկփեղկվում էր Բագավան հանգուցային կայարանից[5]: Դատելով հիշյալ ուղղություններից, որոնցով հայոց և արաբական զորքերը եկան ու հանդիպեցին Արծնի գյուղի մոտ և Պեվտինգերյան քարտեզի վերոհիշյալ հիշատակությունից, Արծնին գտնվում էր Բագավանի հարևանությամբ՝ Արածանու ափին[6]:

Մինչև Արքունի պողոտայի հետագա երթուղուն անդրադառնալը,

---

[1] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 22-25: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[2] Ղևոնդ, էջ 147-148:

[3] Անդ, էջ 148:

[4] Անդ:

[5] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 46:

[6] Հետաքրքիր է այն, որ Հ. Մանանդյանն իր «Bagauna-Artaxata ուղեգիծը» քարտեզում ճանապարհը երկփեղկել է ոչ թե Բագավանում, ինչպես նշում է Պևտինգերյան քարտեզը, այլ նրանից դեպի արևմուտք՝ այնտեղ, ուր պետք է գտնվեր Արծնին(տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 47, տե՛ս նաև Ալիշան Ղ., Այրարատ, էջ 525):

նշենք, որ դրա՝ Արտաշատից (որը V դարում իր տեղը զիջեց Դվինին)[1] մինչև Արծնի հատվածն ընդհանուր էր թե Արքունի պողոտայի և թե «Մղոնաչափք»-ի հիշատակած Դվին-Կարնո քաղաք-Կողոնիա ճանապարհի համար[2]:

Պարզելով, որ Արքունի պողոտան, գալով Արծնի, երկու ճյուղ էր տալիս, նշենք, որ այն Արծնիից այն կողմ ընթանում էր Ապահունիքով, Հարքով ու Տարոնով: Համաձայն Հ. Մանանդյանի քննության, հայոց մայրուղին Արծնիից հետո շարժվում էր Արածանի գետի ձախ ափով, հասնում Դիդեմ բնակավայրին, այնտեղից էլ՝ Ապահունիքում գտնվող Ծումբ և եղեգական բնակավայրերով ու Մանազկերտ քաղաքով անցնում էր Հարք, որտեղից, շարժվելով հարավարևմտյան ուղղությամբ, անցնում էր ներկայիս Բոստաքենդով(Բաստավան)[3]: Բոստաքենդից այն կողմ մայրուղու ուղղությունը որոշելու համար կարևոր նշանակություն ունի դրա՝ Ձորա պահակ լեռնանցքով անցնելու փաստի պարզաբանումը: Բ. Հարությունյանն այն կարծիքին է, թե այն հանգամանքը, որ օտարերկրյա նվաճողներն արշավանքների ժամանակ հիմնականում օգտվում էին Ձորա պահակով անցնող ճանապարհից, ցույց է տալիս, որ այն երկիր մտնող հիմնական և ամենամատչելի ուղին էր և նույնական էր VIII դ. դեռևս բանուկ Արքունի պողոտային[4]:

Այն Արքունի պողոտան անցնում էր Ձորա պահակով, պարզ է դառնում Փավստոս Բուզանդի տեղեկությունից այն մասին, որ «ամենայն նախարարութիւն Աղձնեաց, և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջին արքային պարսկաց Շապհոյ. և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Ձորայն կոչեն, դրունս դնէին. և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց»[5]: Պարզ է, որ խռովարար Աղձնյաց բդեշխը փակելու էր իր իշխանություն տանող ամենախոցելի հատվածները, որպիսիք կարող էին լինել լեռնանցքներն ու նրանցով անցնող ճանապարհները: Քանի որ Արքունի պողոտան անցնում էր Աղձնիքով, վերջինիս բդեշխն առաջին հերթին փակելու էր հենց այդ ուղին: Սակայն, սպասվածին

---

[1] Տե՛ս **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 114:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381:

[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 91-112: Տե՛ս ցարական բանակային շտաբի տասվերստանոց քարտեզի թիվ 81 պլանշետը: Տե՛ս նաև **Ս. Երեմյան**, Վասպուրականի թագավորությունը (908-1021 թթ.), քարտեզ,-«ՀՍՀ», հ. 11, Ե., 1985, էջ 320:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 192:

[5] **Փավստոս Բուզանդ**, էջ 246:

հակառակ, նա ամրություններ է ստեղծում ոչ թե այն հատվածում, որով Հ. Մանանդյանն անցկացնում է Արքունի պողոտան, այսինքն՝ Ներջիկ-Մուշ ուղեգծում, այլ Ձորա պահակում: Փակելով Ձորա պահակով անցնող ճանապարհը՝ Աղձնյաց բդեշխն իր իշխանությունը մեկուսացնում էր Հայոց թագավորությունից: Արքունի պողոտայի՝ Ձորա պահակով անցնելու իրողության ապացույցն է նաև Ղևոնդի մի վկայությունը: Պատմիչը, խոսելով այն մասին, որ Թեոդորոս Ռշտունին ստացավ դեպի Հայաստան արաբական առաջին արշավանքի լուրը, հաղորդում է, թե նա «առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս ճանապարհին Ձորայոյ»[1]: Պարզ է, որ Հայոց իշխանը փակելու էր հարավարևմտյան ուղղությամբ Հայաստան մտնող հիմնական ճանապարհը: Իսկ քանի որ Արքունի պողոտան այդ ժամական բանուկ էր, ապա, անկասկած, այստեղ գործ ունենք հենց հայոց մայրուղու հետ:

Ըստ Բ. Հարությունյանի քննության՝ Արքունի պողոտան Տարոնի դաշտով շարժվում էր Խասգյուղով և Բաղեշից շուրջ 33կմ հեռավորության վրա գտնվող Չուխուր-Նորշենով, որոնք ուսումնասիրողը համապատասխանաբար նույնացնում է Պեվտինգերյան քարտեզի Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի Dizanas կամ Dyzanas և Patransana կամ Patansana կայարաններին[2]: Արքունի պողոտան Տարոնի դաշտից դեպի Ձորա պահակ, անկասկած, շարժվելու էր Մեղ գետի հովտով: Հայոց մայրուղին, անցնելով Ձորա պահակ լեռնանցքով և Բաղեշով (Բիթլիս), շարժվում էր Տիգրանակերտ:

Տիգրանակերտ: Չնայած, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում

---

[1] Ղևոնդ, էջ 9:

[2] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 194-195: Չուխուր Նորշեն գյուղանվան առաջին բաղադրիչը ունի հայերեն «Փոս» իմաստը և համապատասխանում է Պևտինգերյան քարտեզի Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի Dizanas կամ Dyzanas կայարանին, որի անվան «D»-ն, ըստ ուսումնասիրողի՝ առաջացել է «P»-ի աղավաղումից: Ուստի այն պետք է սրբագրել Pizanas և Pyzanas ու նույնացնել Փսանք կամ Փոսանք տեղանվանը, որն էլ ավելի ուշ թուրքախոս բնակչության կողմից թարգմանվել է «Չուխուր»-ի: Ինչ վերաբերում է Patransana կամ Patansana կայարանին, որը գտնվում էր Dyzanas–Pyzanas կայարանից շուրջ 40կմ հեռավորության վրա, ապա Բ. Հարությունյանն այն նույնացնում է Չուխուր-Նորշենից 40 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Խասգեղին կամ Խասքյոյին: Սովորաբար «խաս» էին կոչվում հարկերից ազատ կալվածքները, և պետք է կարծել, որ այդ գյուղը սկզբնապես կոչվել է Ազատառիճ և նշանակել է «ազատների գյուղ», որը մասամբ թարգմանվել է լատիներեն: «Ազատ»-ը վերածվել է Patric-ի, իսկ կայարանի անվանումը դարձել է Patricarisana և այնուհետև՝ Patrarisana, որն էլ հետագայում աղավաղվելով՝ դարձել է Patransana: Ինչ վերաբերվում է Խասքյոյ կամ Խասգեղ անվանմանը, ապա պետք է ենթադրել, որ Խասքյոյը պարզապես Ազատառիճի թարգմանությունն է, որտեղ, սոցիալական կացության հետ կապված, «ազատ»-ը դարձել է «Խաս», իսկ «առիճ»-ը՝ «քյոյ»: Իսկ Խասգեղը կամ Խասգյուղը Խասքյոյի հայացման հետևանքն է:

Տիգրանակերտն այլևս գոյություն չուներ[1], անդրադառնանք նաև նրա տեղադրությանը, քանի որ դա անհրաժեշտ է՝ Արքունի պողոտայի հետագա երթուղին ճշտելու համար: Տիգրան Մեծի տերության մայրաքաղաք Տիգրանակերտն ուսումնասիրողները տեղադրում են տարբեր տեղերում: Այն գերմանացի հետազոտողներ Լեհման-Հաուպտի և Վալդեման Բելքի կարծիքով գտնվել է Տիգրիս գետի հյուսիսակողմում և տեղորոշվում է Նփրկերտ կամ Ֆարկին քաղաքի տեղում[2]: Հ. Մանանդյանը փորձել է այս տեսակետն ավելի հիմնավորել՝ հենվելով Պեվտինգերյան քարտեզի ուսումնասիրության վրա: Նա վերջինի Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի Cymiza կայարանի անունը սրբագրում է Cyldiza և նույնացնում ներկայիս Կիլդիզ բնակավայրին, որը գտնվում է Ֆարկինից մոտավորապես նույն հեռավորության վրա, ինչ Cymiza-ն Տիգրանակերտից[3]:

Տիգրանակերտի տեղադրությամբ հանգամանորեն զբաղվել է Բ. Հարությունյանը: Ուսումնասիրողը ելնում է այն իրողությունից, որ, ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծն իր մայրաքաղաքը կառուցել է այն վայրում, որտեղ նա, պատանդությունից վերադառնալով, թագադրվել է, ինչպես նաև այն տրամաբանությունից, որ որևէ մեկը չէր թագադրվի այլ թագավորության տարածքում: Հայտնի է, որ Ք.ա. 95 թ. դրությամբ Ծոփաց թագավորությունը դեռևս Մեծ Հայքին միացված չէր: Ուստի Բ. Հարությունյանը քննության է առնում Ծոփաց թագավորության հարավարևելյան սահմանը, քանի որ դրա որոշումը զգալիորեն կփոքրացնի այն տարածքը, որտեղ կարելի է տեղադրել Տիգրանակերտը: Քննությունը բերում է այն համոզման, որ Նփրկերտ-Ֆարկինը գտնվել է Ծոփաց թագավորության տարածքում, որով էլ հիմնովին մերժվում է Տիգրանակերտի տեղադրությունն այդ քաղաքի տեղում[4]: Ապա Բ. Հարությունյանը քննության է առնում Տիգրանակերտի մասին հունա-հռոմեական հեղինակների հաղորդած տեղեկությունները և Պեվտինգերյան քարտեզի Մելիտենե-Տիգրանակերտ ճանապարհն ու Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղու հարավարևմտյան հատվածը: Քանի որ Հ.

---

[1] Տիգրանակերտը կործանվել է IV դ. (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 220, **Մովսես Խորենացի,** էջ 350: Տե՛ս նաև **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 196):

[2] C.F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, Reisen und Forschungen von C.F. Lehmann-Haupt, Erster Band, Berlin, 1910, S. 381-429, 501-523. Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 175:

[3] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 90-92:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 181-182:

Մանանդյանը Cymiza կայարանը նույնացրել է ներկայիս Կիլդիզին, ինչն էլ նրան հիմք է տվել Արքունի պողոտան անցկացնել Մուշ-Ներջիկ գծով, Բ. Հարությունյանը տալիս է այդ կայարանի սեփական տեղադրությունը: Նա Cymiza կայարանը նույնացնում է Բաղեշ քաղաքի Գումս թաղամասի հետ, որը նախկինում առանձին բնակավայր է եղել: Դրանից հետո Բ. Հարությունյանը Տիգրանակերտը տեղադրում է Խարզան գետի աջ ափին բարձրացող և ներկայումս Կալե (բերդ) կոչվող լեռնակի շրջակայքում[1]: Գումսից մինչև Կալե կոչվող լեռնակը համարյա նույն հեռավորությունն է, ինչ Cymiza-ից մինչև Տիգրանակերտ: Կարծում ենք, որ սկզբնաղբյուրների հանգամանալից ուսումնասիրության և պատմաաշխարհագրական կարևոր մանրամասները հաշվի առնելու արդյունքում կատարված այս տեղադրությունը միանգամայն հավանական է:

Այսպիսով, Արքունի պողոտան Արտաշատից, իսկ այն բանից հետո, երբ վերջինը V դարում իր տեղը զիջեց Դվինին, Դվինից արևմուտք Տափերի (Տափերական) կամրջով անցնում էր Երասխը և նույն արևմտյան ուղղությամբ Փառախոտից անցնելով Ցոլակերտ՝ իջնում էր հարավ, անցնում Հայկական պար լեռնաշղթան Քարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով ու Արուճով շարժվում Բագավան: Այստեղից մայրուղին Արածանի գետի ափին գտնվող Արձնի գյուղի վրայով գալիս էր Դիդեմ, որտեղից հարավարևմտյան ուղղությամբ Ծումբ, Եղեգական, Դոնեվանք և Բոստաքենդ (Բաստավան) բնակավայրերով հասնում էր Տարոնի դաշտ: Այնուհետև Արքունի պողոտան Մեղ գետի ձախ ափին գտնվող Խասգյուղով ու Չուխուր Նորշենով գալիս էր դեպի Ջորա պահակ և անցնելով լեռնանցքը՝ շարժվում Տիգրանակերտ:

Այս մայրուղին Հայաստանը կապում էր Դամասկոսի, Երուսաղեմի և Մերձավոր Արևելքի մյուս կարևոր առևտրական կենտրոնների հետ[2]:

Այսպիսով՝ ավարտելով Արմինիա ոստիկանություն մտնող և նրա տարածքով անցնող առևտրական ճանապարհների նկարագրությունը, նշենք, որ դրանք հիմնականում վերաբերում էին Առաջին, Երկրորդ և Երրորդ Արմինիաներին: Ինչ վերաբերում է Չորրորդ Արմինիային, ապա, կապված սահմանային ամրությունների գոտու գոյության հետ, այնտեղով անցնող ճանապարհները, ի տարբերություն պարսկա-բյուզանդական տիրապետության շրջանի, երբ դրանք առևտրական մեծ նշանակություն ունեին, օգտագործվում էին ռազմական նպատակներով: Այսպես. Իբն Հաուկալը հաղորդում է, որ Մարաղայից երկու ճյուղով՝ Շիմ-

---

[1] Անդ, էջ 182-196:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Հայ ժողովրդի պայքարը..., էջ 381:

շաթով և Սումայսաթով(Սամոսատ) Մալաթիա գնացող ճանապարհից օգտվում են արշավանք կատարողները և սրբազան պատերազմ մղողները[1]: Մալաթիայից այդ ճանապարհը ճյուղավորվում էր դեպի Մարաշ և դեպի Կամախ[2]:

Իր նախկին առևտրական նշանակությունը կորցրել ու ռազմական մեծ կարևորություն էր ստացել հյուսիսային սահմանային ամրությունների գոտում գտնվող Ալանաց դռնով (Դարիալի կիրճ) անցնող ճանապարհը: Այդ իրողությունը կապված էր խազարների դեմ արշավանքներում արաբների կողմից դրա հաճախակի օգտագործման[3], ինչպես նաև խազարների ներխուժումների դեմ Ալանաց դռան մեծ պաշտպանական նշանակության հետ[4]:

Փաստորեն, արևմուտքի և, մասնավորապես, Բյուզանդական կայսրության հետ առևտրական հարաբերություններն արաբական տիրապետության ժամանակ դադարեցին: Դատելով արաբ աշխարհագետների՝ Արմինիա մտնող ճանապարհների հիշատակություններից և դրանք համադրելով «Մղոնաչափք»-ի հիշատակած ճանապարհների ուղություններին հետ, Արմինիա ոստիկանությունն առևտրական հարաբերություններ էր պահպանում խալիֆայության մեջ մտնող տարբեր երկրների հետ:

Յուրաքանչյուր երկրի առևտրական կապերի որոշման համար մեծ նշանակություն ունեն հայտնաբերված դրամական գանձերի ընձեռող տվյալները: Օմայանների տիրապետության օրոք, դատելով Արմինիայում գտնված դրամական գանձերի տվյալներից, Արմինիան առևտրական հարաբերություններ է ունեցել Խալիֆայության կենտրոնական նահանգների և, մասնավորապես, Ասորիքի ու Իրաքի հետ: Արմինիայում գտնված այդ ժամանակներին վերաբերող դրամները թողարկված են Հիմս (Էմեսա)[5], Դամասկոս և Կիննասարին[6] քաղաքներում: Սակայն, Արմինիայի տարածքում գտնված այդ դրամները քանակապես շատ չեն, որը միայն թեականորեն կարող է պատկերացում տալ Արմինիայի առևտրական կապերի մասին հիշյալ երկրների հետ: Պետք է հիշել, որ այդ ժամանակ, կապված առևտրի նկատմամբ անընդհատ պատերազմների հարուցած դժվարությունների, ինչպես նաև բեռների անվտանգու-

---

[1] Տե՛ս **Ibn Haukal,** էջ 353:
[2] Տե՛ս **Ibn Khordadbeh**, էջ 123:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ, 244, 246:
[4] Տե՛ս **Jacut**, I, էջ 350-352: Տե՛ս նաև مسعودي, էջ 194:
[5] Տե՛ս **Խ. Մուշեղյան,** Արևելյան դրամների գանձերը..., էջ 217:
[6] Անդ:

թյան երաշխիքների բացակայության պայմաններում վաճառականների՝ առևտրից հրաժարվելու հետ, համարյա դադարեցին առևտրական հարաբերությունները խալիֆայության մյուս երկրամասերի հետ ընդհանրապես և Արմինիայի երկրների ու քաղաքների միջև՝ մասնավորապես: Միայն Աբբասյանների օրոք, երբ երկրում արծաթ դրամի սով սկսվեց, ոստիկաններն անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին վաճառականների համար:

Դրամական շրջանառության մեջ Արմինիայի առևտրական կապերն առավել տեսանելի են դառնում VIII դ. երկրորդ կեսից սկսած: Արմինիայի տարածքում գտնված ու Աբբասյաններին վերաբերող արծաթե դրամների ամենահին գանձը գտնվել է Գանձակ քաղաքում և պատկանում է VIII դ. երրորդ քառորդին: Պահպանված 187 արծաթե դրամներից վաղագույնը վերաբերում է հիջրայի 155 թ., այսինքն՝ 771/772 թ.[1]: Ծավալվող միջազգային առևտրի հետևանքով Արմինիա են թափանցում Իրաքի, Ասորիքի, Ջազիրայի, Խուզիստանի, Ջաբալի և այլ երկրամասերի քաղաքներում հատված արծաթ դրամներ: Դրա վկայությունն են նաև Մարտունիում[2], Կարյագինոյում[3], Թոուզում[4], Սավանայում[5] և Այսրկովկասի այլ վայրերում գտնված դրամական գանձերը:

IX դ. միջազգային առևտուրն Արմինիայի երկրներ է բերում ոչ միայն Իրաքի, Ասորիքի, Ջազիրայի, Ջաբալի, Ֆարսի ու Սաջիստանի (Սագաստան) քաղաքներում դրվագված արծաթ դրամներ, այլև Աֆրիկայի հյուսիսային մասերում, անգամ Իսպանիայում ու Միջին Ասիայում հատված դրամներ[6]: Պետք է նշել, սակայն, որ այդ դրամները կարող էին Արմինիա ներթափանցել ինչպես ուղղակի առևտրի միջոցով, այնպես էլ միջնորդավորված ձևով: Առևտուրը IX դ. ծավալվում էր Խալիֆայության ողջ հսկայածավալ տարածության մեջ և Արմինիա բերում արծաթ դրամներ Բաղդադից, Բասրայից, Քուֆայից, Վասիտից, Մուհամմադիայից (Ռեյ) և Սպահանից (Իսբահան)[7]: Դրամական գանձերը պարզորոշ ցույց են տալիս Արմինիայի երկրների առևտրական կապերը հատկապես Իրաքի ու Իրանի հետ: IX դ. Արմինիայում գտնված դրամները գերազանցապես հատված են արաբական (Իրաք, Ասորիք, Ջազի-

---

[1] Անդ, էջ 221:
[2] Անդ, էջ 221-222:
[3] Տե՛ս **Е. Пахомов**, Монетные клады Азербайджана..., вып. I-IX, Баку, 1926-1966, թիվ 386:
[4] Անդ, թիվ 388:
[5] Տե՛ս **И. Джалагания**, Монетные клады Грузии, I, Тбилиси, 1975, с. 24-35.
[6] Տե՛ս **Խ. Մուշեղյան**, Արևելյան դրամների գանձերը..., էջ 222:
[7] Անդ, էջ 224:

րա) և իրանական (Զաբալ, Ֆարս, Խուզիստան, Խորասան) քաղաքներում[1]: Բացի Ասիական երկրներից, մինչև IX դ. 30-ական թթ. Արմինիայում նկատելի տարածում են ունեցել նաև Աֆրիկայի հյուսիսային մասից՝ Թունիսից, Մարոկկոյից և Ալժիրից դուրս եկած արծաթ դրամներ: Սակայն, դա էպիզոդիկ բնույթ է կրել ու շուտով նվազել է: IX դ. 30-ական թվականներից սկսած, Արմինիայում հայտնվում են խալիֆայության թուլացման պայմաններում սեփական դրամն հատելու իրավունք ձեռք բերած արաբական տարբեր ամիրայությունների կտրած արծաթե դրամներ[2]: IX դ. երկրորդ կեսից սկսած, բացահայտորեն տիրապետող են դառնում Իրաքի, Ասորիքի, Զազիրայի, Զաբալի, Ֆարսի, Խուզիստանի և Խորասանի քաղաքներում հատված դրամները[3]:

Փաստորեն, դրամական շրջանառության տվյալները լիովին համապատասխանում են Արմինիան Արաբական խալիֆայության այլ երկրամասերին կապող առևտրական ճանապարհների մասին Իբն Խորդադբեհի հաղորդած տեղեկություններին:

---

[1] Անդ, էջ 225:
[2] Անդ:
[3] Անդ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՄԻՆԻԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԸ

Արմինիա ոստիկանությունը մի բազմազգ վարչական միավոր էր: Անհրաժեշտ ենք համարում Արմինիա ոստիկանության էթնիկ կազմը քննել ըստ չորս Արմինիաների, քանի որ նրանց միջև այս ասպարեզում գոյություն ունեին զգալի տարբերություններ:

Առաջին Արմինիա: Առաջին Արմինիայի տարածքում բնակվում էին տարբեր ժողովուրդներ ու ցեղեր:

Հայեր: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում, երբ Սասանյանների վարչական բաժանումները պահպանվեցին, Արցախն ու Ուտիքը, ինչպես նաև Սյունիքը, մտան Արմինիա ոստիկանության Առաջին Արմինիա երկրամասի մեջ:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Արցախի և Ուտիքի՝ Հայաստանի մաս լինելու և հայ բնակչություն ունենալու վերաբերյալ սկզբնաղբյուրների հիշատակություններին, քանի որ ադրբեջանական պատմագրությունը անընդհատ փորձում է նենգափոխել պատմական ճշմարտությունը: Զ. Բունիաթովն, օրինակ՝ այնպես է ներկայացնում, թե իբր սկզբնապես Արցախում և Ուտիքում բնակվել են աղվաններ, իսկ հետագայում հայերը նրանց պարտադրել են իրենց դավանանքն ու աստիճանաբար հայացրել[1]: Ադրբեջանցի ուսումնասիրողը, որպես ապացույց, բերում է հայկական ու օտար աղբյուրներից քաղած մի քանի հաղորդումներ, որոնք իբր ցույց են տալիս, որ Արցախում և Ուտիքում սկզբնապես բնակվում էին աղվաններ և խոսում իրենց լեզվով: Նա, օրինակ՝ վկայակոչում է Զաքարիա հռետորին, որը հաղորդում է, թե Առանն առանձին լեզու ուներ[2], որին ավելացնում է նաև արաբ հեղինակներ ալ-Իսթախրիի և ալ-Մուկադդասիի հաղորդումներն այն մասին, որ իբր Առանում խոսում էին առաներեն[3]: Նա՝ այդ հաղորդումներից ելնելով, պնդում է, թե Առանը ո՛չ էթնիկապես և ո՛չ էլ քաղաքականապես

---

[1] Տե՛ս **З. Буниятов,** նշվ. աշխ., էջ 93-102:
[2] Տե՛ս **Н. Пигулевская,** նշվ. աշխ., էջ 81:
[3] Տե՛ս **al-Istakhri**, էջ 192, **al-Moqaddasi**, էջ 378:

երբեք Հայաստանի մաս չի եղել: Եվ, քննարկելով Զաքարիա հռետորի հաղորդումը, նա ամբողջ ընթացքում Առանին զուգահեռ նշում է Վիրքը, որը ևս առանձին լեզու ուներ, փորձելով Հայաստանի նկատմամբ Վիրքն ու Առանը նույն կարգավիճակով ներկայացնել[1]: Իսկ այն, որ Առանում ուժեղ էր հայկական ազդեցությունը, Զ. Բունիաթովը բացատրում է պարսկա-բյուզանդական ու արաբա-բյուզանդական պատերազմների պատճառով Առան տեղափոխված մեծ թվով հայերի առկայությամբ, որոնք զգալի աջակցություն ցույց տվեցին հայկական եկեղեցուն՝ նրա դավանանքն Առանում տարածելու գործում[2]: Չնայած դրան, ըստ նրա՝ Առանի բնակիչների շրջանում, ինչպես, օրինակ՝ Պարտավի շրջակայքում, պահպանվեց առաներեն լեզուն ոչ միայն VI դ., այլ, դատելով արաբ հեղինակների հաղորդումներից, նաև IX-X դդ.[3]: Զ. Բունիաթովը նաև Կիրակոս Գանձակեցուն, որին, ի դեպ, նա աղվան հեղինակ է համարում[4], փորձում է վերագրել այնպիսի մի վկայություն, իբր XIII դ. Առանում հայերեն էին խոսում միայն ազնվականների մեծ մասը[5]: Քանի որ Զ. Բունիաթովը ներկայացնում է, թե իբր հայերն Առանի բնիկներին՝ աղվաններին, պարտադրել են իրենց դավանանքը և աստիճանաբար հայացրել, նա փորձում է նաև պատասխանել այդ կարծիքից բխող մի հարցի. այդ դեպքում ինչու՞ է այդ երկրի մասին միակ պատմական երկը գրվել հայերեն լեզվով: Եվ, ահա՛, «պարզվում» է, որ գիրքը գրվել է աղվաներենով, իսկ հայերն աղվանների «հայացման» և «գրիգորականացման» հետքերը թաքցնելու համար վերացրել են այդ գրքի աղվաներեն բնօրինակը՝ նախապես այն հայերեն թարգմանելով[6]: Սակայն, Զ. Բունիաթովի պնդումները քննության չեն դիմանում:

Սկզբում հստակեցնենք Մեծ Հայքի և Բուն Աղվանից աշխարհի սահմանը: «Աշխարհացոյց»-ը հաղորդում է, թե «զբուն աշխարհն Աղվանից... ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»[7]: Այն տարածվում էր «ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով»[8]: Կուր գետով Աղվանքին սահմանակցում էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհը[9]: Փավստոս Բուզանդը, պատմելով Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքի

---

[1] Տե՛ս **З. Буниятов,** նշվ. աշխ., էջ 93:
[2] Անդ, էջ 94:
[3] Անդ:
[4] Անդ, էջ 99:
[5] Անդ, էջ 94:
[6] Տե՛ս **З. Буниятов**, նշվ. աշխ., էջ 97:
[7] Տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 29:
[8] Անդ, էջ 28-29:
[9] Անդ, էջ 33:

մասին Հայաստան, պարզորոշ նշում է, թե Աղվանից թագավորության ու Մեծ Հայոց միջև սահմանն անցնում էր Կուր գետով[1]: Ապա, նկարագրելով Մուշեղ Մամիկոնյանի պատժիչ արշավանքը դեպի Հայոց Արևելից կողմերը, Փավստոս Բուզանդը վկայում է, որ հայոց զորքերն ազատագրեցին Աղվանից թագավորության կողմից գրավված հայկական հողերը՝ Ուտին, Շակաշենը, Գարդմանաձորը, Կողթը և դրանց շուրջը գտնվող շատ գավառներ: «Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց(իմա՛ Մեծ Հայք-Ա.Ե.) սահման արարեալ կացուցանէին»[2]: Հույն հեղինակ Ստրաբոնը հաղորդում է, թե Կուր գետը հոսում է Հայաստանի և Աղվանքի միջև[3]: «Աշխարհացոյց»-յան Ուտիքի հյուսիսարևմտյան հատվածը զբաղեցնող Սակասենե-Շակաշենը[4], համաձայն նրա՝ Աղվանքին սահմանակցում էր Կուր գետով[5]: Ըստ որում՝ Ստրաբոնը Սակասենեն համարում է Հայաստանի լավագույն շրջանը[6]: Ըստ Պտղոմեոսի՝ Կուր գետը Հայաստանը բաժանում էր Վիրքից ու Աղվանքից[7]: Պլինիոսը հստակորեն հաղորդում է, թե աղվաններն ապրում են Կուրից հյուսիս[8]: Կարելի է սկզբնաղբյուրներից դարձյալ վկայություններ բերել այն մասին, որ Հայաստանի և Աղվանքի միջև սահմանն անցնում էր Կուր գետով, սակայն, բավարարվենք այսքանով:

Պետք է նշել, որ Կուր գետով անցնող Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանն իրենից ներկայացնում էր նաև հայ ժողովրդի էթնիկական սահմանը: Ստրաբոնը՝ պատմելով Հայոց Արտաշես Ա արքայի կողմից հայկական հողերի միավորման մասին, հաղորդում է, թե դրանց թվում էին նաև Սակասենեն (Շակաշեն) և Օրքիստենեն (Արցախ)[9]: Ընդ որում՝ հեղինակը պարզորոշ նշում է, որ Հայոց արքան միավորել էր հայաբնակ ու հայախոս շրջանները: Հողերի վերամիավորումից հետո,

---

[1] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 28:

[2] Անդ, էջ 320-322:

[3] Տե՛ս Страбон, XI, III, 2:

[4] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ,-«ՊԲՀ», 1994, թիվ 1-2, էջ 260:

[5] Տե՛ս **Страбон**, XI, XIV, 4:

[6] Անդ, XI, VIII, 4:

[7] **Պտղոմեոս**, V, XI, 3: Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 30:

[8] Տե՛ս **Pliny**, VI, XI.

[9] Տե՛ս **Страбон**, XI, XIV, 4. Օրքիստենե-Արցախ համարժեքությունը պատմագիտության մեջ վաղուց արդեն պարզված իրողություն է (տե՛ս **Հ. Կարագյոզյան**, Արևելյան Հայաստանի Ուրարտական տեղանունները,-«Լրաբեր (հաս. գիտ.)», 1978, թիվ 10, էջ 56-57):

ըստ Ստրաբոնի՝ Արտաշեսի թագավորության մեջ բոլորը հայերեն էին խոսում[1]:

Մովսես Խորենացին, Հայոց Վաղարշակ թագավորի մասին պատմելիս, ներկայացնում է հայոց լեզվի (ուրեմն՝ նաև հայ ժողովրդի) տարածման սահմանները, որոնք, դատելով պատմահոր հաղորդումներից, ամբողջությամբ համընկնում էին Մեծ Հայքի սահմաններին[2]: Հայոց լեզվի սահմաններում ընդգրկված Մեծ Հայքի արևելյան աշխարհներում իշխում էին Սիսակյանները և Կադմեաց տունը[3]: Վաղարշակ արքան Սիսակյանների տոհմից Առան անունով մեկին կողմնակալ է նշանակում Աղվանից սահմանի (այսինքն՝ Կուր գետի) երկայնքով ձգվող հողերի վրա: Այդ կողմնակալությունը տարածվում էր Հունարակերտ ամրոցից մինչև Երասխ գետը[4]:

Փաստորեն, ըստ Ստրաբոնի և Մովսես Խորենացու՝ Կուրի և Երասխի միջագետքում գտնվող Հայոց Արևելից կողմանց աշխարհներն ի սկզբանե հայաբնակ ու հայախոս էին:

Վերևում արդեն ցույց ենք տվել, որ Աղվանքն էթնիկական անուն չէր, այլ պարզապես դաշտ կամ հարթավայր էր նշանակում: Այստեղից էլ բխում է, որ «աղվան»-ը ցեղանուն չէր, այլ պարզապես նշանակում էր «դաշտի կամ հարթավայրի բնակիչ»[5]: Ըստ որում՝ աղվան անունը չէր վերաբերում միայն մեկ ցեղի: Ստրաբոնն այդպես է անվանում Կուր գետի և Կովկասյան լեռների միջև բնակվող 26 ցեղերի, որոնց, ճիշտ է, Ստրաբոնի օրոք տիրում էր մեկ թագավոր, բայց նախկինում դրանցից յուրաքանչյուրն իր թագավորն ուներ[6]:

Անդրադառնանք նաև «առաներեն» հորջորջվող «լեզվին»: Ինչպես ինքնըստինքյան հասկանալի է, եթե օտարները երկիրը կոչել են Առան, ապա այնտեղի բնակչության լեզուն էլ կարող էին կոչել «առաներեն»: Այդ հանգամանքի վրա մեծ ազդեցություն էր ունենալու այն, որ Առան

---

[1] Տե՛ս **Страбон**, XI, XIV, 5:

[2] Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 116:

[3] Անդ, էջ 126:

[4] Անդ:

[5] Բ. Ուլուբաբյանը կարծում է, թե հունա-հռոմեական հեղինակների «Ալբանիա»-ն, որի հայացման հետևանքով, ըստ նրա՝ առաջացել է «Աղվանք»-ը, կելտերենում նշանակում է «լեռների երկիր» (տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 42-45): Սակայն, վերևում ցույց տվեցինք, որ, դատելով Մովսես Խորենացու հաղորդումից, Աղվանքն էթնիկական անուն չէր ու պարզապես դաշտ էր նշանակում: «Առան» և «Աղվանք» անվանումների փոխատեղումը Կուր գետի երկու ափերին տարածվող Հայոց Արևելից կողմանց և Բուն Աղվանից աշխարհի միջև խոսում է Պատմահոր հաղորդման օգտին:

[6] Տե՛ս **Страбон**, XI, IV, 6:

կոչված Հայոց Արևելից կողմանց աշխարհները Սասանյանների օրոք անջատվել էին Մեծ Հայքից ու կցվել Աղվանից մարզպանությանը: Այդ վարչա-քաղաքական իրավիճակը պահպանվեց նաև արաբների օրոք: Ուստի, Զաքարիա հռետորն ու հիշյալ արաբ հեղինակները, նկարագրելով Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները, ամենայն հավանականությամբ, տարբերակելու համար Առանի լեզուն Աղվանից մարզպանության մյուս էթնիկ խմբերի լեզուներից, այն երկրի անունով պարզապես կոչել են «առաներեն»: Որ այդ անվան տակ նրանք նկատի ունեն ոչ թե աղվաներենը, այլ հայերենը, երևում է ալ-Իսթախրիի և Իբն Հաուկալի այն տեղեկությունից, որ Պարտավի բնակիչները քաղաքի շուկան անվանում էին «ալ-Քուրաքքի»[1]: Ալ-Իսթախրին հաղորդում է, որ ամեն շաբաթ նույն օրը բացվող շուկան իր անունն է տվել շաբաթվա օրվան, այնպես որ տեղի ժողովուրդը, թվելով «շաբաթվա օրերը, ասում է. «շաբաթ, քուրաքքի, երկուշաբթի, երեքշաբթի»»[2]: Ինչպես տեսնում ենք, «քուրաքքի»-ն Հայոց Արևելից կողմանց հայության բարբառում հայերեն «կիրակի» օրվա անվան աղավաղումն է: Եվ, քանի որ այդ միակ հիշատակված «առաներեն» բառն է, փաստորեն, արաբ հեղինակներն իրենց վկայության մեջ «առաներեն» անվանել են տեղի հայության բարբառը, այսինքն՝ հայերենը: Իսկ Զ. Բունիաթովին այդ հաղորդումը հիմք է տվել «առաներեն» անվանված այդ լեզուն նույնացնելու այսպես կոչված «աղվաներեն»-ին[3]: Այս կարծիքը զարգացնում է նաև Ս. Աշուրբեյլին, նշելով, թե ««առաներեն լեզու» խոսքում ենթադրվում է մինչև X դարը ձևավորված ադրբեջաներեն-թյուրքերենը»[4]:

Անդրադառնանք նաև Զ. Բունիաթովի այն պնդմանը, թե Մովսես Դասխուրանցու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկը գրվել է աղվաներենով, իսկ հայերն այն թարգմանել են հայերեն և վերացրել բնագիրը: Ա. Մնացականյանը և Պ. Սևակը ցույց են տվել, որ, եթե այդ երկն իրոք աղվաներենից հայերեն թարգմանված լիներ, ապա նրանում պահպանված կլինեին բնագիր լեզվի հետքեր՝ այսպես կոչված աղվանաբանություններ: Դասխուրանցու գրքում կա մի քանի տող կազմող արաբերեն փաստաթղթի թարգմանություն, որի մեջ պարզ երևում են արաբաբանությունները: Խոսքը հայոց կաթողիկոս Եղիայի նամակին խալիֆայի ուղարկած պատասխանի մասին է, որտեղ կաթողիկոսն

---

[1] Տե՛ս **al-Istakhri,** էջ 184, **Ibn Haukal**, էջ 338:
[2] **Al-Istakhri**, էջ 184:
[3] Տե՛ս **З. Буниятов**, նշվ. աշխ., էջ 178:
[4] Տե՛ս **С. Атурбейли**, նշվ. աշխ., էջ 67:

անվանված է «Արմենեան ազգի ջաթլկ»[1]: «Արմենեան»-ը հայ ժողովրդի արաբական անվանումն է, իսկ «ջաթլկ»-ը, հավանաբար, կաթողիկոս բառի աղավաղումը (جاتلق (ջաթլկ)-قاتلق (կաթլկ)-قاتغق (կաթղկ (կաթողիկ[ոս]))): Մինչդեռ Դասխուրանցու երկում չկա աղվանաբանության որևէ հետք[2]: Բացի այդ, Դասխուրանցու երկում հայ մյուս հեղինակներից մեջբերված բազում հաղորդումներ կան: Եթե Դասխուրանցին գրել է աղվաներենով, ապա նա թարգմանելու էր հայ հեղինակների հաղորդումներն աղվաներեն, որոնք նրա երկի հայերեն թարգմանության հետևանքով մեծապես հեռանալու էին բնօրինակներից: Մինչդեռ, դրանք ուղղակի բառացիորեն համընկնում են հայերեն բնագրերի հետ[3]: Օրինակ՝ Վաղարշակ թագավորի կողմից Առանին Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանին կողմնակալ նշանակելու մասին Մովսես Խորենացին հաղորդում է. «Ի սորա(իմա՛ Առանի-Ա.Ե.) զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»[4]: Դասխուրանցու երկում նույն հիշատակությունը պահպանվել է. «Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց, Ծաւդիացւոց և Գարգարացւոց իշխանութեանց»[5]: Պարզ է, որ այդ հիշատակությունը Մովսես Դասխուրանցին պարզապես արտագրել է Պատմահոր գրքից:

Քննության կարիք ունի նաև Բուն Աղվանից աշխարհի Շաքե և Կամբեճան գավառների բնակչության խնդիրը: Հիշյալ գավառները, ինչպես տեսանք, արաբական տիրապետության ժամանակաշրջանում միասնական իշխանություն էին կազմել, որի իշխանը հպատակություն հայտնեց Սալման իբն Ռաբիային[6]: Արդեն ցույց է տրվել, որ դեռևս հնագույն ժամանակներից Կամբեճանը Հայաստանի մաս էր և ուներ հայ բնակչություն: Կամբեճանի հայ բնակչության մասին են վկայում նաև վրաց աղբյուրները: VI դարում Վիրքի հոգևոր առաջնորդը՝ Դավիթ Գարեջելին, Կամբեճանում (այսինքն՝ նաև Հերեթում, որը զբաղեցնում էր Կամբեճանի հյուսիսային մասը[7]) ստիպված է եղել խոսել հայերեն[1]:

---

[1] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 296:

[2] Տե՛ս **А. Мнацаканян, П. Севак**, По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII-IX вв.»,-«ՊԲՀ», 1967, թիվ 1, էջ 181-182:

[3] Անդ, էջ 182:

[4] **Մովսես Խորենացի**, էջ 128:

[5] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 8:

[6] Տե՛ս بلاذري, I, էջ 240:

[7] Հերեթը տարածվում էր Իորա և Ալազան գետերի ջրկիցի շրջանից մինչև Տկետբա քաղաքը՝ Թելավի մոտակայքում՝ ընդգրկելով այդ գետերի միջագետքը (տե՛ս **Вахушти Багратиони**, էջ 125, տե՛ս նաև **М. Лордкипанидзе,** նշվ. աշխ., էջ 273): Այսինքն՝ Հերեթը զբաղեցնում էր Կամբեճանի հյուսիսային հատվածը:

Վրաց մատենագիր Արսեն Սափարացին (IX դ.), պատմելով Հովհան Մայրավանեցու մասին, թե ինչպես Թեոդորոս Ռշտունին նրա ճակատին աղվեսադրոշմ խարանեց, հաղորդում է, որ նա փախուստի դիմեց կովկասյան լեռնականների մոտ, որոնք նրան չընդունեցին, որից հետո նա «անցավ Կամբեչովան (իմա՛ Կամբեճան-Ա.Ե.)՝ տիրելով Փոքր ձորին, որ «Հայոց (Սոմխիթի) ձոր» է կոչվում»[2]: Դուրս է գալիս, որ VII դ., երբ սկսվել էին արաբական արշավանքները, և ստեղծվել էր Շաքե-Կամբեճանի իշխանությունը, Կամբեճանի բնակչությունը հայկական էր, իսկ գավառի ձորերից մեկն էլ Հայոց ձոր էր կոչվում: Շաքե-Կամբեճանի միասնական իշխանության ստեղծումը ցույց է տալիս, որ այդ ժամանակ արդեն հայաբնակ պետք է լիներ Բուն Աղվանից աշխարհի Շաքե գավառը: Ամենայն հավանականությամբ, Հայոց Արևելից կողմերից կամ Կամբեճանից հայ բնակչության տեղաշարժ էր կատարվել դեպի Շաքե:

Շատ կարևոր վկայություն է պահպանել Կամբեճանի ու Շաքեի հայ բնակչության մասին Հովհաննես Դրասխանակերտցին: Հայոց կաթողիկոսը վկայում է, որ տեղի բնակչությունն «՝ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերօյ» էր[3], ըստ որում, «՝ի ժողովրդենէն մերմէ» արտահայտությունը տեղի բնակչության հայ լինելու մասին է, իսկ «խաշն արօտի մերօյ»-ն՝ դրա հայադավանության մասին: Ինչպես տեսանք, հայ բնակչություն ուներ նաև Հերեթը: Այդ իրողությունը մեծապես նպաստեց IX դ. երկրորդ կեսին Համամ թագավորի գլխավորությամբ Աղվանից թագավորության կազմավորմանը, որի կորիզն էին կազմում հիշյալ հայաբնակ գավառները[4]:

Աղվանից ցեղեր: Դեռևս հույն աշխարհագրագետ Ստրաբոնը և մյուսները մանրամասն տեղեկություններ են հաղորդել Բուն Աղվանից աշխարհի բնակչության մասին: Ստրաբոնը, խոսելով Աղվանից աշխարհի (Աղվանքի կամ Ալբանիայի) խայտաբղետ ցեղերի մասին, հավաքական անվանումով նրանց կոչում է «ալբանացիներ»: Նա հաղորդում է, որ «ալբանացիներն ավելի շատ հակված են դեպի անասնապահությունը և ավելի մոտ են կանգնած վաչկատուն ցեղերին, բայց նրանք այդքան վայրենի և, հետևաբար, այնքան էլ ռազմաշունչ չեն: Նրանք ապրում են իբերացիների և Կասպից ծովի միջև. արևելքում նրանց երկիրը սահմանակցում է ծովին, իսկ արևմուտքում՝ իբերացիներին: Ինչ վերաբերում է մյուս սահմաններին, ապա հյուսիսայինը եզերված է Կով-

---

[1] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները..., հ. Ա, էջ 98:
[2] Անդ, էջ 46-47:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 220:
[4] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 335: Տե՛ս **Д. Мусхелишвили**, նշվ. աշխ., էջ 406:

կասյան լեռներով, իսկ...[հարավային] կողմում գտնվում է Հայաստանը, որը սահմանակցում է նրան»[1]: Հեղինակը, ապա, նկարագրելով հավաքական անունով «ալբանացիներ» կոչվող ցեղերին, տեղեկացնում է, որ «նրանց թագավորները...հրաշալի են: Այժմ...մեկ թագավոր է տիրում բոլոր ցեղերին, իսկ նախկինում այլալեզու ամեն մի ցեղի կառավարում էր իր թագավորը: Նրանք 26 լեզու ունեն, որի պատճառով դժվար են միմյանց հետ հաղորդակցվում»[2]: Մենք արդեն անդրադարձել ենք այն փաստին, որ «Աղվանք»-ը էթնիկական անուն չէր, այլ նշանակում էր դաշտ կամ հարթավայր: «Աղվան»-ն էլ ցեղանուն չէր, այլ նշանակում էր «դաշտում կամ հարթավայրում բնակվող ժողովուրդ»: Այդ է պատճառը, որ «Աղվանք» անվանումը, սկզբնապես վերաբերելով Կուրի ձախափնյակի որոշ երկրամասերի, հետագայում հեշտությամբ տարածվեց նաև Կուրի աջափնյա հայոց աշխարհների վրա, որոնց «Առան» անվանումը նույնպես դաշտ կամ հարթավայր էր նշանակում և մեզանում այժմ էլ օգտագործվում է որպես այդ բառերի հոմանիշ:

Առաջին Արմինիայի հյուսիսային մասում՝ Կովկասյան լեռների արևելյան հատվածի շրջանում նախկինում բնակվող ցեղերի մանրամասն թվարկումը պահպանվել է «Աշխարհացոյց»-ի՝ Ասիական Սարմատիայի վերաբերյալ բաժնում: Այստեղ մանրամասնորեն մեջ ենք բերում այդ հատվածի՝ մեզ հետաքրքրող մասը՝ կարծիք կազմելու այդ երկրամասի էթնիկ կազմի խայտաբղետության մասին: «Աշխարհացոյց»-ը Երկրորդ Արմինիայի մեջ մտնող Դիդոյքից հետո թվարկում է հետևյալ ցեղերին. «...Լեկք, ապա Տապոտարանք, ապա Յաղուտականք, ապա Խենաւք, ապա Շիղպք, ապա Ճիղբք, ապա Փւիք: Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն գնայ դէպ ուղիղս կոյս, յորում Շրւան եւ Խսրւան ազգ՝ մինչեւ ցԽորսվէմ. եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ է դէպ ուղիղ 'ի հիւսիսի՝ յԱթլ գետ, եւ ապա նոյն բազուկն գնայ զելիւք հիւսիւսոյ, յորում բնակեալ են Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փւքանակք, Բագանք, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտկաւատ՝ մինչեւ Ալղմինոն մօրս եւ ցծով: Որոյ ըստ հիւսիսոյ Մասքութան ազգն բնակեալ են, 'ի Վարդանեան դաշտին, ցԿասբից ծովն, յոր բազուկն Կաւկասայ հպի»[3]:

Բուն Աղվանից աշխարհի բնակչության խայտաբղետության մասին հաղորդում են նաև արաբ հեղինակները: Աղվանից մարզպանության տարածքում Խոսրով Անուշիրվանի գործունեության մասին խոսելիս,

---

[1] **Страбон**, XI, IV, 6.
[2] Անդ:
[3] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 26-27:

Բալազուրին հաղորդում է, թե «Անուշիրվան արքան թագավորներ նշանակեց և ամեն մեկին շահություն(իմա՛ թագավորություն-Ա.Ե.) տվեց մի [առանձին] երկրի վրա: Նրանցից էր Զաբալի(իմա՛ լեռան-Ա.Ե.) խականը, որը Սահիբ աս-Սարիրն է և որի կոչումը Վահրարզանշահ է, նրանցից էր Ֆիլանի թագավորը, որը Ֆիլանշահն է, նրանցից էին Թաբարսարանշահը, ալ-Լաքզի արքան՝ Զարշանշահ տիտղոսով, Մասկաթի արքան, որի թագավորությունն այժմ գոյություն չունի, Լիրանի արքան՝ Լիրանշահ տիտղոսով և Շարվանի արքան՝ Շարվանշահ տիտղոսով. [նշանակեց նաև] Սահիբ Բուխին՝ Բուխի վրա և Սահիբ Զարիքիրանին՝ իր երկրի վրա: Եվ հաստատեց Կաբկ լեռների թագավորներին իրենց թագավորություններում»[1]: Աղվանից մարզպանության տարածքում Դարբանդյան ամրությունների պահպանության նպատակով Սասանյանների կատարած վերաբնակեցման մասին հիշատակություն է պահպանել Յակուտ ալ-Համավին: Արաբ հեղինակը, խոսելով այն մասին, որ Դարբանդի հարևան լեռնային շրջաններում բնակվում են ավելի քան 70 ցեղեր, որոնք առանձին լեզուներ ունեն և իրար չեն հասկանում, պատմում է, որ նրանց թվում էին նաև Սասանյանների կողմից Դարբանդի շրջակայքում, այն պահպանելու նպատակով, վերաբնակեցված մի քանի ցեղեր: Վեջինները իրենց բնակության այդ նոր շրջանները ստացել էին որպես սեփական իշխանություն: Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ այդ վերաբնակեցման նպատակը կարևորագույն այդ շրջանում վստահելի պաշտպանություն ունենալն էր: Վերաբնակեցվածների կողքին բնակվում էին Թաբարսարան, Ֆիլան և Լաքզ ցեղերը: Բացի սրանցից, այդ շրջանում էին բնակվում նաև Լիրան(լփիններ) և Շիրվան կոչվող ցեղերը[2]:

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը, խոսելով Մարվան իբն Մուհամմադի կողմից Առաջին Արմինիայի հյուսիսային շրջանների նվաճման մասին, մանրամասնորեն հիշատակում է այդ շրջանի ցեղերին ու դրանց իշխանությունները: Դրանցից էին Սարիրը, որտեղ բնակվում էին ալանական ծագում ունեցող սավիարներն, ինչպես նաև ավարները[3], Տումանը, որը, ինչպես ցույց տվեցինք, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է լակերի ցեղի երկրին, Զարիքիրանը, Համզինը, Սուղդանը, ալ-Լաքզը, ադ-Դուդանիան, Ազրուբիթրանը, Մասդարան, Քիրանը, Թաբարսարանը՝ թավասպարների կամ թաբասարանների երկիրը, Ֆիլանը և այլն[4]:

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 233:
[2] Տե՛ս Jacut, I, էջ 438-439:
[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը, էջ 103:
[4] Տե՛ս ابن الاثير, IV, էջ 216:

Ինչպես գիտենք, Կասպից ծովի արևմտյան ափամերձ շրջանը զբաղեցնում էին Բազկանը, Շիրվանը և Մազքթաց աշխարհը մինչև Դարբանդ, իսկ նրանց հարևանությամբ գտնվում էին Լփնաց և Ճղբաց երկրները, Աբխազ թագավորությունը[1], ինչպես նաև այլ ցեղերի բնակության շրջանները:

Արաբներ: Առաջին Արմինիայի էթնիկ կազմը զգալի փոփոխություններ կրեց արաբ վերաբնակիչների հաստատումից հետո: Արաբների վերաբնակեցումն Արմինիայում խալիֆայության համար ուներ ինչպես քաղաքական, այնպես էլ՝ ռազմավարական կարևոր նշանակություն: Բացի այն, որ, այդպիսով, հեշտանում էր երկրում խաղաղության ապահովվումը, հնարավոր էր դառնում նաև Բյուզանդիայի դեմ ավելի ակտիվ պայքարելը[2]:

Արաբական ցեղերը, ըստ ծագման, բաժանվում էին երկու մեծ խմբերի՝ հյուսիսային և հարավային: Առաջինն իր ցեղապետ Նիզար իբն Մաադդի անունով կոչվում էր Նիզար, իսկ երկրորդը կոչվում էր Եմենի ցեղախումբ: Մեզ առավել հետաքրքրող հյուսիսային կամ Նիզար ցեղախումբը (քանի որ հիմնականում դրա հատվածներն էին տեղափոխվել Արմինիա) բաժանվում էր երկու մեծ ենթախմբերի՝ Մուդար և Ռաբիա: Մուդար ցեղախմբի մեջ էին մտնում Կայս-այլան և Կուրայշ ցեղերը: Կայս-այլանի մաս էր կազմում Սուլայմ (սեռ.՝ Սուլամի) ցեղը, որի մի հատվածը կայսիկներն էին: Ըստ երևույթին, Սուլայմ ցեղի մասն էին կազմում ջահաֆյանները և ութմանիկները[3]: Կուրայշ ցեղից էին

---

[1] Կովկասյան լեռների արևելյան հատվածի հյուսիսային Կողքային լեռնաշղթան, որտեղ մենք տեղադրեցինք Աբխազ թագավորությունը, գրեթե համապատասխանում է այն լեռնաբազկին, որի շրջանում «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Հեճմատակ, Իժմախ, Փասխ, Քոսխ, Փոքոնակ, Բաքան, Մազքութ ցեղերին (տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 347, «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27): Այդ լեռնաբազուկը, ըստ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության, «գնայ զելիւք հիւսիւսոյ, յորում բնակեալ են Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փլքանակք, Բագանք, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտկաւատ» («Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27): Ապզուտկավատ կոչվող պարիսպը Ս. Երեմյանը տեղադրում է Շապորան գետի (Շաբրան-չայ) և Վելվելի-չայի միջև (տե՛ս **Ս. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 37): Այսինքն՝ այդ լեռնաբազուկը, սկսելով Թավասպարների երկրից, ձգվում էր մինչև Շապորան գետի և Վելվելի-չայի միջագետքը: Ինչպես տեսնում ենք, դրա նույնացումը հիշյալ Կողքային լեռնաշղթային համոզիչ է: Աբխազ անվանման առաջացումը մենք բացատրում ենք այդ անվանը փասխերի անվան նմանությամբ («փասխ» անվանումն արաբերենում պետք է հնչեր «ալ-բասխ» ձևով) և հիմնականում Արմինիայում չճանապարհորդած արաբ հեղինակների՝ դրանք միմյանց հետ շփոթելու հավանականությամբ (տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, էջ 221-222):

[2] Տե՛ս **J. Laurent**, նշվ. աշխ., էջ 317-331 :

[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 63:

սերել Մուհամմադն ու Ալին[1]: Նիզար ցեղախմբի մյուս ճյուղը Ռաբիան էր, որի մի հատվածն էր Ուայլ ցեղախումբը: Վերջինի մեջ էին մտնում Բաքր և Տաղլիբ ցեղերը: Բաքրի մի հատվածն էին Շայբանիները, որոնք Աբբասյանների կողմից որպես ժառանգական տիրույթ ստացան Շիրվանը, իսկ IX դ. կեսերից կանգնեցին նաև Տփղիսի ամիրայության գլուխ:

Արաբները սկզբում նվաճված երկրների բոլոր քաղաքներում և ամրոցներում կայազորներ էին հաստատում, որոնց խնդիրն էր խալիֆայության դիրքերի պահպանումն ու ամրապնդումը, սահմանների պաշտպանությունը և տեղի բնակչության հնարավոր ելույթների ճնշումը: Այս կայազորները (արաբերեն՝ رباط-բաթ) տներով ապահովվում էին տեղի բնակչության հաշվին, որը պարտավոր էր դրանց ապահովել անհրաժեշտ ամեն ինչով[2]:

Արաբները նվաճված երկրներում կայազորներ առաջին հերթին հաստատում էին ամենակարևոր կետերում: Նրանք, գրավելով Այսրկովկասի մերձկասպյան շրջանները, հասան մինչև Դարբանդ: Արաբներին անհրաժեշտ էր սահմանային այդ կարևորագույն ռազմավարական հենակետում մշտական ու մեծաթիվ կայազոր պահել: Բալազուրիի հաղորդմամբ՝ VIII դ. սկզբին Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք զորավարը, երբ գրավեց Դարբանդը, այնտեղ բնակվում էր հազար խազարական ընտանիք: Արաբ զորահրամանատարը քշեց նրանց Դարբանդից և այնտեղ տեղավորեց հարավային ցեղախմբին պատկանող 24 հազար արաբներից բաղկացած մի կայազոր[3]: Բալազուրին վկայում է, որ հարավցի արաբներից բաղկացած Դարբանդի կայազորը նույնիսկ IX դարում թույլ չէր տալիս ոչ մի նորանշանակ ոստիկանի մտնել քաղաք, եթե վերջինը բերած չլինի այն դրամը, որը խալիֆայությունը պարտավոր էր վճարել նրան[4]:

Արաբական կայազորներ էին հաստատվել նաև Դարբանդից դեպի արևմուտք ընկած սահմանային ամրությունների գոտում, որոնց մասին տեղեկություն է պահպանել ալ-Իսթախրին. «Բաբ ալ-Աբվաբի լեռներում կան ամրոցներ…: Այդ ամրոցներում ապրում են ցեղեր, որոնք բնակեցվել են…ճանապարհների պահպանության համար…: Գոյություն ունեն այդպիսի 14 ամրոցներ, որտեղ բնակվում են ցեղեր Մոսուլից, Դիար Ռաբիայից և Ասորիքից, և դրանք հայտնի են այդ ցեղերի անուններ-

---

[1] Տե՛ս W. Montgomery Watt, Kuraysh, Encyclopaedia of Islam, V:434a.
[2] Տե՛ս بلاذري, I, էջ 238:
[3] Անդ, էջ 244:
[4] Անդ:

ռով»[1]: Փաստորեն, Դարբանդի շրջակայքում բնակեցվել էին ինչպես հարավային, այնպես էլ հյուսիսային ցեղախմբին պատկանող արաբներ, քանի որ Մոսուլում ու Դիար Ռաբիայում վերաբնակեցվել էին հյուսիսային ցեղախմբին պատկանող արաբներ[2]:

Դատելով արաբ հեղինակների հաղորդումներից՝ Օմայանների ժամանակ, Դարբանդից բացի, հարավային ցեղախմբին պատկանող արաբներից բաղկացած կայազորներ էին հաստատվել նաև Առաջին Արմինիայի բոլոր մեծ քաղաքներում, օրինակ՝ Պարտավում, Բայլականում, Կապաղակում և այլուր[3]:

Առաջին Արմինիայում հաստատվող արաբական կայազորների զինվորները սկզբում գալիս էին առանց ընտանիքների: Դա դարձավ երկրամասի գաղութացման հիմք, քանի որ հետագայում այստեղ էին գալիս նաև նրանց ընտանիքները:

Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք(786-809) սկսվեց Արմինիայում արաբական ցեղերի զանգվածային վերաբնակեցումը: Յակուբին հաղորդում է, որ Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի ոստիկանը(787 թ.) Արմինիա տեղափոխեց Նիզար ցեղախմբին պատկանող այնքան արաբներ, որ վերջիններս տիրապետող դիրքի հասան: Պատմիչը հավաստում է, որ մինչև այդ Արմինիայում(Առաջին Արմինիա) տիրապետող դիրք ունեին հարավցի արաբները[4]: Բնական է, որ վերջինները թշնամաբար ընդունեցին իրենց հարևանությամբ և նաև իրենց հաշվին բնակեցվող հյուսիսցի արաբներին: Աբբասյանների զորքերին այդպես ընդունեցին Բայլականի, Պարտավի, Կապաղակի, Դարբանդի և այլ վայրերի բնակիչները[5]:

Հարուն ալ-Ռաշիդի օրոք ոստիկանները նշանակման երկիր էին ժամանում իրենց ցեղակիցների բազմությամբ: Ինչպես տեսանք, Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամիին(787) Արմինիա եկավ նիզարների ցեղի մեծ բազմության հետ, որի մեջ, ամենայն հավանականությամբ, մեծ թիվ էին կազմում նրա ցեղակից սուլամիները: Հարուն ալ-Ռաշիդի նշանակած հաջորդ ոստիկանը՝ Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանին (787-788), Միջագետքից հավաքեց և Արմինիա փոխադրեց Ռաբիա ցեղի մարդկանց, որոնք տիրապետող դիրքի հասան Առաջին Արմինիայում վերաբնակեցված հյուսիսային ցեղերի մեջ և այդ դիրքը պահպա-

---

[1] **Al-Istakhri,** էջ 192:
[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 51-54:
[3] Տե՛ս يعقوبي, II, էջ 426-428, بلاذري, I, էջ 246:
[4] Տե՛ս يعقوبي, II, էջ 426:
[5] Անդ, էջ 426-428: Տե՛ս նաև بلاذري, I, էջ 246:

նում էին նույնիսկ IX դ. վերջերին[1]: Արմինիայում հաստատված արաբական հարավային ու հյուսիսային ցեղերի միջև թշնամությունն ընդհատեց ոստիկան Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանին, երբ նրանց իրավունքներով հավասարեցրեց միմյանց[2]: Արմինիայի հաջորդ ոստիկանն իր հետ Արմինիա գաղթեցրեց Դիար Մուդար ցեղին, սակայն մնաց միայն չորս ամիս և հեռացավ[3]:

Հարուն ալ-Ռաշիդից հետո Առաջին Արմինիայում արաբական ցեղերի մեջ քանակական առումով գերակշռող էր Ռաբիա ցեղը: VIII դ. վերջից Շիրվանին տիրեցին Ռաբիա ցեղին պատկանող Շայբանիները: Սրանցից առաջինը, որն Արմինիայում ոստիկանի պաշտոն վարեց՝ Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանին էր, որը Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք երկու անգամ նշանակվեց այդ պաշտոնին(787-788, 799-801)[4]: Այդ ժամանակ խալիֆայությունը Արմինիայում արաբական ցեղերի վերաբնակեցում էր իրականացնում: Յազիդը, իր առաջին կառավարման ժամանակ, ինչպես տեսանք, Ռաբիա ցեղախմբից այնքան արաբներ բերեց ու բնակեցրեց Արմինիայում, որ նրանք այնտեղ արդեն մեծամասնություն կազմեցին: Խոսքն այստեղ, հավանաբար, վերաբերում է նրա ցեղակից շայբանիներին: Պետք է ընդգծել, որ Հայաստանում, ինչպես հայտնի է, արաբները երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ Երկրորդ Արմինիայում, ինչպես կտեսնենք, Տփղիսի ամիրայության գլուխ Շայբանիները կանգնեցին միայն IX դ. կեսին, այնպես, որ այնի տեղեկությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Առաջին Արմինիային, ավելի որոշակի՝ Շիրվանին, ուր Յազիդ իբն Մազյադի հաջորդների օրոք IX դարում հիմնադրվում է Մազյադյանների իշխանությունը: Յազիդը երկրորդ անգամ ոստիկան դարձավ 799 թ.: Նրա մահից հետո ոստիկան դարձավ նրա որդին՝ Ասադը (801-802), ապա, նաև մյուս որդին՝ Մուհամմադը (802-803): Ա. Տեր-Ղևոնդյանն այն կարծիքն է հայտնում, որ Մուհամմադը՝ տիրելով Շիրվանի Շամախի ամրոցին, ամրացավ այդ նահանգում, որից հետո արդեն Առաջին Արմինիայի այդ հատվածը դարձավ Մազյադյանների ժառանգական տիրույթներից մեկը: Մուհամմադի որդի Հայսամը, որպես Շիրվանի տեր, արդեն կոչվում էր Շիրվանշահ, իսկ նրա ժառանգները հայտնի էին Շիրվանի Մազյադյանների հարստություն անունով, որը այնտեղ իշխեց մինչև 1027 թ.,

---

[1] Տե՛ս يعقوبي, II, էջ 426-428:
[2] Անդ, էջ 428:
[3] Անդ, էջ 426:
[4] Տե՛ս **Ա. Տեր-Գևոնդյան**, նշվ. աշխ., էջ 276, 278:

երբ նրան փոխարինեցին Քեսրանիները[1]: Շիրվանի և Դարբանդի պատմությունն ուսումնասիրող Վ. Մինորսկին այն տեսակետն է արտահայտում, թե Շիրվանի Մազյադյանների հարստության հիմնադիրը հանդիսացել է Խալիդ իբն Յազիդ իբն Մազյադը[2]: Հարկ ենք համարում ընդգծել, որ Մազյադյան-Շիրվանշահերն անկախություն ձեռք բերեցին Մուտավաքիլի խալիֆայության ժամանակ: «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»[3] մեջ պատմվում է, որ Խալիդի որդի Հայսամը տիրում էր Շիրվանին՝ կրելով Շիրվանշահ տիտղոսը: Մուտավաքիլի սպանությունից հետո հիջրայի 247 թ.(861-862) խռովություններ սկսվեցին, Հայսամը «Շիրվանի գործերում անկախություն ձեռք բերեց»[4]: Այսպիսով, ամփոփելով վերոբերյալը, նշենք, որ Շայբանի-Շիրվանշահերի իշխանության հիմքը դրեց Յազիդ իբն Մազյադը՝ Շիրվանում բնակեցնելով իր ցեղակիցներից այնպիսի մի բազմություն, որ վերջիններս տեղի այլ էթնիկական խմբերի նկատմամբ քանակական առավելություն ձեռք բերեցին: Դրանից հետո նրա հետնորդները կարողացան ժառանգական իշխանություն ձեռք բերել Շիրվանում, որը 860-ական թթ. սկզբին անկախացավ:

Հայոց Արևելից կողմանց երկու աշխարհներում՝ Արցախում և Ուտիքում արաբական ցեղերի վերաբնակեցման մասին պատմում է Մովսես Դասխուրանցին: Պատմիչը տեղեկացնում է, որ հայոց 200 թ.(751) «եղև այս տանս Աղուանից զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն»[5]: Պատմիչն ապա պատմում է, որ Պարտավում հաստատված արաբները դուրս էին գալիս Պարտավից և թալանի մատնում շրջակա բնակավայրերը[6]: Արաբ վերաբնակիչներ կային նաև Բայլականում: Դատելով արաբ պատմիչների հաղորդումներից՝ տեղի արաբները, որոնք պատկանում էին հարավային ցեղախմբին, իրենց բավական ամուր էին զգում: Երբ Աբբասյանները սկսեցին հյուսիսցի արաբների բնակեցնել Օմայանների օրոք վերաբնակեցված Բայլականի հարավցիների կողքին, վերջինները զենքը ձեռքերին դիմավորեցին նրանց[7]:

Արաբական ցեղերի հոսքը դեպի Արմինիա Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայից հետո համարյա ընդհատվեց: Յակուբին միայն հպանցիկ ներ-

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 56-57:
[2] Տե՛ս **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 40, ծանոթ. թիվ 76:
[3] Այս երկի արաբերեն թարգմանությունը տե՛ս **В. Минорский**, նշվ. աշխ., էջ 43-105:
[4] Տե՛ս **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 47:
[5] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 325:
[6] Անդ, էջ 326:
[7] Տե՛ս يعقوبي, II, էջ 426:

կայացնում է, որ Մամունի նշանակած ոստիկան Խալիդ իբն Յազիդ իբն Մազյադ ոստիկանը Իրաքի բանտերից հանեց իր ցեղակիցներին, նրանց հետ միասին շարժվեց Զազիրա, որտեղ նրանց միացավ Ռաբիա ցեղից մեծ բազմություն: Ոստիկանն այսպիսի խառնամբոխով մտավ Արմինիա[1]:

Խազարներ: Դեպի Հյուսիսային Կովկաս կատարվող արշավանքների ժամանակ արաբները երբեմն այնտեղից Առաջին Արմինիա էին տեղափոխում խազարների: Բալազուրին, խոսելով Շամքոր քաղաքի մասին, պատմում է, որ այն շատ հին քաղաք էր: Այն ծաղկուն ու հարուստ քաղաք էր մինչև այն ժամանակ, երբ «սավուրդիա»-ցիները (ألساوردية) գրավեցին ու ավերեցին այն: Պատմիչը, սակայն, հաղորդում է, որ Շամքորի այդ ամայի և ավեր վիճակը պահպանվեց մինչև այն ժամանակ, երբ Բուղան այնտեղ բնակեցրեց խազարների այն մասին, որը հովանավորության խնդրանքով դիմել էր նրան, քանի որ ցանկանում էր մահմեդականություն ընդունել[2]: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ Բուղան Շամքորում բնակեցրել է 300 խազար ընտանիքների[3]: Բալազուրին տեղեկացնում է նաև, որ երբ Մարվան իբն Մուհամմադը ջախջախիչ հարված հասցրեց խազարներին, նրանց խաքանը պարտավորվեց մահմեդականություն ընդունել: Դրանից հետո «Մարվանը բազմաթիվ խազարների հետ շարժվեց առաջ և բնակեցրեց նրանց Սամուրի և Շաբիրանի միջև [գտնվող] հովտում՝ լաքզերի երկրում»[4]:

Այսպիսով՝ Առաջին Արմինիայում արաբների կողմից խոշոր վերաբնակեցում էր իրականացվել: Հիմնականում Առաջին Արմինիա էին բերվել հյուսիսային ցեղախմբի արաբներ և, մասնավորապես, Շայբանիներ: Ինչ վերաբերում է հարավային ցեղախմբերի արաբներին, ապա նրանց գերիշխող դիրքը կարճատև եղավ՝ ընդգրկելով միայն Աբբասյանների խալիֆայության սկզբնական շրջանը:

Երկրորդ Արմինիա: Համարյա ամբողջությամբ համընկնում էր Սասանյանների կազմավորած Վրաց մարզպանությանը և ներառում էր երեք մեծ էթնիկ խմբեր՝ հայեր, վրացիներ, ծանարներ, ինչպես նաև բազմաթիվ մանր ցեղեր:

Հայեր: Սասանյանների տիրապետության ժամանակ կազմավորված Վրաց մարզպանությանը միացվել էր Գուգարաց բդեշխությունը,

---

[1] Անդ, էջ 463-464:
[2] Տե՛ս بلاذري, I, էջ 240:
[3] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 30:
[4] Տե՛ս بلاذري, I, էջ 245:

որը, ինչպես տեսանք, իր տարածքով համապատասխանում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհին: Մովսես Խորենացին, ներկայացնելով հայ ժողովրդի ու հայոց լեզվի տարածման սահմանները Վաղարշակ թագավորի օրոք, պատմում է, որ դրանցում ընդգրկված Գուգարքը Հայոց արքայի կողմից որպես ժառանգություն հանձնվեց հայկազուն Գուշարին, որը Շարայի որդիներից էր[1]: Գուգարքը, ըստ Ստրաբոնի՝ հայաբնակ ու հայախոս այն շրջաններից էր, որոնք մեկ թագավորության մեջ միավորեց Արտաշես Ա-ն[2]: Սկզբնաղբյուրների հիշյալ հաղորդումները ցույց են տալիս, որ Գուգարքը մշտապես աչքի էր ընկնում միատարր հայ ազգաբնակչությամբ:

Վրացիներ: Վրացիները բնակվում էին Գուգարքից հյուսիս՝ տարածվելով մինչև Ծանարների երկիրը: Վրացիներին արաբներն անվանում են քուրջ[3]:

Ծանարներ: Ինչպես վերն արդեն ցույց տվեցինք, ծանարները բնակվում էին Դարիալի ամրությունների հարևանությամբ՝ Թերեք գետի ակունքների շրջանում: Բացի ծանարներից, Կախեթում բնակվում էին էլի մի քանի ցեղեր: Երկրամասի դաշտավայրային մասում բնակվում էին գլխավորապես քարթվելական(վրացական) կախերի և կուխերի ցեղերը, իսկ լեռնային մասում՝ ծանարները, գարդաբանցիները, փխովելները կամ փշավները, սվանները, թուշերը և այլ ցեղեր[4]:

Արաբներ: Ըստ աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Երկրորդ Արմինիա երկրամասում, որ տարածքով զիջում էր Առաջին, Երրորդ և Չորրորդ Արմինիաներին, արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցում տեղի չէր ունեցել: Սակայն, վերոասացյալը բոլորովին էլ չի նշանակում, թե Երկրորդ Արմինիան ընդհանրապես զերծ մնաց արաբ վերաբնակիչներից: Ինչպես իրենց նվաճած այլ երկրներում, այնպես էլ այստեղ արաբներն ի սկզբանե ձեռնամուխ եղան երկրի մեծագույն քաղաքներում և ամրոցներում կայազորների հաստատմանը: Մասուդին հաղորդում է, որ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Երկրորդ Արմինիայի տարբեր քաղաքներում արաբները կայազորներ ունեին[5]: Տփղիսում արաբներ բնակեցվեցին դեռևս VIII դ. սկզբին, որոնք քաղաքում կառուցեցին իրենց մզկիթները: «Քարթլիի մատյան»-ը հաղորդում է, որ արաբները, գրավելով Տփղիսը, այն վերա-

---

[1] **Մովսես Խորենացի**, էջ 128:

[2] Տե՛ս **Страбон**, XI, XIV, 4:

[3] Տե՛ս **Jacut**, I, էջ 78, 857-859 և այլն:

[4] Տե՛ս **Г. Мкртумян,** Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотнощения с Арменией, Ереван, 1983, с. 30-32.

[5] Տե՛ս مسعودي, էջ 204-205:

բնակեցրին իրենց ցեղակիցներով՝ վերածելով մահմեդական քաղաքի[1]: Հետագայում, ինչպես Դվինում և Պարտավում, այնպես էլ Տփղիսում, տեղի արաբ վերաբնակիչները ստեղծեցին իրենց ամիրայությունը[2]: Մասուդիի մի հաղորդումից երևում է, որ Երկրորդ Արմինիայում բնակեցվել էին արաբական տարբեր ցեղեր: Խոսելով Տփղիսի ամիրա Իսհակ իբն Իսմայիլի ապստամբության մասին, արաբ աշխարհագետը տեղեկացնում է, որ «իր մոտ եղած մուսուլմանների հետ նա կարողացավ իրեն ենթարկել շրջապատում բնակվող ցեղերին:...Նրան հպատակ էին այստեղի(իմա՛ Երկրորդ Արմինիա-Ա.Ե.) բոլոր ցեղերը, քանի դեռ Մուտավաքքիլը չէր ուղարկել Բուղային»[3]: Դատելով Մասուդիի մի վկայությունից՝ Բուղայի արշավանքներից հետո Տփղիսի մուսուլմանները կորցրել են իրենց ազդեցությունը[4]:

Երկրորդ Արմինիայում կարևոր հենակետային ամրոց էր Բաբ Ալանը (Ալանաց դուռ), որտեղ արաբներն իրենց կայազորը հաստատել էին դեռևս VIII դ. սկզբին, երբ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը նվաճել էր այն: Դրանից հետո արաբ նվաճողները հյուսիսային սահմանային ամրությունների գոտում գտնվող այդ կարևոր հենակետում մշտական կայազոր էին պահում[5]: Աբու Ջաֆար ալ-Մանսուր խալիֆայի օրոք(754-775), երբ ծանարներն ապստամբեցին խալիֆայության դեմ, Յազիդ իբն Ուսայդ ոստիկանը(Արմինիայի ոստիկան է եղել երեք անգամ՝ 752-754, 759-769, 775-780թթ.) կրկին խալիֆայությանը ենթարկեց նրանց երկիրը, վերանվաճեց Ալանաց դուռը և այնտեղ բնակեցրեց խալիֆայության դիվանում գրանցված մարդկանց[6]:

Անհրաժեշտ է անդրադառնալ ևս մեկ կարևոր իրողության: Հայտնի է, որ VIII դ. սկզբին արաբները նվաճել էին համարյա ողջ Այսրկովկասը՝ բացառությամբ Սև ծովի ափամերձ որոշ շրջանների: Նրանց կայազորներն այդ ժամանակաշրջանում տեղակայված էին Եգերքի, Ափշիլքի և Ափխազքի ամրոցներում: Այսպես. արաբական կայազորներ էին հաստատվել Եգերքի մայրաքաղաք Արքեոպոլսում և Կոդորի լեռնանցքի մի քանի ամրոցներում[7]: Կային նաև ամրոցներ, որոնց պաշտպանությունն

---

[1] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 28:

[2] Տ՛ես **А. Богверадзе**, նշվ. աշխ., էջ 179:

[3] مسعودي, էջ 203:

[4] Անդ, էջ 203-204:

[5] Անդ, էջ 194: Բալազուրին վկայում է, որ Ալանաց դուռը գրավել էր նաև Հաբիբ իբն Մասլամա, սակայն, ըստ երևույթին, նա այնտեղ արաբական կայազոր չէր հաստատել (տե՛ս بلاذري, I, էջ 239):

[6] Տե՛ս بلاذري, I, էջ 246: اهل الديوان -Դիվանի մարդիկ. դրանք այն զինվորներն են, որոնք Խալիֆայության գանձարանից թոշակ էին ստանում՝ ըստ այնտեղ պահվող ցուցակի:

[7] Տե՛ս **М. Лордкипанидзе**, նշվ. աշխ., էջ 249:

արաբները հանձնարարում էին իրենց վասալ տեղացի իշխաններին: Այսպես, օրինակ՝ միսիմիացիների երկրի գլխավոր ամրոց Ձախարի պաշտպանությունը, որն իր ամրության պատճառով կոչվում էր «երկաթյա», արաբների կողմից հանձնվել էր ոմն Փարեսմանի[1]: Սակայն, հայտնի է նաև, որ այս իրավիճակը շարունակվեց մինչև VIII դ. 30-ական թվականները, երբ Լևոն Իսավրացի կայսրն արաբներին դուրս մղեց Եգերքից, Ափշիլքից և Ափխազքից[2]:

Արաբական կայազորները, այսպիսով, տեղակայված էին Երկրորդ Արմինիայի համարյա բոլոր նշանակալից քաղաքներում և ամրոցներում[3]: VIII դարում մի շարք շրջաններում սկսում են ստեղծել ամիրայություններ: Բացի Թիֆլիսի Շուայբյաններից, ամիրայական տներ ստեղծվեցին Ռուսթավում և Դմանիսում[4]: Տփղիսի ամիրայական տունն արաբական աղբյուրները կոչում են Շուայբ և տալիս դրա առաջացման վերաբերյալ մի պատմություն: Յակուբին, խոսելով այն մասին, թե Ամին խալիֆան Արմինիայի ոստիկան է կարգում Ասադ իբն Յազիդ իբն Մազյադին (809-811), պատմում է, որ այդ ժամանակ Երկրորդ Արմինիայի տարբեր շրջանների տիրում էին Յահիյա իբն Սայիդը և Իսմայիլ իբն Շուայբը[5]: Իսմայիլ իբն Շուայբի մասին կովկասագետ Վ. Մինորսկին այն կարծիքն է հայտնում, թե նա ազգական էր Օմայաններին[6]: Սակայն, հազիվ թե դա ճիշտ է, քանի որ Յակուբին նրա մասին հաղորդում է, թե նա Մարվան իբն Մուհամմադի ազատագրած ստրուկն էր[7]: Ըստ երևույթին, Շուայբ անվանումը[8] (شعيب, ամենայն հավանականությամբ, شعب (հոգ. شعوب)-ժողովուրդ բառից) այդ տանը տրվել է՝ նկատի ունենալով նրա հասարակ ծագումը: Արաբական այդ ամիրայական տունը Թիֆլիսում իշխեց ընդհուպ մինչև Բուղայի արշավանքը, երբ այդ տան ներկայացուցիչ Իսհակ իբն Իսմայիլ իբն Շուայբն ապստամբեց խալի-

---

[1] Տե՛ս **Թեոփանես Խոստովանող,** էջ 104: Տե՛ս նաև **А. Богверадзе**, նշվ. աշխ., էջ 174:

[2] Տե՛ս **А. Богверадзе**, նշվ. աշխ., էջ 175:

[3] Տե՛ս **М. Лордкипанидзе,** նշվ. աշխ., էջ 340:

[4] Անդ, էջ 341:

[5] Տե՛ս يعقوبي, II, էջ 435:

[6] **В. Минорский,** նշվ. աշխ., էջ 39:

[7] Տե՛ս يعقوبي, II, էջ 435: Ինչ վերաբերում է Մարվան իբն Մուհամմադի և Իսմայիլ իբն Շուայբի ապրած ժամանակների ակնառու անհամապատասխանությանը, ապա պետք է նշել, որ կամ վերջինը Մարվանի կողմից մանուկ հասակում էր ազատագրվել ստրկությունից, կամ էլ ազատագրվողը նրա հայրն էր եղել, որին Յակուբին նույնացրել է որդուն:

[8] Շուայբը Ղուրանի մարգարեներից մեկի անունն է, որը, կարծում ենք, կապ չունի Տփղիսի Շուայբյանների հետ (տե՛ս **A. Rippin,** Shu'ayb,-Encyclopaedia of Islam, IX:491a).

ֆայության դեմ, սակայն, ծանր հարված ստացավ[1]: Տփղիսի հաջորդ ամիրան՝ Մուհամմադը, արդեն պատկանում էր Շայբանիների տանը[2]:

Արաբների կողմից Հյուսիսային Կովկասից վերաբնակեցված ցեղեր: Ինչպես Առաջին Արմինիայի պարագայում, այնպես էլ Երկրորդ Արմինիայում, արաբները վերաբնակեցնում էին այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների: Այսպես. Բալազուրին մի տեղեկություն է պահպանել այն մասին, թե ինչպես Մարվան իբն Մուհամմադը դեպի Խազարական թագավորություն կատարած արշավանքի ժամանակ հարձակվեց այդ ժամանակ այնտեղ գտնվող սլավոնների (صقالبة) վրա և գերի վերցրեց նրանցից 20 հազար ընտանիք և բերեց, բնակեցրեց Խախիթում (Կախեթ-Ա.Ե.): Հետո այս սլավոնները փախուստի դիմեցին, բայց Մարվանը հասավ նրանց ետևից և բոլորին կոտորեց[3]: Այսինքն՝ սլավոնների վերաբնակեցումն անհաջողության մատնվեց: «Քարթլիի մատյանի» մեջ հիշատակված է, որ Բուղան անցավ Դարիալը և բերեց ու Վիրքի Դմանիս քաղաքում բնակեցրեց 100 օս(ալան) ընտանիքների[4]:

Այսպիսով՝ Երկրորդ Արմինիայում տեղի չունեցավ արաբների այն զանգվածային վերաբնակեցումը, ինչ Առաջին Արմինիայում: Այստեղ ևս, դատելով այն փաստից, որ IX դ. կեսերին Տփղիսի ամիրայության գլուխ կանգնեցին Շայբանիները, հիմնականում վերաբնակեցվել էին հյուսիսային ցեղախմբի և, մասնավորապես, Շայբանի ցեղի արաբները:

Արմինիա ոստիկանության մեջ ընդգրկված մյուս հայկական հողերը մտնում էին Երրորդ և Չորրորդ Արմինիաների մեջ:

Երրորդ Արմինիա

Հայեր: Հայտնի է, որ Հայաստանը մշտապես աչքի էր ընկնում իր միատարր հայ ազգաբնակչությամբ[5]: Արաբները միատարր ազգաբնակչություն ունեցող երկրում կարիք ունեին հուսալի հենարանի, այսինքն՝ արաբական գաղութների: Դրանց կարիքը նրանք հատկապես զգացին 774-775 թթ. ապստամբության ժամանակ, երբ Հայաստանում նրանց ունեցած ուժերն ապստամբությունը ճնշելու համար բավարար չեղան:

Արաբներ: Երրորդ Արմինիայում արաբների վերաբնակեցման մասին սկզբնաղբյուրների տեղեկություններն այնքան էլ հարուստ չեն: Սկզբնաղբյուրների հաղորդումներից երևում է, որ VIII դ. սկզբին արդեն

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 248:
[2] Տե՛ս **М. Лордкипанидзе,** նշվ. աշխ., էջ 348:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ 244-245:
[4] Տե՛ս «Матиане Картлиса», էջ 30:
[5] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. I, Ե., 1971, էջ 707:

Հայաստանի քաղաքներում արաբական կայազորներ կային: Օրինակ, երբ 703 թ. հայ նախարարներից ոմանք հեռանում էին դեպի Բյուզանդիա, «զօրքն Իսմայելի, որ էին ի Նախջաւան քաղաքի՝ յարձակեցան զկնի նոցա և ոչ մեկնեցան ի հետոց նոցա. քանզի էին աւելի քան ԵՌ և կամէին կենդանւոյն կլանել զնոսա»[1]: Ճիշտ է, Հայաստանի քաղաքներում հաստատվող արաբական կայազորների զինվորները սկզբում գալիս էին առանց ընտանիքների, սակայն, դա դառնում էր գաղութացման հիմք, քանի որ ժամանակի ընթացքում Հայաստան էին տեղափոխվում նաև նրանց ընտանիքները: Այդ է պատճառը, որ, նախքան Հարուն ալ-Ռաշիդի օրոք սկիզբ առած մեծ վերաբնակեցումը, դատելով Ղևոնդի տեղեկություններից, Հայաստանում արաբական գաղութներ կային: Պատմիչը վկայում է, որ արաբ զորավար Ջառահի՝ Խազարների երկրում պարտություն կրելուց հետո Սեթ Հարաշին(նույն ինքը՝ Արմինիայի ոստիկան Սաիդ իբն Ամրու ալ-Հարաշին (730-731)-Ա.Ե.) հարձակվում է Արմինիա ներխուժած խազարների վրա ու հաղթում նրանց՝ առանց սպասելու խալիֆայի կողմից օգնության ուղարկված Մսլիմին: Վերջինս գալիս, խստորեն պատժում է Սեթին և նույնիսկ ցանկանում սպանել նրան: Այդ ժամանակ, ինչպես հաղորդում է Ղևոնդը, «ազգատոհմն նորա (իմա՛ Սեթի-Ա.Ե.) յարուցեալ բարձրացուցանէին զաղաղակ»[2]: Այսինքն՝ Սեթ Հարաշին Հայաստան էր տեղափոխել իր ցեղը: 774-775 թթ. ապստամբության նախօրեին արաբ վերաբնակիչներ էին հաստատվել նաև Դվինում: Ըստ Ղևոնդի, երբ 774 թ. ապստամբություն բարձրացավ արաբական տիրապետության դեմ, Դվինի արաբները՝ «արք և կանայք», խուճապահար եղան[3]: Հետագայում արաբները Դվինում սեփական ամիրայությունը ստեղծեցին[4]:

Դատելով սկզբնաղբյուրների վկայություններից՝ արաբական գաղութ էր հաստատվել նաև Նախճավանում: Բուղայի արշավանքի ժամանակ Նախճավանի Աբրահամ(Իբրահիմ) անունով ամիրան Սմբատ սպարապետից լուր ստացավ Վասպուրականի զորքերի հարձակման մասին, ճակատամարտ տվեց նրանց, բայց պարտություն կրեց[5]: Այսինքն՝ Նախճավանում հաստատված արաբ վերաբնակիչներն այնտեղ սեփական ամիրայությունն էին ստեղծել:

Մենք արդեն ցույց ենք տվել, որ, երբ Արմինիայի այս կամ այն մա-

---

[1] **Ղևոնդ**, էջ 24:
[2] Անդ, էջ 101-103:
[3] **Ղևոնդ**, էջ 141:
[4] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում,- ՀՍՍՀ ԳԱԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 10, էջ 13-15:
[5] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 304:

սում հաստատվում էին արաբ վերաբնակիչներ և հիմնադրում իրենց իշխանությունները, նրանք վարչականորեն ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին ու, այդ իսկ պատճառով, ավելի ուշ, Հայոց թագավորներն ու իշխաններն իրենց իրավունքն էին համարում նրանց իրենց ենթարկելը: Օրինակ՝ Աշոտ Ա-ի իշխանությունն ընդունում էին Հերի և Սալամասի (Սալմաստ) արաբական ամիրայությունները[1]: Բայց արաբների հաստատումն Արմինիայի տարբեր մասերում փոփոխություններ էր մտցնում ժամանակակիցների մտածողության մեջ: Այն ստիպում էր, որ այլ աղբյուրներում Պարսկահայքի հյուսիսային գավառները համարվեն Ատրպատականի մաս: Ղևոնդն, օրինակ՝ նկարագրելով արաբների անընդհատ սաստկացող բռնությունները, պատմում է, թե VIII դ. կեսերին Գագիկ Արծրունին հավաքեց իր զորքը և «ելեալ ասպատակ սփռէր զկողմամբք Ատրպատական աշխարհին, ի Զարևանդ գաւառ, ի Բուտակս և Զիդռօյ, ի Տասուկ, ի Գազնակ, ի Յորմի, ի Սուրենապատ և յայլ ևս մերձակայ գաւառսն...և գայր հասանէր ի գաւառն Հէր»[2]: Վերոհիշյալ պատճառով VIII դ. կեսերին Ղևոնդի կողմից Պարսկահայքի կենտրոնական և հյուսիսային գավառների հիշատակությունն Ատրպատականի կազմում մենք համարում ենք այդտեղ արաբական գաղութների հաստատման հետևանք[3]:

Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ արաբական գաղութներ էին հաստատվել Հերում, Զարևանդում, Սալմաստում և Մարանդում: Հովհաննես Դրասխանակերտցին տեղեկացնում է, թե Վասպուրականի Գագիկ թագավորն անընդհատ կռիվներ էր մղում Հերի, Զարևանդի, Մարնադի և Նախճավանի շրջաններում հաստատված արաբական ամիրայությունների դեմ[4]: Իսկ Անանուն Զրուցագիրը պատմում է, թե Վասպուրականի Դերեն (Դերենիկ) իշխանը (874/875-885) նվիրակ է ուղարկում Հերի ամիրայի որդիների մոտ, հաղորդելով, որ ինքը կամենում է գնալ և որս անելու նպատակով ծմեռել նրանց մոտ, քանի որ Մարանդի կողմերը որսաշատ են[5]: Ընդ որում, նա հաղորդում է, թե Մարանդի ամիրայությունը Դերեն իշխանի օրոք միացվել էր Հերի ամիրայությանը[6]: Պատմիչի այլ հաղորդումները ցույց են տալիս, որ Հերի ամիրայության կազմում ընդգրկված էր ինչպես Մարանդը, այնպես էլ

---

[1] Տե՛ս **Կոստանդին Ծիրանածին**, էջ 10:
[2] Ղևոնդ, էջ 133-134:
[3] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա ոստիկանության սահմանները, էջ 248:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 290-292:
[5] Տե՛ս **Շապուհ Բագրատունի**, էջ 68-69:
[6] Անդ, էջ 64:

Սալմաստը[1]: Դատելով մեր վերոհիշյալ այն կարծիքից, թե Ղևոնդի կողմից Պարսկահայքի հյուսիսային գավառները VIII դ. կեսերին Ատրպատականի կազմում հիշատակելու պատճառն այդ գավառներում արաբական գաղութների հաստատումն էր, վերջինները հիշյալ շրջաններում հաստատվել են նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Արաբ վերաբնակիչները, հավանաբար, այդ շրջաններ էին ներթափանցել Ատրպատականի ոստիկանությունից: Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, ապա նրանք պատկանում էին արաբական հյուսիսային ցեղախմբին, քանի որ Աբբասյանների գահակալության նախօրյակին Ատրպատականում մեծավ մասամբ հյուսիսային ցեղախմբին պատկանող արաբական ցեղեր էին վերաբնակեցվել[2]:

Երրորդ Արմինիայի տարածքում էին գտնվում նաև Ութմանիկ կոչվող արաբական ցեղի տիրույթները, որոնք ևս, ամենայն հավանականությամբ, պատկանում էին արաբական ցեղերի հյուսիսային խմբին: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, թե ութմանիկները Հայաստան են տեղափոխվել Հարուն ալ-Ռաշիդի օրոք իրականացված մեծ վերաբնակեցման ընթացքում[3]: Սակայն, սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից դատելով՝ ութմանիկները Հայաստան էին տեղափոխվել նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Թովմա Արծրունին հաղորդում է, թե ութմանիկներն իրենց կալվածքները հայ նախարարներից խլել էին 860-ական թվականների վերջի և 870-ական թվականների սկզբի իրադարձություններից հարյուր տարի առաջ, այսինքն՝ նախքան 774-775 թթ. ապստամբությունը[4]: Այդ ժամանակ նրանք պետք է, որ տիրած լինեին Աղիովիտի մի մասին, իսկ հետագայում սկսեին քայլ առ քայլ իրենց տիրույթներինց դուրս մղել Գնունիներին: Ապստամբության պարտությունից հետո նրանք կարողացան գրավել նաև Բերկրի քաղաքը: Գնունիները ստիպված օգնության խնդրանքով դիմեցին Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն, որը հազար հոգուց կազմված մի զորագնդով գնաց Աղիովիտ գավառը և այնտեղից Տայք տեղափոխեց նրանց[5]: Գաղթեցված Գնունիների հողերին, ամենայն հավանականությամբ, ամբողջովին տիրեցին ութմանիկները[6]: Ութմանիկները, օգտվելով այն իրավիճակից, որը ստեղծվել էր Բուղայի կողմից Արծրունիներին պարտության

---

[1] Անդ, էջ 47:
[2] Տե՛ս يعقوبي, II, էջ 371:
[3] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները..., էջ 84-85:
[4] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 333:
[5] Վարդան վարդապետ, էջ 83:
[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 306, 332:

մատնելուց հետո, որին մասնակցել էին նաև իրենք[1], տարածվեցին մինչև Ամյուկ բերդն ու հասան Վարագ[2]: Թովմա Արծրունին, որ ութմանիկներին պարզապես անվանում է «Բերկրու քաղաքացիներ»[3], խոսելով 868 թ. գերությունից վերադարձած Աշոտ Արծրունու գործունեության մասին, հաղորդում է, թե նա «գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին»: Սակայն, տեսնելով, որ ամրոցն անառիկ է, Աշոտը բավարարվեց միայն Վարագը (հավանաբար, պատմիչը նկատի ունի Վարագա լեռան շրջակայքը-Ա.Ե.) նրանցից ազատագրելով[4]:

Երրորդ Արմինիայում արաբ վերաբնակիչներ հաստատվեցին նաև Բուղայի արշավանքի ժամանակ: Թովմա Արծրունին տեղեկացնում է, թե երբ Բուղան ավեր սփռելով անցնում էր Հայաստանով, նրա հետ էին «Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս»[5]: Վերջինս իր հետ բերել էր նոր արաբ գաղթականների իրենց ընտանիքներով: Պատմիչը հաղորդում է, թե «սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա(իմա՛ Բուղայի-Ա.Ե.) ընտանեօք իւրեանց, և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս»[6]: Ինչպես տեսնում ենք, Բուղայի բերած վերաբնակիչներն անմիջապես հաստատվում էին երկրում, միմյանց միջև բաժանում հողերը, սահմանազատում կատարում և կայազորներ հաստատում ամրոցներում:

Փաստորեն, արաբական գաղութներ էին հաստատվել Երրորդ Արմինիայի հարավ-արևելյան հատվածում, Դվինում և Վանա լճի արևելյան ափին:

Չորրորդ Արմինիա

Արաբներ: Վերին Միջագետքը կամ, ինչպես արաբներն էին այն անվանում, Ջազիրան(արաբ. կղզի) նվաճեց Իյադ իբն Ղանմը 639-640թթ.[7]: Վերին Միջագետքի նվաճմանը հաջորդեց արաբական ցեղերի կողմից

---

[1] Անդ, էջ 306:
[2] Անդ, էջ 306, 332-334:
[3] Անդ, էջ 306:
[4] Անդ, էջ 332:
[5] Անդ, էջ 206:
[6] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 238:
[7] Տե՛ս بلاذري, I, էջ, 204-215:

այդ երկրամասի գաղութացումը: Վերին Միջագետքը, որը հյուսիսում սահմանակցում էր Չորրորդ Արմինիային, իր վերաբնակիչներով վճռական ազդեցություն ունեցավ վերջինի քաղաքական կյանքի հետագա ընթացքի վրա: Սկզբում Վերին Միջագետք եկան արաբական հյուսիսային ցեղախմբին պատկանող Տաղլիբ և Բաքր ցեղերը: Տաղլիբը հաստատվեց Մոսուլի շրջանում, որը կոչվեց Դիար (ديار-երկիր, տուն) Ռաբիա, քանի որ Տաղլիբը Ռաբիա ցեղի մեջ էր մտնում, իսկ Բաքրը (մասնավորապես, Շայբանը) շարժվեց դեպի Տիգրիսի վերին հոսանքն ու տիրեց Մեծ Հայքի Աղձնիք աշխարհին: Բաքր ցեղի անունից այս կողմերը կոչվեցին Դիար Բաքր: Այդ անվանումը մինչև օրս պահպանել է Ամիդ քաղաքը(Դիարբեքիր): Վերին Միջագետքի այն հատվածը, որը հնում հայտնի էր Օսրոյենե անունով[1], բնակեցվեց Կայս-այլան ցեղի կողմից: Սրա գրաված հողերը Վերին Միջագետքում, որոնք տարածվում էին Եփրատ գետի միջին հոսանքի ավազանում՝ Կիրկեսիոնից մինչև Սամոսատ, կոչվեցին Դիար Մուդար, քանի որ Կայսը պատկանում էր արաբական ցեղերի Մուդար ենթախմբին[2]:

Արաբները՝ Բյուզանդիայի դեմ հաջող պատերազմներ մղելու անհրաժեշտությունից ելնելով, աստիճանաբար գաղութներ էին ստեղծում Չորրորդ Արմինիա երկրամասում: Այստեղ հաստատվեց Սուլայմ ցեղը, որի մասնակցությունը մեծ էր Մեծ Հայքի արևմտյան աշխարհների գրավման գործում: Երբ արաբական զորքերը նվաճեցին Վերին Միջագետքը՝ Մուավիան Հաբիբ իբն Մասլամային և Սաֆվան իբն Մուաթթալ ալ-Սուլամիին ուղարկեց Եփրատն ի վեր Բյուզանդական զորքերին ետ մղելու: Սրանք գրավեցին Շիմշաթը, բարձրացան մինչև Կամախ, որը գրավել նրանց չհաջողվեց: Կամախը գրավեց մեկ այլ Սուլամի՝ Ումայր իբն ալ-Հուբաբը[3]: Մուավիան Շիմշաթի կառավարիչ նշանակեց Սաֆվան իբն Մուաթթալ ալ-Սուլամիին, որն այդ պաշտոնում մնաց ցմահ[4]: Բալազուրին հաղորդում է, որ VIII դ. կեսին Կոստանդին Կոպրոնիմոսի արշավանքի ժամանակ Կամախին տիրում էր Աբու Քարիմ անունով մեկը, որը Սուլայմ ցեղից էր[5]:

Հայաստանում Սուլայմ ցեղի հաստատմանը նպաստեց նաև այն, որ այդ ցեղի որոշ ներկայացուցիչներ զբաղեցրել են նաև Արմինիայի ոստիկանի պաշտոնը: Օրինակ՝ Յազիդ իբն Ուսայդ աս-Սուլամին այդ

---

[1] Տե՛ս **Ս. Երեմյան**, Մարզպանական Հայաստանը և հարևան երկրները 387-628 թթ., քարտեզ:

[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 51-54:

[3] Տե՛ս بلاذري, I, էջ, 219:

[4] Անդ:

[5] Անդ, I, էջ 236:

պաշտոնը զբաղեցրել է 3 անգամ (752-754, 759-769, 775-780թթ.)[1]: Իր առաջին կառավարման շրջանում Յազիդը վերականգնեց բյուզանդական զորքերի կողմից ավերված Կարնո քաղաքը և այնտեղ վերաբնակեցրեց արաբների իրենց ընտանիքներով[2]: Ամենայն հավանականությամբ, նա Կարնո քաղաքում վերաբնակեցրել էր իր ազգական սուլամիներին: Յակուբին, պատմելով Հարուն ալ-Ռաշիդի նշանակած ոստիկանների և նրանց գործունեության մասին, նրանց թվում հիշատակում է նաև Յազիդի երկու որդիներին, որոնք նույնպես վարել են ոստիկանի պաշտոնը Արմինիայում: Խալիդ իբն Յազիդը ոստիկան է եղել 794 թ., իսկ Ահմադ իբն Յազիդը՝ 796-797[3]: Յազիդի ընտանիքից բացի Արմինիայում ոստիկաններ են եղել նաև այլ Սուլամիներ: Հայտնի է Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամին (787), որը, ինչպես տեսանք, նպաստեց դեպի Արմինիա (այս դեպքում, ամենայն հավանականությամբ, Հայաստան իմաստով-Ա.Ե.) արաբական ցեղերի գաղթին:

Չորրորդ Արմինիայում արաբների առաջին վերաբնակեցումը տեղի ունեցավ Կարնո քաղաքում Հաբիբ իբն Մասլամայի կողմից 655 թ. արշավանքի ժամանակ: Գրավելով քաղաքը՝ Հաբիբը մի քանի ամիս մնաց այնտեղ: Շուտով նրան հայտնեցին, որ Արմանիակուսի իշխանը (բաթրիկ) զորք է հավաքում մուսուլմանների դեմ և, որ նրան են միացել զորաջոկատներ «Ալլանի, Աֆխազի[4] և խազարական Սամանդարի բնակիչներից»[5]: Հաբիբն օգնության խնդրանքով դիմեց խալիֆա Օսմանին (644-656), իսկ վերջինն էլ հանձնարարեց Մուավիային՝ Հաբիբին օգնության ուղարկել Ջազիրայի և Ասորիքի այն արաբներից, որոնք կցանկանային մասնակցել պատերազմին և բաժին ունենալ ավարից: Մուավիան Հաբիբին ուղարկեց երկու հազար տղամարդ, այսինքն՝ զինվոր, որոնց նա տեղավորեց Կարնո քաղաքում և հողեր տրամադրեց[6]: Դատելով այն փաստից, որ Հաբիբը արաբ զինվորներին հողեր տրամադրեց, նրանք, հավանաբար, Հայաստան էին եկել ընտանիքներով: Այս եզրակացությունը կարելի է բխեցնել նաև Ղևոնդի մի վկայությունից, որը վերաբերում է VIII դ. կեսերին, երբ Բյուզանդիայի կայսր Կոստանդինը գրավեց Կարնո քաղաքը և «զզօրսն քաղաքին և զբնակեալսն ի նմա Սառակինոսս բառնայր նոցին ընտանեօքն յաշխարհն Յունաց»[7]:

---

[1] Տե՛ս **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 274-275:
[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 130:
[3] Տե՛ս يعقوبي, II, էջ 426-428: Տե՛ս նաև **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 277-278:
[4] Ըստ երևույթին, պետք է լինի Աբխազ:
[5] بلاذري, I, էջ 234:
[6] Անդ:
[7] **Ղևոնդ**, էջ 129:

Բյուզանդական զորքերի նահանջից հետո Յազիդ իբն Ուսայդ ոստիկանը, ինչպես տեսանք, վերականգնեց Կարնո քաղաքն ու նոր արաբ վերաբնակիչներ բերեց, հավանաբար, սուլամիներ: Փաստորեն, արաբներն ի սկզբանե Կարնո քաղաքում արաբական գաղութ էին հաստատել: Դատելով Մեծ Հայքի արևմտյան աշխարհների գրավման գործում Սուլայմ ցեղի ակտիվ դերակատարությունից՝ պետք է կարծել, որ Հաբիբը Կարնո քաղաքում հենց սուլամիների էր վերաբնակեցրել: Արաբական գաղութ էր ստեղծվել նաև Շիմշաթում, որն Չորրորդ Արմինիայի կազմում վարչականորեն առանձին միավոր էր համարվում և ուներ առանձին զինվորական կառավարիչ[1]: Այստեղ ևս, ամենայն հավանականությամբ, հաստատվել էին սուլամիները:

Չորրորդ Արմինիայի արևելյան հատվածում, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, հաստատվել էին Սուլայմ ցեղի մաս կազմող կայսիկները: Չնայած Ա. Տեր-Ղևոնդյանի հայտնած այն կարծիքին, թե արաբական կայսիկների ցեղը Հայաստան է տեղափոխվել Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809) սկիզբ առած մեծ վերաբնակեցման ժամանակ[2], հավանական է նաև, որ կայսիկները, կամ, որ առավել իրական է, նրանց մի հատվածը, Հայաստանում հաստատված պետք է լիներ նախքան այդ: Մենք դեռ մանրամասնորեն կանդրադառնանք կայսիկների ցեղին պատկանող Զահապի տան անդամների գործունեությանը, սակայն, այժմ պետք է անդրադառնալ նրանց վերաբերող մի կարևոր իրողության: 775 թ. Արձնիի ճակատամարտում ընկել էր 774-775թթ. ապստամբության կազմակերպիչ և ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը՝ թողնելով երկու որդի և չորս դուստր: Վարդան Արևելցին հաղորդում է, որ սրանք «անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թե 'ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ. և մի 'ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Զահապի ումեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա»[3]: Զահապը՝ ամուսնանալով Մամիկոնյան օրիորդի հետ, ցանկանում էր նրա ժառանգական իրավունքով տեր դառնալ Մամիկոնյանների տիրույթներին[4]: Պարզ է, որ Հարուն ալ-Ռաշիդի օրոք Հայաստան տեղափոխված Զահապը չէր կարող այդքան արագ ակտիվանալ՝ 774-775 թթ. ապստամբությունից մի փոքր անց հավակնություններ ցուցաբերելով ոչ վաղ անցյալում երկրի խոշոր հողատերերից մեկի ժառանգության նկատմամբ՝ պայքարի մեջ մտնելով Բագրատունիների հետ: Սուլայմ ցեղից որոշ անձինք Ար-

---

[1] Տե՛ս بلاذري, I, էջ 220, 240: Տե՛ս նաև Ibn Khordadbeh, էջ 122:
[2] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 96:
[3] **Վարդան վարդապետ**, էջ 83:
[4] Անդ:

մինիայի ոստիկանի պաշտոնը վարել են: Ինչպես տեսանք, ոստիկան Յազիդ իբն Ուսայդ աս-Սուլամին վերակառուցեց Կարնո քաղաքը և այնտեղ, ամենայն հավանականությամբ, վերաբնակեցրեց իր ցեղակից սուլամիներին: Վերջինների մեջ պետք է լինեին, ամենայն հավանականությամբ, կայսիկները և ութմանիկները: Այս տեսակետի օգտին է խոսում այն փաստը, որ, ըստ Թովմա Արծրունու՝ ութմանիկներն իրենց կալվածքները հայ նախարարներից խլել էին նախքան 774-775թթ. ապստամբությունը: Կայսիկները հաստատվել էին ութմանիկներին պատկանող Աղիովտից դեպի արևմուտք՝ տիրելով Խլաթին: Հենց այստեղ՝ իր ցեղակից կայսիկների մոտ հեռացավ պարտված Սևադա Ջահաֆյանը[1]: Կայսիկների և ութմանիկների՝ Վանա լճի հյուսիսային ափերին նախքան 774-775 թթ. ապստամբությունը հաստատված լինելու իրողությունն ապացուցում են նաև Ղևոնդի վկայությունները: Պատմիչը հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբությունը ճնշելու համար Հայաստան արշավող Ամր զորավարը նախապես եկավ Խլաթ և այնտեղի քաղաքացիներից հավաքեց իրեն անհրաժեշտ բոլոր տեղեկությունները հայ ապստամբական զորքի և նրա ղեկավարների մասին[2]: Թերևս, սխալված չենք լինի, եթե այն կարծիքն արտահայտենք, որ Ամրին տեղեկություններ տվողները տեղի արաբ վերաբնակիչներն են եղել: Մեր կարծիքը հաստատում է նաև Ղևոնդի մյուս վկայությունը, թե հայ ապստամբները կեղծ համարեցին այդ ժամանակ Խլաթում գտնվող Աշոտ Բագրատունու ուղարկած լուրը թշնամու հարձակման մասին, կարծելով, թե այդ կերպ նա կամենում է փրկել քաղաքը հայ ապստամբների կողմից պաշարումից[3]: Ավելին, Ղևոնդի հետագա տեղեկություններից պարզվում է, որ այդ ժամանակ արաբ վերաբնակիչներ կային նաև Արճեշում: Պատմիչը հաղորդում է, թե երբ 774-775 թթ. ապստամբության ժամանակ Արծրունյաց իշխաններն արշավեցին Արճեշի ուղղությամբ՝ կամենալով «բրել զնա ի հիմանց և զզօրսն որ ի նմա՝ հարկանել սրով», Արճեշի քաղաքացիներն այդ մասին արագ լուր տվեցին Խլաթ[4]: Պարզ է, որ բացի Արճեշում տեղակայված արաբական զորքից, որը հայ ապստամբները ցանկանում էին կոտորել, քաղաքում բնակվում էին նաև վերաբնակիչ արաբներ («բնակիչք քաղաքին»): Ուստի և կարծում ենք, որ նախքան 774-775 թթ. ապստամբությունը Վանա լճի հյուսիսային ափերին արդեն հաստատված արաբական գաղութներ կային, որոնց վրա հենվելով՝ Ջահապն ակտիվ գործունեություն էր ծավալել Հայաստանում:

---

[1] Տե՛ս يعقوبي, II, էջ 463:
[2] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 145:
[3] Անդ, էջ 145-146:
[4] Անդ, էջ 146-147:

Կայսիկները, ինչպես ութմանիկները, կարողացան մեծապես օգտվել Բուղայի արշավանքից: Նրանց այդ ժամանակ հաջողվեց տիրել արաբ հեղինակների աշխատություններում Բաջունայս անվամբ հանդես եկող Ապահունիքին և ձեռք գցել մեծ կարևորություն ունեցող Մանազկերտ քաղաքը[1]: Խալիֆայությունում իրավիճակը անչափ բարդ էր, ուստի և խալիֆաները մեծամեծ խոստումներ էին տալիս նրանց, ովքեր կկարողանային տեղերում պահպանել արաբական իշխանությունը: Խալիֆան նույնիսկ Աբուսեթի որդի Յուսուֆ ոստիկանին խոստացել էր, թե հաջողության դեպքում «քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն (իմա՛ Արմինիան-Ա.Ե.) ի ժառանգություն»[2]:

Ջահաֆյանները, հավանաբար, Սուլայմ ցեղից էին: «Ջահաֆյաններ» անունով Ջահապի կամ Ջահաֆի տոհմը կոչում է Յակուբին[3], իսկ Վարդանն այն «Ջահապի տուն» է անվանում[4]: Վերջինիս քաղաքական ասպարեզում հայտնվելը կապված է 774-775 թթ. ապստամբությունից հետո Մամիկոնյանների թուլանալու, Կամսարականների՝ քաղաքական ասպարեզից հեռանալու և նրանց տիրույթների նկատմամբ տարբեր իշխանական տների ունեցած հավակնությունների հետ: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, թե Ջահաֆյանները Հայաստան են տեղափոխվել Հարուն ալ-Ռաշիդի օրոք[5]: Սակայն, արդեն պարզաբանեցինք այն իրողությունը, որ նրանք Հայաստանում հաստատվել էին նախքան 774-775 թթ. ապստամբությունը: Ջահապի մասին ոչինչ հայտնի չէ, բացի Վարդանի այն տեղեկությունից, թե նա «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց»[6]: Ջահապը՝ ամուսնանալով Մամիկոնյան իշխանադստեր հետ[7],

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 334, 348:

[2] Անդ, էջ 184:

[3] Տե՛ս يعقوبي, II, էջ 463:

[4] **Վարդան վարդապետ**, էջ 85, 86:

[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 66:

[6] **Վարդան վարդապետ**, էջ 83:

[7] Մ. Օրմանյանի կարծիքով, եթե Ջահապը միտք ուներ կնոջ միջոցով տիրելու Արշարունիք գավառին, նա պետք է գործ ունենար Բագրատունիների հետ, քանի որ Արշարունիքն այդ ժամանակ Բագրատունիների ձեռքում էր: Ըստ այդմ, Ջահապի կինը պետք է ոչ թե Մամիկոնյան լիներ, այլ Բագրատունի: Հավանաբար, նա Բագրատունի Աշոտի և Շապուհի քույրն էր, այլ ոչ թե Մամիկոնյան Շապուհի և Վարդի քույրը (տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 909-910): Օրմանյանի այդ կարծիքի կողմնակիցն է Ա. Ալպոյաճյանը (տե՛ս «Պատմական Հայաստանի սահմանները», Կահիրե, 1950, էջ 181): Հավանաբար, այդ կարծիքի համար հիմք է դարձել Վարդանի այն վկայությունը, թե Արշարունիքի մի մասին տիրող «[Ջահապը] խորհէր տիրել ՝ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին» (Վարդան վարդապետ, էջ 83): Այդ արտահայտությունը հասկացվել է այնպես, իբր Ջահապը կամենում էր ամբողջովին տիրել Արշարունիք գավառին: Այս տեսակետը մերժելի է, քանի որ, նախ՝ հիշյալ արտահայտությունը նշանակում է, որ Արշարունիքի մի մասին տիրող Ջահապը կնոջ ժառանգական իրավունքի հիման վրա ցանկա-

«խորհէր տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»[1]: Իսկ ո՞վ էր այդ Ջահապը, որ այդքան համարձակ մի գործ էր ձեռնարկել՝ ձեռնոց նետելով հզորացող Բագրատունյաց տանը, որն իր հերթին աչք ուներ քաղաքական ասպարեզում ակտիվությունը կորցրած և միայն տեղ-տեղ իրենց գոյությունը պահպանող Մամիկոնյանների ժառանգության վրա: Անկասկած, նա արաբական որևէ հզոր ցեղի անդամ պետք է լիներ: Ա. Տեր-Ղևոնդյանը, ելնելով Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդումից, թե Ջահաֆի տոհմից Սևադան «ի պարսիկ տոհմէ» էր[2], ենթադրում է, թե հնարավոր է Ջահաֆյանների քրդական ծագումը: Դատելով Ստեփաննոս Օրբելյանի և Մովսես Դասխուրանցու երկերում նույն Սևադայի «Աւարանշան» մականունից[3], հեղինակը հավանական է համարում այդ տոհմի նաև իրանական ծագումը: Հեղինակը որևէ կոնկրետ կարծիք չի հայտնում, թե հատկապես որ տեսակետի կողմնակիցն է ինքը, սակայն, ընդգծում է, որ Յակուբին Ջահաֆյաններից մեկին կոչում է Սուլամի (այսինքն՝ Կայսիկ)[4]: Ի վերջո, նա գրում է, որ «այս բոլորից կարելի է եզրակացնել, որ Ջահաֆյանները գուցե ոչ-արաբական ծագում ունեին, բայց արաբացած լինելով հանդես էին գալիս նույնիսկ որպես սուլամի, կապված լինելով Կայսիկ տան հետ»[5]: Նա դժվար ընդունելի է համարում որոշ ուսումնասիրողների կողմից կայսիկների և Ջահաֆյանների նույնացումը, բայց, նշում է, որ «այնուամենայնիվ, անժխտելի է, որ Ջահաֆյանները Սուլայմ ցեղի հետ սերտ կապ ունեին»[6]: Այդ պնդմանն ի վկայություն Ա. Տեր-Ղևոնդյանը բերում է այն իրողությունը, որ «եթե 860-ական թվականներին Աշոտ Բագրատունին խիստ պայքար էր մղում վերջին Ջահաֆի դեմ, ապա գրեթե նույն ժամանակ նա ճանաչել էր Աբու-լ-Վարդ Կայսիկի ժառանգական իշխանությունը Մանազկերտի վրա»[7]:

Ջահաֆյանների ծագման վերաբերյալ որոշակի կարծիք կազմելու համար անհրաժեշտ ենք համարում այստեղ մեջ բերել նրանց մասին

նում էր տիրել Մամիկոնյանների ժառանգությանը, հետո՝ 774-775 թթ. անմիջապես հետո Արշարունիքը դեռ չէր պատկանում Բագրատունիներին, այն Կամսարականներից գնեց Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին (790-826): Այնպես, որ մենք ճիշտ ենք համարում պատմիչի վկայությունը:

[1] **Վարդան վարդապետ**, էջ 83:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 116:

[3] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326, **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 158: Սյունյաց պատմիչի երկում Սևադան հանդես է գալիս Մարվան անվամբ:

[4] Տե՛ս يعقوبي, II, էջ 462:

[5] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները..., էջ 67:

[6] Անդ:

[7] Անդ, էջ 96-97:

հայ պատմիչների հիշատակությունները: Եթե Ջահապի ծագման մասին սկզբնաղբյուրները լռում են, ապա նրա ժառանգների և, հատկապես, Սևադայի մասին դրանց հաղորդած տեղեկությունները հնարավորություն են տալիս որոշելու նրա ով լինելը: Մովսես Դասխուրանցին Սևադայի մասին տեղեկացնում է, որ նա աշխարհավեր տաճիկ էր և կրում էր «Աւառանշան» մականունը[1]: Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես տեսանք, տեղեկացնում է, որ նա «ի պարսիկ տոհմէ» էր, իսկ Ստեփաննոս Օրբելյանը նրան կոչում է «ի կայսերական տոհմէ Սևադայ անուն»[2]: Ջահապի տան քրդական կամ իրանական ծագման վերաբերյալ տեսակետը կարելի է մերժել Մովսես Դասխուրանցու հիշյալ տեղեկությամբ, թե Սևադան տաճիկ էր, իսկ այդ ժամանակ տաճիկ կոչում էին արաբներին[3]: Բացի այդ, Վարդան Արևելցին Ջահապին կոչում է «իսմայելացի» (այսինքն՝ արաբ-Ա.Ե.)[4]: Հետևաբար, ավելորդ ենք համարում խոսել նրա քրդական կամ իրանական ծագման մասին: Ինչ վերաբերում է Ստեփաննոս Օրբելյանին, ապա նա պարզապես չի հասկացել «կայսիկ»-ի իմաստը և այն դարձրել է «կայսերական»: «Պարսիկ», «կայսերական», «տաճիկ» և «իսմայելացի» անվանումների համադրումը ցույց է տալիս, որ Ջահապն արաբ էր, և նրա ցեղի վերաբերյալ հիշյալ տեղեկությունները պարզապես աղավաղված ձևերն են Սուլայմ ցեղի մի հատվածն հանդիսացող կայսիկների ցեղին նրա պատկանելու իրողության: Ակնհայտ է, որ Մամիկոնյանների ժառանգությանը կարող էր հավակնել միայն այնպիսի մի հզոր ցեղի անդամը, ինչպիսին կայսիկներն էին: Բացի այդ, Ջահապի կայսիկ լինելն ապացուցում է թեկուզ այն փաստը, որ Ջահաֆյաններից մեկին, ինչպես տեսանք, Յակուբին անվանում է Սուլամի: Ի մի բերելով քնությունը՝ նշենք, որ, ամենայն հավանականությամբ, Ջահապի տունը կայսիկների ցեղի մի հատվածն էր կազմում, այսինքն՝ Ջահաֆյանները ևս Սուլայմ ցեղից էին:

Ջահապի տան ներկայացուցիչներն, ինչպես տեսանք, հափշտակել էին Արշարունիք գավառի մի մասը: Սրանք մի պահ նույնիսկ տիրեցին Դվինին, իսկ հետո Սևադան գործունեություն ծավալեց Սյունիքում: Ջահապի նվաճողական նկրտումների դեմ հենց սկզբից էլ դուրս եկավ Բագրատունյաց տունը՝ հանձին Արծնիի ճակատամարտում ընկած Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Մսակերի (790-826): Վերջինս շրջահայաց քաղաքական գործիչ էր և, փոխանակ բացահայտորեն խալիֆա-

---

[1] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 326:
[2] Ստեփաննոս Օրբելյան, էջ 167:
[3] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 206:
[4] Վարդան վարդապետ, էջ 83:

յության դեմ դուրս գալու, առանց ավելորդ աղմուկի իր տոհմի տիրապետությանը ենթարկեց Մամիկոնյանների տիրույթները: Նա կարողացավ տիրել վերջիններին պատկանող Տարոնին ու Տայքին և Կամսարականներին պատկանող Շիրակին ու Աշոցքին[1]: Նա գնեց նաև Կամսարականներին պատկանող Արշարունիք գավառը և, շուտով, Բագրատունիների նստավայրը Դարյունքից տեղափոխեց այնտեղ[2]: Իր այս քաղաքականության իրականացման ճանապարհին թե՛ Տարոնում և թե՛ Արշարունիքում Աշոտ Մսակեր Բագրատունին, ինչպես հասկանալի է, բախվեց Ջահապի հետ և պարտության մատնեց նրան[3]: Տեսնելով, որ չի կարողանում մրցել Բագրատունյաց տան ներկայացուցիչների հետ, Ջահապին որոշեց իր տան համար Հայաստանում պատառ պոկել ոչ թե հայ նախարարների, այլ Արմինիայի ոստիկանների տիրույթներից: Իր որդի Աբդ ալ-Մալիքի հետ 813 թ. նա արշավեց Դվին քաղաքի վրա և գրավեց այն[4]: Հայտնի է, որ թեև Դվինն այդ ժամանակ դադարել էր ոստիկանի միակ նստավայրը լինելուց, և արաբ ոստիկանները առավելապես նստում էին Պարտավում, սակայն, Դվինն իր նշանակությունը չէր կորցնում և շարունակում էր մնալ իբրև ոստիկանի երկու նստավայրերից մեկը: Իսկ այդպիսի քաղաքի գրավումը հարվածում էր ոստիկանի հեղինակությանը: Այդ ժամանակ դրությունն անկայուն էր խալիֆայության ներսում, և գահին նոր-նոր բազմած Մամուն խալիֆան (813-833) գերադասեց սրված իրավիճակը հարթել Ջահապի որդուն ոստիկան նշանակելով (813): Սակայն, այդպիսի իրավիճակում ոստիկան դարձած Աբդ ալ-Մալիքը խալիֆայությանը ձեռնտու չէր, և, այդ իսկ պատճառով, նրա իշխանությունը մի քանի ամիս տևեց, որից հետո ոստիկան նշանակվեց Թահիր իբն Մուհամմադ աս-Սանանիին (813): Աբդ ալ-Մալիքը սրա դեմ ապստամբեց և, նույնիսկ, պաշարեց նրան Պարտավում, բայց, ի վերջո, պարտություն կրեց և ստիպված հպատակություն հայտնեց[5]: Շուտով Դվինի բնակիչները, չհանդուրժելով Աբդ ալ-Մալիքի իշխանությունը, հարձակվեցին նրա վրա և սպանեցին[6]: Պետք է նշել, որ մինչև իր պարտությունն Աբդ ալ-Մալիքը ցանկացել էր տիրել Տարոնին, բայց պարտություն էր կրել: Վարդան Արևելցին հաղորդում է, որ «տունն Ջահապայ զօրացեալ ՝ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ ՝ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդւոյ Սմբատայ. իսկ [վեր-

---

[1] **Վարդան վարդապետ**, էջ 83:
[2] Տե՛ս **Ասողիկ,** էջ 106:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 83-84:
[4] Անդ, էջ 83:
[5] Տե՛ս يعقوبي, II, էջ 462:
[6] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 84:

ջինը]...երկերիւր հեծելօք և երեքհարիւր հետևակօք ել ընդդէմ նոցա...և կոտորեաց 'ի նոցանէ զերեք հազարսն, և հասեալ 'ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա»[1]:

Ակտիվություն ցուցաբերած հաջորդ Ջահաֆյանը Սևադան էր, որին Յակուբին անվանում է Սավադա իբն Աբդ ալ-Համիդ ալ-Ջահաֆի (այսինքն՝ Ջահաֆյան)[2]: Այս նոր Ջահաֆյանը չնայած, որ սկզբում բախվեց Աշոտ Մսակերի և նրա եղբոր՝ Շապուհի հետ ու պարտություն կրեց[3], հետո հանդես եկավ արդեն որպես Բագրատունիների փեսա և դաշնակից[4]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ սա «առեալ էր իւր կին զԱրուսեակ 'ի Բագրատունի տանէ և 'ի ձեռն այնորիկ զյոլով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր»[5]: Այս Սևադան, ըստ երևույթին, օգտվել էր խալիֆայության թուլացումից և կամ խալիֆաների բարեհաճությունից: Այսպես թե այնպես, Սևադան իրեն այնքան ամուր էր զգում, որ, ըստ Վարդանի՝ նույնիսկ Սմբատ Բագրատունին «առնու 'ի նմանէ զպատիւն հայրենի սպարապետութեան»[6]: Եվ, ահա՛, այսչափ իրեն վստահ զգացող Սևադան փորձեց չենթարկվել նոր ոստիկան Հոլին (Խալիդ իբն Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (829-832)): Ամեն ինչ որոշվեց Կավակերտի ճակատամարտում, որտեղ Հոլը պարտության մատնեց միմյանց հետ դաշնակցած Սևադայի, Սմբատ սպարապետի և Սյունյաց Սահակ իշխանի միացյալ գնդերին[7]: Սևադան փախուստ տվեց և, ըստ Մովսես Դասխուրանցու՝ հաստատվեց Սյունյաց Ծղուկ գավառի Շաղատ բերդավանում՝ ցանկանալով տիրել երկրամասին: Սյունյաց Վասակ իշխանը դիմեց Բաբեկին և նրա օգնությամբ քշեց Սևադային, որը Սյունիքում ասպատակություններով էր զբաղվում[8]: Յակուբին այս պատմությունը այլ կերպ է նկարագրում. ըստ նրա Արմինիայի ոստիկան Իսա իբն Մուհամմադը՝ գալով Արմինիա, Սևադային առաջարկեց ոստիկանի պաշտոնը: Սակայն, վերջինը մերժեց այդ գայթակղիչ առաջարկը, հավանաբար, դրանում ծուղակ կանխազգալով: Դրանից հետո Իսան հարձակվեց նրա վրա և պարտության մատնեց[9]: Ինչպես տեսնում ենք, հայ և արաբ պատմիչնե-

---

[1] Անդ:
[2] Տե՛ս يعقوبي, II, էջ 463:
[3] Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 85:
[4] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 116:
[5] Անդ:
[6] **Վարդան վարդապետ,** էջ 85:
[7] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 116:
[8] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 326:
[9] Տե՛ս يعقوبي, II, էջ 463:

ը երկու տարբեր ոստիկանների են վերագրում Սևադային պարտության մատնելու գործը: Այստեղ առավել ընդունելին Հովհաննես Դրասխանակերտցու պատմածն է, քանի որ հենց ինքը՝ Յակուբին քիչ անց հաղորդում է, որ Խալիդ իբն Յազիդը, գալով Խլաթ, ապահովության թուղթ է տալիս իրեն ընդառաջ ելած Սևադային[1]: Հնարավոր է նաև, որ այնպիսի մի արկածախնդիր, ինչպիսին Սևադան էր, ապստամբած լինի երկու անգամ՝ առաջինն Իսայի օրոք (820-823), իսկ երկրորդը՝ Խալիդի (829-832): Այդ դեպքերից հետո Սևադան քաշվեց Վանա լճի հյուսիս-արևմտյան գավառները՝ իր ցեղակից կայսիկների մոտ, ուր նա Յուսուֆ ոստիկանի օրոք (851-852) դեռ կենդանի էր[2]:

Բացի Սևադայից, այդ տարիներին Ջահապի տան այլ ներկայացուցիչներ էլ ի հայտ եկան. Վարդան Արևելցին հաղորդում է, որ Բաբեկի ձերբակալությունից հետո «յաւուրսն յայնոսիկ Աբլիերթ ոմն 'ի տանէն Ջահապայ, ել չորիւք հազարօք յերկիրն Սիւնեաց, և ել Բաբգէն ընդդէմ նորա երկերիւրօք, և ջնջեաց զնա իսպառ»[3]: Այսինքն՝ Աբլիերթ Ջահաֆյանն իր նախորդի օրինակով նույնպես ցանկանում էր հաստատվել Սյունիքում: Հայաստանում սեփական տիրույթ ձեռք բերելու մղումով էր լեցուն նաև Սևադայի որդին՝ կրտսեր Ջահաֆը: Սա հանդես եկավ այն ժամանակ, երբ գերի տարված Սմբատ Բագրատունուն հաջորդել էր որդին՝ Աշոտը, որն իր եղբայր Աբասի հետ ամրապնդեց Բագրատունիների դիրքերը երկրում: Ասողիկը տեղեկացնում է, որ հայոց ՅԺԲ թվականին (863) Շահապը(այսինքն՝ Ջահապը կամ Ջահաֆը)՝ Սևադայի որդին, «գայ յերկիրս Հայոց»[4]: Դժվար է այստեղ միանշանակ պնդել, թե Շահապը դրսի՞ց էր եկել արդյոք: Վերևում մենք արդեն տեսանք, որ նրա հայր Սևադան Յուսուֆ ոստիկանի օրոք դեռևս բնակվում էր Հայաստանում: Շահապը հանդես եկավ «ամբոխասաստ զօրու...աւերել գերել զերկիրս կամելով»[5]: Նրան, ինչպես և իր անվանակից նախնուն գրավում էր Արշարունիքը և, ահա՛, նա բանակ դրեց Արշարունիքի Քառասունք կոչվող վայրում: Նրան ընդառաջ ելավ Աբաս սպարապետը 40 հազարանոց բանակով և պարտության մատնեց նրան, որից հետո Շահապը մեծ դժվարությամբ կարողացավ փախուստի դիմել ու փրկվել[6]: Դրանից անմիջապես հետո (865 թ.) Թաբարին հիշատակում է Ջահաֆ իբն Սևադային որպես Մալաթիայում արաբական զորքի հրամանա-

---

[1] Անդ, էջ 464:
[2] Տե՛ս طبري, VI, էջ 45:
[3] **Վարդան վարդապետ**, էջ 85:
[4] **Ասողիկ**, էջ 110:
[5] Անդ:
[6] Անդ:

տար[1]: Ամենայն հավանականությամբ, Ջահապի տան ներկայացուցիչներն այդ ժամանակ մեկընդմիշտ հրաժարվեցին Հայաստանում տիրույթ ձեռք բերելու հավակնությունից և արդեն բախտները փորձում էին Սահմանային ամրությունների գոտում:

Այսպիսով՝ Ջահապը, իսկ նրանից հետո նաև նրա ժառանգները, բազմիցս փորձեցին պայքարի մեջ մտնել մերթ տեղի հայ իշխանների, մերթ էլ խալիֆայության հետ ու Հայաստանում իրենց համար առանձին իշխանություն ստեղծել, սակայն, ի վերջո, պարտություն կրեցին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ խալիֆայությունը Հայաստանում որոշակի արաբական զանգված ունենալու խիստ անհրաժեշտության առաջ կանգնեց 774-775 թթ. ապստամբությունից հետո, երբ արաբներին ապստամբությունը ճնշելու համար երկրում ունեցած ուժերը բավարար չեղան: Եվ ստիպված «գունդ կազմէր իշխանն Իսմայելի ի վերայ երկրիս Հայոց, և գումարէր զընտիրս հեծելոց իբրև արս ԼՌ ընտիր երիվարաւ և կուռ սպառազինութեամբ ի տոհմէ Խորասան գնդին»[2]: Մինչ այդ, ինչպես տեսանք, արաբներն Արմինիայում զանգվածային վերաբնակեցում կատարել էին միայն այն վայրերում, որտեղ դրա անհրաժեշտությունը տվյալ պահին կար: Այսպես, օրինակ՝ Դարբանդում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք զորավարը բնակեցրեց 24հզ սիրիացիների (իմա՛ Ասորիքի արաբներ)[3]: Նման անհրաժեշտության առաջ, ինչպես տեսանք, արաբները կանգնեցին նաև Կարնո քաղաքի դեպքում: Արմինիա ոստիկանության հյուսիսային և արևմտյան սահմաններին գտնվող այդ երկու հզոր ամրոցներն արաբների համար առաջնային նշանակություն ունեին: Ինչ վերաբերում է VIII դ. երկրորդ կեսին իրականացված զանգվածային վերաբնակեցմանը, ապա Յակուբին պատմում է, թե երբ Հարուն ալ-Ռաշիդը Խուզայմա իբն Խազիմի փոխարեն ոստիկան նշանակեց Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամիին (787), վերջինն Արմինիա եկավ նիզարների ցեղի մեծ բազմության հետ: Պատմիչը տեղեկացնում է, որ սրանք տիրապետող դիրքի հասան Արմինիայում ու հետզհետե բազմացան նորանոր եկվորների հաշվին[4]: Հասկանալի է, որ Սուլամի ոստիկանը Հայաստան էր բերելու առաջին հերթին իր ազգակիցներին:

Ուսումնասիրողներն Արզնում և Բաղեշում հաստատված արաբական Զուրարիկ ցեղը, աղբյուրների անբավարար տեղեկությունների պատճառով, դժվարացել են արաբական այս կամ այն ցեղախմբին վերագրել:

---

[1] Տե՛ս طبري, VI, էջ 45-46:
[2] **Ղևոնդ**, էջ 145:
[3] Տե՛ս بلاذري, I, էջ 244:
[4] Տե՛ս يعقوبي, II, էջ 426:

Ա. Տեր-Ղևոնդյանը ենթադրում է, որ նրանք Բաքր ցեղախմբին էին պատկանում[1]: Իսկ Ս. Շլեպչյանն ընդհանուր առմամբ կարծում է, որ զուրարիկները պետք է պատկանեին արաբների հյուսիսային ցեղախմբին[2]:

Մեր կարծիքով, եթե զուրարիկները Բաքր ցեղին պատկանեին, ապա թշնամական հարաբերությունների մեջ չէին լինի իրենց հարևանությամբ բնակվող Բաքր ցեղի մյուս հատվածի՝ Շայբանի հետ, որոնցից նրանք ծանր հարված ստացան հայոց Սմբատ Ա թագավորի օրոք (890-914 թթ.)[3]: Բացի այդ, քանի որ նրանց տիրույթներն Արմինիայի մեջ էին մտնում և, ամենայն հավանականությամբ, Չորրորդ Արմինիայի մաս կազմում, ապա առավել հավանական է, որ նրանք Սուլամի լինեին, քանի որ, ինչպես քննությունը ցույց տվեց, Երրորդ և Չորրորդ Արմինիաներում մեծ մասամբ, եթե չասենք՝ բացառապես, Սուլայմ ցեղի հատվածներն էին վերաբնակեցվել: Ուստի և կարծում ենք, որ զուրարիկները Սուլայմ ցեղին էին պատկանում:

Արաբական գաղութները, փաստորեն, ցրված էին ողջ Չորրորդ Արմինիայի տարածքում: Նրանք հաստատվել էին Վանա լճի հյուսիսային ափերին ու Ապահունիք գավառում: Արաբական գաղութներ էին հաստատվել Սահմանային ամրությունների գոտու հարևանությամբ գտնվող շրջաններում և, մասնավորապես, այնպիսի կարևորագույն հենակետերում, ինչպիսիք էին Կարնո քաղաքը և Շիմշաթը:

Երրորդ և Չորրորդ Արմինիաներում, այսպիսով, հիմնականում հաստատվել էին հյուսիսային ցեղախմբին պատկանող արաբներ: Երրորդ Արմինիայում հաստատվել էին Սուլայմ ցեղի մեջ մտնող ութմանիկները: Երկրամասի հարավարևելյան հատվածում, ամենայն հավանականությամբ, նույնպես հաստատվել էին հյուսիսցի արաբներ, որոնք այստեղ էին ներթափանցել Ատրպատականի ոստիկանությունից: Արաբական գաղութներ էին ստեղծվել նաև Դվինում ու Նախճավանում: Չորրորդ Արմինիայում՝ Սահմանային ամրությունների գոտու հարևանությամբ, հաստատվել էր Սուլայմ ցեղը: Այդ ցեղի մաս կազմող կայսիկները տարածվել էին դեպի արևելք՝ տիրելով Վանա լճի հյուսիսային ափամերձ շրջաններին: Ինչ վերաբերում է ծագումով կայսիկ Ջահապի տանը, ապա նրա ջանքերը՝ մայր ցեղից անկախ իշխանություն հիմնելու, ի չիք դարձրեցին հզորացող Բագրատունիները: Արաբական ցեղերի ստեղծած ամիրայությունները շարունակեցին գոյատևել նաև Բագրատունիների կողմից Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո:

---

[1] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան,** Արաբական ամիրայությունները..., էջ 63, 81:
[2] Տե՛ս **Ս. Շլեպչյան**, նշվ. աշխ., էջ 149:
[3] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 176:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանում ձևավորվել էին Հայոց, Վրաց և Աղվանից մարզպանությունները: Հայոց մարզպանության մեջ էին մտնում Այրարատ, Վասպուրական, Տայք, Տուրուբերան, Մոկք, Սյունիք աշխարհները, Պարսկահայքի ու Կորճայքի հյուսիսային գավառները: Սյունիքը 571 թ. ապստամբության նախօրեին առանձնացվել էր Հայոց մարզպանությունից ու միացվել Ատրպատականի աշխարհագրին: Համազասպ Մամիկոնյանի իշխանության տարիներին (654-661) հնարավոր եղավ այն միացնել Հայոց իշխանապետությունը: Վրաց մարզպանությունը կազմված էր Գուգարաց բդեշխությունից ու Վրաց թագավորության տարածքներից, իսկ Աղվանից մարզպանության մեջ մտնում էին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները, Բուն Աղվանից աշխարհը, Կուր գետի ստորին հոսանքի և Դարբանդի միջև տարածվող մերձկասպյան երկրներն ու Կովկասյան լեռների արևելյան հատվածը: Մեծ Հայքի մերձեփրատյան գավառները նախքան արաբական նվաճումները գտնվում էին Բյուզանդական տիրապետության ներքո: Հայաստանի և Վիրքի 591 թ. բաժանման ժամանակ այդ երկրների մեծ մասն անցավ Բյուզանդիային: Վարչա-քաղաքական այդ իրավիճակն էր տիրում խնդրո առարկա տարածաշրջանում, երբ արաբները սկսեցին իրենց արշավանքները:

Արաբական առաջին արշավանքների ժամանակ Հայաստանի՝ պարսկական ու բյուզանդական տիրապետության ներքո գտնվող հատվածները միավորվեցին Թեոդորոս Ռշտունու իշխանության ներքո, իսկ շուտով արաբները Հայոց իշխանի գերիշխանությունը ճանաչեցին նաև Այսրկովկասյան երկրների վրա: Նախքան Արմինիա ոստիկանության ձևավորումն արաբներն Այսրկովկասյան երկրները միավորում էին Հայոց իշխանի գերիշխանության ներքո:

Արաբները Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները վերջնականապես նվաճեցին 700 թ. և կազմավորեցին Արմինիա ոստիկանությունը՝ Դվին կենտրոնով: Շարունակում էր գործել Հայոց իշխանի ինստիտուտը, որը ստորադասված էր երկրամասի արաբ ամիրային (ոստիկան):

Արմինիա ոստիկանությունը բաղկացած էր չորս մասից, որոնք կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիաներ:

Առաջին Արմինիայի կազմում ընդգրկված էին Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող երկրները՝ Բազկանը, Խուրսանը(Խայզան), Շիրվանը և Մազքթաց աշխարհը, Մեծ Հայքի Սյունիք, Արցախ և Ուտիք աշխարհները, Բուն Աղվանից աշխարհը, որի տարածքում արաբական տիրապետության օրոք գոյություն ուներ Շաքե-Կամբեճանի իշխանությունը, Աբխազ երկիրն ու Լփինք-Լիրանը: Փաստորեն, Առաջին Արմինիան մեծավ մասամբ համընկնում էր Սասանյանների տիրապետության շրջանի Աղվանից մարզպանությանը: Արմինիայի հյուսիսային սահմանին խազարների հետ անընդհատ պատերազմների հետևանքով ձևավորվել էր սահմանային ամրությունների մի գոտի, որը տարածվում էր Դարբանդից մինչև Դարիալի կիրճ: Այս սահմանային ամրությունների գոտու մեծագույն մասը, որի մեջ մտնում էին Դարբանդը՝ շրջակա ամրություններով, Թաբարսարանը, Ֆիլանը, Զարիքիրանը, Տումանը (լակերի երկիր) և Սարիրի թագավորությունը, մտնում էր Առաջին Արմինիայի մեջ:

Երկրորդ Արմինիայի մեջ մտնում էին Վիրքը, Գուգարքը, Ծանարաց երկիրն ու Դիդոյքը: Գուգարքի Կղարջք գավառը VIII դ. վերջում՝ 774-775թթ. ապստամբությունից հետո, դարձավ Բագրատունյաց նախարարական տան մի ճյուղի ապաստանը: Երկրորդ Արմինիայի կազմում արաբական աղբյուրները հաճախ հիշատակում են աս-Սանարիա երկիրը (Ծանարաց երկիր), որը գտնվում էր Ալանաց դռան ամրությունների և Թերեք գետի ակունքների շրջանում: Երկրորդ Արմինիայի մեջ էր մտնում նաև արաբա-խազարական սահմանային ամրությունների գոտու արևմտյան հատվածը, որտեղ գտնվում էր Դիդոյների երկիրը (ադ-Դուդանիա): Երկրորդ Արմինիան համարյա ամբողջությամբ համընկնում էր Սասանյանների տիրապետության շրջանի Վրաց մարզպանությանը:

Արմինիա ոստիկանության մեջ մտնող Հայաստանի մյուս տարածքներն ընդգրկված էին Երրորդ և Չորրորդ Արմինիաների կազմերում:

Երրորդ Արմինիայի մեջ ընդգրկված էին Այրարատը, Վասպուրականը, Մոկքը, Կորճայքի ու Պարսկահայքի հյուսիսային հատվածները, իսկ Չորրորդ Արմինիայի մեջ՝ Տուրուբերանը, Բարձր Հայքի ու Ծոփքի արևելյան հատվածները և Աղձնիքի հյուսիսային գավառները: Աստիճանաբար քաղաքական ասպարեզից հեռանում են նախկինում ազդեցիկ Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցնում են նախկին կշիռը: Նույն ժամանակ Բագրատունիները, Սյունիները և Արծրունիներն ավելի են հզորանում: Բագրատունիներին հաջողվում է ձեռք գցել վերոհիշյալ երկու նախարարությունների տիրույթները՝ իրենց իշխանության սահ-

մաններն ընդարձակելով ընդհուպ մինչև Ջազիրա ոստիկանության Դիար Բաքր երկրամասը, որից նրանց հաջողվեց բաժանել և սեփական տիրույթներին կցել Սասունի լեռնային շրջանը: Փաստորեն, Բագրատունիներն հողեր են ձեռք բերում և՛ Երրորդ, և՛ Չորրորդ Արմինիաների տարածքներում: Քաղաքական ասպարեզում ակտիվանում են նաև Արծրունիները, որոնք, բացի Վասպուրականից, տիրում էին նաև Կորճայքի հյուսիսային գավառներին: Հզորանում է նաև Սյունյաց նախարարական տունը, որի տիրույթներով էր անցնում Արմինիայի ոստիկանի երկու նստավայրերը՝ Դվինն ու Պարտավն իրար կապող առևտրական ճանապարհը:

Չորրորդ Արմինիայի մեջ մտնող Տուրուբերան աշխարհի Ապահունիք և Աղիովիտ գավառներում արաբական գաղութներ հաստատվեցին: Նման ճակատագիր ունեցան նաև Ծոփք և Բարձր Հայք աշխարհների արևելյան գավառները, որոնք սահմանակցում էին արաբա-բյուզանդական անընդհատ պատերազմների պատճառով ձևավորված սահմանային ամրությունների գոտուն: Ծոփքում արաբների կարևորագույն հենակետը բյուզանդացիների դեմ մղվող պայքարում Արշամաշատ քաղաքն էր (Շիմշաթ): Նմանատիպ հենակետ էր նաև Կարնո քաղաքը (Կալիկալա) Բարձր Հայքում: Այս երկու քաղաքները գտնվում էին սահմանային ամրությունների գոտու անմիջական հարևանությամբ: Մեծ Հայոց մերձեփրատյան գավառները, գտնվելով մասամբ այդ սահմանային ամրությունների գոտու մեջ, մասամբ էլ դրա սահմանակցությամբ, հաճախ էին բյուզանդական զորքերի հարձակումների ենթարկվում: Պատահական չէ, որ այդ շրջաններն ի սկզբանե դարձան արաբ գաղթականության հաստատման համար կարևորագույն տարածքներ: Ամենայն հավանականությամբ, վերոհիշյալ տարածքներում արաբ տարրի հաստատմամբ էր պայմանավորված Չորրորդ Արմինիա վարչական շրջանի գոյությունը:

